# ԷՋՄԻԱԾԻՆ



Դ

2005

ԿԱ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Ապրիլ
2005

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
Սրբատառ Կոնդակը Հայոց Մեծ եղեռնի 90-ամյակի առիթով ........ 3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի և օրհնության խոսքը Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված միջազգային համաժողովին ........ 7

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ՝ Շարունակվող ոգեկոչում ........ 9
Հաղորդագրություն ........ 11

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանի ծննդյան յոթանասունհինգ և վարդապետական աստիճանի փչչության հիսունամյակների առիթով ........ 12
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Պետրոս և Կարինե Տաղլյաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին ........ 14
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Ավետման տոնի և Մայրության ու գեղեցկության օրվա առիթով ........ 16
Հայրապետական գնահատություն ........ 17

## ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԻՆՆՍՈՒՆԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Կառուցվելիք մատուռի հողի օրհնությունը և Հայոց Մեծ եղեռնի նահատակների հիշատակի ոգեկոչումը Ծիծեռնակաբերդում ........ 18
Ապրիլի քսանչորսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ........ 20
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևորականները տարբեր թեմերում մասնակցեցին Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի միջոցառումներին ........ 22
Ապրիլի 24-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում կատարվեց հոգեհանգստյան արարողություն ........ 23
Ապրիլի 24-ին քույր Եկեղեցիները հիշատակելու են Հայոց ցեղասպանությունը ........ 26
Սրբալույս Մյուռոնը հեղվեց Եփրատի ջրերում ........ 28
Հայոց ցեղասպանության 90-ամյակի հիշատակության ձեռնարկներ Երուսաղեմի հայոց Պատրիարքությունում ........ 30
Մեծ եղեռնի ոգեկոչման հանդիսությունները Վիրահայոց թեմում ........ 34
Մեծ եղեռնի 90-ամյա տարելիցը Հնդկահայ գաղութում ........ 37
90-ամեակի ոգեկոչումները Գերմանիոյ հայոց թեմում ........ 38

Մեծ եղեռնի 90-ամեակը նշուեցաւ արժանավայել շուքով եւ վերապրողներու ջահը փոխանցուեցաւ նոր սերունդի ներկայացուցիչներուն ........................ 44
Այրիկեան նախադպրկններու ոգեկոչում Աւստրալիոյ հայոց թեմում ........................ 48
Հանդիպում Գանատայի վարչապետ Փոլ Մարթինի հետ ........................ 50
Հայոց Մեծ եղեռնի յիշատակի ոգեկոչումը Պրազիլիայի հայոց թեմում ........................ 51

## ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

**ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԻՒԼԿԵՐԵԱՆ** - Հայ ժողովուրդը՝ Յարութեան հաւատքին կը պարտի իր գոյութեան յաւերժութիւնը ........................ 56

## ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

**ՎԻԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՔԱԶԵԱՆ** - Եպիսկոպոսը Հայ Եկեղեցւոյ նուիրապետութեան համակարգի մէջ. Ազգային եկեղեցական և տեղական ժողովներու որոշումները եպիսկոպոսի մասին ........................ 60

## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ** - Մշո Առաքելոց վանքի գրչության կենտրոնը .... 74
**ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ** - Կոմիտասը աքսորում. 1915 թվական (ժամանակագրություն) ........................ 86
**ՀՐԱՉՅԱ ԱՍՄԱՐՅԱՆ** - Պրոֆեսոր Հակոբ Սիրունին ու «Պոլիս և իր դերը» աշխատության 3-րդ հատորը ........................ 100
**ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ** - Թեոդիկի Եղեռնապատումը ........................ 106
**ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ** - Արշիլ Գորկի. Գեղարվեստի խորանի մեծ նվիրյալը ........................ 118
**ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ** - Թուրքական արխիվներում Հայոց ցեղասպանությանը վերաբերող վավերագրերի գոյության հարցի շուրջ ...... 128
**ԱՆՈՒՇ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ** - Ֆրիտյոֆ Նանսենը Հայոց Եկեղեցու և եկեղեցաշինության մասին ........................ 134

## ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ

**ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ** - Պերճուհի Սյուրմենյանի հուշերը Սողոմոն Թեհլերյանի մասին ........................ 138
**ՊԵՃՈՒՀԻ ՍԻՒՐՄԷՆԵԱՆ** - Յուշեր Սողոմոն Թեհլերեանի մասին ........................ 139
**ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԻՒԼԿԵՐԵԱՆ** - Հայաջինջ ցեղասպանութեան ճանաչումով մեղքը չի քաւուիր ........................ 141
**ԱՎԱԳ (ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ)** - Տառապալից դաժան օրեր ........................ 144

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ** - Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության լուսաբանությամբ ............ 148
**ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ** - Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված ևս մեկ ուսումնասիրություն ............ 155

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

«Գիր և Պատգամ» ծրագիր՝ նվիրված Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակին ..... 161
Վահագն Տափրյանի դասախոսությունը Գևորգյան Հոգևոր Ճեմարանում .... 161
Գիտաժողով Սնանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում ............ 162
Կանաչ Կիրակին Նորավանքի ուխտի օր ............ 163

## ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում Ուղղափառների Մասնակցության Հատուկ Հանձնախմբի Գործադիր Մարմնի ժողովը ...... 165

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սիրիայի 12 ցեղախմբերի աշիրաթապետերին ............ 169
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիտվայի Ազգային պաշտպանության նախարարին ............ 170
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Կիպրոսի նորանշանակ դեսպանին ............ 170
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Պերմի մարզի նահանգապետի պաշտոնակատարին ............ 171
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լեխ Վալենսային ......... 172
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Դաշնային Ժողովի Պետական Դումայի փոխնախագահին ............ 172
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կանադայի Խորհրդարանի Համայնքների Պալատի և Կանադահայ համայնքի ներկայացուցիչներին ............ 173
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարին ............ 174
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց մի խումբ իրանցի լեռնագնացների ............ 174

Եկեղեցական բեմ. լուրեր ............ 175

"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата ........ 176
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin ............ 180
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine ............ 184

ՀՐԱՄԱՆԱՒ

## Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 90-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

## ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

*«Զի ինձ կեանք Քրիստոս է»:*
(Փիլ. Ա 21)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Հայոց հաւատի վէմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որ ունենք պարգեւ մեզ երկնային ամենառատ շնորհով եւ օրհնութեամբ, գոհութեան աղօթք ու փառաբանութիւն ենք մատուցում Բարերար Աստծուն այսօր, երբ 90-ամեայ յիշատակութեան առջեւ Հայոց Մեծ եղեռնի, Հայաստան եւ ի Սփիւռս վերածնուած ժողովրդով համարձակածայն կարող ենք կրկնել առաքեալի խօսքը. «Զի ինձ կեանք Քրիստոս է»:

Արդարեւ, Քեզ ապաւինողը ամօթով չմնաց, Տէր, քանզի Դու ես Յարութեան, եւ Քո Խօսքը՝ կենդանի ու կենդանարար ու յաւիտենական: Քեզ գիտենք իբրեւ ճշմարտութիւն, սէր եւ ողորմութիւն՝ Արարիչ ու Ամենախնամ, Ողորմած ու Փրկագործ: Քեզ գիտենք իբրեւ Ամոքիչ

ՀՐԱՄԱՆԱՒ

**Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 90-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

## ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

*«Զի ինձ կեանք Քրիստոս է»:*
(Փիլ. Ա 21)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Հայոց հաւատքի վէմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որ ունենք պարգեւ մեզ երկնային ամենառատ շնորհով եւ օրհնութեամբ, գոհութեան աղօթք ու փառաբանութիւն ենք մատուցում Բարերար Աստծուն այսօր, երբ 90-ամեայ յիշատակութեան առջեւ Հայոց Մեծ եղեռնի, ի Հայաստան եւ ի Սփիւռս վերածնուած ժողովրդով համարձակաձայն կարող ենք կրկնել առաքեալի խօսքը. «Զի ինձ կեանք Քրիստոս է»:

Արդարեւ, Քեզ ապաւինողը ամօթով չմնաց, Տէր, քանզի Դու ես Յարուցեալ, եւ Քո Խօսքը՝ կենդանի ու կենդանարար ու յաւիտենական: Քեզ գիտենք իբրեւ ճշմարտութիւն, սէր եւ ողորմութիւն՝ Արարիչ ու Ամենախնամ, Ողորմած ու Փրկագործ: Քեզ գիտենք իբրեւ Ամոքիչ

ՀՐԱՄԱՆԱՒ

**Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 90-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

## ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

*«Ձի ինձ կեանք Քրիստոս է»:*
(Փիլ. Ա 21)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Հայոց հաւատքի վէմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որ ունենք պարգեւ մեզ երկնային ամենառատ շնորհով եւ օրհնութեամբ, գոհութեան աղօթք ու փառաբանութիւն ենք մատուցում Բարերար Աստծուն այսօր, երբ 90-ամեայ յիշատակութեան առջեւ Հայոց Մեծ եղեռնի, ի Հայաստան եւ ի Սփիւռս վերածնուած ժողովրդով համարձակաձայն կարող ենք կրկնել առաքեալի խօսքը. «Ձի ինձ կեանք Քրիստոս է»:

Արդարեւ, Քեզ ապաւինողը ամօթով չմնաց, Տէր, քանզի Դու ես Յարութիւն, եւ Քո Խօսքը՝ կենդանի ու կենդանարար ու յաւիտենական: Քեզ գիտենք իբրեւ Ճշմարտութիւն, սէր եւ ողորմութիւն՝ Արարիչ ու Ամենախնամ, Ողորմած ու Փրկագործ: Քեզ գիտենք իբրեւ Ամոքիչ

ու Առաջնորդող պահապան զօրութիւն: Մեր հայրերից այսպէս ուսանեցինք՝ փառաւորելով
Քեզ՝ Միածին Որդուդ, Հօրը եւ Սուրբ Հոգուն:
Քրիստոսի հետ յարութեան յոյսով, մահուան դէմ կեանքի յաղթութեան հաւատով ապ-
րեց ու ստեղծեց մեր ժողովուրդը: Դարերի մէջ բազում աւերներ ու հողմեր տեսաւ, բազմիցս
գերեզման իջաւ, բայց Քրիստոսին յուսացեալ՝ հաւատաց իր հոգու լոյսին, իր փրկութեանն
ու վերածննդին: Մինչեւ հաւատաց եւ իր պատմութեամբ ու իր թողած ժառանգութեամբ վկա-
յեց, որ յարուցեալ է Քրիստոս, եւ յարուցեալ է Քրիստոսին հաւատացողը: Այս հաւատով
վերապրեցինք մեր պատմութեան ամենամեծ ողբերգութիւնը՝ մեր ժողովրդի ցեղասպանու-
թիւնը Օսմանեան Թուրքիայում:
Առաջին համաշխարհային պատերազմի թոհ ու բոհի մէջ երիտթուրքական իշխանու-
թիւնները ժամանակը պատեհ նկատեցին՝ ապարտին հասցնելու հայութեան բնաջնջման
թուրքական պետութեան որդեգրած քաղաքականութիւնը եւ ընդմիշտ լուծելու հայկական
հարցը: Արեւմտեան Հայաստանում՝ մեր Հայրենիքի մեծագոյն հատուածի վրայ եւ կայս-
րութեան հայաշատ այլ բնակավայրերում իրականացուեցին անզէն հայ բնակչութեան
կազմակերպուած ջարդեր: Մեր ժողովուրդը մահուան էր դատապարտուել միայն հայ եւ
քրիստոնեայ լինելու համար, քանզի հայ մնալ ու քրիստոնեայ, նշանակում էր շարունակել
լինել բնիկ ու տոհմիկ ժողովուրդը Հայաստան երկրի:
1915 թուականին աւերն էր թագաւորում, սարսափն ու մահը՝ հայոց բնակավայրերում:
Փլւում էր տունը հայի գլխին, այրւում էր հողը իր մշակի ոտքի տակ, ակօսը գերեզման էր
դառնում, եկեղեցին՝ անբարբառ յուշարձան: Եփրատի ափերից մինչեւ Արաքսի հովիտներ,
Սեւ ծովից մինչեւ Միջերկրական՝ ձորերը լցուեցին հայ մարդկանց դիակներով, գետերը՝
արիւնով: Թալանուած ու փանջահար անզէն ժողովուրդը՝ կին, մանուկ ու ծեր քշուեցին ան-
ջուր անապատ, եւ նրանց վերջին աղօթքի ունկնդիրը եղաւ փօթակէզ քամին: Անլուր ջար-
դերին զոհ գնաց մէկ ու կէս միլիոն հայութիւն, որը հողագործ էր, արհեստաւոր, կառուցող
շինարար, վաճառական, բժիշկ ու գիտնական:
20-րդ լուսաւորեալ դարը եղեռնով սկսուեց մեր ժողովրդի համար, որ նոր ժամանակնե-
րում յոյս ունէր գտնել անձի ապահովութիւն, մարդկային իրաւունքի պաշտպանութիւն եւ
խաղաղ կեանք: Այս էր Հայկական հարցի բովանդակութիւնը: Սահմանադրական իրաւունք-
ներից խօսող երիտթուրքական իշխանութիւններն ամեն բան հաշուարկել էին՝ չկայ ժողո-
վուրդ, չկայ Հայկական հարց, չկայ ժառանգորդ, չկայ պահանջատէր: Չարահնար ծրագրի
հեղինակները վստահ էին, որ իսպառ պիտի բնաջնջուի հայութիւնը, երկրէ երկիր ցրուելով՝
անյիշատակ ու անհետ պիտի վերանայ պատմութեան ասպարէզից: Ամեն բան հաշուար-
կել էին, բայց ոչ՝ Աստուծոյ նախախնամութիւնը եւ Աստծուն յուսացեալ ժողովրդի ապրելու
եւ արարելու կամքն ու զօրութիւնը:
Նոյն ջարդարարների արշաւանքներին դիմակայելով՝ ընդդէմ մահու խիզախումով հե-
րոսացած՝ փրկուեց Արեւելեան Հայաստանի փոքրիկ հողակտորը, որի վրայ հաստատուեց
հայոց նոր պետականութիւնը: Մեր ազատ երկրի դրօշի ներքոյ Ծիծեռնակաբերդի բար-
ձունքում Արարատահայեաց վեր է յառնել Մեծ եղեռնի յուշակոթողը, որտեղ լուսեղէն զօ-
րաց գնդերով հոգիներն են երկրի վրայ մեր հողը սրբացրած եւ երկնքում Աստուած փառա-
բանող մեր նահատակների, եւ որտեղ ձեռք-ձեռքի, սիրտ-սրտի միասին է ազգս հայոց: Յա-

վրժապէս այս բարձունքին մեր ցաւն ու արդար ցասումը զօրութիւն դարձաւ եւ ծնունդ առաւ Արցախեան յաղթանակող ոգին:

Փառք քեզ, ժողովուրդ սիրելի, որ չերկնչեցիր մահուան քրքիջից: Խաչդ ուսած անցար Գողգոթայի ճանապարհներով եւ յարութիւն առար յաղթանակած:

Փառք քեզ, ժողովուրդ սիրելի, որ վէրքը սրտիդ բնաւէր տունդ վերստին կառուցեցիր Հայրենիքիցդ հեռու եւ մօտիկ բազում երկրներում եւ շարունակեցիր հայ մնալ ու քրիստոնեայ: Արարող հանճարով շարունակեցիր հաց ստեղծել, կառուցել, գիտութեան ու մշակոյթի բարձունքների հասնել եւ այսպէս ճանաչուած ապրել:

Երիցս փառք քեզ, ժողովուրդ սիրեցեալ, «Ջի ինձ կեանք Քրիստոս է» հաւատով քայլեցիր դէպի քո կեանքի նոր այգաբացը եւ յուսացիր իրաւունքի ու արդարութեան դարի նոր առաւօտն ու այս ճանապարհին մնացիր կանգուն ու արի:

Չենք մոռացել ու չենք կարող մոռանալ Հայոց ցեղասպանութիւնը, մեր պատմութեան այս մեծագոյն ողբերգութիւնը: Չենք մոռացել ու չենք կարող մոռանալ աւերակուած խնկաբոյր երկիրը մեր, հայրենական սրբութիւններն ու բազմադարեայ յիշատակները: Մեզ հետ են մեր բիւրաւոր նահատակները՝ յայտնի ու անյայտ անուններով: Նրանց յիշատակի առջեւ միասին ենք միշտ: Մեզ հետ են ի պաշտպանութիւն մեր ժողովրդի բողոքի ազնիւ ձայն բարձրացրած մեծ մարդասէրները, որոնց շուրթերից մարդկութեան խիղճն էր խօսում Եղեռնի մահասփիւռ օրերին: Մեզ հետ են այն ժողովուրդները, ովքեր մարդասիրաբար ապաստան տուեցին ջարդերից փրկուած բեկորներին հայութեան:

Անցել են ժամանակները, երբ մեր հայրերը չէին կարող ոգեկոչել յիշատակը մարտիրոսացած հայորդիների, երբ միայնակ էին ազգային ողբերգութեան ու վշտի մէջ: Այսօր շատ ազգեր ու պետութիւններ ճանաչում են մեր ժողովրդի հանդէպ գործուած ոճիրը՝ իբրեւ յանցանք մարդկութեան ու մարդկայնութեան դէմ: 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը պիտի ճանաչուի ու դատապարտուի ողջ աշխարհի ու նաեւ Թուրքիայի կողմից՝ այն համոզումով, որ բռնութիւններն ու սպանութիւնները չեն կարող առաջնորդել մարդկութեան ճանապարհը: Խաղաղութիւնն ու ազատ կեանքը, եղբայրութիւնը մարդկանց ու ազգերի միջեւ, արդարեւ, երազն է բոլոր ժողովուրդների:

Մեծ Եղեռնի 90-ամեայ տարելիցի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ողջոյնն ենք բերում աշխարհասփիւռ սիրեցեալ մեր ժողովրդին: Ձեռք-ձեռքի ու սիրտ-սրտի միասին ենք յիշատակի առջեւ մեր անմեղ զոհերի, ովքեր իրենց աչքերը փակեցին մեր ժողովրդի վերածնութեան, մեր Հայրենիքի ազատութեան տեսիլքով: Հաւատարիմ լինենք նրանց տեսիլքին: Ուրտեղ էլ ապրենք, փոխանցենք մեր զաւակներին Արարատի պատկերը նուիրական, Լուսաւորչի Կանթեղն անմար եւ հայրենի մեր հողն ու երկինքը միաւորող Սուրբ Էջմիածնի խորհուրդը յաւէրժական: Ուրտեղ էլ ապրենք, համակ նուիրումով տէր կանգնենք մեր ազգային իղձերին ու ձգտումներին: Պաշտպանենք Արցախի ազատութեան իրաւունքի, Հայոց ցեղասպանութեան ճանաչման մեր արդար դատը: Միասնական ուժերով կառուցենք նոր կեանքը Հայաստանի ու Արցախի եւ հայրենի հողից առած ափինով զօրացեալ ու ծաղկուն պահպանենք Հայ Սփիւռքը: Ապրենք «Ջի ինձ կեանք Քրիստոս է» վստահութեամբ եւ հաւատով, որ Աստուած համախմբելու է մեզ Արարատի փեշերին: Տէրը կամեցաւ ազգիս յարութիւնը, որպէսզի յարատեւի Աւետարանի լոյ-

սով ու կեանքի սիրով աշխարհին բացուած հայի հոգին. եւ հայերէն աղօթքը շարունակի երկինք բարձրանալ՝ հայցելով աշխարհին խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն: Հաւատանք ի Քրիստոս սիրով զօրացեալ առաքինազործ հոգու շնորհներին մեր կեանքում եւ հայոց միացեալ ու պայծառ գալիքին:

*«Հաստատուն կացէք, զոտնոյ կալջիք, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ. եւ զգեցեալ զզրահսն արդարութեան»* (Եփես. Զ 14):

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Տուաւ Կոնդակս ի 3-ն Փետրուարի**
**յամի Տեառն 2005 եւ ի թուին Հայոց ՌՆԾԴ**
**ի տօնի Սրբոց Վարդանանց զօրավարացն՝**
**հազար երեսուն եւ վեց վկայիցն.**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**ընդ համարաւ 285**

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 90-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

(Երևան, 20 ապրիլի 2005 թ.)

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության,
Համաժողովի պատվարժան մասնակիցներ և հյուրեր.

Ողջունում ենք Ձեզ Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցին նվիրված միջազգային այս համաժողովի առիթով և բերում օրհնություն համայն հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Մեր ժողովրդի համար այսօր մեծ մխիթարություն է, որ տասնամյակներ անց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է 20-րդ դարասկզբին Օսմանյան Թուրքիայում իրականացված Հայկական ցեղասպանությունը, որը բազմաթիվ փորձություններ տեսած մեր ժողովրդի պատմության ամենաողբերգական էջն է:

Քաղաքակրթության առաջընթացի, լուսավորության դարում մեր ժողովուրդը հույս ուներ գտնել անձի ապահովություն, մարդկային իրավունքի պաշտպանություն և խաղաղ ու ստեղծագործ կյանքի պայմաններ, բայց բնաջնջվեց Թուրքիայի տարածքում գտնվող իր պատմական Հայրենիքի մեծագույն հատվածի վրա և թուրքական կայսրության հայաշատ բնակավայրերում: Կազմակերպված կոտորածներն ու տարագրությունը վերածվեցին մահվան նախճիրի. ինչ չէր հասցնում սուրը, ավարտում էին սովն ու համաճարակները: Փաստական վկայությունների պակաս չեն զգում այս իրադարձությունների ուսումնասիրությունները: Այսօր մի շարք պետությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը, իբրև մարդկության դեմ գործված մեծագույն ոճիր, վստահություն է ներշնչում Մեզ, որ այն պիտի գտնի համընդհանուր ճանաչում ու արդար գնահատական:

Հայ ժողովրդի համար Ցեղասպանության մեծագույն աղետով սկսված 20-րդ դարը մարդկության պատմության մեջ մնաց իբրև երկու համաշխարհային պատերազմների դար: Նույն այն մտածողությամբ, որով կազմակերպվեցին սոսկալի, վայրագ ջարդերը հայերի, ծնունդ առան համակենտրոնացման ճամբարներն ու գազախցիկները: Նոր դար է սկսվում և պիտի սկսվի նոր մտածողությամբ՝ բռնությունն ու ոճիրը մերժող և մարդասիրական արժեքները հաստատող: Դար, որի մեջ, ինչպես սաղմոսերգուն է ցանկանալով ցանկանում՝ ողորմությունն ու ճշմարտությունը հանդիպեն և արդարությունն ու խաղաղությունը համբուրվեն: Մենք՝ մարդիկ, պիտի կերտենք այդ դարը: Պատմությունը վկայում է, որ ավերներից սովորաբար ավելի հեշտ վերականգնվում են քաղաքները, բարեփոխվում են կյանքի պայմանները, քան փոխվում են մարդկանց հոգեբանությունն ու մտածողությունը, կյանքի բարոյական չափորոշիչները, որոնք և են իրական երաշխիքները առաջընթացի և հույսը՝ գալիքի: Թուրքիայի համար նույնպես Հայոց ցեղասպանության ճանաչումը պիտի

դառնար մարդկային իրավանց և ժողովրդավարության իրավունքի նվաճում, առանց որի Թուրքիան պիտի դժվարանա կառուցել ազատ, արժանապատիվ ու երջանիկ կյանք:

Սիրելիներ, բոլոր ժամանակների գերագույն ձգտումն ու նպատակը, գերագույն ջանքը պիտի լինի, որպեսզի խաղաղանակող մնան մարդասիրությունը, իրավունքն ու արդարությունը՝ ընդդեմ ատելության ու թշնամության, անհանդուրժողության ու պատերազմի և այլ չարիքների, որոնք տեղ ունեն արդի մեր իրականության մեջ, դարի մարտահրավերներն են մարդկության առջև ծառացած:

Միջազգային ներկայացուցչական այս համաժողովը նույնպես կոչված է մեր ժամանակի մարտահրավերներին անդրադառնալու: Հայոց ցեղասպանության 90-ամյակի հիշապակումը սոսկ առիթ չէ, այլ նաև՝ հրամայական՝ այս առումով: Մեր մաղթանքն է, որ համաժողովը իր նպաստը բերի ավելի լավ, ավելի բարեգործ աշխարհ ունենալու մարդկության հույսերի ու ձգտումների մարմնավորման գործընթացներում:

Մեր գնահատանքն ենք բերում հավաքի կազմակերպիչներին և Ձեզ բոլորիդ և ամենայն հաջողություններ մաղթում համաժողովի աշխատանքներին:

Թող Տերը օրհնի մեզ և օրհնի խաղաղության ու արդարության ու ազգերի միջև եղբայրության ճանապարհները:

Աղոթք և օրհնություն մեկ ու կես միլիոն անմեղ զոհերի հիշատակին:

Աստծո ողորմությունը, շնորհն ու սերը թող լինի աշխարհի և մեզ հետ: Ամեն:

# ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Եվս մեկ ապրիլ անցավ, և Հայոց Մեծ եղեռնին հաջորդող ապրիլների թիվը բոլորեց իննը տասնամյակը:

Նահատակներով հարուստ մեր պատմության մեջ 1915 թվականը ավելացրեց հավաքական մի նոր անվանում՝ «Մեր Նահատակները», ովքեր մեր պատմական հայրենիքում ընկնելով հայրենի օջախների շեմերին, գաղթի ճանապարհներին և Դեր-Զորում, անցնող տասնամյակներին շարունակեցին լուռ քայլել և ընթանալ մեր հետ, կենդանիորեն ներկա լինելով մեր կյանքում:

Մեր նահատակներն իրենց դրոշմը դրեցին մեր պատմության հետագա ընթացքի վրա՝ պատգամելով հավատարիմ մնալ այն արժեքներին, որոնց համար նրանք իրենց կյանքով վճարեցին:

Մեր բազմադարյան պատմությունը 1915 թվականից հետո ասես նորից վերսկսվեց որպես Հայոց Մնացորդացի վերապրումի և վերհառնումի շրջան, երբ իր պատմական Հայրենիքից տարագրված հայությունը 1920-1930-ական թթ. հայկական Սփյուռքի անծայրածիր տարածքներում իր ազգային-հոգևոր ինքնությունը պահպանելու համար նախ վերականգնեց իր եկեղեցական-կրթական կառույցները:

Զարդերի մղձավանջին այնուհետև հաջորդելու էր կորսված հայրենիքի վերհուշը, հայրենակցական տարբեր միությունների ստեղծումը, և 1950-1960-ական թվականները նշանավորվելու էին արևմտահայ բնաշխարհի տարբեր նահանգներին, գավառներին ու առանձին բնակավայրերին նվիրված տեղագրական-հուշագրական հատորների լույսընծայմամբ:

1915 թվականից կես դար անց՝ 1965 թ. ապրիլի քսանչորսին Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի աննախադեպ ոգեկոչումը թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում, որը մի նոր հզոր լիցք հաղորդեց ազգային ինքնագիտակցությանը, եկավ վկայելու, որ ժամանակը թեև ամոքում է վշտերը, սակայն չի ջնջում հիշողությունը:

Այս իրողությունը հավաստվեց նաև 90-ամյակի ոգեկոչումներով, երբ թե՛ Հայաստանի և թե՛ Սփյուռքի հայությունը, որը վերապրողների արդեն չորրորդ և հինգերորդ սերունդներն է ներկայացնում, ոչ միայն գաղութահայ ներքին կյանքում, այլև իրենց ապրած երկրներում կազմակերպված միջազգային տարբեր ձեռնարկումներով մի նոր աստիճանի բարձրացրեց հայկական ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցը:

Ընդլայնվեց նաև հայկական ցեղասպանության ընկալման և դրանով պայմանավորված մեկնաբանման շրջանակը, երբ Մեծ Ոճիրի փաստագրական նկարագրությանը հավելվեցին և կատարվածին տրվող պատմա-քաղաքագիտական բացատրությունները և գնահատականները:

90-ամյակի ձեռնարկումները այսպիսով եկան մեկ անգամ ևս հավաստելու, որ հաջորդող տասնամյակները ևս ոչ թե մոռացության են տալու փեղի ունեցածը, այլ տասնամյակից տասնամյակ արծարծվելու են նորովի, հարաբերվելով մեր ազգային ինքնության և համամարդկային արժեքների ու միջազգայնորեն ընդունված չափանիշների հետ, որովհետև «արյան արդարոյ աղաղակէ», սպառնալով, թե «եկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի» (Մատթ. ԻԳ 35):

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2005 թ. ապրիլի 3-ին, կյանքի 85–րդ տարում, վախճանվեց Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապը:

Ապրիլի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապի մահվան առիթով հանուն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և համայն բարեպաշտ հոտի ցավակցական գիր է հղել Վատիկան և իր սրտակցությունը հայտնել Կաթոլիկ Եկեղեցու սգակիր ողջ հոգևոր դասին ու հավատացյալներին:

Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի կատարվեց հոգեհանգստյան մասնավոր արարողություն երջանկահիշատակ Հովհաննես-Պողոս Բ Պապի հոգու հանգստության համար: «Ս. Էջմիածնի Մայր տաճարի Իջման Սուրբ Սեղանի առջև, սրտակից մեր կաթոլիկ եղբայրներին ու քույրերին իրենց վշտի մեջ, Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված՝ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Հովվապետ, Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի հոգու հանգստության համար: Նորին Սրբության մահը մեծ կորուստ էր ողջ քրիստոնեական աշխարհի համար: Նա եղավ անդուլ քարոզիչ խաղաղության և պաշտպան՝ քրիստոնեական արժեքների: Նշանակալի էին Հովհաննես-Պողոս Բ Պապի հարատև ճամփորդությունները՝ նպատակաուղղված ազգերի, պետությունների և կրոնների համերաշխության, համագործակցության և փոխհասկացողության ոգու ձևավորմանն ու ամրապնդմանը: ...Թող Բարձրյալ Տերը մխիթարություն պարգևի նրա բարեպաշտ և հավատավոր հոտին»,- մասնավորաբար ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգեհանգստյան արարողությունից առաջ հավատացյալներին ուղղված իր խոսքում:

Ապրիլի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը Հայաստանի կառավարական պատվիրակության հետ ժամանեց Հռոմ՝ մասնակցելու Ս. Պետրոսի Աթոռի 264-րդ Գահակալի թաղման արարողությանը:

Հռոմում Հայաստանից եկած պատվիրակությանը միացան Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Կ.Պոլսի հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը, ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Նարեկ եպս. Ալեմեզյանը, Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Առեն արք. Շահինյանը:

Արարողությանը ներկա էին քույր Եկեղեցիների առաջնորդներ ու ներկայացուցիչներ. Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ը, Հունաստանի և Աթենքի Արքեպիսկոպոս Քրիստոդուլոսը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու Արտաքին Եկեղեցական հարաբերությունների պատասխանատու միտրոպոլիտ Կիրիլը և այլ բարձրաստիճան հոգևորականներ և շուրջ 200 երկրների նախագահներ, բարձրաստիճան պաշտոնատար անձինք և պատվիրակություններ:

2005 թ. ապրիլի 19-ին Հռոմում կարդինալների կոնկլավը Հավատո քննության հանձնաժողովի և Կարդինալների խորհրդի նախագահ կարդինալ Յոզեֆ Ռացինգերին ընտրեց Հռոմի 265-րդ Սրբազան Քահանայապետ:

Ապրիլի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Նորին Սրբություն Բենեդիկտ ԺԶ Պապին՝ Հռոմի Եպիսկոպոս և Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ ընտրվելու առիթով:

Ապրիլի 23-ին Վատիկան մեկնեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվիրակությունը՝ հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության մասնակցելու Հռոմի Քահանայապետ և Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ Նորին Սրբություն Բենեդիկտ ԺԶ նորընտիր Պապի գահակալության արարողությանը: Պատվիրակության կազմում էին Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը, Մայր Աթոռի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատվիրակությունը, գլխավորությամբ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի, ապրիլ 24-ին մասնակցեց Նորին Սրբություն Բենեդիկտ ԺԶ Պապի գահակալության արարողությանը և Կաթոլիկ Եկեղեցու նորընտիր Հովվապետի մատուցած Ս. Պատարագին:

Հաջորդ օրը, ապրիլի 25-ին, Ուղղափառ Եկեղեցիների, ինչպես նաև քրիստոնեական այլ հարանվանությունների պատվիրակությունների ընդունելության ժամանակ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի՝ Երուսաղեմ մեկնելու պատճառով Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը ներկայացրեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: Սրբազան Հայրը Հռոմեական Եկեղեցու նորընտիր Գահակալին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորանքներն ու բարեմաղթանքները: Բենեդիկտ ԺԶ Պապը շնորհակալություն հայտնեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվիրակության մասնակցության ու աղոթակցության համար և իր եղբայրական ջերմ ողջույնները փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետին: Նորին Սրբությունը հանդիպման ժամանակ նաև նշեց, որ հիշել է ապրիլի 24-ի մասին և աղոթել Հայոց ցեղասպանության զոհերի հոգիների համար:

Քանի որ ապրիլյան այս համարը նվիրված է Հայոց Մեծ եղեռնի 90-ամյակին, ուստի Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապի վախճանման և Հռոմեկան Եկեղեցու նոր Գահակալ Բենեդիկտ ԺԶ Պապի ընտրությանը նվիրված նյութերը կներկայացնենք ամսագրի հաջորդ համարում:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ — ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳ ԵՎ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅԱՆ ՀԻՍՈՒՆԱՄՅԱԿՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿԵԱՆ, ՈՐ Ի ԲՈՒԽԱՐԵՍՏ, ՌՈՒՄԻՆԻԱ

Սիրելի Սրբազան,

Ձեր ծննդեան նօթանասունհինգ եւ վարդապետ ձեռնադրութեան յիսուներորդ տարեդարձերի ուրախ առիթով Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Այսօր՝ տարիների հեռուից ուրախ ենք անդրադառնալու շնորհաշատ եւ բազմավաստակ հոգեւորականիդ ազգօգուտ ու եկեղեցաշէն երկարամեայ գործունէութեանը: Մայր Եկեղեցու անդաստանում առաջին քայլերը կատարելով երջանկայիշատակ Գեւորգ Զ եւ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետների հայրական բարեխնամ հոգածութեան ու առաջնորդութեան ներքոյ, Դուք դարձաք բարի հովիւ ու նուիրեալ ծառայ Ռումինիայում եւ Բուլղարիայում բնակեալ մեր ժողովրդի համար՝ Աստուծոյ կենաց խօսքի անյողդողդ քարոզչութեամբ աներեր պահելով բարեպաշտ հայորդեաց «զհաւատոցն շինուած» եւ «զսէրն հայրենեաց»:

Առիթ ունեցել ենք Հովուապետական այցով լինելու Ռումինիայի եւ Բուլղարիայի Տիրախնամ թեմերում եւ բերկրանքով ականատես դառնալ առաջնորդական առաքելութեան մէջ արձանագրած Ձեր ձեռքբերումներին, ազգային, կրթական եւ բարեսիրական իրագործումներին եւ այն յարգանքին ու հեղինակութեանը, որ արժանապէս վայելում էք Դուք՝ Ձեր եր-

կարամեայ արդիւնաւոր ծառայութեամբ: Վստահ ենք, որ Ձերդ Սրբազնութեան հարուստ փորձառութեան շնորհիւ Տիրախնամ թեմերը Ռումինիոյ եւ Բուլղարիոյ պիտի շարունակեն շէնանալ ու պայծառանալ՝ ի մխիթարութիւն բարեպաշտ մեր ժողովրդի:

Գոհութիւն Աստուծոյ, որ մեր Եկեղեցուն պարգեւել է Ձեզ պէս նուիրեալ սպասաւոր: Ձեր երկարամեայ նախանձախնդիր ծառայութեամբ Դուք լաւագոյն օրինակ էք երիտասարդ մեր հոգեւորականաց համար:

Ձեր յոբելեանների բերկրաշատ առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Օրհնութեան այսու գրով յղում ենք Ձեզ Մեր սէրն ու գնահատանքը՝ ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալի խնամքը հայցելով Ձեզ եւ հովանին՝ Ձեր եկեղեցաշէն գործունէութեանը:

Թող Ամենակալ Տէրը քաջառողջ եւ արեւշատ կենաց օրեր պարգեւի Ձեզ եւ Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ անսասան պահի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ամենեսեան ամէն:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 6-ն Ապրիլի
Ցամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 551

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՊԵՏՐՈՍ ԵՎ ԿԱՐԻՆԵ ՏԱՂԼՅԱՆՆԵՐԻՆ, «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՊԵՏՐՈՍ ԵՒ ԿԱՐԻՆԷ ՏԱՂԼԵԱՆՆԵՐ, ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ, ԱՄՆ

Փառք ենք վերառաքում առ Բարձրեալն Աստուած, որ Միացեալ Նահանգներում ապրող մեր ժողովրդի զաւակաց հոգիներում վառ են ազգային ու եկեղեցական մեր աւանդներն ու սրբութիւնները, եւ հաւատը նրանց կենդանի է գործերով:

Յարգարժան Տէր եւ Տիկին Տաղլեաններ,

Գոհունակութեամբ տեղեկացանք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանից ազգանպաստ ու եկեղեցանուէր Ձեր ձեռնարկումների մասին, որոնք բարեզարդում են Ձեր կեանքի ճանապարհը եւ յաւէրժացնում Ձեր անունը՝ որպէս ազնիւ բարեգործներ մեր Սուրբ Եկեղեցու: Հայրապետիս համար ուրախութիւն է անդրադառնալ, որ Դուք առատաձեռն նուիրաբերութիւններ էք կատարել առաջնորդանիստ Մայր Տաճարի պայծառութեան համար, ինչպէս նաեւ Ձեր միջոցներով մեծապէս օժանդակել թեմի տարբեր ծրագրերի իրագործմանը:

Աստուածահաճոյ Ձեր գործունէութեան ընթացքում Սուրբ Յովհաննու Կարապետ եկեղեցին հայկական ոճով վերակառուցելու Ձեր ազնիւ յանձնառութիւնը մի նոր վկայութիւն է Ձեր մեծ եկեղեցանուիրումի եւ աստուածսիրութեան: Գնահատելի նշանակութիւն պիտի ունենայ Ձեր ազնիւ բարերարութեամբ եկեղեցուն կից սրահի կառուցումը, որը, ծառայելով եկեղեցու հովանու ներքոյ մշակութային եւ կրթական ծրագրերի, ազգային-եկեղեցական հանդիսութիւնների ու միջոցառումների իրականացման նպատակներին, առաւել պիտի նպաստի թեմից ներս համայնքային կեանքի աշխուժացմանը: Արդարեւ, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու շուրջ համախմբումով է, որ մեր ժողովուրդը անխաթար պիտի պահպանի իր հոգեւոր, ազգային ու մշակութային կեանքը:

Շնորհիւ Ձեր եւ Ձեզ պէս նուիրեալ ու յանձնառու հայորդեաց ազնիւ ջանքերի՝ ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմը բարգաւաճում է՝ պայծառութիւն յաւելելով մեր Եկեղեցու առաքելութեանը: Աստուածսիրութիւնն է փայլում Ձեր գործերում, եկեղեցասիրութիւնն ու ազգասիրութիւնը: Ձեզ պէս հաւատաւորներին են ուղղուած Յարուցեալ մեր Տիրոջ ու Փրկչի խօսքերը. «Երանի ողորմածներին ... ցնծացէք եւ ուրախացէք, որովհետեւ ձեր վարձը երկնքում շատ է»:

Համայն հայոց մեր նուիրական սրբօրրանից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմագին ողջոյնով Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր ծառայութիւնների բարձր գնահատանքով՝ սիրով ընդառաջում ենք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի բարեջան առաջնորդի ազնիւ խնդրանքին եւ շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Փրկչի Իջման Սուրբ Սեղանի առջեւ Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Տէրը մեր՝ բարեխօսութեամբ առաքելաշաւիղ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մեր Հայրապետի, հանապազ օրհնութիւն բաշխի Ձեզ եւ Ամենախնամ Աջի ներքոյ շէն ու երջանիկ պահի ու պահպանի ընտանեկան Ձեր յարկը՝ շնորհելով յարանորոգ յաջողութիւններ հայրենանուէր ու եկեղեցաշէն Ձեր բարի գործերին:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 14-ն Ապրիլի
Ցամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 298

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Ավետման տոնի խաստառատ խորհրդով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում համայն մեր ժողովրդին և շնորհավորում կանանց՝ Մայրության ու գեղեցկության օրվա կապակցությամբ:

Փրկչի գալստյան մասին Սուրբ Աստվածածնին տրված հրեշտակածայն Ավետիսով այսօր նորոգվում են մեր հոգիները, հավատով զորանում՝ երկնքի բացված ողորմության ու շնորհի առջև:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ մեր կյանքում Աստծո ներկայության բարի լուրը հաստատվի ընտանեկան բոլոր հարկերից ներս և բերի օրհնություն, լույս ու խնդություն:

Սուրբ Աստվածածնի գթառատ բարեխոսությամբ հայցում ենք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի խաղաղությունը աշխարհին, մեր Հայրենիքին ու ժողովրդին: Թող Տերը ամենառատ Իր շնորհներով զարդարի տիկնանց ու օրիորդաց և ամենախնամ Իր հովանու ներքո պարգևի զավակներով օրհնյալ, արևշատ ու երջանիկ կյանք:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
7 ապրիլի 2005 թ.

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2005 թ. ապրիլ ամսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակով՝

**«Ս. Ներսես Շնորհալի»** շքանշանով պարգևատրվել է.
Դավիթ Նաջարյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

**Օրհնության գիր** է տրվել
Նվարդ Ազիզյան (Ամման, Հորդանան)
Անի Այնենճյան (Ամման, Հորդանան)
Շաքե Ավազյան (Ամման, Հորդանան)
Ժանեթ Չզրգճյան (Ամման, Հորդանան)
Շուշան Սարգիսյան (Ամման, Հորդանան)
Սիլվա Տարազճյան (Ամման, Հորդանան)
Մարալ Տեմիրճյան (Ամման, Հորդանան)
Քնարիկ Քեչեճյան (Ամման, Հորդանան)
Բյուզանդ Փիրանյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Պատգամավորական ժողովին
ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Հոգևորականաց համագումարին
ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Վան-Վասպուրական հայրենակցական միությանը
ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Հոգևորականաց համագումարին
ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Տիկնանց համագումարին
ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Թեմական պատգամավորական ժողովին

**Լանջախաչ կրելու իրավունք** է տրվել
Տ. Կտրիճ քահանա Դևնճյան (Մայր Աթոռ Ս. Էջմիածին)




## *ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԻՆՆՍՈՒՆԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ*

### ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ՄԱՏՌԱՆ ՀՈՂԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի առիթով Ծիծեռնակաբերդում, Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրի մոտ, կկառուցվի մատուռ: Ապրիլի 23-ին մատրան հուշաքարի մոտ, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հողի օրհնության կարգ:

«Ծիծեռնակաբերդի այս բարձունքին կանգնեցվելու է սրբազան մատուռ, որտեղ մշտահունչ աղոթք է կատարվելու մեր նահատակների լույս հիշատակին: Այն կանգնեցվում է, որպեսզի այս մատուռից ճառագող օրհնությունը պատի մեր մեկ ու կես միլիոն զոհերի անթաղ ոսկորները և այս մատրան հարկը դառնա անմեղ զոհերի հոգիների բնակարան: Սուրբ մատրան առջև մեր ժողովուրդը պիտի գա ուխտի, որպեսզի մասսահայաց Եղեռնի հիշատակաց այս հուշահամալիրների ներկայությամբ հաստատի իր հավատարմությունը մեր նախնյաց սրբազան հավատքին, ուխտի՝ ապրել նրանց տեսիլքներն ու երազները կյանքի կոչելու վճռականությամբ ու նախանձախնդրությամբ: Եկեղեցու զանգերը այս բարձունքից պիտի հնչեն, տարածվեն ի Սփյուռս աշխարհի որպես կոչ ու հրավեր մեր ժողովրդին, որպեսզի հայությունը շարունակի հետևողականորեն հետամուտ լինել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման նվիրական գործին, որպեսզի ոչ ոք չհամարձակվի երբեք ազգերի ոչնչացման չարահնար ծրագրեր մտածել»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը:

Մատուռը կկառուցվի համազգային ընծայաբերությամբ:

Մինչ արարողությունը, Հայրապետական թափորը և բոլոր ներկաները, ի հիշատակ Հայոց Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների, աղոթք բարձրացրին նաև Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի անմար կրակի մոտ:



ՄԱՏՈՒՌԻ ՀՈՂԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ
ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ՄԱՏՈՒՌԻ ՏԵՂՈՒՄ ԿԱՆԳՆԵՑՎԱԾ ՀՈՒՇԱՔԱՐԸ



ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԱՆՄԱՐ ԿՐԱԿԻ ԱՌՋԵՎ



ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Արարողությանը ներկա էին ՀՀ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մանուկ Թոփուզյանը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ: Արարողությանը մասնակցեցին նաև Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի առիթով Հայաստան ժամանած քույր Եկեղեցիների բարձրաստիճան եկեղեցականներ ու պատվիրակներ՝ Մոսկվայի Պատրիարքության միջեկեղեցական հարաբերությունների բաժնի փոխնախագահ, Մոսկվայի թեմի առաջնորդական փոխանորդ Մարկ եպս. Եգորևսկին, Ալեքսանդր սրկ. Վասյուտինը, դոկ. Սերգեյ Գովորունը (Ռուս Ուղղափառ Եկեղեցի), Մաթթեոս արքեպիսկոպոսը (Ասորի Ուղղափառ Եկեղեցի), Սերաֆիմ արքեպիսկոպոսը (Վրաց Ուղղափառ Եկեղեցի), Կոռնելիու եպս. Բարլադեանուլը (Ռումին Ուղղափառ Եկեղեցի), Թերմոպիլեի Իոաննիս եպիսկոպոսը (Հույն Ուղղափառ Եկեղեցի), Դեյվիդ եպս. Թասթինը (Անգլիկան Եկեղեցի), ինչպես նաև Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահ Վեր. Ժան Առնոլդ դը Կլերմոնը:

Ապրիլի 24-ին՝ 1915 թ. Հայոց ցեղասպանության հիշատակության օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ այցելեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Մեծ եղեռնի անմեղ նահատակների:

Արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, պետական և հոգևոր այրեր, Հայաստան ժամանած քույր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ ու պատվիրակություններ, օտարերկրյա դիվանագետներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԱՊՐԻԼԻ ՔՍԱՆՉՈՐՍԸ
# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Փառեն եպս. Ավետիքյանը:

Պատարագի ընթացքում սրբազան Հայրն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 90-ամյակին (տես էջ 3):

Հավարտ Ս. Պատարագի Եղեռնի 90-ամյա տարելիցի առիթով Հայաստան ժամանած քույր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ հանուն իրենց Եկեղեցիների պետերի խոսք ուղղեցին համայն հայ ժողովրդին՝ հայտնելով իրենց սրտակցությունը:

«Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի անունից թույլ տվեք ինձ ողջունել բոլորիդ, որ հավաքվել եք այսօր այստեղ՝ հիշատակելու սարսափելի ողբերգությունը, որ ապրեց հայ ժողովուրդն իննսուն տարիներ առաջ:

Ռուս ժողովուրդը մի ասացվածք ունի. «Ընկերը ճանաչվում է դժբախտության մեջ»: Ռուսաստանը և Ռուս Ուղղափառ Եկեղեցին մշտապես կիսել են եղբայր հայ ժողովրդի և Հայ Առաքելական Եկեղեցու ուրախությունն ու դժբախտությունը:

Այս օրերին Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը, Մոսկվայի և Համայն Ռուսիո Սրբազան Պատրիարք Ալեքսի Բ-ի օրհնությամբ, գտնվում է Հայաստանում՝ կիսելու համար հայ ժողովրդի վիշտը այն ողբերգական իրադարձությունների, որ տեղի ունեցան շուրջ իննսուն տարի առաջ, և որոնք, չնայած այսքան երկար ժամանակի, ժողովրդի հոգիներում և պատմական գիտակցության մեջ խորը հետք են թողել:

1915 թվականի ցեղասպանությունը դարձավ հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունը: Այն եղավ նաև մարդկության և մարդկային կյանքի դեմ գործված մեծագույն հանցանքներից մեկը արդի պատմության մեջ: Յուրաքանչյուր մարդկային կյանք Աստծո մեծագույն պարգևն է, և այն ոչնչացնելը մեծագույն մեղք է: Սակայն երբ խոսքը 1,5 մլն սպանված անմեղ կյանքերի մասին է, ողբերգությունը և ցավը անսահման են դառնում:

Հայ ժողովրդի հանդեպ ունեցած մեր կարեկցանքը մեր ազգի սեփական պատմական փորձառության վրա է հիմնված: Ռուս ժողովուրդը անցյալ դարում ապրեց բազում ողբերգություններ, որոնք խլեցին միլիոնավոր կյանքեր: Ռուս ժողովրդի հետ միասին տառապեց նաև Ռուս Ուղղափառ Եկեղեցին, որն ապրեց ողջ պատմության ընթացքում քրիստոնեության դեմ տեղի ունեցած ամենադաժան հալածանքներից մեկը: Սակայն հալածանքների արդյունքում նա ձեռք բերեց բյուրավոր նոր մարտիրոսներ, որոնց արյունը, ինչպես և քրիստոնեության առաջին դարերում, սկիզբ տվեց Եկեղեցու և ժողովրդի հոգևոր կյանքի վերածննդին, որը մենք ապրում ենք այսօր: Նմանապես և Հայաստանի համար իննսուն տարի առաջ հեղված իր որդիների և դուստրերի արյունը թող պարգևի նոր բարձունքներ և նպաստի հայ ժողովրդի բարգավաճմանը: Թող Ցեղասպանության հիշողությունը միշտ մնա հայերի սրտերում՝ նպաստելով հայ ժողովրդի միաբանությանը և նրա հոգևոր զորացմանը»,- ասաց Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի Պատրիարքության միջեկեղեցական հարա-



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՄՈՏ
ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

րնրությունների բաժնի փոխնախագահ, Մոսկվայի թեմի առաջնորդական փոխանորդ Մարկ եպս. Եգորևսկին:

Այնուհետև Հույն Ուղղափառ Եկեղեցուց Իոաննիս եպիսկոպոսը ընթերցեց Աթենքի և Համայն Հունաստանի Արքեպիսկոպոս Խրիստոդուլոսի գիրը՝ ուղղված Ամենայն Հայոց Հայրապետին.

«Խոր ցավի զգացումներով Հունաստանի Եկեղեցին և իր հավատացյալները մասնակցում են 20-րդ դարում իրագործված ամենասարսափելի հանցանքներից մեկի 90-ամյակի հիշատակության միջոցառումներին, երբ զոհվեցին ավելի քան 1.5 միլիոն հայեր ամբողջ Օսմանյան Կայսրությունում: 2 միլիոն հայկական բնակչության ավելի քան կեսը կամ սպանվեցին փողոցներում և իրենց տներում, կամ էլ ուղարկվեցին աշխատանքային զումարտակներ, որտեղից այլևս չվերադարձան: Չնայած դրանք տեղի ունեցան հիմնականում 1915-1918 թվականներին երիտթուրքերի կողմից, սակայն դրանց նախորդել են սուլթանի կառավարության իրագործած հալածանքները հայ ժողովրդի նկատմամբ 1890, 1893, 1895 և 1896 թվականներին՝ սկսյալ Տրապիզոնից ընդհուպ մինչև Կիլիկիա 1921 թվականին: Այս հալածանքները պատճառ դարձան, որպեսզի հայկական Սփյուռքը ահռելի չափերի հասնի: Հայտնի է, որ միայն Հունաստանը, չնայած այն ծանր իրավիճակին, որում այդ ժամանակ գտնվում էր, ընդունեց և ապաստան տվեց 50000 հայ գաղթականների: Այդ ժամանակվանից ի վեր հայկական համայնքը մեր երկրում ապրել է կողք-կողքի մեզ հետ խաղաղությամբ և ներդաշնակությամբ և իր նպաստն է բերել հունական հասարակությանը: Անշուշտ սա նորություն չէ, քանի որ մեր երկու հինավուրց ժողովուրդների հարաբերությունները շատ վաղ անցյալ ունեն և հասնում են պատմության խորքերը:

...Փաստորեն, մեր երկու ժողովուրդները ընդհանուր պատմական ուղի են անցել և ընդհանուր հալածանքներ են կրել հանուն իրենց քրիստոնեական հավատքի և ինքնության: Ակնհայտ է, որ գրեթե մեկ միլիոն հույներ են սպանվել Փոքր Ասիայում Օսմանյան և Նոր թուրքերի ձեռքով: Այս պատճառով է, որ հույն ժողովուրդը, թերևս ավելի, քան մյուսները, գիտեն, թե նահատակության ճանապարհով անցած հայ ժողովուրդը ինչեր է կրել մեր ընդհանուր հալածիչների կողմից: Այս պատճառով է, որ մենք այսքան ուժգին ենք վշտակցում այս հանդիսավոր առիթով:

Մենք միանում ենք ազգային բնաջնջման և շովինիզմին զոհ գնացած բոլոր անմեղ զոհերի հոգեհանգստյան աղոթքին: Թող նրանց նահատակությունը զուր չանցնի, ավելին՝ թող նրանց զոհաբերությունը այսօր ապրողներին հիշեցնի մոլեռանդության և անհանդուրժողականության սարսափելի հետևանքների մասին: Թող դա մի ողջ մարդկությանը ծըգտելու խաղաղության, հանդուրժողականության և փոխըմբռնման աշխարհի բոլոր ժողովուրդների հետ միասին».- ասված է Հունաստանի Արքեպիսկոպոսի ուղերձում:

Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածին սրտակցության գիր էր ուղղել նաև Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ռոուան Վիլյամսը: Այն ընթերցեց Դևվիդ եպս. Թասթինը.

«Միասիրտ ցավով մենք կանգնած ենք բոլոր հայերի կողքին իննսուն տարի առաջ տեղի ունեցած ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչման այս պահին:

որից մարդկությունը չկարողացավ քաղել այն դաս-
Քսաներորդ դարի ողբերգությունն է, որից մարդկությունը կարող էր մեզ սովորեցնել, եթե մենք
ը դասերը, որ 1915 թվականի արյունահեղությունը կարող էր մեզ ժամանակ կատարվածին: Այն փաստը, որ այդ-
քաջություն ունենայինք դիմագրավել այդ ժամանակ կատարվածին: Այն փաստը, որ այդ-
քան շատերն են նույն ճակատագրին արժանացել այս վերջին դարում, ոչ մի անձի մատ չի
ջնջում, այլ յուրաքանչյուր հերթական ցեղասպանություն նախատում է մեզ և պահանջում
մեղքի ընդհանրական խոստովանություն:

Ինչպես գրել է Ձեր նրջանկահիշատակ նախորդը՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրա-
պետը՝ «Քրիստոնյա Հայաստանի ամբողջ պատմության ընթացքում ցնցող է նահատակու-
թյան համարյա չընդհատվող շղթան», որը խորհրդանշում է, թե «Դիմացկունությունը հայ
քրիստոնեական վկայության էությունն է»: Այս պատմական վկայության խորքերից և 1915
թվականի սարսափելի ցեղասպանությունից ճառագում է Քրիստոսի անմար լույսը: Այս
լույսի մեջ մենք կիտնում ենք լույս և այսպիսով կարող ենք «Ալելուիա» ասել այդքան մեծ
թվով նահատակների շիրիմների և հիշատակի առջև»:

Իր հերթին, Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահ Վեր. Ժան Առնոլդ դե Կլերմոնը հրապարակեց Հայոց ցեղասպանության 90-ամյակի առիթով կատարված՝ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) նախագահության հայտարարությունը:

Այնուհետև Մայր Տաճարի հարևանությամբ ի հիշատակ Եղեռնի նահատակների կանգնեցված Աղոթքի և ուխտի խաչքարի մոտ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

## ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԹԵՄԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 90-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ապրիլի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ և քահանա հայրեր մեկնեցին Նոր Նախիջևանի և Ռուսաստանի, ինչպես նաև Ուկրաինայի հայոց թեմերի տարբեր քաղաքներ, ուր մասնակցեցին Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի առիթով կազմակերպված միջոցառումներին, կատարեցին հոգեհանգստյան հատուկ պաշտոններ Մեծ եղեռնի բյուրավոր զոհերի հոգիների հանգստության համար, ընթերցեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 90-ամյակին:

Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ էին մեկնել Տ. Տաճատ աբղ. Ծատուրյանը (Եկատերինբուրգ), Տ. Զավեն քհն. Հակոբյանը (Սարատով), Տ. Զավեն քհն. Մարկոսյանը (Քիշնև, Մոլդովա), Ուկրաինայի հայոց թեմ՝ Տ. Հովսեփ քհն. Ալեքսանյանը (Լուգանսկ):

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 24-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան Էկումենիկ արարողություն՝ Հայոց Մեծ եղեռնի նահատակների հոգիների հանգստության համար:

Արարողությունից առաջ Նորին Սրբությունն իր Հայրապետական խոսքն ուղղեց ներկաններին՝ ասելով.

*«Սիրելի հավատացյալ ժողովուրդ.*

*Հիշատակի և ոգեկոչման օրեր ենք ապրում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 90-ամյակին: Մեր պատմության մեծ ողբերգության տարելիցի առիթով մեզ հետ են և խոնարհումի ու հարգանքի իրենց տուրքն են բերում շատ ազգերի ներկայացուցիչներ և Հայոց ցեղասպանությունը իրենց որոշումներով դատապարտող շատ պետություններ:*

*90-րդ Ապրիլ 24-ն է այսօր: Ողջ աշխարհում հայոց եկեղեցիների Սուրբ Խորաններից սրբազան Պատարագի արարողությամբ աշխարհասփյուռ ազգս հայոց աղոթք է բարձրացնում երկինք և աշխարհի բոլոր կողմերում խոնարհվում Մեծ եղեռնի հուշակոթողների առջև: Ծիծեռնակաբերդի բարձունքում հայոց պետության ավագանու, բազմահազար մեր ժողովրդի, ազգաց ու պետությունների ներկայացուցիչների հետ խոնարհվեցինք մեր նահատակների անմար հիշատակի առջև և աղոթական ամենաջերմ զգացումով երկնային ժամերգության այս խաղաղ պահին վերստին հայց ենք բարձրացնում առ Աստված նրանց հոգիների հանգստության համար: Աղոթում ենք, որ Բարձրյալ Աստված խաղաղության ու բարու մեջ պահպանի աշխարհը, որպեսզի ոչ մի ժողովուրդ չապրի ցեղասպանության ողբերգությունը: Աղոթում ենք կյանքի շենության ու առաջընթացի և ազգերի եղբայրության համար, որ Աստծո արարչագործության իմաստն ու նպատակն է, քանզի կյանքի ճանապարհներն են Տիրոջ ճանապարհները: «Նա ամեն ինչ հաստատել է կյանքի համար, և աշխարհի գործերը փրկության համար են» (Իմաստ. Սող. Ա 14):*

*Այս հավատով մեր ժողովուրդը վերապրեց Ցեղասպանության աղետը և իր վերածնված կյանքի հույսերով է հիշատակում նրա 90-ամյա տարելիցը: Մեր ժողովուրդը հավատում է այն արդար օրվա արշալույսին, երբ համընդհանուր ճանաչում և դատապարտում կգտնի 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը:*

*90 տարի առաջ երիտթուրքական իշխանությունները որոշեցին հայ բնակչության բնաջնջման ճանապարհով վճռել «Հայկական հարցը»: Առաջին աշխարհամարտի պատերազմական խառնակ ու շփոթ իրավիճակները հարմարացրին ժա-*

մանակ դարձավ կազմակերպելու համար հայոց ջարդերն ու տեղահանություն-ները: Թեև իր ժողովրդից դատարկվեց Արևմտյան Հայաստանը: Կորցրեցինք երեք տասնյակից ավելի թեմեր, հազարավոր եկեղեցիներ ու եկեղեցականներ: Ցրվեց բեկորված ժողովուրդը աշխարհով: Այսօր, սակայն, միայն Եղեռնի ցավը չէ մեր հոգիներում, այլ հպարտության ու մխիթարության զգացումը, որ վշտակրտոր ու տարագիր, օտար ափերում հաստատված հայությունը՝ հավատքն ու հույսը հոգում ոտքի կանգնեց, աղոթքի տունը կառուցեց ու բարձրացրեց իր հոգևոր ազգային կյանքը: Հպարտ ու մխիթարված ենք հիշելով, որ Եղեռնի աղետալի օրերին, ապավինած Աստծուն, մեր ժողովուրդը իր ուժերը համախմբեց նույն ջարդարարներից պաշտպանելու համար Արևելյան Հայաստանի այս փոքրիկ հողակտորը, որի վրա ծնունդ տվեց իր նոր պետականությանը՝ Հայաստանի Առաջին Հանրապետությանը: Աստված կամեցավ, որ ապրի չարահնար ծրագրով մահվան դատապարտված մեր ժողովուրդը, որպեսզի այսօր մարդկային խղճի ու դարի առջև բարձրացնի հարցը. ո՞ւր է շուրջ միլիոն հայությունը, որ ապրում էր Թուրքիայի տարածքում՝ մեծամասամբ հայրենի հողի վրա: Վաղեմություն չունի Ցեղասպանությունը և չի կարող ունենալ, քանզի մարդկությունը չի կարող ընտրել մահվան ճանապարհները: Կյանքի ճանապարհներն են մարդկության ճանապարհները:

Մեր ժամանակն էլ պատասխանատվություն է կրում մեր այսօրը վաղվան թողնելու հարցում: 20-րդ դարի առաջին Ցեղասպանության ճանաչումը պիտի նպաստի արդի մեր իրականության մեջ բռնությունների, մարդու և ազգի իրավունքների ոտնահարման անթույլատրելիության գիտակցության ամրապնդմանը և պիտի նպաստի մարդասիրական արժեքների զորացմանը:

Որպես Ամենայն Հայոց Հայրապետ, հանուն մեր ժողովրդի այսօր Մենք երախտագիտության խոսք ենք ուղղում բոլոր երկրներին ու ժողովուրդներին, որոնք մեր կյանքի ամենադժնդակ ժամանակներում ընդունեցին և իրենց կողքին տեղ տվեցին ջարդերից փրկված հայությանը: Նաև երախտագիտության Մեր խոսքն ենք ուղղում Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետություններին, պետական ու հասարակական կազմակերպություններին և անձերին, ովքեր ջանքեր են ներդնում այդ ճանաչումը համընդհանուր դարձնելու համար: Այսօր խոնարհումով ու աղոթքով ենք հիշում այն անհատներին, ովքեր ժամանակին իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին՝ հանուն բնաջնջվող մեր ժողովրդի:

Շնորհակալության Մեր խոսքն ենք ուղղում Հայոց Մեծ եղեռնի 90-ամյակի առիթով իրենց հարգանքի տուրքը մատուցելու համար Հայաստան ժամանած քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին, պետական պատվիրակներին, հասարակական կազմակերպությունների անդամներին, տարբեր երկրներից ժամանած մտավորականներին, նաև՝ Հայաստանում հավատարմագրված դեսպաններին ու դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին, ովքեր իրենց հարգանքի տուրքը մատուցելու և մեզ հետ աղոթելու համար ներկա են այսօր հոգեհանգստյան արարողությանը: Մեր սերն ու բարեմաղթանքն ենք բե-



ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍԻ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ ԻՐԵՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ ԲԵՐՈՒՄ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ:

*րում մեր ժողովրդի արիության ոգով ու կամքով Ցեղասպանությունը վերապրած այստեղ ներկա մեր զավակներին, որոնց վարձը Տիրոջ խոսքի համաձայն շատ է երկնքում:*

*Թող Աստված ունկնդիր լինի ամենայն մեր նահատակների հոգիների հանգստության հայցով երկինք բարձրացող մեր աղոթքներին և օրհնի բոլոր ջանքերը ի սեր խաղաղության և արդարության, ի սեր կյանքի:*

*«Նա ամեն ինչ հաստատել է կյանքի համար, և աշխարհի գործերը փրկության համար են» (Իմաստ. Սող. Ա 14):*

*Շնորհը, ողորմությունը և օրհնությունը երկնավոր մեր Հոր թող լինի մեզ հետ և բոլորի: Ամեն»:*

Արարողության ընթացքում իրենց աղոթքը հնչեցրին նաև Եղեռնի 90-ամյա տարելիցի առիթով Հայաստան ժամանած քույր Եկեղեցիների ներկայացուցիչները՝ Մոսկվայի Պատրիարքության միջեկեղեցական հարաբերությունների բաժնի փոխնախագահ, Մոսկվայի թեմի առաջնորդական փոխանորդ Մարկ եպս. Եգորևսկին (Ռուս Ուղղափառ Եկեղեցի), Անդրկովկասում պապական նվիրակ Կլաուդիո արքեպս. Գուջերոտտին (Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցի), Մալաթիոս արքեպիսկոպոսը (Ասորի Ուղղափառ Եկեղեցի), Կորնելիու եպս. Բարլադեանուլը (Ռումին Ուղղափառ Եկեղեցի), Թերմոպիլեի Իոաննիս եպիսկոպոսը (Հույն Ուղղափառ Եկեղեցի), Դեյվիդ եպս. Թասթինը (Անգլիկան Եկեղեցի), ինչպես նաև Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահ Վեր. Ժան Առնոլդ դե Կլերմոնը:

Հոգեհանգստյան ավարտին Նորին Սրբությունն օրհնեց Ցեղասպանությունը վերապրած հայաստանաբնակ փարեցներին:

Արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, պետական և հոգևոր այրեր, օտարերկրյա դիվանագետներ և հավատավոր ժողովուրդը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՀԻՇԱՏԱԿԵԼՈՒ ԵՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի կենտրոնական գրասենյակից տեղեկացնում են, որ ԵՀԽ-ն կոչ է անում իր անդամ Եկեղեցիներին՝ սույն թվականի ապրիլի 24-ին հիշատակել Հայոց ցեղասպանությունը:

Ապրիլի 11-ին նամակ հղելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ԵՀԽ գլխավոր քարտուղար Դոկտոր Սամուել Կոբիան նշել է, որ «ես անձնապես Ձեզ հետ եմ իմ աղոթքներով և կիսում եմ Ձեր ժողովրդի զգացումները»: Սամուել Կոբիան նամակում նաև նշում է, որ ապրիլի 24-ին Եկեղեցիների համագործակցությունը, վերառաքելով բարեխոսական աղոթքներ, աշխարհին հիշեցնելու է Աստվածաշնչի հետևյալ տողերը. «Երանի խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն» (Մատթ. Ե 9):

Ապրիլի 16-ին ԵՀԽ անդամ Եկեղեցիներին ուղղված մեկ այլ նամակում ԵՀԽ-ի «Եկեղեցիներն ու Միջազգային Գործեր» Հանձնախմբի նախագահ պրն. Պետեր Վեյդերուդը հույս է հայտնել, որ ապրիլի 24-ին Եկեղեցիների կողմից բարձրացված աղոթքները կնպաստեն, որպեսզի Եկեղեցիներն ու քրիստոնյաները անդրադառնան ճշմարտությանը, արդարությանը, ապաշխարությանը, ներողամտությանը, հաշտությանն ու հասարակության առողջացմանը:

Իսկ 2005 թ. ապրիլի 6-10-ը Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահությունը, իր ժողովը գումարելով Շվեդիայի Վաստերաս քաղաքում, հանդես է եկել հայտարարությամբ, ուր նշվում է, որ «...ԵԵԿ միանում է Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի և Արամ Ա Կաթողիկոսի շարունակաբար արտահայտած այն մտքին, որ Հայոց ցեղասպանության հետ կապված սարսափելի հանցանքները երբեք չպետք է մոռացվեն: Մեղքը պետք է ընդունել և ճշմարտությունը՝ խոստովանել: Պատմության վերանայումը ճանապարհ է բացում ներելու, դառը հիշողություններից ապաքինվելու և միասին ապագա կերտելու համար:

ԵԵԿ նախագահությունը միանում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հրավերին՝ ուղղված իր բոլոր անդամ Եկեղեցիներին՝ «ապրիլի 24-ը հիշատակել Հայոց ցեղասպանության օր և հետագա համապատասխան քայլեր ձեռնարկել Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի հիշատակության առնչությամբ»: Եվրոպայի և նրա սահմաններից դուրս գտնվող բոլոր Եկեղեցիները կարող են կարևոր դեր ունենալ հանդիպման հնարավորություն ընձեռելու և հաշտության առաջնորդող ծրագրերին աջակցելու գործում:

Նախագահությունը հորդորում է թուրքական կառավարությանը՝ հաշտության գործընթաց սկսել հայ և թուրք ժողովուրդների միջև, որի բաղկացուցիչ մաս պետք է կազմեն մեղքի ընդունումը և ճշմարտության հռչակումը: Այս առումով Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսը ողջունում է վարչապետ Էրդողանի հայտարարությունը՝ բացել թուրքական արխիվները: Կարևոր է, որ հայ և թուրք, ինչպես նաև այլ անկախ հետազոտողների համար ամբողջովին հասանելի լինեն այդ փաստաթղթերը:

Մենք նաև հորդորում ենք թուրքական կառավարությանը՝ ստեղծել պայմաններ, որոնք թույլ կտան հայ ժողովրդի դեմ իրականացված վայրագությունների, զաղթերի ու ջարդերի մասին ազատ և ազնիվ բանավեճեր կազմակերպել ինչպես հասարակական, այնպես էլ կրթական հաստատություններում:

Ասկայն ներկայիս Թուրքիայի տարածքում վայրագություններ են կատարվում ոչ միայն հայերի, այլև մյուս քրիստոնյա ժողովուրդների և ազգային փոքրամասնությունների նկատմամբ:

2005 թ. հոկտեմբերի 1-ին բանակցություններ պետք է սկսվեն Եվրոմիության և Թուրքիայի միջև՝ Թուրքիայի՝ Եվրոմիությանն անդամակցելու հարցի շուրջ: Ինչպես արդեն նշվել է ԵԵԿ-ի 2004 թ. հոկտեմբերի 3-ի հայտարարության մեջ, Կոպենհագենի չափանիշները պետք է ի գործ դրվեն, և անդամակցության բանակցությունները պետք է ուղեկցվեն պատմության ազնիվ ներկայացմամբ, հատկապես պատմության այն մասը, որ վերաբերում է Թուրքիայի՝ իր հարևան երկրների հետ ունեցած հարաբերություններին, և որը ներառում է պատճառած վերքերի ու փոխադարձ վնասների բուժումը: Սա նախապայման է հասարակության մեջ ճշմարիտ հաշտության և հիշողություններից ազատվելու համար, որը դեռևս առկա չէ Թուրքիայում: Այս առումով հատկապես կարևոր են հարաբերությունները հայ ժողովրդի, ինչպես նաև այլ քրիստոնյա ժողովուրդների և ազգային փոքրամասնությունների հետ:

ԵԵԿ-ն կշարունակի ուշադրությամբ հետևել Եվրոմիության և թուրքական կառավարության միջև ընթացող բանակցություններին: Եվրոմիությունը պետությունների միություն է, որ հիմնված է մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության վրա, և որտեղ արդարության ու խաղաղության, համերաշխության ու բազմախոհության, հաշտության ու հանդուրժողականության, խոսքի ազատության և փոխադարձ հարգանքի արժեքները հաստատագրված են Եվրոմիության փաստաթղթերում, որոնց նկատմամբ պարտավորություններ է ստանձնել Եվրոմիությունը, և ջանքեր են գործադրվում դրանք ամենօրյա կյանքի մաս դարձնելու: Թուրքիայում այս արժեքները կյանքի կոչելու պարտավորությունը, ներառյալ այն չվերաբերի իր փոքրամասնությունների և հարևան երկրների հետ ունեցած հարաբերություններին, պետք է նախապայման հանդիսանա Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության հարցում»:

ԵՀԽ և ԵԵԿ կմասնակցեն Հայոց Մեծ եղեռնի 90-ամյակին նվիրված միջոցառումներին հանձինս իրենց բարձրաստիճան ներկայացուցիչների:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԸ ՀԵՂՎԵՑ ԵՓՐԱՏԻ ՋՐԵՐԻ ՄԵՋ

Ապրիլքսանչորսյան հանդիսությունները մեր նահատակների անշիրիմ շիրմափեղիում
Ս. Պատարագով և Հոգեհանգստյան արարողություններով նշելու համար Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա
Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի գլխավորությամբ բազմահազար ուխտավորներ
Սիրիայից, Լիբանանից և մի շարք այլ երկրներից ուխտավորաբար մեկնեցին Դեր-Զոր:

Ապրիլի 23-ին Դեր-Զորի Սրբոց Նահատակաց մատուռում կատարվեց Հսկման արարո-
ղություն: Հավաքված ուխտավորները ողջ գիշերվա ընթացքում հաջորդաբար իջան մա-
տուռի ներքնամաս, ուր ամփոփված են մեր նահատակների աճյունները, և մոմավառութ-
յամբ իրենց աղոթքը բարձրացրեցին նրանց հոգիների խաղաղության համար:

Հաջորդ օրը, ապրիլի 24-ի վաղ առավոտյան, ուխտավորները Դեր-Զոր բնակավայրից
մեկնեցին անապատ՝ Մարկատեի մատուռ, որը կառուցված է անապատում սփռված հա-
վաքական աճյունադաշտերից մեկի վրա: Այստեղ Արամ Կաթողիկոսը «Հոգւոց» ասելով
խաղաղություն մաղթեց մեր մեկ և կես միլիոն նահատակների հոգիներին: Այնուհետև ուխ-
տավորների թափորը շարժվեց դեպի անապատ: Ճանապարհի կեսին, իջնելով մեքենանե-
րից և ավտոբուսներից, ուխտավորները սկսեցին քայլել այն ճանապարհով, որով 90 տարի
առաջ անցել էին մեր նահատակները:

Անապատի ավազների միջով «Գթա, Տէր» շարականի երգեցողությամբ ուխտավոր-
ները շարժվեցին դեպի անապատի խորքերը, ուր կիզիչ արևի ներքո և վեր ելնող ավազափո-
շու մեջ կատարվեց հոգեհանգստյան արարողություն: Դիմելով հավաքված ժողովրդին,
Արամ Առաջինն ասաց. «90 տարիներ առաջ այս անապատէն քալեցին մեր հայրերն ու
մայրերը, մեր եղբայրներն ու քոյրերը, ծեր թէ երիտասարդ, մեծ թէ փոքր: Այս ավազները
դարձան անոնց անթաղ մարմիններուն հաւաքական գերեզմանները, բաց երկնքի տակ:
Այս անապատէն քալեցին մեր ժողովուրդի զաւակները սոված ու ծարաւ, հեք ու յքուած,
մինչեւ որ ինկան ու խառնուեցան անապատին, իբրեւ իրենց վերջին հանգստարանը: Բայց
տիա անապատը ծաղկած է ձեզմով, անմահ ժողովուրդի վերածնած զաւակներ: Ցեղաս-
պանին վար կամքը ջլատող խիզախ կամքով օժտուած էք դուք, որ գիտէք անյուսութիւնը
յոյսով փոխարինել, պարտութիւնը յաղթանակով վերածել ու նոյնիսկ մահէն յարութիւն առ-
նել...»:

Հոգեհանգստյան արարողություններից հետո ուխտավորները իջան Եփրատի ափ, ուր
կատարվեց հանդիսավոր Ջրօրհնեք և մկրտությունը երկու երեխաների: Մեր նահատակնե-
րի մարմինները իր մեջ ամփոփած Եփրատի ջրերում Սրբալույս Մյուռոնի հեղման և Դեր-
Զորի ավազներում ու նույն Եփրատում բազմաբյուր մանուկների գերեզմանումից 90 տարի
անց մի մանչուկի և մի աղջնակի՝ Եփրատում մկրտվելու հոգևոր խորհրդին անդրադառնա-
լով, Արամ Առաջինը ասաց. «Այս երկու մանուկները, որոնք մկրտեցինք Եփրատի ջուրերուն
մէջ, մեր ժողովուրդի յարութիւնը կը խորհրդանշեն: Այս գետին մէջ թուրքին կողմէ նետուած
հազարաւոր մանուկներուն փոխարէն բազմահազար նոր մանուկներ ծնան և ժառանգորդ-
ները դարձան վարագիր ժողովուրդին: Այսուհետեւ այս գետը մահուան խորհրդանիշ չէ մե-

գի համար, այլ վերածննդեան: Այսօր բոլորս Եփրատի ջուրերով վերստին մկրտուեցանք մեր հայութեան ու ազգային պատկանելիութեան մէջ»:

Հավարտ Ջրօրհնեքի և մկրտության, ուխտավորները երգեցին «Կիլիկիա», «Հալածուած ենք Հայաստանի լեռներէն» ու «Ի վեհ բարձանց» երգերը և իրենց դեմքերը լվացին Եփրատի ջրերով, որպես կենդանի մի հաղորդություն մեր նահատակների հետ:

Ապրիլքսանչորսյան Պատարագը մատուցվեց Դեր-Զորի Նահատակաց մատուռում՝ ձեռամբ Բերիո թեմի առաջնորդ Տ. Շահան եպիսկոպոս Սարգիսյանի: Հավարտ Ս. Պատարագի Ս. Նահատակաց մատուռ-հուշարձանի անմար ջահի առջև կատարվեց Հոգեհանգստյան կարգ: Ոգեկոչելով հիշատակը մեր Նահատակների, Արամ Կաթողիկոսն ասաց. «Դուք, սիրելի՛ նահատակներ, այս աւազներու վրայ ինկաք, սակայն հոս չմնացիք: Մենք ձեզ տարինք մեզի հետ. դուք միշտ մնացիք մեզի հետ մեր կեանքի ճամբաներուն վրայ, մեր կեանքի բոլո՛ր պայմաններուն մէջ: Դուք անտէր չմնացիք երբեք. Հայաստանէն մինչեւ Սփիւռքի գաղութները մեր ժողովուրդի զաւակները, մեծ թէ փոքր, յիշեցին ձեզ ամէն օր ու ամէն տեղ. յիշեցին ձեզ եկեղեցւոյ մէջ, դպրոցին մէջ, ընտանիքին մէջ, ակումբին մէջ: Մենք չմոռցանք նաեւ ձեր նուիրական կտակը. աշխարհին յիշեցուցինք ձեր նահատակութիւնը և պահանջատէրը դարձանք ձեր արդար իրաւունքներուն:

Պանծալի նահատակներ հայ ազգի. ձեր ոգիէն ներկայութեան մէջ որպէս ուխտաւոր կը վերանորոգեմ իմ ուխտս նուիրական. ներկայ թէ բացակայ, սակայն միշտ ձեզի հետ ապրող մեր ժողովուրդի զաւակներուն անունով, ու կը խոստանամ թէ՝ պիտի չմոռնանք ձեզ երբեք. ձեր նահատակութենէն եկող ամուր հաւատքով ու վառ յոյսով պիտի ապրինք, պիտի գործենք ու պիտի պայքարինք յանուն այն բոլոր արժէքներուն ու ձգտումներուն, որոնց կենսագործման ու յաւերժացման համար դուք ձեր արիւնը թափեցիք»:

Այնուհետև Կիլիկիո Աթոռի գահակալը իր երախտագիտությունը հայտնեց բոլոր նրանց, ովքեր աջակից եղան հայ ժողովրդին իր մեծ և դժխեմ ողբերգության տարիներին և ի մասնավորի «Սուրիոյ ու Լիբանանի ժողովուրդներուն ու ամբողջ արաբական աշխարհին, որոնք ջարդերէն ճողոպրած մեր ժողովուրդի զաւակներուն հետ իրենց հացն ու ջուրը բաժանեցին, սիրոյ ու զօրակցութեան լաւագոյն օրինակը հանդիսանալով»:

Հոգեհանգստյան արարողությունից հետո Արամ Կաթողիկոսն այս հուշարձան-մատուռին նվիրեց կրկնօրինակը ԺԳ դարի հայ արվեստի շքեղ էջերից մեկը ներկայացնող Բարձրաբերդի Ավետարանի:

Այնուհետև մատուռ-հուշահամալիրի դահլիճում Արամ Ա Կաթողիկոսն ընդունեց Դեր-Զորի և շրջակա անապատների ցեղապետերին՝ մեկ անգամ ևս բարձրորեն գնահատելով արաբ ժողովրդին՝ հայության վերապրած բեկորներին ապաստան տալու համար:

Արամ Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությանը կեսօրին հյուրընկալեցին արաբ ցեղապետերը՝ վերահաստատելով իրենց զորակցությունը հայ ժողովրդին և Սիրիայի հայությանը:

**Ըստ «Հասկ» ամսագրի, ապրիլ 2005 թ.**

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## ԳԻՏԱԺՈՂՈՎ ՀՐԵԱԿԱՆ ՎԱՆ ԼԻՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ցեղասպանության 90-ամյակի առիթով Ապրիլյան ոգեկոչման Սաղիմահայ Միացյալ Հանձնախումբը կազմակերպել էր «Ցեղասպանություն 20-րդ դարում. 90 տարի Հայոց ցեղասպանությունից անց» թեմայով երկօրյա գիտաժողով, որը մեկնարկեց հինգշաբթի, ապրիլի 7-ին, Վան Լիր ակադեմիական հաստատությունում: Գիտաժողովին մասնակցում էին Ֆրանսիայից, Անգլիայից և Գերմանիայից ժամանած հայազգի և օտար գիտնականներ և ցեղասպանագետներ և պատմաբաններ:
պատմաբաններ, ինչպես նաև հրեա ցեղասպանագետներ և պատմաբաններ:

Գիտաժողովի առաջին նիստի բացումը կատարեց Հոլոքոստի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն, ցեղասպանագետ Իսրայել Չարնին: Բացման խոսքից հետո ելույթով հանդես եկավ պրոֆ. Ցեհուդա Բաուերը՝ «Հնարավո՞ր է կանխարգելել Ցեղասպանությունը» թեմայով: Բանախոսն իր խոսքում շեշտեց. «Աշխարհը շարունակում է չճանաչել Հայոց ցեղասպանությունը, որի պատճառով ցեղասպանությունների կրկնության հավանականությունը շատ բարձր է մնում: Եթե աշխարհը ժամանակին ճանաչեր և դատապարտեր Հայոց ցեղասպանությունը, ապա տեղի չէին ունենա Հրեաների ողջակիզումը, Կամբոջայի և Ռուանդայի ցեղասպանությունները, և այսօր ցեղասպանություն տեղի չէր ունենա Դարֆուրում (Սուդան): Ճանաչումը կարևոր է հետագայում ցեղասպանության հանցագործությունը կանխելու համար»: Հարգելի բանախոսն իր ելույթը եզրափակեց հետևյալ նախադասությամբ. «Ցեղասպանությունը չճանաչելը կրկին ցեղասպանություն է» և, իբրև կանխարգելման առաջնակարգ և կարևորագույն պայման, առաջարկեց 20-րդ դարի առաջին՝ Հայերի ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը:

Ապա ելույթ ունեցավ Կլոդ Մութաֆյանը՝ «Պատմական հետանկար. 90 տարի Հայոց ցեղասպանությունից անց» թեմայով: Պրն Մութաֆյանն իր ելույթում հակիրճ կերպով ներկայացրեց հայոց պետականության պատմությունը և դրա զարգացման փուլերը:

Այնուհետև ելույթ ունեցան Ռեյմոնդ Գևորգյանը և Հիլմար Կայզերը, որոնց թեմաներն էին համապատասխանաբար «Հայկական ցեղասպանության տնտեսական ասպեկտները» և «Միություն և զարգացում. Միոնիստները և Հայկական ցեղասպանությունը»:

Դոկտոր Արա Սարաֆյանի զեկուցումը նվիրված էր Ամերիկայի Միացյալ Նահանգների արխիվներում Հայոց ցեղասպանության վերաբերյալ նյութերին, դեսպան Մորգենթաուի օրագրություններին և անձնական փաստաթղթեր արխիվներին:

Դոկտոր Արա Սարաֆյանը տնօրենն է Ցեղասպանության ուսումնասիրությունների Կոմիտաս հաստատության: Նա զբաղվում է Հայոց ցեղասպանությանը վերաբերող օտար փաստաթղթերի և աղբյուրների հավաքմամբ և հրատարակմամբ: Մեկ տարի առաջ նրա ջանքերով լույս է տեսել Թուրքիայում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպան (1913-

1916 թթ.) Հենրի Մորգենթաուի օրագիրը, ուր մանրամասնորեն նկարագրվում է Հայերի ցեղասպանությունը: Նա հրապարակել է նաև Թուրքիայում Միացյալ Նահանգների հյուպատոս (1913-1916 թթ.) Արրահամ Էլքոսի հիշողությունների արձանագրությունները: Արա Սարաֆյանը նախընտրում է գիտական շրջանառության մեջ դնել ամերիկյան արխիվները, քանի որ դրանք, ըստ Սարաֆյանի, «... գրված են անգլերեն, և գրված են այնպիսի մի երկրի դեսպանների, հյուպատոսների և միսիոներների կողմից, որ մինչև 1917 թիվը չէր մասնակցում Համաշխարհային Ա պատերազմին, ուստի արխիվներում արձանագրված է միայն իրականությունն ականատես վկաների կողմից»:

Գիտաժողովի երկրորդ նիստը սկսվեց Գևորգ Հինթիլյանի բացման խոսքով: Նա իր խոսքում շեշտեց, որ շատ կարևոր է միջնակարգ կրթական և համալսարանական հաստատություններում պատմության դասընթացներին ցեղասպանության որպես առարկայի դասավանդումը: Այս զոհունակություն հայտնեց, որ Իսրայելում ցեղասպանության դասավանդման արդյունքում աշակերտության և ուսանողության մեծ մասը տեղյակ է Հայոց ցեղասպանությանը, հակառակ այն փաստի, որ մինչև օրս Իսրայելը չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Այնուհետև հանդես եկավ պատմաբան Եաիր Օրոնը: Նա քննադատեց Հայկական ցեղասպանության հանդեպ Իսրայելի վարած մերժման և ուրացման քաղաքականությունը: Նա քննադատեց նաև Իսրայելի նախկին վարչապետ Շեմոն Պերեսին, որը Թուրքիայում հայտարարել էր, թե Հրեական հոլոքոստը չի կարելի համեմատել հայկական կոտորածների հետ: Նա նաև քննադատեց այսօրվա իշխանություններին, որոնք չէին հրավիրել Հայաստանից ներկայացուցիչներ մասնակցելու Եադ Վաշեմի նոր թանգարանի բացման արարողությանը, այն դեպքում, երբ Հայաստանի ներկայացուցիչները, բանախոսի խոսքերով, «... հրավիրվածների կարգում պետք է լինեին առաջինը»: Նա իր ելույթը եզրափակեց հետևյալ նախադասությամբ. «Ես ամաչում եմ, որ մինչև այժմ Իսրայելը չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը»: Ի դեպ, Եաիր Օրոնը հեղինակն է «Ուրացում. Իսրայելը և Հայկական ցեղասպանությունը» վերնագրով վերջերս լույս ընծայած գրքի:

Եաիր Օրոնի բանախոսությանը հաջորդեց Եոնասի Վինցի ելույթը: Նա իր ելույթում ներկայացրեց Երուսաղեմի հայության ծավալած գործունեությունը Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ:

Այնուհետև նյութ ունեցան դոկտոր Ամոս Գոլդբերգը և ապա, դոկտոր Արիել Փիկարդը:

Նշենք, որ գիտաժողովին մասնակցում էր Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, ինչպես նաև Երուսաղեմի հայոց Պատրիարքության միաբաններ և մեծ թվով հայ և օտար ուսանողներ ու անհատներ:

## ԳԻՏԱԺՈՂՈՎ ԺԱՌԱՆԳԱՎՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍՐԱՀՈՒՄ

Ցեղասպանության 90-ամյակի առթիվ Այրիյան ոգեկոչման Սաղիմահայ Միացյալ Հանձնախմբի կազմակերպած «Ցեղասպանություն 20-րդ դարում. 90 տարի Հայոց ցեղասպանությունից անց» թեմայով գիտաժողովը շարունակվեց ապրիլի 11-ին, Ժառանգավորաց վարժարանի սրահում:

Գիտաժողովը սկսվեց Գևորգ Հիթըլյանի բացման խոսքով, որին հաջորդեց առաջին նստաշրջանի նախագահող Ալբերտ Աղազարյանի ելույթը, ապա ելույթ ունեցավ Բերգենի համալսարանից նորվեգացի դոկտոր Ինգեր Մարի Օկենհոգը, որը ներկայացրեց հայ ժողովրդի բարեկամ Բոդիլ Բյորնի կենսագրությունը և Արևմտյան Հայաստանում նրա ծավալած գործունեությունը: Այնուհետև ելույթ ունեցավ դոկտոր Ռեյմոնդ Գևորգյանը, որը խոսեց Հայոց ցեղասպանության մեջ Բեհաեդդին Շաքիրի ունեցած դերի մասին: Վերջին բանախոսը դոկտոր Կլոդ Մութաֆյանն էր, որ ներկայացրեց թուրքական ուրացման և ժխտողական քաղաքականության որդեգրած նոր ուղիները:

Գիտաժողովի երկրորդ նիստը սկսվեց Բիրգեն համալսարանի պրոֆեսոր Ռոգեր Հիքոքի բացման խոսքով: Այնուհետև ելույթ ունեցավ «Թերրա Սանթա» պարբերականի խմբագիր հայր Փոլ Սիլվեստրը, որը ներկայացրեց Հայոց ցեղասպանության մասին Ֆրանչիսկյան եղբայրների կողմից կատարած գրառումները: Դոկտոր Ագապի Նասիբյան-Էքմեքճյանը բանախոսեց «Բրիտանական մարդասիրական օժանդակությունը և Հայոց ցեղասպանությունը» թեմայով: Մադրիդի համալսարանի պրոֆեսոր Կարմեն Լոֆես Ալոնսոն զեկուցում կարդաց «Ցեղասպանության հիմնադիրն այսօր» թեմայով:

Փոքր դադարից հետո գիտաժողովի երրորդ նստաշրջանը բացվեց դոկտոր Փետրա Հելդթի բացման խոսքով, ապա հանդես եկավ գերմանացի դոկտոր Հիլմար Քայզերը՝ «Գերմանիան և Հայոց ցեղասպանությունը» թեմայով: Նա մանրամասն ներկայացրեց Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի ունեցած դերը և բերած մեղսակցությունը: Իսկ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար նա արդար համարեց հայ ժողովրդի պահանջը Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու պայման դարձնել Հայոց ցեղասպանության ճանաչումը: Նստաշրջանի վերջում ելույթ ունեցավ դոկտոր Գայի Սեյփարթը: Նա խոսեց Թուրքիայում Գերմանիայի հյուպատոս Վալտեր Ռոսլերի կյանքի և գործունեության մասին: Գիտաժողովի վերջին նիստը սկսվեց այն վարող դոկտոր Ժորժեթ Ավագյանի խոսքով: Նա նախ հիշեց Հիտլերի «Ո՞վ է հիմա հիշում հայերի ցեղասպանությունը» խոսքը և, շարունակելով իր միտքը, նշեց, թե Հայոց ցեղասպանության հանդեպ պետությունների ցուցաբերած անտարբերությունն ու հանդուրժողությունը ծնեց նոր ցեղասպանություններ: Իսկ դրանց կանխարգելման միակ նախապայմանը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն է»: Նույն համատեքստով ելույթ ունեցավ նաև հրեա պատմաբան Եաիր Օրոնը՝ «Իսրայելը և Հայերի ցեղասպանությունը» թեմայով՝ ավելի անդրադառնալով Իսրայելի ուրացման և չընդունման պատճառներին: Ապա ելույթ ունեցավ Եռնա Վեյցը՝ «Հիշողություն և Հայոց ցեղասպանություն» թեմայով: Գիտաժողովն ավարտվեց հայր Նայի Աթիկի և Արիս եպիսկոպոս Շիրվանյանի եզրափակիչ ելույթներով:

Համոզված ենք, որ այս գիտաժողովն անպայման իր դրական արձագանքը կգտնի Իսրայելում բնակվող հրեա և պաղեստինցի ժողովուրդների շրջանում:

# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՎ ՍԳԱՀԱՆԴԵՍ ԺԱՌԱՆԳԱՎՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍՐԱՀՈՒՄ

Այս տարի Երուսաղեմում Հայոց Մեծ եղեռնի հիշատակության ձեռնարկները և սգահանդեսը մեկ օրով հետաձգվեց և նշվեց ապրիլի 25-ին, քանի որ ապրիլի 24-ը համընկել էր Ծաղկազարդի տոնին:

Երկուշաբթի, ապրիլի 25-ին, Ս. Պատարագ մատուցվեց Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարում: Պատարագին մասնակցում էին Իսրայելում հավատարմագրված օտարազգի դեսպաններ և հյուպատոսներ, դիվանագետներ, տարբեր հարանվանությանց հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչներ: Պատարագը մատուցեց Գերշ. Տ. Արիս եպս. Շիրվանյանը: Սրբազան Հայրը նաև քարոզեց հայերեն և անգլերեն լեզուներով: Պատարագի ավարտին, Պատրիարք Սրբազան Հոր հանդիսապետությամբ, կատարվեց հոգեհանգստյան արարողություն Հայոց Մեծ եղեռնի մեկ ու կես միլիոն անմեղ նահատակների հոգիների հանգստության համար: Այնուհետև կազմվեց սգո թափոր և հոգևոր հայրերի ու հարյուրավոր մասնակիցների ուղեկցությամբ թափորն ուղղվեց դեպի Ս. Փրկչի վանքում գտնվող Արտաշի հուշարձան, որ նս կատարվեց հոգեհանգստյան արարողություն: Արարողության ավարտին ելույթ ունեցավ պրն Սերոբ Սահակյանը, խոսելով ազգային գաղափարախոսության և դրանով մեր նոր սերունդներին կրթելու կարևորության մասին:

Երեկոյան Ժառանգավորաց վարժարանի սրահում տեղի ունեցավ Եղեռնի զոհերին նվիրված սգահանդես: Ներկաները նախ մեկ րոպե լռությամբ հարգեցին Եղեռնի նահատակների հիշատակը, որին հաջորդեց Պատրիարք Սրբազան Հոր արտասանած աղոթքը: Ապա ելույթ ունեցան Նոյեմի Նալբանդյանը (ՀՕՄ), Հակոբ Փանոսյանը (ՀԵՄ) և Արամ Խաչատրյանը (ԵՀԲՄ): Նրանց ելույթներում մի ընդհանրություն կար, և դա կոչ էր ողջ հայությանը՝ պայքարել հանուն Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչմանը և հասնել նրան, որ աշխարհն ընդունի Հայոց ցեղասպանությունը և դատապարտի այն իբրև ծանրագույն հանցագործություն:

Փայլուն կերպով և տպավորիչ կատարմամբ հանդես եկավ Ժառանգավորաց վարժարանի երգչախումբը, ապա բանախոսեց պրոֆ. Լևոն Շիրինյանը: Ըստ բանախոսի, հանցագործությունը չի կարող ունենալ վաղեմության ժամկետ, և յուրաքանչյուր նման արարք պետք է դատապարտվի, իսկ մեղավորները պետք է արժանանան խստագույն պատժի: Այնուհետև Գևորգ Հինդիյանն ընթերցեց Վահագն Տատրյանի խոսքը Հայոց ցեղասպանության 90-ամյակի առթիվ, ապա Հարութ Պաղամյանի կատարմամբ Պարույր Սևակի «Ղողանջ եղեռնական» բանաստեղծությունը:

Սգահանդեսն ավարտվեց Պատրիարք Սրբազան Հոր փակման խոսքով և «Հայր մեր»-ի երգեցողությամբ ու «Պահպանիչ»-ով:

**Ըստ «Սիոն» ամսագրի, Դ-Զ, 2005 թ., էջ 194-198**

# ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Հայոց Մեծ եղեռնի ոգեկոչման արարողությունները Թբիլիսիում սկսվեցին ապրիլյան առաջին օրերին: Նախ՝ վրաց հասարակայնությանը, վրացական իշխանություններին ու Վրաստանում գործող դիվանագիտական բոլոր կառույցներին բաժանվեցին՝ վրացերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով Հայոց ցեղասպանությունը ներկայացնող ու նրա ճանաչումը կարևորող գրքույկներ: Թբիլիսիի կենտրոնական բոլոր փողոցներում փակցվեցին մեծ ազդեր՝ հայերեն և վրացերեն վերտառությամբ՝ «...Ցեղասպանության ճանաչումը համայն մարդկության պարտքն է»: Այս ամենի նախաձեռնողն ու իրականացնողը դարձավ Վրաստանի հայկական համագործակցության կենտրոնը:

Ապրիլի 4-ին Թբիլիսիի Գյոթեի ինստիտուտում ցուցադրվեց «Արարատ» կինոնկարը: Երկու օր անց այս ինստիտուտում միջոցառում կազմակերպվեց՝ նվիրված Արմին Վեգներին: Ներկայացվեցին նրա կենսագրության՝ Հայոց ցեղասպանության հետ կապված դրվագներ: Գերմանական կողմի աջակցությամբ և, փաստորեն, նախաձեռնությամբ կազմակերպված ոգեկոչման այս հանդիսություններին ներկա էին հյուրեր Գերմանիայից, ԱՄՆ-ից:

Ապրիլի 16-ին Փոքրամասնությունների խնդրով Եվրոպական կենտրոնը կազմակերպել էր այց Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցի և ծաղկեպսակներ բերել այստեղ: Միության ներկայացուցիչ Միքայել Խերտոֆտն ասաց. «Աշխարհը պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը, որպեսզի կանխի հետագա ոճրագործությունները»: Այդ օրը հայոց եկեղեցում մատուցված Հոգեհանգստյան Պատարագին մասնակցեց նաև Վրաստանի կոնֆլիկտային հարցերով պետնախարար Գոգա Խաինդրավան, հատուկ պատվիրակություն Ախալքալաքից՝ գլխավորությամբ խորհրդարանական Համլետ Մովսիսյանի և Սամցխե-Ջավախքի նահանգապետի տեղակալ Արմեն Ամիրխանյանի:

Ապրիլի 18-ից 24-ը Վրաստանի հայկական համագործակցության կենտրոնի նախաձեռնությամբ կարդացվեցին դասախոսություններ՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը: Երկու ժամ շարունակվող դասընթացը սկսվում էր աղոթքով և ավարտվում Վիրահայոց թեմի հոգևոր հայրերի քարոզխոսությամբ:

Ապրիլի 22-ին Վրաստանի հայ երիտասարդների միության և «Նոր սերունդ» կազմակերպության նախաձեռնությամբ Թբիլիսիի Կինոյի տանը ցուցադրվեց «Նահապետ» ֆիլմը, որը դիտելու էին եկել հասարակական տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև Վրաստանում Ֆրանսիայի, Ռուսաստանի և Բուլղարիայի դեսպանատների ներկայացուցիչները: Այստեղ էին Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, Վրաստանի Խորհրդարանի անդամներ Վան Բայբուրթյանը և Հենզել Մկոյանը:

Ապրիլի 23-ին ստանալով հոգևոր հայրերի օրհնությունը, մի խումբ հայ երիտասարդ ուխտավորներ Սուրբ Էջմիածին եկեղեցուց շարժվեցին Երևան ու իրենց ուխտը կատարեցին Եղեռնի անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի մոտ:

Ապրիլի 23-24-ին Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի սրահում Վրաստանի հայկական համագործակցության կենտրոնի և

Պան-Արմենիան մարզական միության ջանքերով կազմակերպվեց Հայոց ցեղասպանության նվիրված գեղանկարների և լուսանկարային վավերագրերի ցուցահանդես: Հանդիսությանը ներկա էին վրաց հասարակայնության, ինչպես նաև Վրաստանում գործող փարբեր դեսպանատների ներկայացուցիչներ: Այստեղ էր նաև Վրաստանում ՀՀ դեսպան Գեորգի Խոսրոևը, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը:

Նույն օրը Թբիլիսիի պետական հայկական թատրոնում Վրաստանի հայերի միության աջակցությամբ և թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բաղանդուրյանի նախաձեռնությամբ կազմակերպվեց նախապես ծոնված հուշ-երեկո, որը սկսվեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ուղերձով:

Մի գեղեցիկ ու ասփվածահաճո գործ էլ արվեց այդ օրը: Բոլոր այն փեղերում, ուր հանդիսություններ կազմակերպվեցին, դրվեց ցանծանակ, որպեսզի ներկաներն իրենց լուման բերեն Հայոց Մեծ եղեռնի նահապակների հիշափակին նվիրված Խաչքարի կանգնեցմանը, որի նախաձեռնությամբ հանդես է գալիս վիրահայությունը:

24 ԱՊՐԻԼԻ, 2005 թվական, Թբիլիսի.

Ծավճավածեի թիվ 35 փողոց, Վրաստանում Թուրքիայի դեսպանատան մոտ, թբիլիսահայ իրականության մեջ իր նմանը չունեցող՝ ցույց-բողոք: Մոմերը վառած, հայկական եռագույնը վեր պարզած, ի ցույց հանած ազդեր ու ցուցանակներ, Հայոց եղեռնը ճանաչելու վանկարկումներով ու պահանջով հանդես եկող երիտասարդների բազմություն էր այստեղ հավաքվել: Հայոց Եռագույնն ու վրացական դրոշը ծածանելով, ցուցարարները երթով շարժվեցին Թբիլիսիի Սուրբ Էջմիածին հայկական եկեղեցի:

Վիրահայոց թեմի առաջնորդի մատուցած հոգեհանգստյան Սուրբ Պատարագից և օրվա խորհրդին նվիրված քարոզխոսությունից հետո, ներկաներն՝ առաջնորդ Սրբազան Հոր, ՀՀ դեսպան Գեորգի Խոսրոևի և Վրաստանի հայերի միության նախագահի առաջնորդությամբ, շարժվեցին Հայ Գրողների Պանթեոն: Սգո արարողությունը շարունակվեց այստեղ ևս, ուր խոսք ասացին ՀՀ դեսպան Գեորգի Խոսրոևը, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, Վրաստանի գրողների միության անդամ Անահիտ Բոստանջյանը: Այնուհետև ընթերցվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի Սրբատառ Կոնդակը: Վեհափառ Հայրապետի Սրբատառ Կոնդակն ընթերցվեց Վրաստանի հայկական բոլոր եկեղեցիներում: Երեկոյան Թբիլիսիի Սուրբ Գևորգ եկեղեցու բակում խարույկ վառվեց՝ ի նշան անմեղ նահատակների հոգու լուսավորության:

Ծաղկազարդի ուրախ փոնին այս փարի համընկած հայերիս պատմության եղեռնական էջը խորհրդական կերպով բոլորին միավորել էր հայ եկեղեցու շուրջ: Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցում Վիրահայոց թեմի փոխառաջնորդ Տ. Բաբգեն աբեղա Սալբիյանի մատուցած հոգեհանգստյան Պատարագից հետո, որին ներկա էին և տեղական իշխանությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ, խորհրդարանականներ՝ Համլետ Մովսիսյանը և Մելիք Ռաիսյանը, 90 անգամ ղողանջեցին Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցու զանգերը, որ ահազանգն էին Մարդկության դեմ կատարված ոճրագործության... 90 անգամ: 90 փոքրիկ ախալքալաքցիներ ծաղիկներ դրեցին հուշակոթողին՝ անմեղ զոհերի հիշատակը ոգեկոչող և 90 աղավնիներ բաց թողնվեցին երկինք:

Ապրիլի 24-ի գիշերը Սամցխե-Ջավախքի հայկական 90 գյուղեր. 90 մոմերով. աղոթքներով և լռությամբ լուսացրեցին:

Սգո միջոցառումներ անցկացվեցին Վրաստանի հայկական բոլոր դպրոցներում և մշակույթի տներում: Ապրիլի 24-ին Ախալցխայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Շմավոն ավագ քահանա Սաղոյանի մատուցած հոգեհանգստյան հանդիսավոր Պատարագին ներկա էին քաղաքապետը, պաշտոնատար այլ անձինք: Կազմակերպված ցույց-բողոքից հետո ներկաները երթով շարժվեցին դեպ Եղեռնի հիշատակին կանգնեցված նորակառույց խաչքարը: Ախալցխայում, Ախալքալաքում և Բաթումում կազմակերպվեցին սգո հուշ-երեկոներ՝ «Կարին» ազգագրական համույթի և տեղի դպրոցի սաների մասնակցությամբ:

Այդպես էր և Նինոծմինդայում. ապրիլի 22-ին Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Ժորա Սնխչյանի ղեկավարությամբ թիվ 1 դպրոցում կազմակերպվեց երաժշտական ցերեկույթ, իսկ 23-ին՝ Զորավար Անդրանիկի կյանքից մի դրվագ բեմականացվեց: 24-ին Նինոծմինդայի Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Եղիա ավագ քահանա Թազայանի մատուցած հոգեհանգստյան հանդիսավոր Պատարագից և կազմակերպված հանրահավաք-ցույցից հետո, որին ներկա էին տեղական իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչները և շրջանից Վրաստանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը, ժողովուրդը երթով դեպի Եղեռնի զոհերի Հուշակոթող-խաչքարը շարժվեց:

Հայ ժողովրդի վիշտն այդ օրը կիսում էին նաև վրաց հասարակայնությունն ու պետական ապյանների բարձրաստիճան ներկայացուցիչները: Այդպես եղավ և Ծալկայում, ուր Վրաստանահայության հետ էր այդ օրը տարածաշրջանի ղեկավար Միխեիլ Ցկիտիշվիլին: Վրաստանի այս հայահոծ շրջանում հանրահավաք-ցույցը, որ գլխավորում էին շրջանային Սակրեբուլոյի նախագահ Ռազմիկ Հաննսյանը և Ծալկայի շրջանից Վրաստանի Խորհրդարանի ժամանակավոր պատգամավոր Հայկ Մելքոնյանը, անցկացվեց Դուշեթի գյուղում: Ծալկայի հայկական գյուղերի ամբողջ բնակչությունը երթով Դուշեթի եկավ: Ծաղիկներով և մոմավառությամբ, 1000-ից անցնող մարդկանց, ընդ որում նաև տեղաբնակ հույների, երթը շարժվեց դեպի Սուրբ Նշան /Սուրբ Սարգիս/ հայկական եկեղեցի: Ներկաները աղոթք կարդացին, որին հաջորդեց սգո արարողություն-միջոցառումը, ապա և ցույց-բողոքը և կոչը՝ միջազգային հանրությանը՝ ցեղասպանության դեմ միասնաբար պայքարելու պահանջով:

Հայոց Մեծ Եղեռնի 90-ամյակը յուսաբանվեց նաև Վրաստանի ԶԼՄ-ներում: Աջարիայի հեռուստատեսությամբ ցուցադրվեց «Արարատ» կինոնկարը: Նույն օրը, առավոտյան, Բաթումի Սուրբ Փրկիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հակոբ քահանա Սարոյանը մատուցեց հոգեհանգստյան Սուրբ Պատարագ՝ անմեղ նահատակների հոգիների խաղաղության համար:

Վրաստանի հայկական համագործակցության կենտրոնի նախաձեռնությամբ և մասնակցությամբ Վրաստանի հայ երիտասարդների ու հայկական հասարակական այլ կազմակերպությունների, նամակ է ուղղվել Վրաստանում Թուրքիայի դեսպանին, ուր շեշտվում է, որ Օսմանյան Կայսրության ժառանգորդը հանդիսացող Թուրքիան առ այսօր չի ճանաչել Հայկական ցեղասպանությունը:

*ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ*

# ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 90-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԸ ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՈՒՄ

Ապրիլի 24-ին, Մեծ եղեռնի 90-ամյա տարելիցի կապակցությամբ, Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցում ներկաներն աղոթեցին առ Բարձրյալն Աստված 1915 թ. բյուրավոր նահատակների հոգիների հանգստության համար: Արարողության ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան և Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի վարչական կառավարիչ Տիգրան սրկ. Բաղումյանն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակը՝ նվիրված Մեծ եղեռնի 90-ամյա տարելիցին: Այնուհետև նա իր խոսքում ևս մեկ անգամ անդրադարձավ օրվա խորհրդին՝ ներկաներին և հատկապես ճեմարանականներին հորդորելով առավել նախանձախնդրությամբ ու նվիրումով լծվել իրենց ուսման ու հավատարիմ լինել մեր նախնյաց թողած հարուստ ժառանգությանը՝ դրանով իսկ նպաստելով մեր հայրենիքի և Առաքելական Եկեղեցու զորացման նվիրական գործին:

«Այսօր ողջ հայ ժողովուրդն աշխարհի չորս ծագերում ոչ միայն ոգեկոչում է 1915 թ. անմեղ նահատակների անմոռանալի հիշատակը, այլ նաև տոնախմբում Քրիստոսի ամենազոր Ս. Խաչի երևման տոնը՝ կրկին շեշտելով կենդանարար Ս. Խաչի հրաշագործող զորության մասին, որին ապավինած և հարության հույսով զորացած՝ մեր նախնիները դիմակայել են բոլոր փորձություններին ու դժվարություններին՝ իրենց իսկ կյանքով վկայելով, որ բացարձակ ճշմարտություն է Քրիստոսով ավետարանված փրկությունը: Եվ նվիրական այս օրը առավել ևս պիտի աղոթենք և ուխտենք, որ հավատարիմ և կրողը պիտի լինենք Տիրոջ խաչի ու մեր երանելի հայրերի երազների»,- նշեց Տիգրան սարկավագն իր խոսքում:

Սրբազան արարողությանը մասնակցում էին Հնդկաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանը, դեսպանատան կցորդ Արտյոմ Խաչատրյանը, Հնդկահայ գաղութի եկեղեցական խորհրդի անդամները, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաներ:

Արարողությունից հետո դեսպանատան և Եկեղեցական խորհրդի անունից ծաղկեպսակներ դրվեցին Ս. Նազարեթ եկեղեցուն կից գտնվող Մեծ եղեռնի 50-ամյակին կանգնեցված հուշաքարին:

Կեսօրին հայկական ակումբում տրվեց ընթրիք, որի ընթացքում Հնդկաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը խոսեց այլ երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և այս նպատակով կատարվող քայլերի մասին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# 90-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Թրիէրի կաթոլիկ եկեղեցւոյ Առաջնորդարանի հրաւէրով 9-10.04.2005 թուականներուն, փեղւոյն Մայր Տաճարին մէջ, որ Գերմանիոյ առաջին քրիստոնէական եկեղեցին է՝ կառուցւած 4-րդ դարուն, տեղի ունեցաւ միջեկեղեցական արարողութիւն՝ նուիրուած Սրբազան Պատանքի աւանդական ցուցադրման: Կաթոլիկ ուխտաւորներու կողքին, այդ օրը ներկայ էին նաեւ ուղղափառ եւ աւետարանական եկեղեցիներու հոգեւորականներ, որոնք Թրիէրի առաջնորդ Ռայնհարդ եպս. Մարքսի նախագահութեամբ հանդիսաւոր արարողութիւն կատարեցին Մայր Տաճարին մէջ եւ ապա թափօրով ու սաղմոսերգութիւններով մուտք գործեցին Սրբազան Պատանքը պահպանող մատուռը: Այնուհետեւ Յունաց Տիեզերական Պատրիարքութեան ներկայացուցիչ եւ Գերմանիոյ Յոյն Եկեղեցւոյ առաջնորդ Օգոստինոս մետրոպոլիտի նախաձեռնութեամբ ներկայ ուղղափառ եկեղեցականները հոգեհանգստեան պաշտօնով յիշեցին երջանկայիշատակ Յովհաննէս Պօղոս Բ Պապին:

Արարողութենէն յետոյ Թրիէրի Առաջնորդարանին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն, ուր ներկաներուն ողջոյնի եւ գնահատանքի խօսք ուղղեց նաեւ Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Պեքճեանը: Սրբազան Հայրը շեշտեց մեր օրերուն միջեկեղեցական յարաբերութիւններու եւ միասնական աղօթքի անյապաղ անհրաժեշտութիւնը եւ փափաք յայտնեց, որպէսզի այս տարի Ապրիլի 24-ին բոլոր եկեղեցիներու ներկայացուցիչներն իրենց թեմերուն եւ համայնքներուն մէջ նոյնպէս յարգեն 1915 թուականի Մեծ եղեռնի անմեղ զոհերուն յիշատակը:

Յաջորդ օր, Ապրիլի 10-ին, Սրբազան Հօր ուղեկցող Հոգեշնորհ Տ. Գարեգին աբղ. Յարութիւնեան եւ Տ. Տիրան աբղ. Պետրոսյանը ճաշի ժամերգութեան պաշտօն կատարեցին կաթոլիկ հաւատացեալներու ներկայութեամբ: Պատմութեան մէջ սա առաջին անգամ էր, որ Հայ Եկեղեցւոյ աղօթքները հնչեցին Կոստանդիանոս կայսեր եւ Հեղինէ կայսրուհիի կողմէ հիմնադրուած Թրիէրի տաճարի կամարներուն ներքեւ:

**13 Ապրիլ, Քէօլն.** Հայոց ցեղասպանութեան 90-ամեակի ոգեկոչումներու շարքին այս քաղաքի յայտնի «Lev Kopelew Forum»-ին մէջ տեղի ունեցաւ խորհրդաւոր ձեռնարկ մը, որուն բացումը կատարուեցաւ ձեռամբ Գեր. Տ. Գարեգին արքեպս. Պեքճեանի: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերակցէին Հոգշ. Տ. Սերովբէ վրդ. Իսախանեան եւ Հոգշ. Տ. Տիրան աբղ. Պետրոսեան, Բարշ. սարկաւագներ Սայաթ Պոյաճեան եւ Գոռ Գէորգեան:

Սրբազան Հայրը ողջոյնի խօսքին մէջ իր գոհունակութիւնը յայտնեց բարձր մակարդակի այս ձեռնարկներու կազմակերպման առիթով եւ նշեց, որ այս օրերուն հայերու համար մխիթարական է տեսնել, որ գերմանական զանազան կարեւոր հաստատութիւններ կը միանան Հայոց ցեղասպանութեան 90-ամեակի ոգեկոչումներուն եւ իրենց աջակցութիւնը կը բերեն Գերմանիոյ մէջ Հայոց Դատի ճանաչման ու մարդկային կեանքին սպառնացող ամէն տեսակի ոչնչացման արարքներուն պաշտօնական դատապարտման:

Բացման հանդիսութեան հիմնական բանախօսն էր Ռալֆ Ճօրտանօ: Ան նշեց, թէ Հայոց ցեղասպանութիւնը անվիճարկելի իրողութիւն է, փաստուած հազարաւոր վաւերագրերով, ուստի որպէս մարդկութեան դէմ գործադրուած յանցագործութիւն, կարելի չէ վիճարկումի նիւթ ընել, այլ պէտք է պաշտօնապէս ընդունիլ եւ դատապարտել: Անկարելի է, որ պաշտօնական Թուրքիան յաւերժօրէն կարենայ շարունակել ժխտումի քաղաքականութիւնը: Ճօրտանօ իր գոհունակութիւնը յայտնեց, որ Գերմանիոյ մէջ եւս սառոյց հալելու սկսած է, եւ աստիճանաբար աւելի ու աւելի յստակօրէն եւ կարեւոր ատեաններէն կը հնչէ Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու եւ դատապարտելու պահանջը: Ան յոյս յայտնեց, որ ի մօտոյ Գերմանիոյ Խորհրդարանը եւս այս ուղղութեամբ կ'ընդունէ համապատասխան որոշում:

Հանդիսութեան երաժշտական բաժինը ստանձնած էին դաշնակահարուհի օրիորդ Շուշան Յունանեան եւ անոր 12-ամեայ զարմուհի, ջութակահար Մարի Յունանեան:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ Հայաստանցի արուեստագէտներ՝ քանդակագործ Ալբերտ Վարդանեանի եւ նկարիչ Վահան Թովչեանի ստեղծագործութիւններու ցուցահանդէսին բացումը:

Եօրեայ ձեռնարկներու ընթացքին ցուցադրուեցաւ նաեւ անցեալ տարի Հայաստանի մէջ նկարահանուած «Հայաստանեան գարուն - Ապրիլ 2004» փաստագրական ժապաւէնը: Իսկ մէկ օր անց տեղի ունեցաւ Ռաֆֆի Քանդեան բանախօսեց «Հայաստանի գրականութիւնը ի ոգեկոչումն Ցեղասպանութեան» նիւթով:

**16 Ապրիլ, Նիւրնպէրկ**. Հայոց Մեծ եղեռնի զոհերուն ի յիշատակ Քրիստուս Եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն Հոգշ. Տ. Արիստակէս աբեղայ Այվազեանի կողմէ: Արարողութեան ներկայ էին բազմաթիւ հայ եւ գերմանացի հաւատացեալներ: Արարողութեան աւարտին եկեղեցւոյ Սրահին մէջ կազմակերպուած էր յուշատօն մը, ուր դասախօսեց տիկին Մարգրիտ Ասոյեան-Էինքը: Յուշատօնի երաժշտական բաժինը ստանձնած էին հայ երիտասարդներ:

**23 Ապրիլ, Պէռլին**. Բռնութեան ենթարկուած զոհերու Յուշարձանին առջեւ նախ տեղի ունեցաւ ցոյց մը: Այնուհետեւ ժամը 15.30-ին, Պէռլինի Աւետարանական Մայր Տաճարին մէջ ի ներկայութեան շուրջ 700-800 հայ եւ գերմանացի մասնակիցներու, ինչպէս նաեւ պետական, կառավարական, դիւանագիտական, միջեկեղեցական բարձրաստիճան ներկայացուցիչներու տեղի ունեցաւ Հոգեհանգստի Միջեկեղեցական արարողութիւն մը:

Արարողութեան ընթացքին Գերմանիոյ հայոց առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Պեքճեան յանուն Գերմանահայ համայնքի Առաջնորդարանի եւ Կեդրոնական Խորհուրդի՝ նախ ողջունեց ներկաները, ապա գերմաներէն լեզուով ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Հայոց ցեղասպանութեան 90-ամեակի առիթով հրապարակուած Սրբատառ Կոնդակը: Այնուհետեւ Յիշատակի խօսքով հանդէս եկաւ Գերման-Աւետարանական Եկեղեցւոյ Ընդհանուր Խորհուրդի նախագահ, եպիսկոպոս Վոլֆկանկ Հուպէր: Ան անդրադառնալով ողբերգութիւններու եւ մարդկութեան դէմ գործուած յանցագործութիւններու ոգեկոչման կարեւորութեանը, Հայոց ցեղասպանութիւնը որակեց իբրեւ պատմական անժխտելի իրողութիւն, որը պէտք է ընդունուի եւ դատապարտուի յա-

[illegible] եւ գերմանացի ժողո-
նուր մարդկութեան կողմէ: Ան Գերման-Անդրա[illegible]
վուրդի անունով ներողութիւն խնդրեց հայ ժողովուրդէն, միեւնոյն ժամանակ պահանջելով,
որ գերմանական Պունտէսթակը պաշտօնապէս ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը եւ դա-
տապարտէ անոր կազմակերպիչները, քանի որ միայն այս ճանապարհով կարելի պիտի
ըլլայ սպեղանի գտնել դեռեւս արիւնող եւ չսպիացող վէրքերը:

Ցիշատակի ձեռնարկը շարունակուեցաւ նոյն օրը, երեկոյեան ժամը 18-ին Պեռլինի
Խորհրդարանի շէնքին մէջ, ուր ողջոյնի խօսք արտասանեց Պէռլինի Խորհրդարանի նա-
խագահ պրն Վալթէր Մոմփէր, իսկ հիմնական բանախօսն էր պատմաբան եւ հրապարա-
կախօս Միխայէլ Եայսման: Խորհրդարանի նախագահը եւս Հայոց ցեղասպանութիւնը
որակեց որպէս անժխտելի իրողութիւն եւ թուրքական իշխանութիւններէն պահանջեց ճանչ-
նալ զայն եւ եաշտուիլ իր պատմութեան հետ:

Ձեռնարկներուն իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Գերմանիոյ մէջ Հայաստանի Հանրա-
պետութեան դեսպանուհի, տիկին Կարինէ Ղազինեան:

**23 Ապրիլ, Քէօլն.** Առաջնորդանիստ Ս. Սահակ-Մեսրոպ Մայր եկեղեցւոյ մէջ ինչպէս
ամէն տարի, այս տարի եւս ոգեկոչուեցաւ 1915/16 թուականներուն Հայոց ցեղասպանու-
թեան զոհերու անմահ յիշատակը: Ներկայ էին Գերմանիոյ կուսակցութիւններու ներկայա-
ցուցիչներ եւ քոյր Եկեղեցիներու հոգեւոր պետերը: Երեկոյեան ժամը 18-00-ին սկսած ոգե-
կոչման հանդիսութեան բացման խօսքը համայնքի ատենապետուհի տիկին Մինու Նիք-
բայի կողմէ կատարուելէ ետք, յաջորդաբար խօսք առին շուրջ ութը ներկայացուցիչներ:
Շատ տպաւորիչ էր ելոյթը Պրանտընպուրկ նահանգի երիտասարդութեան ու մշակոյթի
նախարար Շթէֆան Րայխըին, որ յայտնեց, թէ՝ «Հայոց ցեղասպանութիւնը նախապէս
կազմակերպուած էր, ինչպէս Շոայի համար պատրաստուած լապորաթուարը, որ երէա-
կան ահաւոր եալածանքներու պատմութեան ընթացքին տեսանք»:

Այս խօսքերով ան կամուրջը երկարեց մինչեւ գերմանական կայսրութեան: Ցարգելի
նախարարը Գերմանիոյ մէջ առաջիններէն էր, որ Հայոց ցեղասպանութիւնը Պրանտըն-
պուրկ նահանգի մէջ դպրոցական դասագիրքերուն մէջ առնել տուաւ: Ան ընդգծեց նաեւ
գերմանական կայսրութեան պատասխանատու դերը, առանց որուն Ցեղասպանութիւնը
կարելի չէր որ տեղի ունենար: Հետեւաբար Գերմանիան ու Թուրքիան պարտականութիւն
ունին հայերէ ներողութիւն խնդրելու, որպէսզի բիւրաւոր զոհերը ունենան հոգւոյ հանգըս-
տութիւն եւ Թուրքիան կարենայ եւրոպական միութիւն մտնել այդ ճանաչումէն ետք:

**20 Ապրիլ, Ֆրանքֆուրթ.** Գերմանիոյ հայոց Առաջնորդարանի եւ Գերմանահայոց
Կեդրոնական Խորհուրդի միասնական ու կեդրոնական ձեռնարկը տեղի ունեցաւ 20 Ապրի-
լին, Գերմանիոյ Ֆրանքֆուրտ քաղաքի հանրածանօթ «Paulskirche» սրահին մէջ: Պատւոյ
հիւրերու շարքին էին գերմանական պետական եւ քաղաքական կարեւոր անձնաւորութիւններ:

Ձեռնարկը բացուեցաւ Գերմանահայոց Կեդրոնական Հոգեւոր Խորհուրդի ատենապետ
տոքթ. Շաւարշ Յովասափեանի խօսքով: Այնուհետ ողջոյնի խօսքեր արտասանեցին Գեր-
մանիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանուհի, տիկ. Կարինէ Ղազինեան եւ
Գերմանիոյ Հէսսէն նահանգի վարչապետ պրն Ռօլանտ Քոխի ներկայացուցիչը, նահանգի

կառավարութեան նախագահ Կնրօլտ Դիիքէ: Հիմնական բանախօսն էր հայ եւ գերմանացի շրջանակներուն քաջածանօթ եւ Հայոց ցեղասպանութեան իրողութեան տարածման եւ անոր ճանաչման պայքարի անխոնջ գործիչ, գրող-հրապարակախօս Ռալֆ Ճօրտանօն, որուն քանի մը ամիս առաջ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը պարգեւատրած էր Հայ Եկեղեցւոյ *«Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ»* պատուոյ բարձր շքանշանով: Պրն Ճօրտանօն պատմական ակնարկ մը կատարելէ ետք, իր յուզումնալի եւ փայլուն բանախօսութեան մէջ կոչ ըրաւ չխեղդել յիշողութիւնն ու ճշմարտութիւնը եւ արդարութեան յաղթանակին հասնելու հայ ժողովուրդի անկապտելի իրաւունքը:

Ձեռնարկը եզրափակուեցաւ Գերմանիոյ հայոց առաջնորդ Գարեգին արքեպս. Պեքճեանի՝ զոհերու յիշատակին մատուցուած Հոգեհանգստեան աղօթքով:

Երեկոյի երաժշտական բաժինը ստանձնած էր ջութակահար Սերկէյ Խաչատրեան, դաշնակի ընկերակցութեամբ մօրը՝ Իրինա Յովհաննիսեանի եւ քրոջը՝ Լուսինէի:

**24 Ապրիլ, Պրէմըն.** Հայոց ցեղասպանութեան 90-ամեակի օրը, 24 Ապրիլ 2005-ը, աննախադէպ օր մըն էր Պրէմընի եւ ընդհանրապէս գերմանահայութեան համար: Այդ օրը քաղաքին մէջ բացումը պիտի կատարուէր Պրէմընի քաղաքային իշխանութիւններու եւ անձնապէս գլխաւոր քաղաքապետ պրն Հեննինկ Շէրֆի համաձայնութեամբ կանգնեցուած Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած Խաչքար-Յուշարձանի: Մինչ այդ Գերմանիոյ մէջ Ցեղասպանութեան զոհերու յուշարձան մը տեղադրելու ուղղութեամբ փորձեր եղած էին, բայց հայութեան խնդրանքները մերժուած էին համապատասխան մարմիններու կողմէ, իսկ լաւագոյն պարագային արտօնած էին յուշարձան մը կանգնեցնել, առանց սակայն արտօնելու նշել *«Ցեղասպանութեան զոհեր»* մակագրութիւնը, ինչպէս է պարագան Գերմանիոյ Շթութկարթ քաղաքին գերեզմանատան հայկական բաժնին մէջ տարիներ առաջ Գերմանիոյ կանգնեցուած յուշարձանը: Միակ բացառութիւնը քանի մը տարիներ առաջ Գերմանիոյ հայոց Առաջնորդութեան ջանքերով Գերմանիոյ Քէվըլաէր փոքրիկ ուխտավայր-քաղաքի ուղղափառներու մատրան մէջ ի յիշատակ Հայոց ցեղասպանութեան բիւրաւոր զոհերու տեղադրուած խաչքարն էր, որուն արտօնութիւն ստացուած էր եկեղեցական շրջանակներու կողմէ:

Քաղաքի գրօսայգիներէն մէկուն մօտ տեղադրուած շուրջ մէկուկէս մեթր բարձրութեամբ Խաչքար-Յուշարձանին գերմաներէնով գրուած է. *«Օսմանեան Կայսրութեան մէջ տեղի ունեցած Հայոց ցեղասպանութեան 90-ամեակի առիթով մենք կ'ոգեկոչենք մէկուկէս միլիոն նահատակ հայերը»*:

Խաչքար-Յուշարձանի բացումէն առաջ Պրէմընի Սուրբ Ստէֆանի աւետարանական եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան յիշատակին նուիրուած Միջեկեղեցական արարողութիւն մը, որուն յանուն Առաջնորդարանի իր մասնակցութիւնը բերաւ Հոգշ. Սերովբէ վրդ. Իսախանեան: Ան նախ յանուն գերմանահայ համայնքի իր երախտագիտութիւնը յայտնեց քաղաքային իշխանութիւններուն՝ իրենց բարեացակամ եւ արդարադատ որոշման համար, այնուհետեւ ընթերցեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Սրբատառ Կոնդակը Հայոց ցեղասպանութեան 90-ամեակի առիթով:

Արարողութենէն ետք. նոյն եկեղեցւոյ մէջ կազմակերպուեցաւ նաեւ Յիշատակի ձեռնարկ մը. որուն բացումը կատարուեցաւ Խաչքար-Յուշարձանի տեղադրումը հաջողեցուցած *«Հայ Մշակոյթի Ժառանգ Պահպանութեան»* հաստատութեան պատասխանատու տոքթ. Էլիզ Պիզանցի կողմէ: Ապա խօսք տրուեցաւ Պրէմընի գլխաւոր քաղաքապետ պրն Հաննիկ Շէրֆի: Պրն Շէրֆ իր բանաւոր անկեղծ խօսքին մէջ տեղեկացուց, որ Յուշարձան կանգնեցնելու համաձայնութիւն իրենք տուած են, որովհետեւ եղած են եւ կուզեն մնալ բացխօսութեան եւ ժողովրդավարական արժէքներով ընթացող քաղաք մը, ուր բնականաբար Հայերն ալ իրաւունք ունին յիշելու եւ ոգեկոչելու իրենց բիւրաւոր զոհերը:



Խօսքեր արտասանեցին նաեւ գերմանահայութեան քաջածանօթ գրող-հրապարակախօս տոքթ. Եօխըն Մանկէլսըն, հայկական հարցերու շուրջ բազմաթիւ հրապարակութիւններ կատարած *«Տօնապ»* հրատարակչատան պատասխանատու պրն Հելմութ Տօնապ:

Արարողութենէն ետք Գերմանիոյ զանազան քաղաքներէն եկած շուրջ 1500 Հայերու եւ ոչ Հայերու թափօրը շարժուեցաւ դէպի Խաչքար-Յուշարձան: Ճանապարհին թափօրին միացաւ նաեւ քաղաքապետ պրն Շէրֆ: Խաչքար-Յուշարձանէն քիչ հեռու մահակաւոր ոստիկաններու եւ շուներու հսկողութեամբ ցոյցի էին հաւաքուած շուրջ 300-400 թուրքեր, որոնք կը վանկարկէին *«Թիւրքիէ, թիւրքիէ»* եւ կամ *«Շէրֆ-դաւաճան, կորսուիր»*:

Յուշարձանին մօտ Սերովբէ Հայր Սուրբի եւ սարկաւագ-դպիրներու կողմէ կատարուեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, ապա օրհնուեցաւ Խաչքարը: Յետ օրհնութեան Հայր Սուրբը հայերէն եւ գերմաներէն լեզուներով դիմեց հաւաքուածներուն ըսելով. *«Այս Խաչքար-Յուշարձանը հայութեան քարեղէն աղօթքն է առ Աստուած ի յիշատակ մեր զոհերու, բայց նաեւ վկայութիւնն է, որ ճշմարտութիւնը չի մեռնիր, ճշմարտութիւնը կարելի չէ յաւիտենապէս խեղդել: Հայոց ցեղասպանութիւնը եթէ ոչ այսօր, եթէ ոչ վաղը, ապա ի վերջոյ պիտի եւ պէտք է ճանչցուի մարդկութեան կողմէ եւ նաեւ այստեղ Գերմանիոյ մէջ: Մեզի կը մնայ բոլոր օրինաւոր ու քաղաքակիրթ միջոցներով պայքարիլ արդարութեան յաղթանակի համար»*:

Խօսք առաւ նաեւ քաղաքապետ պրն Շէրֆ, որ մէկ անգամ եւս նշելով իր հաւատարմութիւնը ժողովրդավարական եւ բազմակարծութեան սկզբունքներուն, կոչ ըրաւ քաղաքի թուրք բնակչութեան, որոնց թիւը 25-30 հազար է, չսահմանափակուիլ կեղծ եւ եւրոպական մտածողութեան անհարիր արժէքներով, պատրաստ ըլլալ պատմական ցաւալի էջերուն խորացման ու բաց քննարկման եւ իր քայլը չնկատել հակաթրքական դրսեւորում: Քաղա-

քաղերը եւ Հայր Սերովբէ ծաղկեպսակ զետեղեցին Խաչքար-Յուշարձանին, որմէ ետք Յուշարձանը ողողուեցաւ բերուած ծաղիկներով:

Խաչքար-Յուշարձանի տեղադրման եւ բացման հանդիսութեան անդրադարձան գերմանական հեռատեսիլի կայաններ եւ մամուլի օրկաններ: Իսկ թրքական «*Հիւրիէթ*» լրագիրը յուշարձանի բացումը խորագրեց. «*Քէնի յուշարձանը բացուեցաւ*»:

**Ապրիլ 24, Պատըն-Վիւրթէմպերկ.** Ոգեկոչման հանդիսութիւն տեղի ունեցաւ հայ եկեղեցական համայնքի Մշակութային Միութեան ու Էսլինկէնի «Մարալ» Մշակութային եւ Մարզական Միութեան համատեղ նախաձեռնութեամբ: Ձեռնարկը կը կրէր՝ «Հօլօքոսթ Հօլօքոսթէն առաջ» անունը. Էլի Վիզէլի խօսքերով:

Յուշահանդիսութիւնը սկսաւ ժամը 10.00-ին, հոգեհանգստեան արարողութեամբ, Շթութկարթի կեդրոնական գերեզմանատան մէջ գտնուող Հայ նահատակներու յուշարձանին առջեւ: Արարողութեան հանդիսապետեց Հոգշ. Տ. Օշական վրդ. Կիւլկիւլեան՝ առընթեր ունենալով Հոգշ. Տ. Արիստակէս աբղյ. Այվազեանն ու դպրաց դասի անդամները: Ներկայ էր նաեւ Աւետարանական եկեղեցւոյ շրջանի ներկայացուցիչ Էրնսթ-Լուտֆիք Ֆեթթերը:

Գերեզմանատան արարողութենէն ետք Կէօփինկէնի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ եկեղեցական արարողութիւն մը եւս կատարուեցաւ Հայր Արիստակէսի հանդիսապետութեամբ, ապա ներկաները հաւաքուեցան Հայ Տան սրահին մէջ ուր գլխաւոր դասախօսն էր Տոմինիք Յ. Շալլէր:

Նոյն օրը Միւնխէնի մէջ Պավարիայի Հայ Հայրենակցական Միութեան, Հայ Եկեղեցական համայնքի ու Հայկական Հարցերու Ինստիտուտի նախաձեռնութեամբ կատարուած յուշատօնին եւս Հայր Արիստակէս նախագահեց, կատարելով հոգեհանգստեան պաշտօն ու կարդալով Ցեղասպանութեան նիւթով դասախօսութիւն մը:

**27 Ապրիլ, Համպուրկ.** Հայոց ցեղասպանութեան 90-ամեակի առիթով ձեռնարկ մըն ալ կազմակերպուած էր Համպուրկ քաղաքի Կաթողիկէ Կաճառին կողմէ, որուն պատասխանատուն է համպուրկահայութեան քաջածանօթ եւ մեր Եկեղեցւոյ ազնիւ բարեկամ Մոնսինեօր Վիլմ Սանտերս: Կաճառի հանդիսութեանց դահլիճին մէջ, որ լեցուն էր հայ եւ օտար ներկաներով, տեղի ունեցաւ Յիշատակի Ձեռնարկ մը, որուն բացումը կատարուեցաւ Մոնսինեօր Սանտերսի կողմէ: Յաջորդաբար խօսք առին քաղաքի Կաթողիկէ փոխ-եպիսկոպոս տոքթ. Հանս-Եօխէն Եաշքէ, Աւետարանական Եկեղեցւոյ եպիսկոպոսուհի Եփսըն, Գերմանիոյ հայոց առաջնորդ Գարեգին արքեպս. Պեքճեան: Իսկ հիմնական բանախօսն էր յայտնի հրապարակախօս Ռալֆ Ճորտանօ:

Ձեռնարկի աւարտին Կաթողիկէ Կաճառին կից Սուրբ Միքայել եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Միջեկեղեցական արարողութիւն եւ Հոգեհանգստեան պաշտօն, որու ընթացքին յիշատակի խօսքը արտասանեց Համպուրկի աւետարանական եպիսկոպոսուհի տիկ. Մարիա Եփսըն:

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 90-ԱՄԵԱԿԸ ՆՇՈՒԵՑԱՒ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ՇՈՒՔՈՎ ԵՒ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ ՋԱՀԸ ՓՈԽԱՆՑՈՒԵՑԱՒ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ

Նիւ Եորքի եկեղեցական, մշակութային, բարեսիրական, հայրենակցական եւ քաղաքական կազմակերպութիւններու միացեալ ջանքերով Հայկական ցեղասպանութեան 90-ամեակը նշուեցաւ արժանավայել շուքով:

Ոգեկոչման այս փառաշուք հանդիսութիւնը սկիզբ առաւ Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. Պատարագով՝ Կիրակի Ապրիլ 24-ին: Մասնաւոր ինքնաշարժներով մօտակայ եւ հեռաւոր ծուխերէն եկած մօտ 2000 հաւատացեալներ ներկայ գտնուեցան Ս. Պատարագին: Օրուան պատարագիչն էր Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան: Միացեալ երգչախումբին մաս կը կազմէին շրջանի Հայ եկեղեցիներու դպրաց դասերու անդամները՝ ղեկավարութեամբ խմբավար Խորէն Մէյխանէճեանի:

Պատարագիչ առաջնորդ Սրբազան Հայրը ներկայացուց օրուան քարոզիչը՝ Ամերիկայի Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի վարիչ-քարտուղար տոքթ. Ռապըրթ Էտկար: Տոքթ. Էտկար, որ ձեռնադրուած հոգեւորական մըն է United Methodist Church-ի եւ իբրեւ եռվիւ ունեցած է Հայ հոգեւորական մը, 1975-1987 տարիներուն ընտրուած է Ամերիկայի Ներկայացուցիչներու Տան անդամ: Այս հանգամանքով ան ծառայած է բազմաթիւ ենթայանձնախումբերու մէջ, ինչպէս տոքթ. Մարթին Լութըր Քինկի եւ նախագահ Ճան Քենետիի սպանութիւնները քննարկող Յանձնախումբին: Ան այցելած է նաեւ Հայաստան:

Տոքթ. Ռապըրթ Էտկար ըսաւ թէ՝ մենք յաճախ կը կրկնենք որ ցեղասպանութիւնը երբեք պէտք չէ որ մոռնանք: Սակայն ճիշդը ըսելով, մոռացութեան կու տանք ամէն օր: Կը մոռնանք Հայկական ցեղասպանութիւնը, Ողջակիզումը եւ Ռուանտայի ցեղասպանութիւնը, որ մեզի կը յիշեցնէ թէ տակաւին կը շարունակուի ցեղասպանութիւնը: Ան ըսաւ նաեւ որ Հայերու նման տառապած ժողովուրդ մը իր ձայնը պէտք է բարձրացնէ՝ որպէսզի վերջ գտնեն այսպիսի բռնարարքութիւնները: Եւ ապա, աղօթք մատոյց որպէսզի այսպիսի արարքները չկատարուին այլեւս:

Յաւարտ Ս. Պատարագի Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան կատարեց մատաղի օրհնութիւնը, որ ապա Մայր Տաճարի բակին մէջ բաշխուեցաւ ներկայ հաւատացեալներուն:

Եկեղեցական արարողութենէն ետք, մասնաւոր ինքնաշարժներով ներկաները փոխադրուեցան Նիւ Եորքի սիրտին վրայ գտնուող Թայմզ Սքուէր հրապարակը, ուր անոնց միացան այլ վայրերէն եկած հայրենակիցները: Աւելի քան 5000 հոգիի ներկայութեան Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան հետեւեալ աղօթքով բացումը կատարեց օրուան հանդիսութեան. «Ո՜վ Տէր, Քու օրհնութիւններդ կը խնդրենք այստեղ հաւաքուած ժողովուրդին համար, ինչպէս նաեւ ամբողջ աշխարհի մեր բոլոր հայրենակիցներուն համար՝ որոնք այս հանդիսաւոր առիթով քով քովի եկած են, եւ որոնք վկաներն են արդարութեան համար տարուած պայքարին: Մենք լաւ գիտենք թէ ինչո՛ւ հաւաքուած ենք այստեղ, ոգեկոչելու

Հայկական ցեղասպանութեան 90-ամեակը: Չորս սերունդներ ետք՝ փակային մեր ժողովուրդը ազդեցութեան ներքեւ կը գտնուի այս ահաւոր շրջանին: Ո՛վ Տէր, կը խնդրենք որ խաղաղութիւն պարգեւես ցեղասպանութեան ընթացքին զոհուածներու հոգիներուն եւ օրհնես այդ ցեղասպանութենէն վերապրողները, եւ խաղաղութիւն պարգեւես անոնց յաջորդներուն: Տէր, կը խնդրենք նաեւ որ Քու հովանիդ անպակաս ըլլայ Հայաստանի Հանրապետութեան վրայէն, որուն գոյութիւնն իսկ կը վկայէ այն ոգիին մասին՝ որ դիմացաւ Ցեղասպանութեան: ...Կը խնդրենք նաեւ որ Քու լոյսդ փայլի աշխարհի մութ անկիւններուն մէջ, ուր անգթութիւնն ու անարդարութիւնը կը տառապեցնեն անմեղ ժողովուրդները: ...Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք Քեզի՝ Ամերիկայի այս մեծ երկրին վայելած ազատութեան համար: Օրհնէ՛ այս հողը եւ անոր ժողովուրդը՝ որպէսզի անոնք շարունակեն մեր աշխարհի լոյսի փարոսը ըլլալ: Այս բոլոր բարիքներուն համար կը փառաբանենք Քու անունդ յաւիտեանս յաւիտենից. Ամէն»:

Ապա ելոյթ ունեցան Կարգադիր Յանձնախումբի զոյգ ատենապետները՝ Ռոյ Ստեփանեան եւ Ջէն Սարաճեան եւ Արհիապատիւ Մանուէլ եպս. Պաթաքեան: Խօսք առին նաեւ Նիւ Եորքի *սենաթըր* Չարլզ Շումըր, *գոնկրէսմէն* Փիթըր Փալոն եւ այլ պետական ներկայացուցիչներ, որոնք իրենց զօրակցութիւնը յայտնեցին Հայ ժողովուրդի արդար պայքարին եւ դատապարտեցին Օսմանեան Թուրքիոյ կողմէ կատարուած Հայկական ցեղասպանութիւնը: Փակման աղօթքը արտասանեց Գեր. Տ. Օշական արքեպս. Չոլոյեան:

Թայմզ Սքուէրէն ետք՝ ներկաները մեկնեցան դէպի Նիւ Եորքի Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցւոյ առաջնորդանիստ գեղակերտ Սէյնթ Փաթրիքս Մայր Տաճարը, ուր տեղի ունեցաւ մասնաւոր Միջեկեղեցական Հոգեհանգստեան Պաշտօն եւ յուշահանդէս: Սէյնթ Փաթրիքս Մայր Տաճարի նստարանները ամբողջութեամբ գրաւուած էին մէկ ու կէս միլիոն հայ նահատակներուն յիշատակը յարգող հայրենակիցներով, որոնցմէ շատեր ստիպուած էին ոտքի մնալ Տաճարի գաւիթին եւ երկու կողմերու տարածութեան մէջ: Ներկաներուն թիւը աւելի քան 5000 էր:

Միացեալ երգչախումբը կը ղեկավարէր խմբավար Խորէն Մէյխանէճեան՝ երգեհոնի ընկերակցութեամբ ծանօթ երգեհոնահար Հոգշ. Տ. Մամիկոն վրդ. Քիլէճեանի:

Երգչախումբի «Հրաշափառ»ի երգեցողութեամբ եկեղեցականներու թափօրը մուտք գործեց Տաճար: Շատ տպաւորիչ եւ նոյն ատեն յուզիչ էր մուտքը թափօրին, զոր կ'առաջնորդէր Ս. Վարդան Մայր Տաճարի լուսարարապետ Արժշ. Տ. Մարտիրոս քհնյ. Ջեւեան: Թափօրին կը մասնակցէին զանազան եկեղեցիներու դպիրներ, սարկաւագներ, մեծ թիւով հայ հոգեւորականներ, ինչպէս նաեւ ոչ-հայ Եկեղեցիներու առաջնորդներ ու ներկայացուցիչներ: Թափօրի վերջաւորութեան կու գային Գեր. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, Գեր. Տ. Օշական արքեպս. Չոլոյեան եւ Արհիապատիւ Տ. Մանուէլ եպս. Պաթաքեան:

Հոգեհանգստեան աղօթքը արտասանեց Գեր. Տ. Օշական արքեպս. Չոլոյեան, իսկ Աւետարանը կարդաց Արհիապատիւ Տ. Մանուէլ եպս. Պաթաքեան: Ապա, եկեղեցականներն ու սարկաւագները իրենց տեղերը գրաւեցին:

Արժշ. Տ. Մարտիրոս քհնյ. Ջեւեան, որ պատասխանատուն էր եկեղեցական արարողութեանց, Մեծ եղեռնի 90-ամեակի Կազմակերպիչ Յանձնախումբին անունով շնորհակալութիւն յայտնեց ԱՄՆ Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցւոյ առաջնորդ Կարտինալ Իկընի եւ

Սէյնթ Փաթրիքս Մայր Տաճարի աւագերէցին, որ սիրայօժար կերպով Տաճարը տրամադրած էին Հայ համայնքին, ինչպէս նաեւ շնորհակալութիւն յայտնեց մասնակցող բոլոր հոգեւորականներուն, եւ հրաւիրեց Նիւ Եորքի Րիվըրսայտ եկեղեցւոյ երէց հովիւ Տոքթ. Ճէյմս Ֆորպս
կրպսնրը որպէսզի օրուան քարոզը տայ:

Տոքթ. Ֆորպս պատմութեան առաջին ոճրագործութեան՝ Կայէնի եւ Աբէլի Ս. Գրական պատմութեան ընթերցումով սկսաւ իր քարոզը, եւ անդրադարձաւ մեր օրերուն պատահած ցեղասպանութեանց: Ան ըսաւ որ մեր բոլորին պարտականութիւնն է սիրել զիրար եւ աշ-
խատանք տանիլ որպէսզի նման ցեղասպանութիւններ այլեւս տեղի չունենան: Հայկական ցեղասպանութեան յիշատակը պէտք է մեզ քաջալերէ՝ որպէսզի ոտքի կանգնինք եւ պայ-
քարինք այսպիսի բռնարարքներու դէմ, ա՛յս եղած է համայն մարդկութեանը մեր Տիրոջ ուղղած պատգամը՝ համամարդկային պատմութեան սկիզբէն ի վեր:

Յուշահանդէսի հանդիսավարն էր ծանօթ գրագէտ եւ Հայկական ցեղասպանութեան *ցոնկըրէսմէն* Տէյ-
մասնագէտ փրոֆ. Փիթըր Պալաքեան, որ առաջին առիթով հրաւիրեց
վիտ Պանիորը: Յարգելի *ցոնկըրէսմէնի* խօսքը շատ յուզիչ էր՝ ան մէջբերումներ ըրաւ վե-
րապրողներու պատմածներէն եւ դատապարտեց հայոց դէմ կատարուած ցեղասպանութիւնը:

Յաջորդ խօսողն էր ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան լիազօր եւ մնայուն ներկայացուցիչ պարոն Արմէն Մարտիրոսեան, որ արտայայտուեցաւ ցեղասպանութեան անընդ-
ուն եւ այսօրուան Հայ ժողովուրդի ձեռք բերած յաջողութիւններուն մասին:

Փրոֆ. Փիթըր Պալաքեան ըսաւ թէ հակառակ անոր որ ցեղասպանութեան հետեւանքով Հայ ժողովուրդը մահուան դուռը հասած էր, սակայն ան կ'ապրի տակաւին եւ պիտի ապրի դարեր շարունակ՝ միշտ ոգեկոչելով իր բիւրաւոր նահատակներուն յիշատակը եւ հետա-
պնդելով իր արդար դատը: Ան մէջբերումներ ըրաւ իր վերջին «Բոցավառուող Տիգրիսը» գիրքին մէջ տեղ գտած ոչ-հայ պաշտօնական անձնաւորութիւններու վկայութիւններէն Հայկական ցեղասպանութեան պատմական վաւերականութեան մասին:

Հայ նոր սերունդի ներկայացուցիչ Էնտրու Գայսէրեան իր խօսքով յարգանք մատոյց վերապրողներուն, որոնցմէ մօտ տասը ներկայացուցիչներ տեղ գրաւած էին Տաճարի առա-
ջին նստարանին վրայ, եւ ուխտեց վառ պահել բիւրաւոր նահատակներուն յիշատակը եւ շարունակել անոնց աւանդը:

Այդ պահուն վերապրողները մօտեցան Տաճարի խորանին եւ ի ձեռին ունեցած վառած ջահիկները փոխանցեցին նոր սերունդի ներկայացուցիչներուն: Այս տպաւորիչ տեսարանը յուզեց բոլոր ներկաները՝ որոնք վկաներն եղան հին սերունդէն նոր սերունդին փոխանցուած ջահին, որ կը խորհրդանշէ ազգային աւանդութեան ու ժառանգութեանց փոխանցումը:

Այս հոգեպարար արարողութեան եւ յայտագիրին փակման խօսքը կատարեց Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, որ ի մէջ այլոց ըսաւ. «Շնորհակալութիւն կը յայտնեմ բոլոր ներկաներուն՝ որոնք այսօր մեզի կը միանան ոգեկոչելու համար մարդկային պատմութեան ամենամութ շրջանը, որ նոյն ատեն կը յատկանշուի հաւատքի ուժով եւ մարդկային ոգիի անխորտակելիութեամբ: Այսօր առիթը կը փրոյի մեզի միասնաբար աղօթելու եւ ոգեկոչելու մեր նահատակներուն յիշատակը: Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք բոլոր յարգարժան հիւրերուն՝ որոնք ներկայ են մեզի հետ բաժնելու համար այս ոգեկոչումը: Գլխաւորաբար կը փափաքինք յիշել տոքթ. Ճէյմս Ֆորպսը, *ցոնկըրէսմէն* Պանիորը, դես-

պան Մարտիրոսեանն ու փրոֆ. Պալաքեանը: Այս անձնաւորութիւնները իրենց ներկայութեամբ եւ խօսքերով պատուեցին մեր հաւաքը: Մեր գնահատանքը կը յայտնենք նաեւ բոլոր միջնկնդեցական եւ դիւանագիտական անձնաւորութիւններուն՝ որոնք մեզի հետ են այսօր: Շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ միացեալ Կարգադիր Յանձնախումբին, այսօրուան միացեալ երգչախումբին եւ երիտասարդ սերունդին: Տէրը թող ձեզ բոլորդ օրհնի: Կը փափաքիմ շնորհակալութիւն յայտնել նաեւ Կարտինալ Էտուըրտ Իկընի եւ Սէյնթ Փաթրիքս եկեղեցւոյ հոգեւորականներուն: Մենք գիտենք որ այս վերջին շաբաթները յուզիչ օրեր եղան մեր Կաթոլիկ քոյրերուն եւ եղբայրներուն համար: Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք Յովհաննէս-Պօղոս Բ. Պապի վախճանման առիթով, ուրախութեամբ ու յոյսով կը դիմաւորենք Ն.Ս. Պենետիքթ ԺԶ.ի ընտրութիւնը: ...Այսօր մենք աղօթք կը մատուցանենք նաեւ բոլոր ցեղասպանութիւններու զոհուածներուն համար: ...Մեր սրտերը ուրախութեամբ կը լեցուին ի տես մեր երիտասարդ սերունդին, որ հաւատարիմ կը մնայ իր ազգային ժառանգութեան՝ մեր ժողովուրդին վիճակուած բնաջնջման սպառնալիքէն չորս սերունդ ետք իսկ: Կեանքի հրաշքն է այս, որ ոչ մէկ սատանայական ուժ կրնայ յաղթահարել: ...Տէրը թող մեզի ուժ, քաջութիւն եւ իմաստութիւն շնորհէ՝ որպէսզի աշխարհը միշտ յիշէ 90 տարի առաջ զոհուած մեր նախատակները, եւ մենք ապրինք միշտ յարգելով անոնց յիշատակը»:

Առաջնորդ Սրբազան Հօր խօսքի աւարտին՝ դարձեալ թափօր կազմուեցաւ եւ երգեհոնի նուագակցութեամբ եւ երգչախումբի կատարողութեամբ թափօրը դուրս ելաւ Սէյնթ Փաթրիքս Մայր Տաճարէն:

Ոգեկոչման այս բացառիկ արարողութիւնն ու ներկայացուած յայտագիրը մեծապէս փալաւորած էր ներկաները, որոնք զիրար կ'ողջունէին արցունքոտ աչքերով եւ զոհունակ սրտով, այն հաստատ համոզումով որ ոգեկոչման այս հանդիսութիւնները պիտի շարունակուին մինչեւ որ ցեղասպանը ընդունի իր կատարած ոճիրը, եւ Հայ ժողովուրդին 90-ամեայ դատը արդար լուծում մը գտնէ:

Նոյն երեկոյեան, Նիւ Եորքի պատկերասփիւռի եւ ձայնասփիւռի բոլոր գլխաւոր կայանները իրենց յայտագիրներուն մէջ լայն տեղ յատկացուցին Հայկական ցեղասպանութեան 90-ամեակին առիթով կազմակերպուած ոգեկոչման ձեռնարկներուն (Ս. Վարդան Մայր Տաճար, Թայմզ Սքուէր եւ Սէյնթ Փաթրիքս Մայր Տաճար): Իսկ օրաթերթերը՝ յաջորդ օրուան իրենց թիւերուն մէջ նկարներ տպեցին եւ անդրադարձան Հայկական ցեղասպանութեան:

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Շաբաթ 23 Ապրիլին, կէսօրուայ ժամը 12.30ին, առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ քահանայ Հայրերու եւ Սարկաւագներու, փութաց Մարթին Փլէյսի Անյայտ Ջինուորի Յուշարձանի մօտ, ծաղկեպսակ զետեղեց յուշարձանին ու ապա կատարուեցաւ Հոգեհանգստեան արարողութիւն, Ապրիլեան եղեռնի ու Անզաքի զոհերու հոգիներուն ի հանգիստ: Ներկայ էին Թեմական Խորհուրդի եւ Եկեղեցիներու Վարչութիւններու անդամներ, ինչպէս նաեւ գաղութիս հայ համայնքի հաւաքական զաւակները:

Կիրակի 24 Ապրիլին, Մաքուարի Բարք գերեզմանատան հայկական բաժնի Յուշարձանին առաջ տեղի ունեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ, Մեծ եղեռնի՝ Հայոց ցեղասպանութեան 90-րդ տարելիցին առիթով:

Պատարագեց՝ Արժ. Տ. Նորայր աւագ քահանայ Քաթանեան:

Հոծ բազմութիւն մը ներկայ էր Սուրբ Պատարագին, որոնք եկած էին յարգելու մեր բիւրաւոր նահատակներու խնկելի յիշատակը:

Առաջնորդ Սրբազան Հայրը քարոզեց ու թելադրեց ներկայ ժողովուրդին, հաւատարիմ մնալու մեր նահատակներու խնկելի յիշատակին եւ ընթանալու անոնց լուսաւոր ուղիով:

Տեղի ունեցաւ նաեւ Հոգեհանգստեան մասնաւոր արարողութիւն, նուիրուած Ապրիլեան եղեռնի նահատակներուն, որոնք ինկան վասն մեր քրիստոնէական հաւատքին եւ մեր ժողովուրդի յաւերժացումին:

Նոյն օրը, Ռոքվուտի գերեզմանատան հայկական բաժնի Յուշակոթողին առջեւ տեղի ունեցաւ ոգեկոչում, կազմակերպուած արեւմտեան շրջանի Հայաստանեայց Եկեղեցւոյ վարչութեան եւ միութիւններու կողմէ, ապա տեղի ունեցաւ հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն Ապրիլեան նահատակներու հոգիներուն ի հանգիստ:

Տեղի ունեցաւ ծաղկեպսակի զետեղում եւ զանազան ելոյթներ միութիւններու ներկայացուցիչներու եւ անդամներու կողմէ:

Առաջնորդ Սրբազան Հօր փակման խօսքով ու «Պահպանիչ»ով վերջ գտաւ օրուայ ոգեկոչումը:

Նոյն օրը երեկոյեան, Ուիլոպիի Քաղաքապետութեան սրահին մէջ, տեղի ունեցաւ ոգեկոչում, ուր գործադրութեան դրուեցաւ կոկիկ յայտագիր մը: Օրուայ գլխաւոր բանախօսն էր տիկին Հիլտա Չոպոյեան: Եղան նաեւ զանազան այլ ելոյթներ, այդ թւում եւ պետական պատասխանատու անձնաւորութիւններու կողմէ, որոնք դրուատեցին մեր ժողովուրդի օրինակելի, տիպար եւ միահամուռ կեցուածքը, յարգելու մեր բազմահազար նահատակներու խնկելի յիշատակը:

Հանդիսութիւնը իր աւարտին հասաւ առաջնորդ Սրբազան Հօր փակման խօսքով ու «Պահպանիչ»ով:

Երկուշաբթի 25 Ապրիլի երեկոյեան, Մաքուարի Համալսարանի սրահին մէջ, ՀԲԸՄի կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ ոգեկոչում, ուր գործադրութեան դրուեցաւ կոկիկ յայտագիր մը: Օրուայ բանախօսն էր Հալեպաբնակ փրոֆ. Թորոս Թորանեան, որ մեծ խմբու-

թեամբ ներկայացուց օրուայ խորհուրդը: Ցուշ-երեկոյի աւարտին Արժ. Տ. Նորայր աւագ ահնյ. Բաթանեան իր սրտի խօսքը ըսաւ ու ընթերցեց Ազգիս Վեհափառ Հայրապետ Ա.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակը՝ փրուած Մեծ եղեռնի 90-րդ տարելիցին, ու «Պահպանիչ»ով փակեց օրուայ Ցուշ-երեկոն:

Հինգշաբթի 28 Ապրիլի երեկոյեան, Սիտնիի խորհրդարանի շէնքի Հայկական Ցուշաձօարի առջեւ տեղի ունեցաւ յարգանքի յուշ-երեկոյ մը, ուր ծաղկեպսակներ զետեղուեցան, ապա եղոյթ ունեցան պետական դէմքեր, որու աւարտին, ներկայ Հայ երեք համայնքներու առօղեւոր հայրերու կողմէ, ՀՈԳԻՈՑ արտասանուեցաւ մեր բիւրաւոր նահատակներու հոգիներուն ի հանգիստ:

Ցուշ-երեկոյի աւարտին, Խորհրդարանի սրահէն ներս, տեղի ունեցաւ բանախօսութիւն՝ օրիւր բանախօս տիկին Հիլտա Չոպոյեանի կողմէ, հայ եւ օտար բարձրաստիճան անձնաւորութիւններու ներկայութեան:

Մեր ժողովուրդը, բոլոր ձեռնարկներուն, ցուցաբերեց հայու օրինակելի ընթացք մը, յարգելու մեր բիւրաւոր նահատակներու անմահ յիշատակը:

*ԴԻՒԱՆ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ*
*ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԱՆԱՏԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՓՕԼ ՄԱՐԹԻՆԻ ՀԵՏ

Ապրիլ 20. 2005. Չորեքշաբթի օր. պատմական օր մը արձանագրուեցաւ Գանատահայ պատմութեան մէջ, երբ Գանատահայոց առաջնորդ` Գերշ. Տ. Բագրատ եպս. Գալստանեանի գլխաւորութեամբ տասնըմէկ հոգինոց ազգային պատուիրակութիւնը հանդիպում ունեցաւ երկրի վարչապետ` Փօլ Մարթինի հետ, մայրաքաղաք Օթթաուայի վարչապետարանին մէջ:

Այս այցելութիւնը կը զուգադիպէր Գանատայի խորհրդարանի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման առաջին տարեդարձին: Ինչպէս ծանօթ է, անցեալ տարուան Ապրիլի 21-ին, Գանատան պաշտօնապէս ճանչցած էր Եղեռնի պատմական իրողութիւնը շնորհիւ երեսփոխաններ Սարգիս Ասատուրեանի և Ճիմ Քարիճիանիսի:

Վերոյիշեալ հանդիպումը կազմակերպուած էր Հայկական Համաշխարհային Ընկերակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամ և ՌԱԿ Միացեալ Նահանգներու Արևելեան շրջանի և Գանատայի Շրջանային Վարչութեան փոխատենապետ Հրաչ Պօյաճեանի նախաձեռնութեամբ և օգնութեամբ Խորհրդարանի Հայասէր անդամ Ճիմ Քարիճիանիսի:

Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորած պատուիրակութեան մաս կը կազմէին. Գանատահայոց փոխառաջնորդ` Հոգշ. Տ. Արարատ Ծ. վրդ. Գալթագճեան, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգևոր հովիւ` Արժ. Տ. Զարեհ ա. քհնյ. Զարգարեան, Թեմական Խորհուրդի ատենադպիր` տիար Արթօ Պասմաճեան, Թեմական Խորհուրդի անդամ տիկին Լիլիան Սվաճեան. ՌԱԿ Կեդրոնական Վարչութեան գանձապահ և Հայ Իրաւանց Խորհուրդի համադրող տիար Մայք Խարապեան, Հ.Հ. Ընկերակցութեան անդամ տիար Արմէն Քիւրքճեան. տիար Նուրհան Ուզունեան, օր. Սոսի Պօյաճեան և տիար Սևակ Սադըրեան, ինչպէս նաև Գանատայի Ազգային ժողովի անդամներ` տիար Ճիմ Քարիճիանիս և տիկին Ռէյմոն Ֆոլքօ:

Հանդիպման ընթացքին Գանատական Հռչակագիրին - Canadian Charter of Rights and Freedom - Հայերէն լեզուի թարգմանութիւնը ընտիր տպագրութեամբ պաշտօնապէս ստորագրուեցաւ վարչապետին կողմէ ու յանձնուեցաւ Գանատահայոց առաջնորդ` Գերշ. Բագրատ եպս. Գալստանեանին: Այս Հռչակագիրը թարգմանուած էր պրն Նուրհան Ուզունեանի կողմէ:

Հանդիպման աւարտին, առաջնորդ Սրբազան Հայրը վարչապետին ներկայացուց Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի գնահատագիրը և յանուն Վեհափառ Հայրապետի և Գանատայի հայ համայնքի ապակեայ գեղեցիկ Խաչքար մը նուիրեց վարչապետին:

*ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*
*ՄԱՄԼՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ*

# ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՊՐԱԶԻԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

## ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԻ ԲԱՑՈՒՄ

Երկուշաբթի 18 Ապրիլին, Սան Փաւլոյի գլխաւոր «Փաուլիսթա» պողոտայի վրայ «Քօն-ռունթօ Նասիոնալ»ի (Conjunto Nacional) Մշակոյթի կեդրոնական հսկայ սրահին մէջ, նա-խաձեռնութեամբ պատրաստուած ցուցահանդէսին բացումը կատարուեցաւ, «90 Anos do Genocidio Armenio» «Հայոց Ցեղասպանութեան 90 տարիները» վերտառութեամբ:

Ցուցահանդէսը այստեղ պիտի մնայ մինչեւ Մայիսի սկիզբը, ապա գրեթէ ամբողջ տարի ը պիտի ցուցադրուի Սան Փաւլոյի Պետական Համալսարանի, Օզասքոյի քաղաքապե-տութեան, «Մեթրօ»ի կայարաններու, Հայ հաստատութիւններու եւ այլ հանրային կեդրոն-ներու մէջ:

Անոր այս յաջողութիւնը առաւելաբար կը պատկանի մեր երիտասարդներէն Կարլոս Պօյաճեանի, Գարլօս Շիրինեանի եւ Նորման Սերայտարեանի հետեւողական աշխա-տանքներուն:

## ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԱՂԱՕԹՔ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Ապրիլ 23-ին, Շաբաթ երեկոյեան, նախագահութեամբ թեմիս առաջնորդ Տ. Տաթեւ ար-քեպս. Ղարիպեանի, Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ միջ-եկեղեցական համատեղ արարողութիւն, մասնակցութեամբ Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական Համայնքներու առաջնորդներ Արհ. Տ. Վարդան եպս. Պօղոսեանի եւ Պատուելի Ռոյ Աբրահամեանի: Իր բարձր հովանաւորութիւնը շնորհած էր Սան Փաւլոյի Արքեպիսկոպոս Ամենապատիւ Տ. Գլաուտիօ Հումմէս Կարտինալը, որ ծանօթ պատճառնե-րով բացակայեցաւ Վատիկան մեկնած ըլլալով: Ներկայ էին բոլոր քոյր Եկեղեցիներու հո-գեւորական ներկայացուցիչներ, Հայաստանի Ընդհ. Հիւպատոսը, եւ բազմահարիւր հաւատացեալներ:

Երեք հայ եկեղեցիներու երգչախումբերու կատարողութեամբ, մէջ ընդ մէջ երգուեցան հոգեւոր եւ ազգային պատշաճ երգեր եւ իրենց խօսքերն ու աղօթքները արտասանեցին հո-գեւոր պետերը, իսկ օրուայ պատգամը տուաւ թեմիս առաջնորդ Սրբազան Հայրը:

Արարողութեան վերջաւորութեան, իննսուն վառուած մոմեր, վերապրող տարեցներու կողմէ փոխանցուեցան երիտասարդներու, որոնք իրենց կարգին շարքով տարին մինչեւ Ար-մենիա Հրապարակ եւ զետեղեցին Նահատակաց Յուշարձանին առջեւ, ուր հայ արիներ եւ երիտասարդներ մինչեւ առաւօտ հսկեցին Նահատակներու յիշատակին վառուած բոցին եւ մոմերուն մօտ:

Աւելորդ չէ անգամ մը եւս անդրադառնալ, որ մեր Նահատակաց Յուշարձանը կանգնեց-ուած էր 1965 թուին, բարերարութեամբը Գըսաճըգեան ընտանիքին եւ յանձնուած՝ քաղաքա-պետութեան խնամքին: Ցաւօք 22 Ապրիլին, ան ենթարկուեցաւ վայրագ վերաբերմունքի մը՝ անծանօթներու կողմէ, երբ անոր վրայ հրացանազարկերու հետքեր տեսնուեցան: Նոյն օրն

իսկ քաղաքային ոստիկանութեան կողմէ հարկ եղած քննութիւնները կատարուեցան եւ ապահովութեան միջոցներ ձեռք առնուեցան:

## ՊԱՏԱՐԱԳԻ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ

Կիրակի 24 Ապրիլին, Սուրբ Գէորգ Մայր եկեղեցւոյս մէջ հանդիսաւոր Սուրբ Պատարագ մատոյց Տ. Եզնիկ ա. քհնյ. Կիւլիւեան: Ներկայ էին բազմահարիւր հաւատացեալներ, որոնց օրուայ պատշաճ քարոզը խօսեցաւ թեմիս առաջնորդ Գերաշնորհ Տ. Տաթեւ արքեպս. Ղարիպեան, ոգեկոչելով յիշատակը սնոնց, որոնք արհամարհեցին աշխարհի փառքերը եւ մշազոհուեցան ի փառս Հայ Ազգի արժանապատուութեան, քիստոնէական հաւատքին եւ մշակոյթին: Անոնց, որոնք զոհը եղան օսմանեան թուրք պետութեան բարբարոսութիւններուն եւ քսաներորդ դարու առաջին Ցեղասպանութեան:

Ցաւալի Սուրբ Պատարագի, թափօր կազմուեցաւ եկեղեցւոյ դրան առջեւէն մինչեւ Նահատակաց Յուշարձան, վառուած Իննսուն մոմերու, ծաղկեպսակներու, հայ արիններու եւ դպիրներու առաջնորդութեամբ, Եկեղեցականաց Դասուն հետեւեցան երիտասարդներ ցուցափակներ ի ձեռին:

Ծաղկեպսակներու զետեղումէն վերջ, կատարուեցաւ երեք Հոգեհանգստեան Պաշտօն. Ապա ոստիկանական փողախարումով ժողովուրդը լռութեամբ իր յարգանքի տուրքը մատոյց: Խօսք առին Հայաստանի Ընդհանուր Հիւպատոս փիար Աշոտ Եղիազարեան եւ գաղութին անունէն՝ փիար Օշին Մոսրիչեան:

## ՎԵՐԱԲԱՑՈՒՄ «ՄԵԹՐՕ»Ի ԱՐՄԵՆԻԱ ԿԱՅԱՐԱՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Հոգեհանգստեան արարողութենէն վերջ, եկեղեցական եւ աշխարհական թափօրը ուղղուեցաւ դէպի «Մեթրօ»ի Արմէնիա կայարանի համանուն ՅՈՒՇԱՐՁԱՆ, ուր հաստատուած երկու Խաչքար-Յուշարձաններու եւ կից աղբիւրներու նորոգութիւնները կատարուած էին SOFISA դրամատան բարերարութեամբ, միջազգային ճանաչում ունեցող արուեստագիտունի Ժոզէլի Գարվալիոյի կողմէ: Ներկայ էին Հայ երեք համայնքապետերը, քահանայ հայրերը, «Մեթրօ»ի տնօրէն Տ. Ռէնաթօ Փիրէս Տէ Գարվալիօ Վիէյրա, Sofisa դրամատան տնօրէն եւ բարերար տոքթ. Վարուժան Պուրմայեան, Հայաստանի Հիւպատոս փիար Աշոտ Եղիազարեան, պաշտօնական հիւրեր եւ բազմահարիւր ներկաններ:

Հայաստանի եւ Պրազիլիոյ քայլերգներու նուագներէն վերջ, այս առիթով իրենց պաշտօնական խօսքերը արտասանեցին արուեստագիտուհի Ժոզէլի Գարվալիօ, «Մեթրօ»ի յարգելի տնօրէնը եւ տոքթ. Վարուժան Պուրմայեանը: Հուսկ կատարուեցաւ օրհնութիւնը նորոգուած խաչքարերուն, ներկայ հոգեւորականներու կողմէ:

## ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆԻՍՏ ՍԱՆ ՓԱՒԼՈՅԻ ՕՐԷՆՍԴԻՐ ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

Երեկոյեան ժամը 19.00-ին հոծ բազմութիւն մը հաւաքուած էր Օրէնսդիր Ժողովի Պալատի շրջափակին մէջ գտնուող Հայկական Խաչքար-Յուշարձանին առջեւ: Եկեղեցական արարողութիւնը կատարեց առաջնորդ Սրբազան Հայրը, ներկայութեամբը Սան Փաւլոյի Օրէնսդիր Ժողովի նախագահ տոքթ. Առնալտօ Ժարտինի, Հայաստանի Ընդհ. Հիւպատոս փիար Աշոտ Եղիազարեանի, Պրազիլահայ թեմի Ներկայացուցչական Մարմնի եւ Կեդր.

Վարչական Խորհուրդի ատենապետներ փրոֆ. փոքթ. Անդրանիկ Մանիսաճեանի և Տոքթ. Յովհաննէս Գութուճեանի, ինչպէս նաև պաշտօնական այլ հիւրերու:

Ժամը 20.00-ին Ժողովի պաշտօնասրահին մէջ սկսաւ հանդիսաւոր նիստը, որուն բացումը կատարեց Ժողովին նախագահը, բացատրելով օրուայ հաւաքին նշանակութիւնը և կարևորեց Հայ Ժողովրդի դէմ կատարուած Ցեղասպանութեան ճանաչումը Պրազիլիական Պետութեան կողմէ, որպէս արդարութեան, ժողովուրդներու իրաւունքներու ճանաչման և պաշտպանութեան ազնիւ արտայայտութիւն:

Քաղաքային ռուբիկանութեան փողերախումբը նուագեց Հայաստանի և Պրազիլի Հիմները և ապա ընթացք տրուեցաւ օրուայ յայտագրին: Օրուայ գլխաւոր զեկուցողն էր Սան Փաւլոյի Պեզական Համալսարանի դասախօս փրոֆ. փոքթ. Տալմօ Տալարի: Խօսք առին նաև Հայաստանի Ընդհ. Հիւպատոսը և նոյնինքն ժողովին պրն նախագահը: Գաղութիս երգչախումբը երգեց «Անոնց համար որ ինկան», «Մարդարապատ» և «Երեւան-Էրեբունի» երգերը:

## ԹՂԹԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԿՆԻՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Նոյսկ սրահին մէջ տեղի ունեցաւ Ցեղասպանութեան 90-ամեակին առթիւ, պետական թղթատարութեան կողմէ հրապարակուած պաշտօնական Յիշատակ-Կնիքին ներկայացման արարողութիւնը: Թղթատարութեան տնօրէն պրն Գլեպէր Սանթօս Ֆէրէյրան կատարեց բացման արարողութիւնը: Պաշտօնական հիւրեր կատարեցին առաջին կնքումը յատուկ ծրարներու վրայ: Կնիքին գծագրութիւնը պատրաստած էր ծանօթ արուեստագէտ պրն. Գրիգոր Մխիթարեան: Այս առիթով յանուն Հայ Գաղութիս նախագահութեան իր խօսքը արտասանեց փոքթ. Նշան Պէրթիզլեան:

Պաշտօնական այս հանդիսութեան ներկայ էին Յունաստանի և Ռուսիոյ Հիւպատոսները, Հայ նոյն համայնքներու հոգևոր պետերը, մեր քահանայ հայրերը, Գաղութիս Միութիւններու ներկայացուցիչները և պաշտօնական հիւրեր:

## ՅՈՒՇԱՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԴՈՒՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Ոգեկոչման հանդիսութեանց ծիրէն ներս մասնակցութիւն բերին նաև Ազգ. Դուրեան Վարժարանին աշակերտները և 28 Ապրիլ, երեկոյեան ժամը 20.30-ին հանդէս եկան կոկիկ ծրագրով մը Վարժարանի հանդիսասրահէն ներս, ուր ներկայ էին թեմիս առաջնորդ Սրբազան Հայրը, Հայաստանի Ընդհանուր Հիւպատոսը, թեմիս Ազգ. Ներկայացուցչական Մարմնի և Կեդր. Վարչական Խորհուրդի ատենապետները, Միութեանց ներկայացուցիչներ, ծնողներ և հիւրեր:

Վարժարանիս տնօրէն Տ. Եզնիկ ա. քհնյ. Կիւզէլեանի բացման խօսքով ընթացք տրուեցաւ օրուայ յայտագրին, աշակերտութեան կողմէ օրուայ պատշաճ երգերով, արտասանութիւններով և ողերգներով:

Ներկաները հոգեկան մխիթարութեամբ հետևեցան գեղարուեստական բաժնին, որը մէկ անգամ ևս ցոյց տուաւ Դուրեան վարժարանի կարևորութիւնը: Ահա ան այսօր անգամ մը ևս եկաւ իր վճռական խօսքը և պատգամը ուղղելու հայ ծնողներուն, թելադրելով ազգային գիտակցութիւն ունենալ՝ իրենց զաւակները առաջնորդելու Հայ Դպրոց, ուր միայն

Հայ Գիրին եւ Պատմութեան. ճանչնալ Հայ Եկեղեցին. Սուրբերը. հն-
կարելի է ընթելանալ Հայ Գիրին եւ Պատմութեան. ճանչնալ Հայ Եկեղեցին. Սուրբերը. հե-
րոսներն ու գրողները. որոնց թոռնիկն ու ժառանգորդներն են անոնք:

Օրուայ հուսկ բանը կատարելու հրաւիրուեցաւ թեմիս առաջնորդ Գերշ. Տ. Տաթեւ Ար-
քեպս. Ղարիպեանը, որ ինչպէս միշտ, այս առիթով եւս ներշնչուած իր խօսքերը ուղղեց
յատկապէս աշակերտներուն. լայնօրէն բացատրելով Հայ Սփիւռքի մը գոյութեան պատ-
ճառը. Նախապակներուն զոհողութիւնը. անոնց Կտակը եւ հիւրաքանչիւր հայու պարտակա-
նութիւնը հանդէպ Եկեղեցիին. Դպրոցին եւ Ազգին. որովհետեւ իրենք եւս. որպէս ապագայի
հայ գործիչներ. պատրաստ պէտք է ըլլան՝ շարունակելու այօրուայ Գործը:

Ապա «Պահպանիչ»ով եւ միաբերան արտասանած «Հայր մեր» աղօթքով վերջ գտաւ
բծախնդրօրէն պատրաստուած Ոգեկոչման հանդիսութիւնը:

## ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆԻՍՏ՝ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Մայիսի 16. Երկուշաբթի երեկոյեան ժամը 19.30-ին, Սան Փաւլոյի Քաղաքապետարա-
նի Խորհրդարանը եւս, ի յուշ մեր մէկ ու կէս միլիոն Նախապակներուն եւ նուիրուած Ի դա-
րու Ա ցեղասպանութեան, յատուկ Հանդիսաւոր Նիստ գումարեց իր ՄԱՅԻՍ ՄԷԿ Դահլի-
ճին մէջ:

Յայտագիրը սկսաւ Ռտփիկանական փողերախումբին կողմէ Հայաստանի եւ Պրազիլիոյ
քայլերգներու կատարմամբ եւ օրուայ ատենապետին՝ Խորհրդական տօքթ. Ժուսէլինօ Կա-
փէլիայի բացման խօսքերով: Այս առիթով խօսք առին նաեւ Հայ Դատի Յանձնախումբի
անունէն տօքթ. Սիմօն Խրիմեան. քաղաքիս մէջ գործող Գաղութներու Մշակութային Յանձ-
նախումբի ատենապետ տօքթ. Ռօզզալլահ Թումա եւ Հայաստանի Հանրապետութեան
Ընդհ. Հիւպատոսը, որուն Խօսքը փոխանցեց տօքթ. Ասէնսօն Գույումճեան: Օրուայ յայ-
տագրին իր մասնակցութիւնը բերաւ գաղութիս միացեալ երգչախումբը երեք պատշաճ եր-
գերով:

Ներկայ էին թեմիս առաջնորդ Սրբազան Հայրը, քահանայ Հայրերը, Հայ Աւետարա-
նական Եկեղեցւոյ Հովիւը, թեմիս Ազգային Ներկայացուցչական Մարմնի եւ Կեդր. Վար-
չական Խորհուրդի ատենապետները. Օզասքոյի մեր Համայնքի Վարչական ներկայացու-
ցիչները. կազմակերպութեանց ներկայացուցիչները, պետական եւ դիւանագիտական հիւ-
րեր եւ ներկայացուցիչներ:

Նիստի աւարտին տեղի ունեցաւ մեր գաղութէն ծանօթ բանաստեղծուհի, այժմ հանգու-
ցեալ, Անահիտ Խրիմեան-Սարգիսեանի POESIAS, CONTOS E CRONICAS գրքին շնոր-
հանդէսը: Հեղինակը իր գիրքը ձօնած է հայ հերոսներուն, նահատակներուն, պատմական
դէպքերուն եւ թուականներուն: Այս գիրքը իր հարազատներուն կողմէ հրատարակուեցաւ
Ցեղասպանութեան 90-ամեակին առիթով:

## ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆԻՍՏ՝ ՕԶԱՍՔՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Մայիսի 24, Երեքշաբթի երեկոյեան ժամը 20.30-ին Օզասքոյի քաղաքապետարանի
Խորհրդարանը յատուկ նիստ գումարեց՝ նուիրուած Հայ Ժողովուրդի Շաբաթուայ առթիւ,
որու որոշումը առնուած եւ Քաղաքապետարանի օրէնքի անցած էր 1985 թուին, առ ի գնա-

խափանք Օգոստոյի հայ համայնքի դրական մասնակցութեանը՝ քաղաքին զանազան մարզերէ ներս եւ անոնց բարգաւաճման:

Նիստը գլխաւորաբար նուիրուած էր Հայ ժողովուրդի Ցեղասպանութեան 90-ամեակին:

Օրուայ յայտագրին սկիզբ տուեցաւ Խորհրդարանի նախագահ տոքթ. Ժոզէ Պարալոգա Քուէլիոյի բացման եւ դրուատական խօսքերով, որուն յաջորդեց Զինուորական փողեբախումբին Հայաստանի եւ Պրազիլիոյ Հիմներու կատարումը: Իր բարձր ներկայութեամբ օրուայ հանդիսութիւնը պատուեց պրն քաղաքապետը՝ տոքթ. Էմիտիօ Բէրէյրա տէ Սուզա: Այս առիթով խօսք առին յրագրող տոքթ. Վրէժ Սանազար, յանուն Հայ Համայնքին՝ ատենապետ տոքթ. Արի Կէօճէնեան եւ պրն Քաղաքապետը: Տիար Յակոբ Քույճեան կարդաց թեմին առաջնորդ Սրբազան Հօր խօսքը, քանի որ օրուայ տեղատարափ անձրեւներուն եւ փեւանքով, կարելի չեղաւ իր ներկայութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանի պրն Հիւպատոսին եւ Սան Փաւլոյի ներկայացուցիչներուն:

Ներկայ էին Բանակային հրամանատարը, Զինուորական եւ քաղաքային ոստիկանապետները, քաղաքական եւ դիւանագիտական ներկայացուցիչներ եւ Հայ Համայնքը՝ գլխաւորութեամբ շրջանի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Պօղոս աւագ քահանայ Պարոնեանի:

Գեղեցիկ յիշատակ մը պիտի մնայ մեր գաղութի փարնգրութեան եւ ապագայ սերունդներուն մէջ, յատկապէս Հայաստանի ընդհ. պրն Հիւպատոսին անձնական ջանքերովը այս առիթով հրապարակուած ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆԸ, որ գեղատիպ հրատարակութիւն մը ըլլալէ բացի, Ցեղասպանութեան մասին լայն ծանօթութիւններ ներկայացնող եւ գաղութիս եկեղեցական եւ ազգային, ինչպէս նաեւ կարգ մը ընտանիքներու կողմէ յիշատակուած իրենց նահատակ նախնիքներուն եւ վերապրողներուն նուիրուած կոթող մըն է:

Այսպիսով աշխարհի բոլոր մեր հայրենակիցներուն հետ, Պրազիլ հաստատուած հայութիւնը եւս բերաւ իր լաւագոյն մասնակցութիւնը եւ խոնարհումը մեր Բիւրաւոր Նահատակներուն:

*ԴԻՒԱՆ ՊՐԱԶԻԼԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ*
*ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

## ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

*ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ*

*ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԻՒԼԿԵՐԵԱՆ*

# ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ՝ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏՔԻՆ ԿԸ ՊԱՐՏԻ ԻՐ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՅԱՒԵՐԺՈՒԹԻՒՆԸ

Եթէ Զատիկը՝ հրեաններու Կարմիր ծովէն անցքին եւ Եգիպտոսի գերիշխանութեան լուծէն ազատագրման տօնն է. Յարութեան փառահեղ իրականութիւնը տօնն է հայ ժողովուրդին Քրիստոսի հանդէպ ցուցաբերած ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ եւ Իր աստուածութեան:

Առանց Փրկչին սիրոյ եւ հաւատքի յեղափոխութեան, չէինք ունենար ո՛չ ազգային զարթօնք, ո՛չ փառապանծ Ոսկեդարը, ո՛չ Հայ Եկեղեցին, ո՛չ հայ գիրը, ո՛չ հոգեւոր մշակոյթ եւ ոչ ալ ազատ ու անկախ Հայաստանը:

Մեր ազգային ու հոգեւոր բոլոր սրբութիւնները անփոխարինելի պարգեւներն են Յարուցեալ Փրկչին հռչակած Նոր Հաւատքին եւ իր աւետարանական առաքինութիւններուն:

*
* *

Հիասթափութիւնը, որ կը հետեւի շիջած գեղատեսիլ երազներու եւ հերքուած յոյսերու, մին է մարդկային կեանքին ցուցաբերած ամենադաժան արտայայտութիւններէն:

Ի՞նչ իմաստ ու նշանակութիւն ունի վաղանցուկ կեանք մը, երբ իր խորագոյն եւ մեծագոյն ակնկալութիւնները կը հերքուին ու կը կորսուին պարապութեան մէջ:

Այս տարտամ ու ապերախտ րոպէներուն է, որ մարդուն յուսակտուր հոգին կ՚ամպոտի մթին հորիզոններու մէջ եւ կեանքէն ոչինչ կը մնայ իրեն, բայց եթէ կորսուած երջանկութեան մը ողբուկոծը:

Նման յուսահատ կացութեան առջեւ գտնուեցան աշակերտները, երբ խաչին վրա բեւեռեալ տեսան իրենց Տէրը:

Ալ չէին կրնար զօրեպնդուիլ ոչ մէկ յոյսով, ամէն ինչ խաւարած ու ամայացած էր իրենց շուրջը եւ իրենց մէջ:

Երկիրը պատող թանձր մթութենէ վեր ու աւելի, խաւարակուռ գիշեր մը կը տիրէր իրենց հոգիներուն մէջ:

Ալ անոնց մտքին ու շրթունքին վրայ կը յամենար հիասթափութիւնը օրուան ու գիշերուան բոլոր ժամերուն:

Չէին կրնար իրենց յիշողութենէն եւ զգայարանքներէն վանել չարչարալից ու նուաստացուցիչ տեսարանները:

Ան, որ վստահեցուցած էր, թէ աշխարհի լոյսն էր եւ կեանքը, հիմա՝ կը գտնուէր շիրիմին մէջ անշնչացած:

Ան, որ յայտարարած էր, թէ ճանապարհն էր եւ յարութիւնը, հիմա Խաչին վրայ կը ցուցադրէր իր ողորմելի պարտութիւնը:

Եւ գերեզմանաքարը, որ փակեր էր դամբանին դուռը, փակեր էր նոյնպէս խոստացուած արքայութեան դարպասները:

Հիմա՝ ինչ ժառանգ. որ մնաց իրենց Փրկչին մարտիրոսութենէն, անամոքելի վախն էր, որ համագիշերային եւ համացերեկային անձկութիւններով կը չարչարէր իրենց կեանքը:

Այս հիւծիչ մտածումները փարագրած էին իրենց հոգիէն յոյս եւ հաւատքը եւ կեդրոնական տեղ գրաւած էին թերահաւատութիւնը եւ յուսահատութիւնը:

Ալ՝ ոչ մէկ համոզում չէր խրախուսեր զիրենք վերսկսելու նոր կեանք մը: Ներքին իրենց բոլոր կարողութիւնները դատապարտուեր էին անգործութեան:

* * *

Նոր հաւատքին ջահակիրները Գողգոթայի անմեղ Դատապարտեալին մէջ տեսան հզօրագոյն մը, որ Իրմէ առաջ յայտնուած չէր ոչ մէկ մարգարէի ու կրօնապետի կեանքին մէջ:

Խաչուած սէրը ազատագրեց մեղաւորը մեղքին բռնակալին կապանքներէն եւ շիտակ ու յուսաւոր առաջնորդութիւն տուաւ իր ուղեւորութեան այս անցաւոր աշխարհին մէջ:

Աստուածային սիրոյ զօրութեան առջեւ ջնջուեցաւ մարդուն մտածողութենէն մահուան սարսափը:

Փրկչին մահուան դէմ տարած յաղթութիւնը ամենամեծ ու անհերքելի իրողութիւնն է, որ սթափեցուց մեղաւոր մարդկութիւնը իր դարաւոր թմբիրէն եւ բացաւ անոր կեանքին ու հոգիին առջեւ իր յաւիտենական հայրենիքին դարպասները:

Քրիստոս՝ եղաւ առաջին յարուցեալը մեռելներէն: Տուաւ մեծ ազդանշանը բոլոր ժամանակներու Իր հաւատարիմ հետեւորդներուն, որ անմոլար հետեւին Իր լուսաճաճանչ հետքերուն, որպէսզի երանաւէտ օր մը իրենց սրբասփայլ ճակատներուն ընդունին յարութեան դափնեպսակը:

Յարուցեալին հետ մեր հոգեկան ընդելուզումով, ոչ փորձութեան հրապոյրը պիտի գայթեցնէ մեզ Աւետարանով ջահաւորուած ճանապարհէն եւ ոչ ալ աշխարհային վախերը պիտի անձկոտեն մեր կեանքը: Պիտի ապրինք երկրի վրայ յարութեան կեանքը, յարութենէն առաջ:

Հոգիներու անգուգական Առաջնորդը՝ թափուր գերեզման մը թողնելով Իր ետեւ, մեր ամենօրեայ կեանքը վերածեց փոխակերպութեան: Եւ տուաւ մեր հողաբոյր կեանքին յաւերժութեան տեւողութիւն, բարձրացնելով մեզ երկրի քաղաքացիութենէն՝ երկնաքաղաքացիութեան:

Ոչ մէկ ժամանակ մահը Քրիստոսի համար վախճան մը չեղաւ: Այլ՝ մահուան մէջ անգամ շարունակուեցաւ Իր կեանքը:

Ան՝ այլեւս փառաց թագաւորն է, ողջ ու վախճանած արդարներուն եւ ամէն ժամանակի Իր հաւատարիմ հետեւորդներուն:

Իր պսակն է Եկեղեցին. Իր մարմնին անդամներն են քրիստոնեայ աշխարհին միլիոնաւոր հաւատացեալները:

Խաչը բերաւ յաղթութիւնը. խաչին ծնաւ անմահութիւնը եւ խաչը դարձաւ մեղքին դէմ մղուած ու շահուած յաղթութիւններուն խորհրդանիշը:

Շատեր կ'ուզեն Յարութիւնը. բայց կ'ուզեն. առանց խաչի զոհողութեան: Փրկութիւնը կ'ուզեն. բայց Փրկիչը չեն ուզեր:

Խաչին վրայ ամենաբարձր սէրը հանդիպեցաւ սեւ ուժերու գազանային կիրքերուն եւ յաղթեց:

Ամէն հայ հաւատացեալ. որ Յարուցեալին հաւատքով կ'ապրի. չի մոլորիր ճշմարտութենէ ու չի սպառնարածեր իր յոյսերուն հեռանկարը:

Աշակերտները ոչ միայն չվախցան խաչեալ եւ թաղեալ Քրիստոսը քարոզելէ, այլ Յարուցեալին Անեղասկանի սիրոյն ողջակիզեցին իրենց կեանքն անգամ:

Քրիստոս իր յարուցած սիրոյ յեղափոխութեամբ. յաղթական է, ոչ թէ այս վաղանցուկ կեանքին պզտիկ պատմութեան մէջ հերոսացած մահկանացուներու նման, այլ՝ յաղթական է յաւիտեաններու մէջ իր յաւերժական փառքով:

*

* *

Պետրոս եւ Յուդա

Կ'ուզեմ Տէրը ուրացող այս երկու մեղապարտներուն տարբերութիւնը բացայայտել:

Տարբեր շարժառիթներ կը մղէին մէկը եւ բոլորովին հակասական պատճառներ միւսը:

Տարբեր հոգեկան աշխարհ մը կը բարացուցէր մէկը եւ տարբեր խաւարակուռ աշխարհ մը միւսը:

Պետրոս անկումէն ետք կը գտնէ զղջումի ու փրկութեան ճանապարհը եւ Յուդան կը գահավիժի մեղքին անդնդախոր վիհին մէջ:

Երկուքն ալ կ'ընդունին ու կը խոստովանին իրենց մեղապարտութիւնը: Մէկը կը զղջայ ու կը փրկուի եւ միւսը ինքզինք կը կախէ ու կը կորսուի:

Առիթները, որ մօտեցուեցան երկուքին, նոյնն էին:

Յիսուսի վստահութիւնը Յուդային հանդէպ բացառիկ էր: Կրնամ ըսել միւս աշակերտներէն աւելի, որովհետեւ անոր յանձնած ու վստահած էր գանձապահութեան պաշտօնը:

Տէրը չբացառեց Յուդային ներկայութիւնը վերջին ընթրիքին, գիտնալով հանդերձ, որ զաղտնօրէն կը սադրմնաւորուէր Իր դէմ դաւաճանութիւնը:

Յիսուս լուաց անոր ոտքերը, որ՝ տակաւ ետք, պիտի վազէր ու մատնէր Վարդապետը հրեայ իշխանութիւններուն:

Յիսուս կը սիրէր Պետրոսը, համանոյն չափով կը սիրէր նաեւ Յուդան: Որքան կ'ուզէր առաջինին փրկութիւնը, նոյնպէս կ'ուզէր երկրորդին փրկութիւնը:

Պետրոս մեղանչեց երիցս ուրացումով Ուսուցիչը: Բայց Քրիստոս չթողուց զայն անկեալ վիճակի մէջ:

«Վերջին ընթրիքին՝ Յիսուս ջանաց կանխել Յուդայի դաւաճանութիւնը. Իր ներողամտութեան ակնարկը տարածելով երկուքին վրայ:

Պետրոս զգաստացաւ, զղջաց ու լացաւ, բայց Յուդան մնաց անխղճահար ու կարծրասիրտ:

Ապերախտութիւնը յաջողապէս կատարեց իր անիծեալ դերը եւ Յուդայի թունալից համբոյրով Յիսուս յանձնուեց իր ոխերիմ թշնամիներուն ձեռքը:

Այսօր տարուան մեծագոյն օրն է եւ մեծագոյն տօնը Քրիստոսի Աստուածութեան:

Պարտաւոր ենք ազգովին մեր խորազգած երախտագիտութիւնը վերընծայել ԱՆՈՐ, որ փրկեց հայուն հոգին ու մարմինը ճակատագրական փորձութիւններէ, մշտնջենաւորելով Հայ Ազգին ու Հայրենիքին գոյատեւումը Երկրի վրայ ու երկնքի մէջ:

ՎԻԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՔԱԶԵԱՆ

# ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԷՋ. ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ

մինչեւ այսօր Հայ Եկեղեցին չէ յաջողած կանոնը Եկեղեցւոյ հիմքն է: Դժբախտաբար կանոնագիրք մը ստեղծել, բացի Յովհաննէս Օձնեցիէն: Լուրջ գիտական աշխատանք մը չունինք այս նիւթին շուրջ. թէեւ IV դարէն սկսեալ այս ուղղութեամբ զանազան ժամանակներուն տարբեր մատենագիրներու կողմէ որոշ փորձեր կատարուած են եւ կանոններ ստեղծուած Եկեղեցւոյ վերաբերեալ: Սակայն այդ կանոնները այդ շրջանին եւ մասնաւորաբար այդ ժամանակին համար էին: Եւ կամ, երբ գրիչ մը կը փորձէր ընդօրինակել այդ կանոնները, ընդհանրապէս կը շարժէր ըստ իր կամքին՝ երբեմն աւելցնելով, երբեմն ալ դուրս ձգելով այն գլուխները, որոնք հաճելի չէին թուիր իրեն: Իսկ ոմանք աւելի հեռու կ'երթային. օրինակ՝ Մխիթար Գոշ (1140-1213), որ փորձած է օգտուիլ դրացի քրիստոնեայ ժողովուրդներուն կանոններէն, ինչպէս իր Դատաստանագիրքին համար, որ բաղկացած է երկու մասերէ՝ «Նախադրութիւն և Կանոնք», որուն առաջին մասը յատկացուած է Եկեղեցւոյ կանոններուն[1]: Մխիթար Գոշը ամէն տեսակի կանոններ ի մի բերած է:

Հայ Եկեղեցւոյ կանոնադրութիւնը կ'ընդունի վեց արտաքին տեղական ժողովները, որոնք ընդհանրապէս հետեւած են առաքելոց կանոններուն, ինչպէս նաեւ երեք Տիեզերական ժողովներուն մէջ սահմանուած կանոններուն: Հայ Եկեղեցին 1178 թուին Հռոմկլայի մէջ գումարուած վճիռին հիման վրայ Հայ Եկեղեցւոյ իրաւունքի աղբիւր կը համարէ IV դարի հետեւեալ վեց ժողովները. Անկիւրեայ, Նիոկեսարեայ, Անտիոքայ, Լաւոդիկեայ, Սարդիկեայ, Գանգրոյ[2]:

Նշենք, որ բնագրերու քննութիւնը մեր հետազօտութեան շրջանակներէն դուրս է, տրուած ըլլալով, որ թէ՛ աստուածաբաններ և թէ՛ կանոնագէտները աշխատութիւններ գրած են կանոններու եւ կանոնախումբերու մասին: Միեւնոյն ժամանակ պէտք է ըսել, որ այդ բնագրերու մէջ կը պակսին թուականներ եւ տուեալներ: Յաճախ այդ տուեալները չեն համապատասխաներ իրարու: Իսկ մենք, որպէս լաւագոյն աղբիւր, պիտի գործածենք Վազգէն Յակոբեանի «Կանոնագիրք Հայոց»-ը[3]: Այս հատորներու վրայ կատարուած երկար տարիներու աշխատանքը կը ձգէ այն տպաւորութիւնը, որ նախ ան միակն է իր տեսակին մէջ, ուր ամփոփուած են ոչ միայն առաքելական կանոնները, այլեւ Եկեղեցւոյ հայրերու արտաքին տեղական ժողովներու, ազգային-եկեղեցական ժողովներու եւ հայ մատենագիրներու կանոններն ու կանոնախումբերը: Եզակի այս գործը կատարուած է քառասունինը

---

[1] Մխիթար Գոշ. Գիրք Դատաստանի: Աշխատ. Խոսրով Թորոսեանի, Երեւան, 1975:

[2] Լ. Խաչիկեան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմութիւնից (IV դար), Երեւան, 1951, էջ 95:

[3] Վազգէն Յակոբեան, Կանոնագիրք Հայոց, Երեւան, հ. Ա, 1964, հ. Բ, 1971:

ձեռագիրներու համեմատութեան հիման վրայ, եւ կարելի է ըսել, թէ կատարեալ աշխատութիւն մըն է, հետեւաբար աւելորդ կը համարենք քննական հետազօտութիւն կատարելու կանոններուն ու կանոնախումբերուն վերաբերեալ: Սակայն մենք մեր ուսումնասիրութիւնը պիտի հիմնաւորենք՝ գլխաւորաբար հետեւելով Վազգէն Յակոբեանի աշխատանքին, միաժամանակ մեր ուշադրութեան տակ պահելով Ն. Վ. Մելիք-Թանգեանի աշխատութիւնը[4]:

Անդրադառնալով Մելիք-Թանգեանի աշխատութեան՝ պէտք է ըսել, որ ան իր ուսումնասիրութիւնը կատարած ատեն իր ձեռքին տակ չէ ունեցած պէտք եղած ձեռագիրները եւ ոչ ալ գրութիւնները: Իսկ 20-րդ դարու երկրորդ կէսին շատ աւելի տարբեր էին պայմանները՝ ի նպաստ հետազօտողի: Վազգէն Յակոբեան առիթ ունեցած է ի մի բերելու ոչ միայն Երեւանի ձեռագիրները ուսումնասիրութեան համար, այլեւ Պարսկաստանի, Պոլսոյ եւ Երուսաղէմի ձեռագիրները: Յակոբեան աւելի քան կէս դար յետոյ սկսած է իր գործին՝ աւելի դրական պայմաններու տակ:

Վեց տեղական ժողովներուն մէջ ընդհանրապէս արծարծուած են եպիսկոպոսի ու քորեպիսկոպոսի վերաբերեալ հարցեր: Հոս պիտի խօսինք «եպիսկոպոս» բառի իմաստին, եպիսկոպոսի իրաւունքներուն եւ պարտականութիւններուն մասին, երբեմն ալ կաթողիկոսի՝ հիմնուելով ազգային-եկեղեցական ժողովներուն վրայ:

ա- Եպիսկոպոսին կամքը.

բ- Եպիսկոպոսը որպէս ինչքերու պատասխանատու.

գ- Եպիսկոպոսը որպէս յորդորող.

դ- Եպիսկոպոսը, երբ կը սխալի.

ե- Եպիսկոպոսը, երբ կը խանգարէ կարգը.

զ- Եպիսկոպոսը որպէս դատաւոր:

Երբ հաւատացեալ մը սխալ ճամբու վրայ կը գտնուի եւ քրիստոնէական օրէնքներուն համաձայն չի շարժիր, եպիսկոպոսը, ըստ իր կամքին, կը սահմանէ ոչ միայն անոր պատիժը, այլեւ անկէ ետք անոր վերադարձը Եկեղեցի: Այս բոլորը կ՚ըլլան եպիսկոպոսին յորդորով եւ կամքով, սխալողին զղջումէն ու ապաշխարութենէն ետք[5]:

Եպիսկոպոսը պատասխանատու է նաեւ Եկեղեցւոյ ինչքերուն. ձեւով մը Եկեղեցին ու Եկեղեցիին պատկանող բոլոր իրերը կը գտնուին անոր պատասխանատուութեան տակ: Սակայն ան իր բացակայութեան այդ իրաւունքը կրնայ փոխանցել երէցներուն: Մեր կանոնադրութեան եւ Տիեզերական ժողովներու կանոններու մէջ յաճախ կը հանդիպինք այն կանոնին, երբ կը մերժուի եպիսկոպոսներու տեղափոխութիւնը, առանց օրէնքի մէկէն միւսին վիճակը գրաւելը: Անկիւրիայի ժողովի կանոններուն համաձայն, եպիսկոպոս մը, որ ձեռնադրուած է յատուկ վիճակի մը վրայ եւ մերժուած է տեղւոյն ժողովուրդին կողմէ, իրաւունք չունի ոչ մէկ ձեւով գրաւելու ուրիշ վիճակ մը, այլ կրնայ երիցութեան կարգ իջնելով՝ մնալ որպէս երէց: Այս ցոյց կու տայ, թէ այդ եպիսկոպոսը ժողովուրդին աչքէն ինկած է, եւ իր պաշտօնէն երիցութեան իջնելը կը ցուցնէ իր պարտականութենէն ալ իջնելը[6]: Ոչ

[4] Ն. Վ. Մելիք-Թանգեան, Հայոց եկեղեցական իրաւունքը, հ. Ա, Շուշի, 1903 եւ հ. Բ, Շուշի, 1905:

[5] Կանոնագիրք հայոց, Անկիւրիայի ժողովի կանոնները, հ. Ա, 1964, գլուխ Է եւ Ը, էջ 313-315:

[6] Նոյն, Անկիւրիայի ժողով, կանոն Ժ. Թ., հ. Ա, էջ 166:

մէկ եպիսկոպոս իրաւունք ունի իր վիճակը ձգելու եւ ուրիշ տեղ հաստատուելու, բացի այն դէպքէն, երբ յիշեալ վիճակի եպիսկոպոսը կը հրաւիրէ զինք յատուկ պարտականութեամբ եւ կարճ ժամանակով[7]: Եպիսկոպոսներ, որոնք օրէնքի դէմ կ'ելլեն, ունին իրենց յատուկ պատիժները, մինչեւ իսկ կրնան կարգալոյծ ըլլալ: Անտիոքի ժողովի երրորդ կանոնը կ'ըսէ, թէ այն եպիսկոպոսը, որ ուրիշ վիճակէ եկող կարգալոյծ հոգեւորականը կ'ընդունի իր սահմանէն ներս, որպէս եկեղեցւոյ կարգ խանգարող կ'ենթարկուի ժողովի կշտամբանքին: Եպիսկոպոս մը չի կրնար բարձր կարգ տալ մէկու մը, որ եկեղեցական բոլոր աստիճանները չէ լրացուցած` ըլլայ ան հարուստ թէ աղքատ, գիտուն թէ տգէտ: Ան պարտաւոր է յարգել Եկեղեցւոյ օրէնքներն ու կանոնները, ինչպէս նաեւ իրաւունք չունի ուրիշ վիճակէ եկող անձի մը եկեղեցական որեւէ աստիճան տալու[8]: Այս նոյն կանոնին կը հանդիպինք նաեւ Նիկիոյ ժողովի կանոնախումբին մէջ: Այսպիսի պարագաներու այն հոգեւորականը, որ առանց օրինաւոր պատճառի իր պաշտօնը կատարեալ չի վարեր, կը զրկուի իր պաշտօնավարութենէն[9]: Այստեղ կը հանդիպինք աւելի հետաքրքրական կէտի մըն ալ, որ եպիսկոպոսին իրաւունքներէն դուրս կը մնայ[10], այն է, թէ երբ եպիսկոպոսը փոքր վիճակէ մը աւելի մեծ վիճակի կ'անցնի, նոյնիսկ հաւասար աղօթակից պէտք չէ ըլլայ շահասիրական եւ այլ միտումներ ունեցող աշխարհականներու հետ:

Այն պարագաներուն, երբ եպիսկոպոսական ժողովները, կաթողիկոսի նախագահութեամբ, կը դատեն եւ յանցաւոր կը գտնեն դատապարտուող եպիսկոպոսը, իրաւունք ունին նոյնիսկ զայն կարգալոյծ ընելու[11]:

Պատիժը ստանալէ ետք միայն խնդրոյ առարկայ եպիսկոպոսը իրաւունք ունի բողոք ներկայացնելու իր մեծաւորին` կաթողիկոսին: Այս նոյն օրէնքին կը հանդիպինք նաեւ Անտիոքի կանոններուն մէջ[12]:

Սարդիկէի կանոններուն մէջ կը հանդիպինք ուրիշ հետաքրքրական երկու կանոններու` 7-րդ եւ 9-րդ, ուր եպիսկոպոսը իրաւունք չունի խանգարելու թագաւորին, բացի աղքատներու, այրիներու, որբերու համար բարեխօսելու կամ օգնութիւն խնդրելու պարագայէն, այդ ալ այն պայմանով, որ, նախքան թագաւորի մօտ իր երթալը, պէտք է սարկաւագի մը միջոցաւ տուեալ խնդրին վերաբերող թուղթերը նախապէս ղրկէ[13]: Եպիսկոպոսը իրաւունք կ'ունենայ այցելելու թագաւորին` գլխաւոր եպիսկոպոսի համաձայնութեամբ եւ վկայաթուղթով[14]:

Հետաքրքրական է Լաւոդիկէի ժողովին այն կանոնը[15], որուն համաձայն շրջակայ եպիսկոպոսներուն ժողովը մետրոպոլիտին հետ կրնայ եպիսկոպոս մը կարգել: Այս չի համապատասխաներ առաքելական Եկեղեցւոյ կանոններուն, ինչպէս նաեւ Մաշտոցի ձեռ-

---

[7] Նոյն, Սարդիկէի ժողովի կանոններ, հ. Ա, կանոն 3, էջ 344-347:

[8] Նոյն, Սարդիկէի ժողովի կանոններ, 11, 13, 15:

[9] Ն. Վ. Մելիք-Թանգեան, Հայոց եկեղեցական իրաւունք, հ. Ա, Շուշի, 1903, էջ 250:

[10] Կանոնագիրք հայոց, Սարդիկէի ժողով, կանոն 1:

[11] Նոյն, Անտիոքի ժողով, կանոն 5:

[12] Նոյն, Անտիոքի ժողովի կանոններ, կանոն 4:

[13] Նոյն, Սարդիկէի ժողովի կանոններ, կանոն 7, 9:

[14] Նոյն, Անտիոքի կանոններ 4, 7: Սարդիկէի ժողովի կանոններ, կանոն 7, 8, 9:

[15] Նոյն, Լաոդիկէի ժողովի կանոններ, կանոն 12, էջ 231:

նադրութեան օրէնքներուն, ուր կ'ըսուի, թէ եպիսկոպոսը կ'ընտրուի ժողովուրդին կողմէ: Հետեւաբար, Լաւոդիկէի ժողովի 12-րդ կանոնը կը նշանակէ, թէ ժողովուրդը իրաւունք չունի եպիսկոպոս ընտրելու:

Քահանան եւ սարկաւագը կարգալոյծ կրնան ըլլալ իրենց եպիսկոպոսին կողմէ, երբ քանի մը անգամ խրատուելէ յետոյ տակաւին շարունակեն անհնազանդ ըլլալ եւ սխալներ գործել: Ուստի եպիսկոպոսը նման պարագաներուն իրաւասութիւնը ունի պատժելու եւ կարգալոյծ ընելու[16]: Իւրաքանչիւր եպիսկոպոս կրնայ իր եկեղեցիէն հեռացուցածը ինք միայն ընդունիլ[17]:

Եպիսկոպոսի իրաւասութեան սահմաններուն մէջ է նաեւ չմկրտուածներուն եւ թերահաւատներուն համար կանոններ ստեղծել[18]: Եպիսկոպոսը իրաւունք չունի ծուլանալու[19]: Եպիսկոպոսը իրաւունք չունի տան մէջ Պատարագ մատուցանելու[20]: Հոգեւորականները, առանց իրենց պատասխանատու եպիսկոպոսին արտօնութեան, իրաւունք չունին ճամբորդելու[21]:

Նզովքներու վերաբերեալ ունինք երկու կէտեր Գանգրայի (340-370) ժողովի կանոններուն մէջ: Կը նզովուին անոնք, որ եպիսկոպոսին նուէրները կը ստանան եւ կը բաշխեն ուրիշին, ինչպէս նաեւ անոնք, որ տուրքը կը ստանան, սակայն եպիսկոպոսին չեն յանձներ:

Եպիսկոպոսի կողքին որոշ իրաւունքներ եւ պարտականութիւններ ունի նաեւ քորեպիսկոպոսը, ատոնցմէ մէկն է[22] խաղաղական թուղթեր տալը: Ան նաեւ իրաւունք ունի փոքրիկ գիւղերու ու քաղաքներու մէջ երդմնեցուցիչներ, ընթերցողներ եւ կիսասարկաւագներ կարգելու[23], սակայն քահանայ եւ սարկաւագ ձեռնադրելու համար պարտաւոր է քաղաքի եպիսկոպոսէն հրաման առնել, քանի որ ինք նշանակուած է քաղաքի եպիսկոպոսին կողմէ, ուրեմն կ'ենթարկուի անոր:

Ինչպէս ըսինք, Հայ Եկեղեցին կ'ընդունի տասնվեց[24] ազգային-եկեղեցական ժողով-

---

[16] Նոյն, Անտիոքի ժողով, կանոն 5:

[17] Նոյն, Անտիոքի ժողով, կանոն 6:

[18] Նոյն, Լաւոդիկէի ժողով, կանոն 19:

[19] Նոյն, Լաւոդիկէի ժողով, կանոն 40:

[20] Նոյն, Լաւոդիկէի ժողով, կանոն 53:

[21] Նոյն, Լաւոդիկէի ժողով, կանոն 42:

[22] Նոյն, Անտիոքի ժողով, կանոն 18:

[23] Նոյն, Անտիոքի ժողով, կանոն 10:

[24] Ա. Աշտիշատի ժողովը, 365 թուին՝ Մեծն Ներսէսի հրաւէրով եւ նախագահութեամբ:
Բ. Շահապիվանի ժողովը, 447 թուին՝ Յովսէփ Կաթողիկոսի հրաւէրով եւ նախագահութեամբ:
Գ. Դուինի Ա. ժողովը, 507 թուին՝ Բաբգէն Կաթողիկոսի հրաւէրով եւ նախագահութեամբ:
Դ. Դուինի Բ. ժողովը, 555 թուին՝ Ներսէս Բ. Կաթողիկոսի հրաւէրով եւ նախագահութեամբ:
Ե. Դուինի Գ. ժողովը, 610 թուին՝ Աբրահամ Կաթողիկոսի հրաւէրով եւ նախագահութեամբ:
Զ. Դուինի Դ. ժողովը, 648 թուին՝ Ներսէս Կաթողիկոսի հրաւէրով եւ նախագահութեամբ:
Է. Դուինի Ե. ժողովը, 719 թուին՝ Յովհան Օձնեցիի հրաւէրով եւ նախագահութեամբ:
Ը. Պարտաւի ժողովը, 771 թուին՝ Սիոն Կաթողիկոսի հրամանով:
Թ. Երնջակի ժողովը, 842 թուին՝ Սմբատ սպարապետի եւ Գրիգոր Սիւնեաց իշխանի հրաւէրով:
Ժ. Անիի ժողովը, 970 թուին՝ Աշոտ թագաւորի հրաւէրով:

ունի ժողովի հրաւիրելու:
ներ: Ամենայն Հայոց կաթողիկոսը միայն իրաւունք ունի ժողովի հրաւիրելու:
Հոգեւորականները եւ աշխարհականները, թէեւ բացառաբար, երկու պարագային մի-
այն առանց կաթողիկոսի նախագահութեան տեղի կրնան ունենալ ժողովները. առաջին՝
երբ կաթողիկոսը վախճանած է. եւ երկրորդ՝ երբ կաթողիկոսին դէմ ամբաստանութիւն-
ներ կան: Առանց ազգային-եկեղեցական ժողովի ոչ ոք իրաւունք ունի որոշումներ տալու
եւ առնելու. նոյնիսկ կաթողիկոսը կամ նախարարները. անոնց որոշումները վաւերական
չեն ըլլար: Բոլոր որոշումները կը վաւերացուին միայն ազգային-եկեղեցական ժողովով:
Պատահած է, երբ կաթողիկոսն ու թագաւորը կարգ մը որոշումներ առած են, սակայն այդ
որոշումները մերժուած են ժողովուրդին եւ հոգեւորականներուն ընդդիմութեամբ:
Ինչպէս ցոյց տուած ենք մեր աշխատութեան առաջին գլխուն մէջ, Գրիգոր Լուսաւորի-
չէն սկսեալ, ընտրութեան կը մասնակցէին ոչ միայն հոգեւորականները, այլ նաեւ իշխան-
ներն ու աշխարհականները: Հետագայ դարերում այդ աւելի ցայտուն եւ որոշակի կ'երեւայ
մեր Եկեղեցւոյ պատմութեան մէջ: Տեղին է յիշել նաեւ, թէ միջնադարում իշխանները այ-
սօրուան աստուածաբաններուն եւ հոգեւորականներուն չափ եւ գուցէ աւելի տեղեակ եւ
գիտակից էին Հայ Եկեղեցւոյ կարգ ու կանոններուն: Դժբախտաբար, կացութիւնը այսօր
փոխուած է: Եօթանասուն տարուան համայնավարական ռեժիմէն ետք, ամէն ինչ փոխուած
է ոչ միայն աշխարհականներու, այլ նաեւ հոգեւորականներու մօտ:
Ազգային-եկեղեցական ժողովներուն մէջ ոչ միայն Եկեղեցւոյ վերաբերեալ հարցեր
կ'արծարծուին, այլեւ ուրիշ օրէնսդրական եւ աստուածաբանական խնդիրներ: Ազգային-
եկեղեցական ժողովներէն առաջինն է Աշտիշատի ժողովը, որ գումարուեցաւ Մեծն Ներ-
սէսի (353-373) հրաւէրով եւ նախագահութեամբ 354 թուին: Այս ժողովին ներկայ եղած են
եպիսկոպոսներ եւ աշխարհականներ, եւ անոնց ներկայութիւնը այստեղ հիմնական
իմաստ ունի: Այն իշխաններն ու աշխարհականները, որոնք կը մասնակցէին վերոյիշեալ
ժողովին, կը ներկայացնէին քաղաքային իշխանութիւնն ու ժողովուրդը: Անոնք գիտակից
ու իմաստուն անձնաւորութիւններ էին, որոնք, բնականաբար, ունէին դատելու, ճիշդ որո-
շումներ կայացնելու իմաստութիւն, ի հարկին նաեւ պատժելու իրաւասութիւն: Անշուշտ
Եկեղեցին չ'ընդունիր, որ հաւատքէ պարպուած մարդիկ որոշում առնեն ազգային-եկեղե-
ցական ժողովներուն մէջ:
Կայ նաեւ երկրորդ կէտ մը, որուն մենք համաձայն չենք. այդ այն է, թէ աշխարհական-
ներու կողմէ միայն իշխաններ ներկայ կ'ըլլային եւ ոչ հասարակ մարդիկ: Ճիշդ է, որ թա-
գաւորը քրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակելէն (301 թ.) ետք, գործի դրած էր բո-
լոր այն կանոնները, որոնք ստեղծուած էին առաքեալներուն եւ սուրբ հայրերուն կողմէ:
Սակայն ոչ մէկ փաստ ունինք Հայ Եկեղեցւոյ այս հեղինակաւոր դէմքին՝ Ներսէս Պատրի-

ԺԱ. Հայքի ժողովը, 1002 թուին՝ Սարգիս Կաթողիկոսի հրաւէրով:
ԺԲ. Անիի Բ. ժողովը, 1036 թուին՝ նախագահութեամբ եւ հրաւէրով Պետրոսի Կաթողիկոսի:
ԺԳ. Հռոմկլայի ժողովը, 1179 թուին՝ հրաւէրով Գրիգոր Տղայ Կաթողիկոսի:
ԺԴ. Սսի ժողովը, 1243 թուին՝ Կոստանդին Ա Բարձրբերդցի Կաթողիկոսի հրաւէրով:
ԺԵ. Սսի Բ. ժողովը, 1361 թուին՝ նախագահութեամբ Մեսրոպ Ա Արտազեցի Կաթողիկոսի:
ԺԶ. Երուսաղէմի ժողովը, 1651 թուին՝ Փիլիպպոս Ա Աղբակեցի Կաթողիկոսի նախագահութեամբ:

արքի[25] այն համոզումը հաստատող, թէ միայն իշխաններն էին, որ ներկայ կը գտնուէին այս ժողովներուն: Գրիգոր Լուսաւորիչէն սկսեալ, ոչ մէկ ձեւով կրնանք փաստել, թէ այդ ժողովներուն ժողովուրդի պարզ ներկայացուցիչները չկային: Լուսաւորիչէն սկսեալ, պատմութեան մէջ միշտ կը տեսնենք ժողովուրդի ներկայացուցիչներ կաթողիկոսական ընտրութիւններուն: Եթէ Լուսաւորչի տոհմին մէջ կը տեսնենք որոշ շարունակութիւն մը, ատիկա ի յարգանս Լուսաւորիչի տոհմին է, եւ ասոր նման մի քանի օրինակներ կան մեր պատմութեան մէջ:

Մեր ազգային-եկեղեցական ժողովներէն ոմանց մէջ կը քննարկուէին ժողովականները յուզող ժամանակակից հարցեր եւ որոշումներ կ'առնուէին այդ շրջանին Եկեղեցիէն ներս աստուածաբանական, կանոնական եւ կազմակերպչական կարեւոր խնդիրներու շուրջ:

Բնականաբար այս ժողովներուն մէջ շատ մը խնդիրներու կը մօտենային քրիստոնէական ոգիով, սակայն կարդալով անոնց հաստատած կանոնները, տրուած վճիռները եւ խիստ պատիժները՝ կը նկատենք, որ երբեմն կը պակսի այդ ոգին՝ այդպիսով կասկածի տակ դնելով ժողովականներուն սկզբունքները: Այդպիսի ժողովներէն մին է Շահապիվանի ժողովը[26]: Այս ժողովը առաջինն է, որուն որոշումները լրիւ ընդգրկուած են մեր ձեռագիրներուն մէջ: Ժողովին ներկայ եղած են քառասուն եպիսկոպոսներ, երէցներ, սարկաւագներ, իշխաններ եւ գաւառացիներ: Ժողովին մէջ սահմանուած են քսան կանոններ: Մեզի յայտնի է արդէն, որ նախորդ ժողովներու կանոնները խանգարողները նզովքի, բանադրանքի եւ ապաշխարանքի կ'ենթարկուէին: Այս ժողովին մէջ կը տեսնենք նաեւ տուգանք եւ ֆիզիքական պատիժներ, որոնք մեզ կը յանգեցնեն այն եզրակացութեան, որ այս ժողովը ունէր նաեւ քաղաքական ոյժ: Այսպիսի պարագաներուն իշխանները կանոնները գործադրելու ոյժն ու իշխանութիւնը ունէին: Նոյն ժողովին մէջ կը հանդիպինք բարոյական, նաեւ բարեգործական կանոններու: Սակայն ուսումնասիրելով անոր մէջ սահմանուած օրէնքները՝ կը տեսնենք, թէ անոնք չափազանց խիստ են:

Իր տեսակին մէջ եզակի կարելի է համարել այս ժողովը: Շահապիվանէն առաջ տեղի ունեցած բոլոր ժողովներուն հայրապետական կանոնները, հակառակ անոր, որ ընդունուած էին մեր Եկեղեցւոյ կողմէ, սակայն վաւերացուած չէին ազգային-եկեղեցական ժողովներու կողմէ: Այստեղ հաստատուեցան Տիեզերական երեք ժողովները, նաեւ Գրիգոր Լուսաւորիչի, Սահակ Պարթեւի, Մեծն Ներսէսի եւ առաքելական կանոնները:

Շահապիվանի ժողովին մէջ երբ կը խօսուի եպիսկոպոսներու մասին, կը նկատենք, որ անոնք կը դասուին կուսակրօններու կարգին: Մեր Եկեղեցւոյ մէջ երբեք չէ պատահած, որ հոգեւորական մը ձեռնադրուելէն ետք ամուսնանայ, իսկ եթէ ամուսնացած է, եպիսկոպոս ձեռնադրուելէն ետք կը բաժնուի իր կնոջմէն. եպիսկոպոսը կը նուիրուէր իր պատասխանատուութեան, իսկ կինը՝ կը քաշուէր մենաստան:

Այս ժողովին մէջ ալ կը տեսնենք եպիսկոպոսի իրաւունքները եւ պարտականութիւնները: Հետաքրքրականն այն է, որ եպիսկոպոսներուն եւ հոգեւորականներուն գործած սխալներուն համար աւելի մեծ էին պատիժները, քան թէ սովորական աշխարհականներուն

[25] Շնորհք արքեպս. Գալուստեան, Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1993, էջ 21-22:

[26] Վերոյիշեալ ժողովը գումարուած է 447 թուին հրաւէրով ու նախագահութեամբ Յովսէփ Կաթողիկոսի:

կաս ստորադաս հոգեւորականներուն: Պատիժին հետ կը պահանջուէր նաեւ տուգանք.
օրինակ՝ երբ եպիսկոպոս մը պղծութեան, պոռնկութեան եւ ուրիշ վատ գործերու անձնա-
տուր ըլլալով սխալներ գործած ըլլար, պարտաւոր էր տուգանք վճարել: Ժողովին մէջ
ուրիշ կէտ մըն ալ նկատելի է: Այս կանոնները խրատական բնոյթ ունենալէ սաւելի. խիստ
օրէնքներ են, որոնց ուրիշ կարգ մը ժողովներու մէջ ալ պիտի հանդիպինք: Այստեղ չկայ
նզովք եւ ներողամտութիւն. այլ՝ պատիժ եւ տուգանք: Ուրիշ կէտ մըն ալ այն է, թէ այս ժո-
ղովին մէջ պոռնկութեան համար աւելի մեղմ պատիժ կը տրուի, քան արտաքին ժողովնե-
րու մէջ, ուր պոռնկութեան պարագային կարգալոյծ կ'ընեն[27]:

Շահապիվանի ժողովի կանոններէն մին կը վերաբերի ազգականներու միջեւ կնքուած
ամուսնութեան[28]: Մինչեւ չորրորդ պորտ արտօնուած չէ ամուսնութիւն. եթէ եպիսկոպոսը
այդ գիտնալով հանդերձ ամուսնացնէ, թէ՛ իր աթոռէն կը զրկուի եւ թէ՛ աղքատներուն
դրամ կը բաժնէ:

Հակառակ անոր, որ կուսակրօնութիւնը պարտադրուած էր եպիսկոպոսներուն, սա-
կայն այս ժողովի կանոններէն կը հետեւցնենք, որ եպիսկոպոսներ երբեմն կիներ կամ հո-
մանուհիներ կը պահէին: Այս պարագային պատիժը աւելի կ'ըլլար նախորդներէն. խնդրոյ
առարկայ եպիսկոպոսը անմիջապէս կարգալոյծ կ'ըլլար[29]: Այս նոյն կանոնին մէջ կը հան-
դիպինք ուրիշ երկու խիստ օրէնքներու եւս, որոնք կ'արտացոլեն տուեալ ժամանակի ու-
վորութիւնները. ատիկա հարցուկներու[30] եւ մծղնիներու[31] հարցն է: Այս կանոնէն կը հե-
տեւցնենք, թէ ծանր եղած է պատիժը մծղնէութեան հետեւողներուն, որովհետեւ այդ
աղանդը տարածում գտած էր Հայաստանի մէջ:

Պէտք է նշել, որ հակասական կէտեր ալ կան Շահապիվանի կանոնագրութեան մէջ:
Երբ կանոն 16-ին մէջ կը խօսուի եպիսկոպոսի իրաւունքին մասին, այստեղ գլխաւոր
եպիսկոպոսը կաթողիկոս կը նշանակէ: Իսկ կանոն 20-ին մէջ գլխաւոր եպիսկոպոսը կը
նշանակէ առաջնորդ: Անոր պատճառը, կ'ենթադրենք, այն է, որ դարերու ընթացքին
գրիչները փորձած են կանոնները իրենց ուզած ձեւով ներկայացնել եւ փոխել: Մծղնիներու
վերաբերեալ 20-րդ կանոնին մէջ կը խօսուի նաեւ եպիսկոպոսի պատիժին մասին: Եթէ
մծղնիներու գոյութիւնը գիտնալով՝ եպիսկոպոսը առաջքը չառնէ եւ այդ աղանդին հետե-
ւորդները չպատժէ, ան իր աթոռէն կ'իյնայ եւ պատիւէն կը զրկուի:

Ինչպէս սկիզբէն ըսինք, եպիսկոպոսի մը առաջնորդ ըլլալը միմիայն կաթողիկոսին
հրամանով կ'ըլլայ. կանոն 16-ին[32] մէջ ատիկա յստակ կերպով կը բացատրուի: Միեւնոյն
ատեն եպիսկոպոսն է պատասխանատուն՝ նշանակելու երէցներ վանքերու եւ անապատ-

---

[27] Նոր Կեսարիոյ ժողով, կանոն 1:

[28] Շահապիվանի ժողով, կանոն ԺԳ., էջ 446:

[29] Նոյն, կանոն 14, էջ 450:

[30] Հարցուկները ձեռքի մէջ նայելով կամ ջուրի մէջ կարդալով գուշակութիւններ կ'ընէին:

[31] «Մծղնի» բառը ասորերէն «մեսալի», յունարէն «միքսիգ», իսկ լատիներէն «միքսթիօ» բառերէն ծագում առած է: Մծղնէականներուն համար ծանր պատիժներ կը սահմանէին, օրինակ՝ մարդկանց սեռային անդամները ջիղեր կտրել: Ասիկա աղանդ մըն էր, որուն հետեւողները չէին յարգեր սուրբերը եւ եկեղեցւոյ օրէնքները, պղծութիւն ու անբարոյականութիւն կը քարոզէին եւ կը գործէին: Մծղնիներու աղանդին մասին տե՛ս Հայ ժողովրդի պատմութիւն, հ. Բ, Երեւան, 1984, էջ 154-160:

[32] Կանոնագիրք Հայոց, Երեւան, հ. Ա, 1964, էջ 455:

ներու մէջ: Այս կանոնին մէջ (16) կը տեսնենք երկու ակնառու կէտեր, որոնցմէ առաջինը կաշառքն է, իսկ երկրորդը՝ առաջնորդներու նշանակումը: Հաւանաբար կաշառքը սովորական բան մըն էր այն ժամանակներուն, մանաւանդ, երբ եպիսկոպոսը տկար էր եւ ոչ միջոցին: Ան կ'ազդուէր ճարտասներու բանեցուած ճնշումէն եւ, հետեւաբար, ճեշտութեամբ տեղի կու տար կաշառքին. «Կաշառք կուրացուցանէ զաչս իմաստնոց»[33]: Իսկ երկրորդը, ինչպէս կը վկայէ Ճաւ. Փաւստոս, Յունահայաստանը կապուած էր Բիւզանդիային, որուն համելի թուելու եւ առաջնորդ ըլլալու համար եպիսկոպոսները Հայաստանի մէջ չէին ձեռնադրուեր, այլ Կեսարիա կ'երթային: Սոյն կանոնին մէջ մենք յիշեցինք, թէ գիւղերը կը գտնուէին եպիսկոպոսներու հովանաւորութեան տակ, բայց Մեծն Ներսէսի ժամանակ անոնք ենթակայ էին առաջնորդներու հսկողութեան: Ինչպէս այսօր, հին ժամանակներուն եւս մարդիկ կը դիմէին զանազան միջոցներու, դրամ վաստակելու համար: Անոնք երազներ կը տեսնէին, իբրեւ թէ մարտիրոսներու նշխարներ գտած են եւ անոնց վրայ եկեղեցի կառուցանելով՝ զանոնք ուխտատեղի կը դարձնէին[34]: Ըստ այս կանոնի՝ նշխարներու վրայ եկեղեցի կառուցանելու թոյլտուութիւնը տրուած էր եպիսկոպոսին: Երբեմն կը հանդիպինք այնպիսի դէպքերու, երբ մարդիկ արծաթասիրութեան համար սուրբերու նշխարներ կը բերէին՝ վրան եկեղեցիներ կառուցանելու համար:

Օտար Եկեղեցիները սուրբ հայրերու 12 կանոնները ընդունեցին Հինգվեցեան 692 թուի ժողովին մէջ[35]: Մեր 1179 թուի ժողովին մէջ այդ ուղղութեամբ որեւէ որոշում չէ առնուած: Թէեւ պատճառները ալ մեզի անծանօթ կը մնան, բայց Էջմիածնի թիւ 58 ձեռագրին մէջ կը հանդիպինք այն սուրբ հայրերու անուններուն, որոնք ոչ միայն յիշուած են, այլ նաեւ ընդունուած են մեր Եկեղեցւոյ կողմէ: Յիշեալ ձեռագիրը Էջմիածնի ժողովին արձանագրութիւնները կը պարունակէ եւ մանրամասն տեղեկութիւն կու տայ սուրբ հայրերու կանոններուն վերաբերեալ:

Սարդիկէի ժողովի կանոններէն մէկուն մէջ նշուած է, թէ կարելի չէ հարուստ մը կամ փիտական մը մէկ անգամէն կամ մէկ օրէն միւսը, առանց նախապէս եկեղեցական ստորադաս կարգեր ընդունած ըլլալու, եպիսկոպոս ձեռնադրել: Ասիկա որոշ տարիք մը կը պահանջէ, եւ այդ տարիքը երեսունէն ոչ պակաս, եւ յիսունէն ոչ բարձր ըլլալու է: Կանոնագրութեան զանազան գլուխներուն մէջ քահանաներուն մասին ալ նոյն բանը կ'ըսուի: Սակայն մեր մօտ պայմաններու բերումով, այդ օրէնքը չէ յարգուած, տեղի, ժամանակի եւ քաղաքական պատճառներով:

Պատահած է, որ աշխարհական մը ուղղակի կաթողիկոս ընտրուի: Եպիսկոպոսը պէտք է յատուկ յատկանիշներ ունենայ ձեռնադրուելու համար: Շահապիվանի ժողովին համաձայն, ձեռնադրութեան իրաւունք ունենալու համար եպիսկոպոս մը հետեւեալ լիա-

---

[33] Նոյն, հ. Բ, ԺԶ, 19, էջ 455:

[34] Տե՛ս նաեւ Անտիոքի կանոն 5:

[35] Կոստանդնուպոլսոյ մէջ գումարուած այս ժողովը «Տրուլլեան» ալ կը կոչուի, քանի ունեցած է 692-ին Յուստինիանոս Բ կայսեր հրամանով եւ 211 եպիսկոպոսներու մասնակցութեամբ, ուր սահմանուած են 102 կանոններ: Այս ժողովը չէ ընդունուած լատիններու կողմէ: Տե՛ս **Մաղաքիա արքեպս. Օրմանեան**, «Ազգապատում», հ. Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 761-762:

կաթողիկոսէ օծուած ըլլայ. եւ եթէ զօրութիւնները պէտք է ունենայ. նախ եւ առաջ պէտք է կաթողիկոսէ մը ձեռնադրուած չէ. այլ զանազան պատճառներով՝ ուրիշներու կողմէ. այդ ձեռնադրութիւնը անվաւեր կը նկատուի: Ինչպէս նշեցինք. Ս. Գրիգոր Լուսաւորիչէն ետք բոլոր եպիսկոպոսները իրենց ձեռնադրութիւնը կը ստանան կաթողիկոսէն. եւ անշուշտ բացառութիւնները յարգելի էրն՝ նկատի ունենալով Փոքր Հայքի մէջ գտնուող եպիսկոպոսներուն կացութիւնը. որոնք ստիպուած էին երբեմն այս կամ այն պատճառով. չնեղացնելու համար Կեսարիոյ Աթոռը. ձեռնադրութիւնը հոնկէ ստանալ: Այս տեսակէտը զուտ կարծիք մըն է. զոր մենք կ'արտայայտենք մեր քաղած տեղեկութիւններուն հիման վրայ:

Երկրորդ՝ որեւէ եպիսկոպոսի ձեռնադրութիւնը արդարութեամբ եւ արդար հիմքի վրայ պէտք է ըլլայ, առանց կաշառքի, առանց կեղծիքի: Եւ ամենէն կարեւոր պայմաններէն մէկն այն է, որ ան Ձեռնադրութեան Մաշտոցին պէտք է լիովին հետեւի եւ ընդունի անոր ընդգրկած խրատները, յորդորները. Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը եւ վարդապետութիւնը:

Փոխ-եպիսկոպոսը. փոխ-առաջնորդը եւ քորեպիսկոպոսը իրաւունք չունին, բացի ստորադաս պաշտօնեաներ կարգելէ, ձեռնադրութիւն կատարելու: Որեւէ եպիսկոպոս իրաւունք չունի իր թեմէն դուրս ձեռնադրութիւն կատարելու՝ առանց տեղւոյն առաջնորդին թոյլտուութեան, այլապէս այդ ձեռնադրութիւնը անվաւեր կը նկատուի: Այս կէտը մեզի անդրադառնալ կու տայ այն իրականութեան, որ Եկեղեցւոյ նուիրապետական աստիճաններէն ներս երբեմն այսպիսի դէպքեր պատահած են. ոմանք ձեռնադրութիւններ կատարած են սպառնալիքի. վախի տակ. ուրիշներ՝ կաշառուելով, ուրիշներ ալ՝ պարզապէս իրենց անկարգութիւնը ցոյց տալով:

Որեւէ եպիսկոպոսի ձեռնադրութիւնը վաւերական կը համարուի, երբ ընծայացուն ընտրուած է թէ՛ ժողովուրդին փափաքով եւ թէ՛ կղերին որոշմամբ, հակառակ պարագային այդ ալ չեղեալ կը նկատուի, քանի որ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչէն սկսեալ մեր Եկեղեցիին մէջ միշտ կը լսենք ժողովուրդին ձայնը[36]: Իսկ ձեռնադրութեան ընդհանուր պայմաններուն մէջ կան հետեւեալ կէտերը, որոնց անդրադառնալը կարեւոր կը նկատենք: Ձեռնադրուողը ձեռնադրութեան խորհուրդի ժամանակ, ինչպէս կը կարդանք Ձեռնադրութեան Մաշտոցին մէջ, պէտք է խոստովանի, ինչ որ Եկեղեցին կ'ընդունի, որպէսզի ձեռնադրութիւնը վաւերական ըլլայ: Երբ եպիսկոպոսը գաղտնաբար կը ձեռնադրէ մէկը, կը նշանակէ, թէ ընծայացուն ձեռնադրուելու արժանի չէ եւ, աղմուկ չբարձրացնելու համար, ծածուկ կը ձեռնադրուի: Նաեւ կարելի չէ մէկը ձեռնադրել առանց նպատակի եւ հօտի. ձեռնադրըւողը պէտք է որոշ հօտի մը համար ձեռնադրուի: Ինչպէս առաջ ալ ըսած ենք, եպիսկոպոսի ձեռնադրութեան արարողութեան ժամանակ երեք եպիսկոպոսներու ներկայութիւնը անհրաժեշտ է, իսկ Հայ Եկեղեցւոյ պարագային այդ իրաւասութիւնը տրուած է Հայոց Կաթողիկոսին, որ առընթերակայ պէտք է ունենայ առնուազն երկու եպիսկոպոսներ: Մինչեւ V դար. աւելի յստակ ըլլալու համար՝ մինչեւ Ս. Սահակի ժամանակ, Հայ Եկեղեցւոյ կաթողիկոսներուն մեծամասնութիւնը ամուսնացած էր, սակայն անոնք կաթողիկոս ըլլալէ ետք կուսակրօն կեանք կը վարէին: Օրինակ՝ Գրիգոր Լուսաւորիչը կաթողիկոս ըլլալէ ետք հե-

[36] Ն. Վ. Մելիք-Թանգեան, Հայոց եկեղեցական իրաւունքը, հ. Ա, Շուշի, 1903, էջ 469-633:

ռացաւ իր կնոջմէն, որ մենաստան մը քաշուեցաւ, իսկ ինք հոգեւոր կեանքով ապրեցաւ՝ զբաղելով եկեղեցական գործերով: Իր աւագ որդին՝ Վրթանէսը, աշխարհական կեանք կ'ապրէր, ապա քահանայական աստիճան ստացաւ[37]: Իսկ Արիստակէս վանական կեանք կ'ապրէր ու մանկութենէն աստուածապաշտական ծառայութեան համար դաստիարակուած էր[38]: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը ապա զինք ձեռնադրեց իր փոխարէն[39]:

Այս բոլորը նկատի ունենալով եւ հետեւելով նաեւ մեր մատենագիրներուն թողած ժառանգութեան՝ այն եզրակացութեան յանգած ենք, որ կուսակրօնութիւնը սկիզբէն ի վեր քղոյութիւն ունէր եպիսկոպոսներուն համար Հայ Եկեղեցիէն ներս:

Հայ Եկեղեցին կ'ընդունի այն տեսակէտը, թէ եպիսկոպոսները իրենց իշխանութիւնը ստացած են առաքեալներէն եւ, հետեւաբար, անոնց յաջորդներն են ու լիազօրուած են իրենց թեմերէն ներս գտնուող բոլոր հոգեւորականներուն եւ աշխարհականներուն պատասխանատուութիւնը ստանձնել: Ուստի հասնելու համար այս բարձր պաշտօնին՝ պէտք է, որ իրաւասութիւններ եւ պարտականութիւններ կատարած ըլլային:

Եպիսկոպոսի կարեւոր իրաւունքներէն մէկն այն է, որ ան իրաւունք ունի եկեղեցի օծելու: Ան հովիւն ու ներկայացուցիչն է իր հօտին եւ Քրիստոսի վարդապետութիւնը ուսուցանողը: Եւ քանի որ ան խորհուրդներու պատասխանատուն է, տեսուչը, ուրեմն իր թոյլտուութեամբ է, որ աւելի ստորադաս աստիճանի հոգեւորականները կը կատարեն իրենց պարտականութիւնները: Եպիսկոպոսի պատասխանատուութեան սահմաններուն մէջ կը գտնուի նաեւ յատուկ հոգատարութիւնը որբերուն, այրիներուն, աղքատներուն, անտէրներուն եւ լքուած հիւանդներուն: Ան ոչ միայն հոգեւոր պատասխանատուութիւն ունի, այլեւ պարտի հոգալու եկեղեցւոյ ինչքերը, որովհետեւ ան պատասխանատու է եւ հոգեւոր պարտք ունի իր կաթողիկոսին ու ժողովուրդին առջեւ: Բնականաբար, դարձեալ անոր պատասխանատուութեան սահմաններուն մէջ կը գտնուի իր թեմի պաշտպանութիւնն ու անկէ ներս սուրբ հայրերու եւ եկեղեցական կանոններու պահպանումն ու անթերի կատարումը:

Մեր ազգային-եկեղեցական ժողովները իրաւունք ունին թէ՛ կաթողիկոս ընտրելու եւ թէ՛ կաթողիկոս մը մերժելու կամ հեռացնելու:

Եկեղեցւոյ գլխաւոր օրէնսդիր մարմինն է, որ կը սահմանէ ոչ միայն վարչական, այլեւ դաւանաբանական կանոններ, անոր իրաւասութեան սահմաններուն մէջ է ոչ միայն մերժել Տիեզերական ժողովներու կանոնները, այլեւ ընդունիլ, փոխել եւ նոր կանոններ սահմանել:

Հայաստանի մէջ մեծ նախարարութիւնները ունէին իրենց եպիսկոպոսութիւնը, որ տոհմային առումով ժառանգական էր: Այդ եպիսկոպոսները դարձեալ գիտուն եւ իմաստուն անձնաւորութիւններ էին: Անշուշտ նախարարներու թիւը բազմանալու եւ նուազելու պարագային կը բազմանային կամ կը պակսէին նաեւ եպիսկոպոսները: Այդ նախարարութիւններուն մէջ ալ կը փորձէին ընտրել լաւագոյն թեկնածուն: Անոնք կա՛մ իշխաններու ազգականներ էին եւ կա՛մ հզօր անձնաւորութիւններ:

---

[37] Ագաթանգեղոս, Հայոց պատմութիւն, Երեւան, 1983, էջ 478:

[38] Նոյն, էջ 478:

[39] Նոյն, էջ 480:

Մեր մատենագիրներէն Բուզանդի ու Եղիշէի մօտ հանդիպած ենք եպիսկոպոսներու թուարկման: Օրինակ՝ Եղիշէն կը վկայէ, թէ Արտաշատի ժողովին մէջ բաւական մեծ թիւով եպիսկոպոսներ կային[40]: Ագաթանգեղոսն ալ իր «Հայոց Պատմութիւն» գրքին մէջ կը խօսի անոնց մասին եւ կու տայ եպիսկոպոսներու ցանկը:

Կ'ըսէ, թէ քուրմերու զաւակները, որոնք եպիսկոպոսութեան արժանի էին, Ս. Գրիգոր Լուսաւորիչէն կը ստանային եպիսկոպոսական աստիճան. «Որոց առաջնոյն՝ Աղբիանոս անուն, որ ապա կողմանցն եփրատական գետոյն լինէր վերակացու. երկրորդն՝ Եւտաղիոս, որ ի կողմանս վայրացն Բասենոյ կացեալ լինէր հովիւ. երրորդն՝ Բասոս. չորրորդն՝ Մովսէս. հինգերորդն՝ Եւսեբիոս. վեցերորդն՝ Յովհաննէս. եօթներորդն՝ Ագապէս. ութերորդն՝ Արտիրէս. իններորդն՝ Արսուկէս. տասներորդն՝ Անտիոքէս. մետասաներորդն՝ Տիրիկէս. երկոտասաներորդն՝ Կիւրակոս»[41]:

Մեր կանոնագրութեան մէջ ալ գոյութիւն ունին քորեպիսկոպոսներու վերաբերեալ շատ մը կէտեր, ուր կը տրուին անոնց բաւական իրաւասութիւններ, կը սահմանուին անոնց իրաւունքներն ու պարտականութիւնները, ինչպէս նաեւ անոնց գործունէութեան սահմանները, որ գիւղերը եւ գաւառներն էին: Շահապիվանի 5-րդ կանոնին համաձայն, անոնք ոչ միայն ձեռնադրելու, այլեւ պատժելու եւ կարգալոյծ ընելու իրաւունք ունէին: Քորեպիսկոպոսը ոչ միայն վարչական, այլ նաեւ դատաստանական գործերու ղեկավարն էր, որուն պարտականութիւնն էր խոհեմութեամբ եւ իմաստութեամբ դատել իր գաւառէն ներս ծնունդ առած խնդիրները: Դարձեալ մեր կանոնագրութեան մէջ նշուած է, թէ կաթողիկոսները եւ եպիսկոպոսները բաւական հարուստ էին, ունէին, որպէս սեփականութիւն, հողեր, կալուածներ, գիւղեր, որոնք յետագային կը դառնային Եկեղեցւոյ սեփականութիւն: Եպիսկոպոսները կամ քորեպիսկոպոսները վանքերու մէջ կ'ապրէին, իսկ վանքերը կը գտնուէին առաջնորդի անմիջական հսկողութեան տակ: Անշուշտ անոնց սեփականութեան ետեւը միշտ կանգնած էին իշխաններն ու նախարարները, որոնք իրենց եպիսկոպոսներուն կ'օգնէին նիւթապէս՝ տալով անոնց հողեր, կալուածներ եւ այլ ինչքեր: Կարդալով մեր կանոնագրութիւնը՝ կը տեսնենք, թէ եպիսկոպոսի մը վերապահուած իրաւունքներուն ամենէն կարեւորներէն մէկը իր դատաւորի պաշտօնն էր:

Մենք ակնարկ մը պիտի նետենք մեր պատմութեան վրայ՝ ցոյց տալու համար, թէ դատաւորները ինչպէս կը դատէին կամ պատիժներ կը սահմանէին գործուած յանցանքներուն համեմատ: Իսկ երբ եպիսկոպոսը պիտի դատուէր, անոր դատը կաթողիկոսը կ'ընէր: Օրինակ՝ գիտենք, որ եպիսկոպոս մը երբ կնոջ մը հետ յարաբերութիւն ունենար, կը պատժուէր կարգալոյծ ըլլալով: Երբ եպիսկոպոսներէն աւելի ցած աստիճանով հոգեւորականները յանցանք գործէին, անոնց պատիժը եպիսկոպոսը կը սահմանէր: Ըստ Բուզանդի, կաթողիկոսները իրենց խորհրդակից եպիսկոպոսներով կը կազմէին դատարան՝ օրէնսդիր, եւ կը կարգէին կառավարիչ մը՝ հսկող իրենց հաւատացեալներուն վրայ:

Եպիսկոպոսներն ալ իրենց թեմերէն ներս թեմի գործերուն համար դատաւորներ էին ու վճիռներ կ'արձակէին: Այս իմաստով մենք դատարանները կրնանք բաժնել երեք աստի-

[40] Եղիշէ, Վարդանանց եւ Հայոց պատերազմի մասին, Երեւան, 1971, էջ 43:

[41] Ագաթանգեղոս, Հայոց Պատմութիւն, Երեւան, 1983, էջ 470:

ճանի. ա) կաթողիկոսական դատարան, որ կաթողիկոսը կը ղեկավարէր, բ) եպիսկոպոսական դատարան, որ եպիսկոպոսը կը ղեկավարէր, եւ գ) քորեպիսկոպոսական դատարան, որ քորեպիսկոպոսներով կը ղեկավարուէր: Առաջինը իրաւունք ունէր դատելու բոլոր եպիսկոպոսներն ու առաջնորդները, երկրորդը՝ իր թեմէն ներս գտնուող բոլոր խնդիրները, իսկ երրորդը՝ իր գաւառներուն մէջ ունէր նոյն իրաւասութիւնը: Ժամանակի ընթացքին պատիժներու ձեւերը կը փոխուէին. երբեմն անոնք կ'ըլլային չափէն աւելի խիստ, երբեմն՝ աւելի մեղմ, երբեմն բարոյական պատիժներ, երբեմն՝ ֆիզիքական: Հետաքրքրականն այն է, որ անոնց մէջ կարելի է հանդիպիլ նաեւ չափազանց խիստ պատիժներու: Սուրբ Սահակի սահմանած պատիժներուն մէջ կար ոչ միայն նիւթական պատիժ՝ տուգանք, այլեւ ֆիզիքական պատիժ՝ ծեծ:

Այն եպիսկոպոսները, որոնք առաջնորդներ էին, երբեմն իրենց գործած յանցանքները ծածկելու համար ամէն տեսակի զեղծարարութիւններու կը դիմէին, երբեմն ալ հաճելի ըլլալու համար իշխանին, հարուստին կամ արաբ խալիֆային, եւ կամ պարսիկ խանին գրպանը լեցնելու համար, ամէն տեսակ ապօրինի գործեր կը տեսնէին: Կը պատահէր, որ անարդար կերպով պատժէին անզօր, տկար, անպաշտպան գիւղացի մը կամ ալ կարգալոյծ ընէին համեստ եւ բարի քահանայ մը:

Անշուշտ մեր կանոնագրութեան մէջ կան նաեւ ուրիշ կանոնախմբեր՝ գրուած տարբեր ժամանակներու ընթացքին, որոնք թէեւ մաս կը կազմեն Կանոնագրքին, բայց վաւերացուած չեն ազգային-եկեղեցական ժողովին կողմէ:

Բացի այդ, ունինք զանազան կաթողիկոսներու եւ անձերու կողմէ գրուած կանոններ, որոնք դարձեալ մաս կը կազմեն մեր կանոնագրութեան, բայց զանազան պատճառներով չեն վաւերացուած ազգային-եկեղեցական ժողովով: Մեր խօսքը, անշուշտ, ոչ թէ օտարներու, այլ զուտ հայ սուրբ հայրերու կանոններուն մասին է:

Մեր ազգային-եկեղեցական 16 ժողովներուն մէջ կան չորս ժողովներ, որոնք կանոն չեն սահմանած, եւ եպիսկոպոսներու երբեք չեն անդրադարձած: Անոնցմէ առաջինը՝ Դուինի Գ. ժողովն (609-610 թթ.) է, որուն մէջ միայն խօսուած է Վրաց Եկեղեցւոյ բաժանման մասին Հայ Եկեղեցիէն, քանի որ վրաց Կիւրիոն Կաթողիկոսը ընդունած էր Քաղկեդոնի ժողովը[42]: Ժողովին կը նախագահէր Աբրահամ Կաթողիկոսը: Երկրորդը Երնջակի ժողովն է 842 թուին, ուր դարձեալ կանոն չէ սահմանուած, այլ ժողովին նպատակը եղած է իշխանաց իշխան Բագարատ Բագրատունիի զրպարտութիւններով եւ պնդումներով հեռացուած Յովհաննէս Ե. կաթողիկոսը ետ բերել ու նստեցնել Աթոռին: Սմբատ սպարապետը եւ Գրիգոր Սիւնեաց իշխանը, չհանդուրժելով այս անարդար քայլը, իրենց դժգոհութիւնն ու զայրոյթը յայտնելէ ետք, կը հրաւիրեն բոլոր եպիսկոպոսներն ու իշխանները Երնջակ քաղաքին մէջ՝ քննելու համար այդ զրպարտութիւններն ու ամբաստանութիւնները կաթողիկոսին դէմ: Որոշում կ'առնեն, որ կաթողիկոսը պէտք է վերադառնայ:

Երրորդը՝ Հարքի ժողովը (1002 թ.) կը կայանայ Սարգիս Կաթողիկոսի օրով: Այս ժողովը դարձեալ կանոն չէ սահմանած, այլ պարզապէս նզոված, բանադրած ու դատապար-

[42] Կիւրիոն Վրաց Կաթողիկոսը նամակով մը կը յայտնէ, թէ ինք քաղկեդոնական է եւ այլեւս չի հաղորդիր Հայ Եկեղեցիին: «Զայս ամենայն վասն ձեր շինութեան գրեցաք ամենայն ճշմարտութեամբ, եւ ճշմարտութեամբ հաստատեցուք զարդար հաւատս զայս» (Գիրք թղթոց, Երուսաղէմ, 1994, էջ 188):

տած է թոնդրակեցիներու աղանդը[43]:

Իսկ չորրորդը Անի քաղաքի Բ. ժողովն է (1038 թ.), որ զբաղած է կաթողիկոսական ընտրութեամբ: Թագաւորը՝ Յովհաննէս-Սմբատ, հակառակութիւն ունենալով կաթողիկոսին դէմ, Սանահինի վանահայր Դէոսկորոսը կը նշանակէ կաթողիկոս: Այս ժողովով յայտնի կը դառնայ, թէ թագաւորն իսկ, առանց ազգային-եկեղեցական ժողովի որոշման, չի կրնար քայլ մը առնել: Եպիսկոպոսներ ժողով կը գումարեն եւ կը նզովեն ու կը դատապարտեն նախարարներն ու թագաւորը: Ասոր վրայ թագաւորն ու իշխանները, վախնալով, կ՚ուզեն ետ բերել Պետրոս Կաթողիկոսը: Աղուանից Յովսէփ[44] Կաթողիկոսի նախագահութեամբ ազգային-եկեղեցական ժողով կը գումարուի, ուր մեղադրելով Դէոսկորոսը՝ դարձեալ Աթոռ կը բարձրացնեն Պետրոս Կաթողիկոսը: Այս ժողովը մեր Եկեղեցւոյ պատմութեան մէջ ամենէն աչքառու ժողովներէն մէկն է իր տեսակին մէջ: Հետաքրքրական է, որ թագաւորն ու իշխանները կաթողիկոս մը ապօրէն կերպով գահընկեց ընելու կամ գահ բարձրացնելու իրաւունքը չունէին, թէեւ տարբեր ժամանակներու մէջ զգալի է նաեւ թագաւորին ու իշխաններուն միջամտութիւնը անձնական շահերու համար: Այս ժողովին մէջ ալ կանոն չէ սահմանուած:

Գոյութիւն ունին կանոններ ու կանոնախումբեր, որոնք դարձեալ տեղ ունին մեր կանոնագրութեան մէջ, սակայն անոնց մէջ երբեք չենք հանդիպիր եպիսկոպոսի վերաբերեալ որեւէ կանոնի[45]: Ներսէս Հայրապետին վերագրուած ԺԳ կանոնները հետեւեալներն են[46]. «Կանոնք Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Կաթողիկոսի[47], Կոչումն Ապաշխարութեան. Կանոնք Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետին[48], Կանոնք Ներզոր ասացեալ է Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետին[48], Կանոնք Ներսէսի Կաթողիկոսի եւ Ներշապուհ Մամիկոնէից Եպիսկոպոսի, գլուխ ԼԷ[49], Կանոն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Կաթողիկոսի, գլուխ Թ[50], Կանոնք Աբրահամայ Մամիկոնէից Եպիսկոպոսի առ Վաչագան Աղուանից Արքայ, գլուխ Գ»[51]: Այս կանոնները ընդհանրապէս կը վերաբերին քահանաներու, սարկաւագներու, աւելի ցածրաստիճան պաշտօնեաներու, եկեղեցական ծէսերու, մէկ խօսքով՝ ասոնք Եկեղեցւոյ վերաբերեալ կանոններ են: Ունինք նաեւ, որպէս Եկեղեցւոյ իրաւունքի աղբիւր, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի կա-

[43] Այս աղանդը, 9-11-րդ դարերում, սկիզբ առած է Սմբատ Զարեհաւանցի անունով մէկու մը կողմէ: Թոնդրակեցիները կը մերժէին քրիստոնէական սկզբունքներուն մեծամասնութիւնը: Անոնց կեդրոնն էր Թոնդրակ գաւառը, որմէ կու գայ նաեւ իրենց անունը: Անոնք չէին հաւատար հոգիի անմահութեան եւ յարութեան, չէին հաւատար մարդու եւ Աստուծոյ միջեւ միջնորդի դեր կատարող խաչին, Եկեղեցիին, հոգեւորականին: Կը մերժէին ծնողաղութիւնը եւ Եկեղեցւոյ խորհուրդները, կ՚արհամարհէին Եկեղեցւոյ ծէսերը եւ պատկերի չէին հաւատար:

[44] Յովսէփ Կաթողիկոսը Աղուանից հոգեւոր պետն էր:

[45] Կանոնագիրք Հայոց, Կանոնք Սրբոյ Գրիգորի, հ. Ա, գլուխ Լ, Երեւան, 1964, էջ 243:

[46] Կանոնագիրք Հայոց, հ. Բ, Երեւան, էջ 258:

[47] Նոյն, էջ 260:

[48] Նոյն, էջ 265

[49] Նոյն, հ. Ա, էջ 474:

[50] Նոյն, էջ 491:

[51] Նոյն, էջ 501:

նոնները: Սակայն այս կանոններուն մէջ ալ չկայ եպիսկոպոսի վերաբերեալ կանոն մը. հակառակ երեսուն գլուխներէ բաղկացած ըլլալուն, այս կանոնախումբին մէջ չի խօսուիր եպիսկոպոսի մասին:

Յիշատակելի է Նաեւ Անի քաղաքի ժողովը՝ գումարուած 970-ին, որ զբաղեցաւ Քաղկեդոնի ընդունող Վահան եպս. Սիւնեցիի ցահընկեցութեան հարցով: Այս ժողովն ալ կանոն չէ սահմանած: Անցնելէ առաջ մնացած չորս ազգային-եկեղեցական ժողովներուն՝ Դուինի 4-րդ ժողովին (648), Դուինի 5-րդ ժողովին (719), Պարտաւի ժողովին (771) եւ Սիսի ժողովին (1243), կ'ուզենք անդրադառնալ մեր պատմութեան եւ հայ եկեղեցական գրականութեան ամենէն երեւելի եւ մեծ անձերէն Սահակ Պարթեւ Կաթողիկոսի կանոններուն: Ըստ Վազգէն Յակոբեանի, Սահակ Կաթողիկոսի կանոնախումբը բաժնուած է 5 ենթախումբերու, եւ կարելի է ենթադրել, թէ ան ազդուած է Բարսեղ Կեսարացիէն: Իր կանոններուն յիսունհինգ գլուխները ընդունուած են Շահապիվանի ազգային-եկեղեցական ժողովին կողմէ:

Ունինք նաեւ գումարուած ազգային-եկեղեցական ժողովներ, որոնց սահմանած կանոնները կանոնագիրքի մէջ չեն մտած. օրինակ՝ Հռոմկլայի ժողովը 1179 թուին, որ Գրիգոր Տղայ Կաթողիկոսի (1173-1193) օրով գումարուած էր: Այս ժողովին մէջ ընդունուեցան երեք Տիեզերական եւ վեց տեղական ժողովները: Առաջին անգամ այստեղ է, որ կը հանդիպինք վերոյիշեալ ժողովներու յիշատակումին: Այս ժողովին ներկայ էր Աղուանից կաթողիկոսը, եւ այստեղ որոշուեցաւ Յունաց կայսեր եւ պատրիարքին գրաւոր ներկայացնել Հայ Եկեղեցւոյ դաւանաբանութեան տեսակէտը եւ վարդապետութիւնը:

*ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ*
*Պատմական գիտությունների թեկնածու*

# ՄՇՈ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Տարոնի համբավավոր այս վանքը կառուցվել է Տիրինկատար կամ Ծիրինկատար լեռան ստորոտում և նվիրված է եղել Տասներկու Առաքյալներին: Մշո Ս. Առաքելոց վանքը մատենագրական աղբյուրներում հիշվում է նաև Եղիազարու (Ղազարու) և Թարգմանչաց անուններով: Վանքի հիմնումը ավանդաբար կապվում է Գրիգոր Լուսավորչի անվան հետ: Ս. Գրիգորը կատարել է հիմնարկեքը և 312 թ. ավարտելով տաճարի շինությունը, առաջնորդ կարգել Եղիազարին՝ այստեղից էլ վանքի առավել հայտնի անվանումը[1]: 19-րդ դարի վերջին լուսավորչաշեն շինություններից ոչինչ չի մնացել, միայն հնագույն կառույցների հետքեր են նկատվել պարսպից դուրս, արևմտյան կողմում[2]:

Համալիրի գլխավոր եկեղեցին նվիրված է եղել Առաքյալներին. 1279 թ. այստեղ ընդօրինակված ժողովածուն գրվել է «... ի հռչակաւոր և յականաւոր Սուրբ ուխտս Եղիայզարու... ընդ հովանեաւ Պօղոսի, Պետրոսի և Անդրէի»[3]:

Սուրբ Առաքելոցը պետք է որ կառուցված լինի մինչև եկեղեցու համար փայտյա դուռ պատրաստելը, այսինքն՝ մինչև 1134 թ.: Դռան արձանագրությունը միակ թվագիր վկայությունն է: 1134 թ. տաճարի հիմնադրման տարեթիվը չէ, այլ ամբողջ համալիրի նորոգումը սկսելու թվականը: Այս նույն նորոգման ժամանակ են կանգնեցվել Թարգմանչաց գերեզմանոցի ՇՂԳ (1134) և ՇՂԴ (1135) թվականների արձանագրություն ունեցող խաչքարերը: Նորոգումն ավարտվել է 1135 թվականին, այդ մասին գրված է եղել Տեր Ղազարի և Ստեփաննոսի խաչքարին[4]:

Ուսումնասիրողների վկայությամբ, համալիրի մաս է կազմել մի ժամատուն՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ անունով, որ կառուցել է Կարապետ Բաղիշեցին 1555 թ.: Ժամատնից բացի, Ս. Առաքելոցին կից եղել են երկու մատուռ, հարավից՝ Ս. Ստեփաննոս, հյուսիսից՝ Ս. Գևորգ, համալիրից դուրս եղել է Ս. Աստվածածին եկեղեցին[5], որի հովանու ներքո մեր գրիչները ընդօրինակել կամ նորոգել են ձեռագրեր:

Մշո Ս. Առաքելոց վանքը նորոգվել է քանիցս. 1609 թ. Բարսեղ վարդապետը նաև պարսպապատում է վանքը[6]: Վերջին նորոգման ժամանակ՝ 1791 թ., կառուցվել է զանգա-

---

[1] **Ն. Սարգսյան**, Տեղագրութիւնք ի Փոքր և Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 231: **Հ. Ոսկյան**, Տարօն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 23-24:

[2] **Ն. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 232:

[3] Մատենադարան, ձեռ. 5595, էջ 228ր: Հմմտ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1984. Այսուհետև՝ ԺԳ դարի հիշատակարաններ:

[4] Այդպիսի խաչքար է կանգնեցված եղել նաև Դավիթ Անհաղթի գերեզմանին: **Հ. Ոսկյան**, նշվ. աշխ., էջ 32:

[5] **Ն. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 234: **Հ. Ոսկյան**, նշվ. աշխ., էջ 31:

[6] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, կազմեց Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1975, էջ 390: Այսուհետև՝ ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա:

կառույցը, ծորոգվել գավիթը, ավելացվել են միաբանական խցերն ու տնտեսական շինությունները: Զայնեղ դիտ Հովհաննեսի չափածո հիշատակարանը թերևս միակ թվագիր արձանագրությունն է, որ եղել է համալիրի կառույցների վրա[7]:

Հայոց գրերի գյուտից հետո այստեղ եղել է թարգմանչաց դպրոց, որը, համաձայն ավանդության, ղեկավարել է Դավիթ Անհաղթը:

Ս. Ղազար վանքը հիշվում է նաև Վարդանանց շրջանում, Շուշանիկի վարքի Հայսմավուրքյան տարբերակում: Ամուսնու ուրանալուց հետո, նրան պատկանող և Ս. Նունեից ավանդված խաչը Շուշանիկը Անդրեաս վանականի հետ ուղարկում է հայրենական տիրույթ, իր սրբակրոն վարքով հայտնի Մշո Ս. Առաքելոց վանք[8]:

11-րդ դարում այս վանքը դեռևս Մամիկոնյան իշխանական տիրույթների մեջ էր մտնում: Զորտուանել Մամիկոնյանը 1179 թ. թարգմանում է Ս. Առաքելոցի սահմանների մասին Գրիգոր Լուսավորչին վերագրվող կտակագիրը, որի համար ասվում է, թե այն գրված է եղել հունարենով. «Ես՝ Զորտուանէլ Մամիկոնեան, որդի Տաճատա մեծի իշխան Տարաւնոյ... տեսի այս Գիրս սահմանաց գրեղ հելլենէն եւ յույն գրով ի... Սրբոյն Գրիգորէ Պարթևէ և թարգմանեցի ի հայ գիրս և հաստատեցի, զի մնացական հայրենիս լիցի Սուրբ Առաքելոցն»: Մամիկոնյան իշխանական տան իրավունքները փաստացի հաստատելուց հետո, իշխանը Ս. Ղազարու վանքին է նվիրում իր ծննդավայրը՝ Մշո Բերդակ գյուղը, որի մասին ընդարձակ հրամանագիրը պահպանվել է Մշո Ճառընտիրում[9]:

Այս նույն դարում հռչակավոր այս միաբանությունում առանձնանում է Պողոս վարդապետ Տարոնացին, որը դավանաբանական բնույթի թղթակցություն է ունեցել Թեոփիստե հույն իմաստասերի հետ[10]:

Առաքելոց վանքի միաբանության հոգևոր և մշակութային գործունեությունը շարունակվում է նաև հաջորդ դարերում: Վանքի պատմության շարադրման առումով խիստ կարևորվում է մի շատ հետաքրքիր ձեռագիր, որը դարեր շարունակ պահվել է այս վանքում, որի բաց, չգրված թերթերը լրացվել են վանքի միաբանական գործունեության առանձին դրվագները արձանագրող հիշատակարաններով: Խոսքը բանասիրության մեջ հայտնի Մշո Տոնականի կամ Ճառընտիրի մասին է: Տոնականի՝ Սողոմոն Մաքենացու ինքնագրից սերվող այս Ճառընտիրը ոչ միայն արժեվորում է իր մեծության, գրանյութի, նրա մեջ պարունակվող նյութերի առումով, այլև դրանում եղած հիշատակարաններով, որոնցից ոչ մեկը չի վերաբերում գրչության վայրին և թվականին:

Ձեռագիրը հայտնվել է Վանքում 1205 թ. առանց գլխավոր հիշատակարանի և կազմի: Կազմելուց առաջ գրվել է ձեռագրի անցած փորձությունների, գերության ու եղցնման պատմություն-հիշատակարանը: Մշո Ս. Առաքելոց վանքի միաբանների և Մշո դաշտի բնակչության միջոցներով Խլաթում գնվում է այս անգին ձեռագիրը և տրվում Եղիազարու վանքին ի պահ[11]:

[7] «Արարատ», 1909 թ., էջ 983-984: Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 27:

[8] Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 45:

[9] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., կազմեց Ա. Մաթևոսյանը, Երևան, 1988, էջ 111-112:

[10] Հ. Տաշյան, Ցուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 767-769:

[11] Ա. Մաթևոսյան, Երբ և որտե՞ղ է գրվել Մշո Տոնական-Ճառընտիրը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 9,

Նման մեծ ձեռագիրը կազմելը բավականին դժվար գործ էր: Դրա համար պահանջվում էր մեծ վարպետություն և փորձ: Դա հնարավոր էր միայն գրչական մեծ ավանդույթներ ունեցող գրչակենտրոններում, ուր ոչ միայն ձեռագիր էին ընդօրինակում, այլև ուսուցանում գրել, նկարազարդել և կազմել:

Կազմողի 1205 թ. հիշատակարանում հպանցիկ վկայություններ կան վարդապետարանի գործունեության մասին: Ահա դրանք. Խլաթ ձեռագիրը բերելու մեկնող վեց միաբաններից հինգը փիլիսոփաներ են՝ Հուսիկը, Ռստակեսը, Ավետիսը, Ստեփաննոսն ու Ներսեսը, որոնց անունները գրվել են «ի դպրութիւն կենաց»: Հանգանակության մասնակիցների թվում հիշվում են մեկ այլ փիլիսոփա՝ «բարեպաշտ Խաչատուրը», և «մեծանուն Տէր Բարսեղը», որի մոտ սովորել է միաբանության առաջնորդ Աբրահամը: Եվ վերջապես, կազմող Ներսեսին օգնել է Հովհաննես փիլիսոփան՝ այս հիշատակարանը ավարտին հասցնելու[12]:

Այսպիսի հռչակավոր, սրբակրոն բարքերով հայտնի վանքում է կրթվել և Ներսես Մշեցի վարդապետը. «Սա էր ի գաւառէն Տարօնոյ... սնեալ և վարժեալ էր ի հռչակաւոր վանս Ղազարու, որ է Մշո Սուրբ Առաքեալք»,- կարդում ենք Հայսմավուրքի նրա վարքում: Մշեցին այստեղ ստանում է փայլուն կրթություն:

Մշո Առաքելոց վանքից Ներսես Մշեցին գնում է Խոր Վիրապ՝ Վարդան Արևելցու մոտ, աշակերտում նրան և դառնում նրա գործի շարունակողը: Վարդան Արևելցու մահից հետո (1271 թ.) վարդապետարանը զրկվում է հովանավորներից, և նրա նոր րաբունապետը՝ Ներսես Մշեցին, ստիպված է լինում Հայոց վարդապետարանը տեղափոխել հայրենի գավառ, իր դպրանոց՝ Տարոնի Մշո Ս. Առաքելոց վանք:

Ահա այս շրջանից են Եղիազարի վանքից մեզ հասած առաջին ձեռագրերը: Առաջինը՝ 1275 թ. ընդօրինակված Փիլոնի Հնգամատյանի Լուծմունքն է: Ձեռագրի ընդօրինակմանը մասնակցել են երկու գրիչ: Լուծմունքը սկսել է ընդօրինակել Գրիգոր վարդապետն իր ուսուցչի՝ «... յամենից վեր երանելին հայրն հասարակաց...» Ներսես վարդապետի պատվերով: Սկսած 234 թերթից՝ գործը շարունակել է վարդապետի մեկ այլ աշակերտը՝ Բարսեղ գրիչը, և ավարտել այն «...ի թուականն Հայոց ՉԻԴ (1275) և բնակութիւն տեղի Ղազարու վանք...»[13]:

«Ճառք Բարսեղի Կեսարացւոյ» ժողովածուն ևս գրվել է Ներսես Մշեցու պատվերով: Ձեռագիրը սկսում է Ստեփանոս գրիչը և ավարտում է Եսայի Նչեցին: Այդ մասին կան հիշատակարանային վկայություններ ձեռագրի 107բ և 400ա-բ էջերում: Սա Եսայի Նչեցու ընդօրինակմամբ մեզ հասած առաջին գործն է: Բացի դրանից, ինքնագիր է նաև ստացողի՝ Ներսես Մշեցու հիշատակարանը. «Ի ՉԺԸ (1279) գրեցաւ... յուսում խրատու կարգաւորութեան վանականաց... ի հռչակաւոր յականաւոր զսուրբ ուխտս Եղիայզարու... մեծաւ հոգաբարձութեամբ իմոյ անպիտանութեանս՝ Ներսիսի վարդապետի»[14]:

Ուսումնասիրողները Եղիազարի վանքում գրված են համարում նաև Լուսեր գրչի 1280 թ.

Երևան, 1969, էջ 138:

[12] ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 46-47:

[13] Մատենադարան, ձեռ. 3932, էջ 128ա, 329բ: Տե՛ս ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 459:

[14] Նույն տեղում, ձեռ. 5595, 228բ: Նույն տեղում, էջ 490:

ընդօրինակած Եզնիկ Կողբացու «Եղծ Աղանդոցը»[15]: Այն գրվել է «սուրբ և ամենագովով վարդապետն Ներսեսի» պատվերով: Աշխատանքը սրբագրել է և ձեռագրի վերջում Դատավորաց Մեկնությունից մի հատված է ընդօրինակել Եսայի Նչեցին. «Զպատահեալսդ այսմ մատենի աղաչեմ յիշել յաղաւթս, զստացաւղ սորին զմեծ հռետորն Ներսէս, նոյնպէս և զնուաստ հոգի Եսայի՝ հետևող և աշակերտ սուրբ առնն Աստուծոյ՝ Ներսէսի վարդապետի»[16]:

Հենց այստեղ՝ Ս. Առաքելոց վանքում Մշեցին մտածում էր ավելի լայն կրթական համակարգ ստեղծելու մասին, ուրվագծում էր ապագա համալսարանական կրթության ծրագիրը[17]:

Հռչակավոր վարդապետի պահանջով ոչ միայն տեղում էին ընդօրինակություններ կատարվում, այլև ձեռագրեր էին գրվում այլ վայրերում: Նշանավոր գրիչները կատարյալ օրինակներից էին կատարում իրենց ընդօրինակությունները, որոնք անհրաժեշտ էին Մշեցու դպրոցի համար որպես ուսումնական ձեռնարկներ: Վարդապետը այս նոր կարևոր ձեռնարկ-ձեռագրերով հարստացնում էր նաև տեղի Մատենադարանը:

Այդպիսի մի ձեռագիր է Դավիթ Քոբայրեցու ինքնագրից ընդօրինակված «Մեկնութիւն Եսայեա մարգարէի» ժողովածուն: Ձեռագիրը բերվում է Հաղբատի վանքից և Գուգարաց աշխարհի մեկ այլ վանքում՝ Մաշկավանքում «աստուածազարդ րաբունոյն և անյաղթ վարժապետին Ներսէսի» պատվերով Բարսեղ գրիչը 1281 թ. հունիսի 19-ին սկսում և օգոստոսի 31 ավարտում է այն:

Ներսես Մշեցու ավագ աշակերտներից է Բարսեղ գրիչը, որը սպասավորում էր արդեն այս վանքում: Նա Մշո Առաքելոց վանքի մեզ հասած առաջին ձեռագրի՝ 1275 թ. ընդօրինակված Փիլոնի Հնգամատյանի մեկնության երկրորդ գրիչն է:

Մաշկավանքում ընդօրինակված այս ձեռագրի հիշատակարանը հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Ներսես Մշեցու վարդապետարանի գործունեության մասին: Նախ իմանում ենք, որ Ներսես վարժապետը Մաշկավանք է ուղարկել իր մեկ այլ աշակերտին, որը դասասաց վարդապետ էր՝ Հովհաննես րաբունուն: Մշեցին նամակով խնդրում է հմուտ Բարսեղ գրչին այլ գործեր էլ օրինակել «...և զայլ բազումս գծագրել... ի շահ և յաւգուտ իւրոյ անձինն և նորին աշակերտացն...»:

Հովհաննեսն ինքն է գնացել Հաղբատ, տեղի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսից ստացել գաղափար ինքնագիր օրինակը և բերել Մաշկավանք: Բարսեղ գրիչը վաղուց է հեռացած եղել Ս. Առաքելոց վանքից և Եսայի Նչեցուն հիշում է մանուկ հասակից ու թեև նրան անվանում է Մշեցու գործի շարունակող՝ «...զհետևողս սորին», անմիջապես ավելացնում է. «զտհաս և զպարզամիտ պատանին Եսա(յ)ի...»[18]: Եսայի Նչեցին վաղուց

---

[15] ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 498, ծթ. 2: Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 9: Ա. Ղազարոսյան, Ցանկ Գյումրի համալսարանից մեզ հասած ձեռագրերի, «Էջմիածին», 1984, ԺԱ-ԺԲ, էջ 57:

[16] Նույն տեղում, ձեռ. 109, էջ 6բ: Նույն տեղում, էջ 498: Դեպքի ընդօրինակությունը գրավում է ձեռագրի 315ա-320բ էջերը:

[17] Ա. Ղազարոսյան, նշվ. աշխ., էջ 56:

[18] Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակովբեանց, հ. Զ, Երուսաղէմ, 1972, էջ 91-93: Այսուհետև՝ Ցուցակ Երուսաղէմի:

արդեն պատանի չէր. նա ղեկավարում էր Մշո Առաքելոց վանքի գրչակենտրոնի ընդօրի-
ճանկությունների սրբագրման բարդ և խիստ կարևոր աշխատանքը և ինքն էլ էր իրեն հա-
մարում «հետևող և աշակերտ... Ներսէսի»[19]:

Ի՞նչ բովանդակության են եղել այդ ձեռագրերը, որ Ներսես վարդապետը Բարսեղին
նամակով խնդրել է օրինակել. և Հովհաննես բաբունին է բերել դրանք Մշո Ս. Առաքելոց
վանք. դժվար է ասել: Սակայն այս հիշատակարանից իմանում ենք. որ Հայոց վարդապե-
տարանը Ներսես Մշեցու ղեկավարությամբ դեռ Տարոնի Թարգմանչաց կամ Եղիազարու
վանքում էր: Եվ մի քանի ամիս հետո քաղաքական անբարենպաստ պայմանները ստի-
պում են վարդապետին իր աշակերտ Եսայի Նչեցու հետ մոտ մեկ տարի շրջել Քաջբերու-
նիքում և միայն 1282 թվականի գարնանը հաստատվել Վայոց ձորի Աղբերց-Գլաձոր
վանքում[20]:

14-րդ դարում ևս շարունակվում է վանքի դպրական գործունեությունը: Առաքել, Բար-
սեղ, Ստեփանոս. Հովհաննես գրիչները բազմաթիվ ընդօրինակություններ են կատարել:
Դրանցից միայն Առաքել գրչի երկու ձեռագիրն է հասել, մնացյալները միայն ձեռագրերի
հիշատակարանային վկայություններ են, և այդ ձեռագրերի ճակատագրերն առայժմ ան-
հայտ են:

1309 թ. Մշո Ս. Ղազարի վանքում ավարտվում է մի Ավետարան, որի գրչի անունը
եղծվել էր[21]:

Շարունակվող անբարի ժամանակներում Առաքել գրիչը «կենաւք տուայտանաւք»
ավարտել է մի Ավետարան. «... ի թուականութիւնս Հայոց ՉԿԱ (1312), ի գաւառիս Տարաւ-
նոյ, ի հոյակապ և հռչակաւոր ուխտիս և ի հրեշտակացոյց մենաստանիս Ղազարու վանք
կոչեցեալ, ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոցս»:

Ընդօրինակելիս գրչին օգնել են Հովհաննես և Ներսես գրիչները: Հովհաննեսը գրել է
գլխազարդերը, Ներսեսը՝ նախադրությունները: Նկարազարդումը ավարտվել է Կիլիկիա-
յում: Սարգիս քահանան նկարել է տվել չորս ավետարանիչների պատկերները: Նկարա-
զարդ էջերը Ս. Առաքելոց վանք է բերել Կարապետ քահանան: Մատթեոսի Ավետարանի
նախադրության վերջում, Ներսեսի հիշատակագրությունից հետո, այդ մասին ասվում է.
«...զՍարգիս քահանայ... որ զաւետարանիչներն ետ նկարել ի Կիլիկէ և յղարկեաց: Եւ բե-
րող պատկերացս զԿարապետ վանական քահանան. ամէն» (9ա)[22]:

Ներսես կրոնավորը ստանում է այս անգին ձեռագիրը և նվիրում Սուրբ Առաքելոց
վանքին ի հիշատակ հորը՝ Շահնշահին. և մորը՝ Տիկնացին[23]:

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում է պահվում այս նույն գրչի մեկ այլ ընդօրինակու-

---

[19] Մատենադարան, ձեռ. 1097, էջ 6բ:

[20] Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 11-12:

[21] Ս. Մուրադյան, Պ. Մարտիրոսյան, Ցուցակ ձեռագրաց Մշո Սուրբ Առաքելոց Թարգմանչաց վանքի և շրջակայից, Երուսաղէմ, 1967, 16: Այսուհետև՝ Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի:

[22] Ն. Պողարյան, Ցուցակ Երուսաղէմի, հ. Զ, էջ 510-511: Պողարյանը նկարազարդումը համարում է Սարգիս Պիծակի գործը, էջ 510:

[23] Նույն տեղում: Ձեռագիրը 1386 թ. բազմաթիվ փորձությունների միջով անցնելով՝ փոխադրվում է Երուսաղեմ և դրվում Սրբոց Հակոբյանց վանքին:

թյուն: Այս Ավետարանը նույնպես գրված է բոլորգրով, ունի համաբարբառներ և նախադրություններ: Նկարազարդ է: Վարժ գրիչ է Առաքելը, նա քաջածանոթ է Ավետարաններին, ուստի նկատում է գաղափար օրինակի բացթողումները: Հովհաննեսի Ավետարանի նախադրության վերջում գրում է. «Այս առաջ պիտի որ գրուէր, քան յիշատակն և չկայր յաւրինակն»: Սուրբ Առաքելոցի հովանու տակ Առաքել գրիչը ավարտում է իր հերթական ձեռագիրը Թումա քահանայի համար «Ի թուիս Հայոց ՉԿԳ(1314)»[24]:

Առաքել գրիչը Մանուել քահանայի համար 1315 թ. Եղիազարու վանքում ընդօրինակում է մի ուրիշ Ավետարան: Ավարտելով այն, գրիչը անօրենների հարձակումներից փախչելով գնում է Տփղիս՝ ձեռագիրը տանելով իր հետ[25]:

Մեկ տարի անց Առաքելը նորից Մշո Առաքելոց վանքում է և այստեղ ընդօրինակել է մի Ավետարան, միաբան Թադեոս կրոնավորի համար[26]:

1320 թ. Տարոնի Ս. Առաքելոց վանքում պահվող Առաքել կրոնավորի ընտիր օրինակից է գրվել Հովհաննես գրչի Ճաշոցը[27]: Այս նույն թվականին Բարսեղ գրիչը ընդօրինակել է մի Մաշտոց[28]: Ճաշոցի գրիչ Հովհաննեսը Խաչիկ քահանայի պատվերով արտագրում է մի Ավետարան «ի թվին ՉԿԳ(1324)»[29]:

Վասպուրականի Ջուլամերիկի Փոկան գյուղում է պահվել 1339 թ. Տարոնի Ս. Ղազար վանքում ընդօրինակված մի Ավետարան: Գրիչը Ստեփանոսն է. «Արդ, աղաչեմք զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ, յիշեսջիք ըզգծող սորա. զսուտանուն կրաւնաւոր զՍտեփանոս, որ զայս մագաղաթս ի շահ ածի»: Ընդօրինակման հետ գրիչը հաղթահարել է լուրջ դժվարություններ: Գերության մեջ եղած նախկին Ավետարանից ոչինչ չէր մնացել, «... թուխթ-թուխթ էր արած, ես լուացի, զինքս, ու շատ աշխատեցայ»: Լվացված մագաղաթի վրա ընդօրինակելը դժվար է, և շատ հմտություն և ջանքեր է պահանջում արտագրողից, որ թանաքը չտարածվի ու մյուս կողմը չանցնի: «Ըզգիրն դժուար կու առնէր»,- բողոքում է գրիչը[30]:

Միաբանները և առանձին անհատներ շարունակում են հարստացնել վանքի Մատենադարանը: Ներսես վարդապետը մի Աստվածաշունչ է ստանում[31]: Մարտիրոս քահանան 1362 թ. Ամիթում ստանում է մի Ավետարան, որը Մարտիրոս քահանայի որդի Ստեփանոսը նվիրում է Ս. Առաքելոց վանքին[32]:

1371 թ. թշնամին ավերում է Մշո դաշտը: Տարաշխարհիկ են դառնում և Ս. Ղազարի միաբանները: Փախուստից առաջ միաբանները եկեղեցում եղած այլ մասունքների հետ միասին շատ մատյաններ են թաքցրել: Դրանց մի մասը փչացել ու եղծվել են: Նման ձե-

---

[24] Լ. Ավետիսյան. Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, Վիեննա, 1970, էջ 63-64:

[25] Ցուցակ ձեռագրաց Առաքելոց վանքի, էջ 20-21:

[26] Անդ, էջ 21:

[27] Մատենադարան, ձեռ. 7451: Տե՛ս ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 164:

[28] Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 54:

[29] Նույն տեղում, էջ 55:

[30] ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 321:

[31] Բ. Սարգիսյան. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց ի Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա. Վենետիկ, 1914, էջ 126-127:

[32] Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի, էջ 28:

ռագրերից մեկը՝ մի Աստվածաշունչ, այս դեպքերից յոթ տարի անց նորոգվել է Պողոս
կրոնավորի միջոցներով[33]:
Լենկթեմուրյան մահ սփռող արշավանքների պատմությունը շարադրելիս Թովմա Մե-
ծոփեցին Մշո դաշտում կատարված դեպքերի մասին տեղեկությունների հավաստիությու-
նը հաստատելու համար լսում է նաև ականատես, Մշո Սուրբ Առաքելոց վանքի համբա-
վավոր ճգնավորին՝ Բարթուղիմեոսին[34]:
15-րդ դարը ևս Հայաստան աշխարհի համար անապահով մի ժամանակաշրջան էր:
Խորասանի տիրակալ Շահռուխի արյունալի արշավանքները ևս հայկական լեռնաշխար-
հում են ընթացել: Սակայն Մշո Եղիազարու միաբանությունը շարունակում է գործել:
Վանքի պատերի ներսում վանականները ձեռագրեր են ընդօրինակել, նորոգել և գնել:
Բարսեղ, Ղազար և Կարապետ գրիչները ընդօրինակում են մի Ժողովածու Բարսեղ
վարդապետի համար: Ձեռագիրն այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում
և կրում է 2690 համարը: Ծավալուն այս ձեռագիրը (386 թերթ) բովանդակում է Հովհան
Ոսկեբերանի, Եփրեմ Խուրին Ասորու, Վանական վարդապետի, Վարդան Արևելցու և Գե-
վորգ Սկևռացու մեկնությունները:

Գրիչներն ընդօրինակությունն ավարտում են «...ի Մեծ թուականիս Հայոց ՊԿԷ(1418)
ի դուռն Երկոտասան Սուրբ Առաքելոցս Եղիազարու վանացս»: Ուսումնական ձեռնարկը
Բարսեղ ստացողը նվիրում է իր ուսուցչին՝ «քաջ հռետորին՝ Սիրապիոն րաբունապետին»:
Մեկ տարի անց, ժողովածուն նկարազարդում և միաժամանակ կազմում է Հովհաննե-
սը: Գեղեցիկ լուսանցազարդեր, կիսախորաններ ունի ձեռագիրը: Բացի դրանից, մանրա-
նկարիչը արել է մեկ տերունական և Եփրեմ Խուրին Ասորու և Հովհան Ոսկեբերանի
պատկերներով նկարներ[35]:
Մշո Սուրբ Առաքելոց վանքում Գրիգոր Խլաթեցու աշակերտ Առաքել Բաղիշեցին
ուսուցչի մահից հետո գրում է նրան նվիրված «Գովասանութիւնը», 1422 թվականին, որի
սկզբի մի հատվածը մտել է «Հայսմավուրքի» մեջ[36]:
1439 թ. Հայրապետ գրիչը վերստին նորոգում է ցեցակեր, թուղթը բամբակ դարձած մի
Աստվածաշունչ, «... հազիւ կարացի ի կապ ածել»,- ասում է հմուտ գրիչը:
Մշո Առաքելոց վանքում պահվում էր Ավետարանի մի ընտիր օրինակ, որ բերվել էր
Կիլիկիայից: Դա 1301 թ. Դրազարկում կատարված Հովհաննես Արդրեցի և Թորոս փիլի-
սոփայի ընդօրինակությունն է, որը գրիչները նվիրել են Մշո Առաքելոց վանքի առաջնորդ
Աբրահամին[37]: Այս օրինակից են կատարված Բաղեշի 1450 թ., ինչպես նաև Մուշում
ընդօրինակված 1453 թ. ձեռագրերը[38]:

---

[33] Նույն տեղում, էջ 127-128:

[34] **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 32-33:

[35] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մ. Ա, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 350: Հմմտ. Մատենադարան, ձեռ. 2690, էջ 326:

[36] ԺԵ դարի հիշատակարաններ, 293, ծք. 1:

[37] Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի, էջ 41:

[38] Նույն տեղում, էջ 649: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մ. Բ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 33:

Մշո միաբան Անդրեաս քահանան 1464 թ. ընդօրինակել է մի Ավետարան, որը ունեցել է գեղեցիկ նկարազարդում: Ձեռագրում եղել են նաև 20 տերունական պատկերներ[39]:

1468 թ. Թավրիզից Ջահանշա խանը զորքով շարժվում է Ամիթ: Եվ մինչև Խորասան նրա զորքերը ճանապարհին ավերում են ամեն ինչ, բնակչությունը փախուստի է դիմում: «Եւ եկեալ եհաս ի գաւառն Տարաւնոյ, ի Դաշտն Մշոյ, և անդ բազում աւերս արարին բզաւրքն նորա, զի բազում էին և անհամար... Եւ դիմեցին ի վանքն Ղազարու և զլուսարարն խորովեցին ի կրակն և նահատակին»,- ցավով գրում է ականատես Մկրտիչ գրիչը[40]:

Իրար հաջորդող մահ սփռող պատերազմները ընդհատում, բայց չեն դադարեցնում վանքի գործունեությունը: Միաբանները ապրում են իրենց կյանքով, աղոթում են, կարդում և գրում, ինչպես նաև նորոգում թաքստոցներում վատ պայմաններում պահված և վնասված ձեռագրերը:

Հայտնի գրիչ-կազմող Կարապետ Բաղիշեցին Եղիա և Թորոս արքեպիսկոպոս առաջնորդների պատվերով Եղիազարի վանքում նորոգում է մի Ավետարան. «Զանի որ զի յոյժ հնացեալ էր կազմն, և էր առանց արծաթոյ և անտես և անվայելուչ...»:

Կազմի համար Կարապետին արծաթ են տալիս Չիչաք և Ռուսումշեն «համեստ կանայք»: Նորոգման աշխատանքները ավարտվում են «Ի վերջին դարիս և յետնում ժամանակիս... յորում է թվականութիւն մեր ՋԽԵ (1496)»[41]:

Բացի ձեռագրերի ընդօրինակությունից, միաբանների և անհատների միջոցներով շարունակվում է հարստանալ տեղի Մատենադարանը: Դանիել կրոնավորը 1401 թ. մի Մաշտոց է նվիրում, 1408 թ. Դավիթ եպիսկոպոս Ղլիճեցին 1325 թ. ընդօրինակված մի Ավետարան: Դավիթը ծագումով Մշեցի է, սարկավագ է եղել Մշո Առաքելոց վանքում: Հաստատվել է Կիլիկիայում, ձեռնադրվել: Արդեն եպիսկոպոս, Աշոտի գյուղում տեսնում է այս ձեռագիրը մի աշխարհական քահանայի մոտ: Եվ «ԺԶ (16) անգամ երթևեկ առնելով առ նա», մի կերպ գնում է Ավետարանն ու նվիրում Ս. Առաքելոցին: Ավետարանը ստանում է նվիրողի՝ «Ղլիճի Ավետարան անվանումը»: 1496 թ. Ավետարանը նորոգվում է[42]:

16-րդ դարում վանքի հետագա գործունեությունը շարունակելու համար լուրջ դժվարություններ են առաջանում, և միջոցներ ձեռք բերելու համար միաբանության անդամները 1517 թվականին հանգանակություններ են կատարում Ամիթում[43]:

Մշո Առաքելոց վանքում այս տարիներին փայլում էին երկու հռետորներ՝ Թորոս և Ղազար րաբունիները: Այս շրջանի առաջին ընդօրինակությունը Ղազար գրչի ձեռքով է կատարված: Գրիչը ուսանել է Սուրբ Առաքելոց վանքի դպրոցում, աշակերտել է Կիրակոս կրոնավորին և Ղազար րաբունուն: Ավետարանը գրվել է 1505 թ. Կիրակոս քահանայի համար[44]: Այն 20 տերունական պատկերներ ունեցող նկարազարդ մատյան է եղել:

---

[39] Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի, էջ 41:

[40] ԺԵ դարի հիշատակարաններ, մ. Բ, էջ 271:

[41] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, մ. Գ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 232:

[42] Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի, էջ 21: Այժմ ձեռագրի ճակատագիրն անհայտ է:

[43] Բ. Սարգիսյան, Մայր Ցուցակ Հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ, Վենետիկ, 1924 էջ 480-481:

[44] Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի, էջ 49:

1554 թ. այս հմուտ գրիչը ընդօրինակել է մի Գանձարան[45]: Այս տարիներին են ընդօրինակվել Կարապետ Բաղիշեցու «Հայսմավուրքը» (1526 թ.) և 1521 թ.՝ մի Ավետարան:

Այստեղ է ավարտվում նաև Ամիթում սկսված Աստվածատուր Ամիթեցու Սաղմոսարանը՝ 1547 թ.: Հովհաննես Գառնեցու խմբագրած ընտիր օրինակից արված այս ընդօրինակությունը կատարվել է Թադեոս արքեպիսկոպոսի պատվերով: Թադեոսը չի կարողանում գնել ձեռագիրը, քանի որ «ի Քրիստոս հանգուցեալ» էր: Այդ անում է Կարապետ եպիսկոպոսը ու նվիրում Մշո Սուրբ Առաքելոց վանքին: Գրչին ընդօրինակելիս օգնել է թուղթ կոկող Թորոս սարկավագը: Սաղմոսարանի նկարազարդումը արել է Սարգիս ծաղկողը 1570 թվականին. Ավետիս քահանայի պատվերով[46]:

Այս նույն գրիչը 1509 թ. Դավիթ եպիսկոպոսի համար Ամիթում ընդօրինակում և ծաղկում է «ոսկով և լաջվարդով և ակամբ պատուականօք» մի Աստվածաշունչ: Դավիթ եպիսկոպոսը տալիս է այն «ի Վանս Ղազար, որ է ի Տարաւն, ի լեառն Տիրոսի, որ է Մշո Սուրբ Առաքեալք»: Գեղեցիկ նկարազարդում է ունեցել այս ձեռագիրը: 30 տերունական պատկերներից բացի, եղել են բազմաթիվ լուսանցազարդեր և պատկերներ: Հինգ տարի անց Դավիթ եպիսկոպոսը իր նվիրած ձեռագիրը զարդարել է արծաթե կազմով. «Զստացող սուրբ Աւետարանիս զԴաւիթ եպիսկոպոս յիշեցէք ի Քրիստոս, որ ետ արծաթել զԱւետարանս ՌԽԴ(1595)» արձանագրությամբ[47]:

Աստվածատուր Ամթեցու աշակերտ Սիմոն սարկավագը 1588 թ. Ամիթում ընդօրինակել և նկարազարդել է տալիս մի Ավետարան և ինքն էլ կազմում է այն ու նվիրում Մշո Սուրբ Առաքելոց վանքին[48]:

Ամիթ-Տիգրանակերտի գրչության կենտրոնի հետ այս վանքի համագործակցությունը, որ սկսել էր 14-րդ դարից, շարունակվում է ոչ միայն այս, այլև հաջորդ դարերում:

Մշո Առաքելոց վանքի շատ միաբաններ իրենց ուսման թերին լրացրել են Ամիթի միաբանության դպրոցում, աշակերտել են այստեղ հայտնի րաբունապետ Սիրապիոն Ուռհայեցուն (17-րդ դ.): Ամիթում հայտնի Աստվածատուր, Սահակ գրիչներին ձեռագրեր են պատվիրել կամ Մշո Առաքելոց վանքից այստեղ են բերվել ու նորոգվել ձեռագրեր:

Մշո Առաքելոց վանքի սպասավորներից Բարսեղ վարդապետը Արծրունի գյուղից էր, սովորել էր Ամիթում: Իր ուսուցչի՝ Սիրապիոն րաբունապետի մահից հետո ստանձնել է տեղի վանքի վանահայրությունը և միաժամանակ Ս. Առաքելոց վանքի վերատեսուչն էր[49]:

Բարսեղ վարդապետը Լվովում տեսնում է մի 1401 թ. ընդօրինակության Նարեկի անմխիթար վիճակը ու նորոգել է տալիս Խաչատուր կրոնավորի միջոցներով 1605 թ: Նարեկը Անդրեասը, գրիչը նորոգելուց հետո, նաև կազմում է [50]:

---

[45] Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի, էջ 48-49, 52:

[46] Նույն տեղում, էջ 50-51:

[47] Նույն տեղում, էջ 56-57:

[48] Նույն տեղում, էջ 56-57:

[49] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Բ, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1978, էջ 499: Այսուհետև՝ ԺԷ դարի հիշատակարաններ:

[50] Մատենադարան, ձեռ. 3863, էջ 319բ: Հմմտ. ԺԷ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, ԺԷ դ., էջ 169:

1609 թ. Բարսեղ վարդապետը նորոգում է սուրբ ուխտը. «զպարիսպն բարձրացոյց, զեկեղեցւոյ խախտեալքն զամէնն շինեաց»: Սակայն շատ չանցած պարսիկները ասպատակում են Տարոնը, տարագրվում են նաև միաբանության անդամները: Հարաբերական դադարի պայմաններում միաբանության վանահայր Ամիթում նորոգել է տալիս Հոբի և Հովհաննու մեկնությունները պարունակող մի ժողովածու և վերադարձնում է վանք 1610 թ.[51]:

Շինարար միաբանության վանահայրը հարստացնում է նաև տեղի մատենադարանը: 1622 թ. գնում է Գրիգոր Տաթևացու Հարցմանց գիրքը և նվիրում Մշո Սուրբ Առաքելոց վանքին[52]: Բարսեղ վարդապետը Երուսաղեմ այցելության ժամանակ, 1632 թ., Սուրբ Հակոբ և Սուրբ Հարություն եկեղեցիներին նվիրում է մի Աստվածաշունչ[53]:

Վանքի սեփականությունն է դառնում նաև Մելքոն գրչի 1617 թ. Ամիթում Պողոս խոջայի պատվերով ընդօրինակված Ավետարանը: Պողոս խոջան, «որ էր ի յերկրէն Տարաւնոյ, որ Մուշ կոչի, ի գեղջէն Ցորկնոցու», նվիրելով ձեռագիրը, հորդորում է միաբաններին. «Լաւ պահէք զսուրբ Աւետարանս ի ջրոյ և ի հրոյ և զէշ տեղապահութենէն և ի տգիտաց կամ մանկանբարձ, տխմարաց ձեռս չտայք: Զլուսանցսն և զծաղիկսն կամ զպատկերսն և կամ աւելի՝ գիր խազխազեն, կամ թուփ ու պատկեր կտրեն, կամ անգիտաբար բևեռելով զխաչն ի վերայ զթուղթն ծակծակեն, այլ ամենայն դիմաւք լաւ և պատրաստութեամբ պահեցէք»[54]:

Կարապետ գրիչը տեսնելով վանքում պահվող մի Նարեկի անմխիթար վիճակը «զաստուածախօս գիրս փտեալ և ապականեալ, զոր ոչ յիշատակ կայր, ոչ թուական և ոչ գրողի և ստացողի անուն», վերստին նորոգում է այն «ի թուականիս Հայոց ՌԶԱ (1632)»[55]:

Դավիթ քահանայի համար Կարապետ եպիսկոպոսը ընդօրինակում է մագաղաթյա Սաղմոսարան Հովհաննես Գառնեցու խմբագրած ընտիր օրինակից և նկարազարդում է այն «... ի թուականութեան Հայոց ՌՁԷ (1636)... ի դուռն Եղիազարու վանուցն, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Երկոտասան Առաքելոցն և Սուրբ Լուսաւորչի»[56]:

Մշո Ս. Առաքելոց վանքում պահվող ձեռագրերից մեկում եղած 1637 թ. հիշատակարանում երեք այլ ձեռագրերի նորոգման մասին տեղեկություն է պահպանվել: Վանքի առաջնորդ Հովհաննեսը իր աշակերտ Մարգարի հետ «Գործք Առաքելոց, Երգ Երգոցի Մեկնութիւն և մի Աւետարան» է փրկում վնասվելուց[57]:

Սուրբ Եղիազարի վանքում պահվող Գավիթ Անհաղթի Սահմանքն ու Եսայի Նչեցու Քերականությունը պարունակող ժողովածուն բավականին քայքայված վիճակում էր: Ուսումնական ձեռնարկ հանդիսացող այս ձեռագիրը Հովհաննես րաբունին տալիս է Դանիել աբեղայի նորոգելու: 1644 թ. խիստ դժվարությամբ նորոգվում է ձեռագիրը և հանձնվում պատվիրատուին: Հիշատակարանում մեկ առ մեկ հիշվում են առավել հայտնի մի-

---

[51] ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 390:

[52] ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 24-25:

[53] Նույն տեղում, էջ 499:

[54] Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի, էջ 61-62:

[55] Նույն տեղում, էջ 68:

[56] Նույն տեղում, էջ 161-162:

[57] Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 83:

աբանները՝ Կարապետ վարդապետը. Ավետիսը. երաժիշտ Մարգարը և Հովհաննեսի
աշակերտներ Տեր Առաքելը և Տեր Խաչատուրը[58]:
20 տարի Երուսաղեմում սպասավորած Դանիել աբեղան մի որոշ ժամանակ հանգրվա-
նել է Մշո Սուրբ Առաքելոց վանքում: Հովհաննես րաբունապետի առաջնորդության տա-
րիներին նա վանքի մատենադարանին է նվիրում Գրիգոր Տաթևացու «Հարցմանց գիրք»
և ընդօրինակում մի մագաղաթյա Ավետարան, նկարազարդում, կազմում և նորից տալիս
է ի պահ վանքին «... ի թվին ՌՂԳ (1644)»[59]:
Դանիել աբեղան 1654 թ. նորոգում է գրադաշտը գունափոխված մի Ավետարան[60]:
Դավիթ կրոնավորը վանքում պահվող Դավիթ Ղլիճեցու Ավետարանը երրորդ անգամ քե-
րում է նորոգելու. քանի որ «զսև գիրն յոյժ թուցեալ էր, որ ի կարդալ չէր իգար»: Նույն
Դանիել կազմողը ավարտում է նորոգումը «... ի թվին Հայոց ՌՂԵ (1646)»[61]:
Հովհաննես րաբունին ոչ միայն նորոգել է տալիս, այլև գնում է ու նվիրում ձեռագրեր:
«Վերատեսուչ իւր վիճակին, որ Տարօնոյ Դաշտ ասին եւ Ղազարու վանք յորջորջին...»
Հովհաննեսի պատվերով Ամիթում Խաչատուր գրիչը ընդօրինակում է մի Աստվածա-
շունչ: Ստացողի այս հիշատակարանի միայն ժամանակն է հայտնի: Տեղը անհայտ այս
հիշատակարանում նույն երաժիշտ Մարգարն է, նույն Ավետիսը, նույն Հովհաննեսի աշա-
կերտները՝ Խաչատուրն ու Առաքելը, ինչ 1644 թ. Դանիել աբեղայի՝ տեղը հատնի հիշա-
տակարանի միաբանների անունները: Նման կրկնությունը ենթադրել է տալիս, որ այս
Աստվածաշունչն ևս նվիրվել է Սուրբ Առաքելոց վանքին[62]:
Դարավերջին վանքի առաջնորդ Վարդան Բաղիշեցու պատվերով 1296 թ. Քաջբերու-
նիքում ընդօրինակված և 1361 թ. Դանիել կրոնավորի կողմից վանքին նվիրված Մաշտո-
ցը նորոգում է Սահակ Վանեցին: 1671 թ. ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ
հմուտ գրիչ կազմարարը նորոգել է ևս 30 ձեռագիր[63]:
Երկու տարի անց Առաքելոց վանքում Սահակ Վանեցին ընդօրինակում է մի Ավետա-
րան, որը նաև նկարազարդ է: Ավետարանիչների ավանդական նկարներից և ավետա-
րանառաջներից զատ ձեռագրում կան նաև 8 տերունական պատկերներ: Մինչև Մեծ
եղեռնը այն պահվել է Մշո Փիրաշեն գյուղում: Այժմ պահվում է Մաշտոցի անվան Մա-
տենադարանում (ձեռ. 8975): Հիշատակարանից իմանում ենք, որ Վանեցին որդին է Ամիր-
ջանի և Զինարի, ինչպես նաև նա ինքն է նկարազարդել մատյանը: Վանեցին միաբանութ-
յան անդամ չէ, նրան Վանից հրավիրել է առաջնորդ Վարդան Բաղիշեցին ձեռագրեր
ընդօրինակելու և նորոգելու. «... նստոյց ի վանս Ղազարու և նորին ԽԴ(44) գիրք վերստին
ետ կազմել և նորոգել»: Արագագիր է Սահակ գրիչը: Մեկ ամսից էլ քիչ ժամանակում նա
ավարտում է իր ձեռագիրը «...յերկիրն Տարաւնոյ, որ այժմ Մուշ կոչի, ի վանս Եղիազարու,

58 Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի, էջ 18:

59 Նույն տեղում, էջ 67-68:

60 Նույն տեղում, էջ 71:

61 Նույն տեղում:

62 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1984, 237-238:

63 Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի, էջ 12:

ի դուռն Երկոտասան Առաքելոցն... ի թվին Հայոց ՌՃԻԲ (1673)»[64]:

18-րդ դարի ընդամենը մի ձեռագրի ընդօրինակման մասին վկայություն կա, որը 1714 թ. Հակոբ քահանայի գրած մի Մաշտոցն է[65]:

Մշո Ս. Առաքելոց վանքի գրչական գործունեության մեր վկայությունները սկսվում են 13-րդ դարի 70-ական թվականներից և գրեթե առանց ընդմիջման շարունակվում են շուրջ հինգ դար: Երկու տասնյակից ավելի գրիչները ամենօրյա գրչական աշխատանք են կատարել, և հարյուրավոր ձեռագրեր պետք է լինեին ոչ միայն Մաշտոցի անվան Մատենադարանում, այլև աշխարհի հայտնի հայերեն ձեռագրական հավաքածուներում: Մինչև Մեծ եղեռնը կազմվել է Մշո Ս. Առաքելոց վանքի և նրա շրջակայքում պահվող ձեռագրերի ցուցակը: Ըստ կազմողների, պահվող ձեռագրերը եղել են 156-ը: Վանքում պահվող ձեռագրերը 126 են եղել, որոնցից 90-ը ունեցել են հիշատակարաններ: Տեղում գրվածները 9 են[66]: Մեզ են հասել ընդամենը 13 ձեռագիր, որոնց մեծ մասը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, մեկը՝ Երուսաղեմում, մեկն էլ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում:

Եղեռնի ժամանակ Մշո դաշտում ամենից ավելի տուժել է այս վանքը, քանի որ նրա միաբանները գործուն մասնակցություն են ունեցել ինքնապաշտպանական մարտերին: 1916 թ. Գևորգ Կաթողիկոսի հրամանով ստեղծվում է հատուկ հանձնաժողով՝ Մշո Սուրբ Առաքելոց և Սուրբ Կարապետ վանքերի թաքցված ժառանգությունը գտնելու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին տեղափոխելու համար: Հանձնաժողովը դատարկված է գտնում Սուրբ Առաքելոցի թաքստոցները և գրեթե դատարկաձեռն վերադառնում Մայր Աթոռ: Ամբողջ Մուշի տարածքից բերվում է 99 ձեռագիր: 1938 թ. Թիֆլիսի Ազգագրական ընկերությունից ստացվում է երեք այլ ձեռագրեր, որոնցից մեկը՝ Մշո հռչակավոր Ճառընտիրն է[67]:

Մշո Առաքելոց վանքն այսօր վերածվել է ավերակի, և նրա երբեմնի շեն կյանքի միակ վկան, գոյությունը հաստատող միակ վկայությունը այսօր մնում են այնտեղից մեզ հասած ձեռագրերը, ինչպես նաև հիշատակարանային տվյալներ պարունակող ցուցակը:

---

[64] Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի, էջ 176, Մատենադարան, ձեռ. 8975:

[65] Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 83:

[66] Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի:

[67] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի (համառոտ), հ. Ա, Երևան, 1965: Օ. Եգանյան, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, էջ 106:

*ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ԿՈՄԻՏԱՍԸ ԱՔՍՈՐՈՒՄ. 1915 ԹՎԱԿԱՆ (ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

*«...Ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան...»:*

Մովսես Խորենացի

**Հունվար 1/14, Կ. Պոլիս.** - Ուսանող Աղավնի Մեսրոպյանը իր ընկերուհիների հետ այցելում է Կոմիտաս վարդապետին՝ շնորհավորելու նրա Ամանորը:



«Այդ օրը,- գրում է Ա. Մեսրոպյանը իր հուշերում,- Կոմիտասի շեն տունը փոխված էր... երգ ու նվագ երաժշտություն լոել էին: Երաժիշտը շրջապատված էր իր մտերիմ ընկերներով, որոնցմե Սիամանթոն կխոսեր զորակոչի նորանոր իրադեններու (հրամաններու) մասին:

«Թանկագին բարեկամ,- ասում է Սիամանթոն Կոմիտասին,- ես թուրքին զինվոր չեմ երթար... Կյանքիս կտակը քեզ...

-Ոչ,- պատասխանում է Կոմիտասը,- ես քեզ թուրք բոնակալներուն զինվոր տվող չեմ, ոչ ալ խոռամանկ թուրք կառավարությունը մեզ յեսները ճակատ քշող նլ»:

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Երևան, 1960, էջ 303:

**Հունվար 2/15, ուրբաթ, Կ. Պոլիս.** - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը իր նորակազմ երգչախմբի անդամների մասնակցությամբ անց է կացնում իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

Մ. Թումանյան, «Պատարագի պատմությունը», տե՛ս «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

**Հունվար 3/16, Կ. Պոլիս.** - Կոմիտասը դոկտոր Միոսյանի ալբոմում գրառում է «Տողիկ» խորագրով ստեղծագործության նոտագրության երկտողը:

Մարգարիտ Բաբայանը վերջինիս ալբոմից արտատպում է այս «Տողիկը» և 1932 թվականին «Անտիպ մեղեդի մը Կոմիտաս վարդապետեն» մակագրությամբ հրապարակում է Կ. Պոլսի «Ընդարձակ տարեցույց» Ս. Փրկչի հիվանդանոցի» պարբերականում իր «Հուշեր Կոմիտաս վարդապետին շուրջը» խորագրով հոդվածում:

Ժամանակին նա «Տողիկը» ներկայացնում է «արվեստագետ պ. Հարություն Սինանյանին» և ցանկանում է իմանալ նրա կարծիքը: «Երաժշտական այս պատառիկը,- ասել է Սինանյանը,- կարճ՝ բայց փխրուն ու մելամաղձոտ մեղեդի մըն է, որ եթե երկու անգամ նվագվի, ազգային եղերգության մը ոգին կարտահայտե, վայրկյան մը թախծության խռովքով թաղթավուն»:

«Ընդարձակ օրացույց Ս. Փրկիչ հիվանդանոցի», Կ. Պոլիս, 1932, էջ 134:
ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարան:

**Հունվար 9/22 ուրբաթ, Կ. Պոլիս.** - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը իր նորակազմ երգչախմբի (25-30 անձ) մասնակցությամբ անց է կացնում իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

**Մ. Թումաճան**, «Պատարագի պատմությունը», տես «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

**Հունվար 16/29, ուրբաթ, Կ. Պոլիս.** - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը իր նորակազմ երգչախմբի մասնակցությամբ անց է կացնում իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

**Մ. Թումաճան**, «Պատարագի պատմությունը», տես «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

**Հունվար 23/5 փետրվար, ուրբաթ, Կ. Պոլիս.** - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը իր նորակազմ երգչախմբի մասնակցությամբ վարում է իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

**Մ. Թումաճան**, «Պատարագի պատմությունը», տես «Կոմիտասական» գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

**Հունվար 29/11 փետրվար, Կ. Պոլիս.** - «Վարդանանց տոնի առիթով Ազգային ժողովասրահի մեջ Կեդրոնական վարժարանի կողմից տրված հանդեսին մասնակցում է Կոմիտաս վարդապետը և «իր գրած «Նորահրաշով» և ուրիշ երգերով հմայում է ունկնդիրներին»:

«Օրացույց», Ս. Էջմիածին, 1915, 29 հունվարի:
«Տաճար», Կ. Պոլիս, 1915, N 21, էջ 455:

**Հունվար 30/12 փետրվար, ուրբաթ, Կ. Պոլիս.** - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի մասնակցությամբ վարում է իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

**Մ. Թումաճան**, «Պատարագի պատմությունը», տես «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

**Փետրվարի սկիզբ, Ադանա.** - Թուրք բարձրաստիճան մի պաշտոնյա իր մոտ է հրավիրում քաղաքի հարուստ հայերից մեկին և ասում է նրան. «Հայոց գլխուն նոր փոթորիկ պիտի պայթի»:

**Գրիգորիս ծ. վ. Պալաքյան, «Հայ Գողգոթան»**, Երևան, 1991, էջ 74:

**Փետրվար 6/19. ուրբաթ. Կ. Պոլիս.** - Ղալաթիո եկեղեցուն կից սրահի մեջ Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի անդամների մասնակցությամբ իրականացնում է իր հեղինակած «Պատարագի» մշակման ներթական փորձը:

**Մ. Թումանյան.** «Պատարագի պատմությունը», տես «Կոմիտասական», գիրք 1, 1969, էջ 246:

**Փետրվար [12-13], Կ. Պոլիս.** - Իթթիհատի կենտրոնում Թալեաթի նախագահությամբ գումարվում է նիստ: Գլխավոր քարտուղար Նազըմ բեյը իր զեկուցման մեջ պահանջում է. «Պետք է հայ ազգը արմատախիլ ընել. մեր հողին վրա անհատ մը անգամ չմնա. հայ անունը մոռցվի... Հայերեն անհատ մը չմնալու պայմանով բնաջնջումը անհրաժեշտ է»: Ջարդը կազմակերպելու նպատակով ստեղծվում է «Եռյակ գործադիր հանձնախումբ» (Բեհաեդդին Շաքիր, Նազըմ բեյ Սելանիկլի, Շյուքրի բեյ): Հանձնախմբի որոշմամբ բանտից ազատվում ու հավաքագրվում են «Թեշքիաթը մահուսնե» (Հատուկ կազմակերպություն) կոչվող խմբերը, որոնք պետք է իրականացնեին բռնագաղթն ու ջարդը:

**Մեվլան Զադե Րիֆաթ.** «Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը...», Երևան, 1990, էջ 98: **«Ազդակ»**, Բեյրութ, 1964, N 40:

**Փետրվար 13/26, ուրբաթ, Կ. Պոլիս.** - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի մասնակցությամբ իրականացնում է իր հեղինակած «Պատարագի» մշակման ներթական փորձը:

**Մ. Թումանյան.** «Պատարագի պատմությունը», տես «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

**Փետրվար 14/27, Կ. Պոլիս.** - «Տաճար» պարբերականի ներթական համարում տրվում է հաղորդագրություն «Կեդրոնական վարժարանի կողմե, ազգային ժողովարանում» Վարդանանց տոնի առիթով տրված հանդեսի մասին, որին մասնակցել է նաև Տ. Կոմիտաս վարդապետը, իր երգած «Նորահրաշով» և ուրիշ երգերով հմայելով ունկնդիրներին:

**«Տաճար»**, Կ. Պոլիս, 1915, համր 21, էջ 455:

**Փետրվար 18, Կ. Պոլիս.** - Իթթիհատական կենտրոնը («Ջեմիեթ») գաղտնի հրահանգով հանձնարարում է. «Չպիտի թույլատրվի, որ հայ մը օգնության և պաշտպանության արժանանա»:

**Անտոնյան Ա.**, «Մեծ ոճիրը», Բոստոն, 1921, էջ 130-133:
**«Հայկական Սովետական Հանրագիտարան»**, հ. 7, էջ 425:

**Փետրվար 25/10 մարտ, Կ. Պոլիս.** - Պեհաէտտին Շաքիրեն նամակով հայտնում է. «Զինվորական հրամանատարությանը հարկ եղած հրահանգները տրված են սպանության գործերու կարգադրության համար»:

**«Ազդակ»**, Բեյրութ, 1964, համր 40:

**Փետրվար 27/12 մարտ, ուրբաթ, Կ. Պոլիս.** - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի մասնակցությամբ իրականացնում է իր մշակած «Պատարագի» մշակման ներթական փորձը:

**Մ. Թումանյան.** «Պատարագի պատմությունը», տես «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

**Մարտ 2, Ադանա.** - Կիլիկիո Կաթողիկոս Սահակ Բ-ն գաղտնի ճանապարհով լուր ստանալով հայության հանդեպ Թուրքիայի կառավարության կողմից նախապատրաստվող տեղահանության մասին, շտապով այցելում է Սիրիայում և Պաղեստինում բանակի հրամանատար Ճեմալ պեյին և խնդրում է լրացուցիչ տեղեկություններ իր ստացած լուրերի մասին:

Գրիգորիս ծ. վ. Պալաքյան, «Հայ Գողգոթան», Երևան, 1991, էջ 75-77:

**Մարտ [3-4], Ադանա.** - Կիլիկիո Կաթողիկոս Սահակ Բ-ն խորհում է իր ստացած լուրերի մասին տեղյակ պահել Զավեն Պատրիարքին: Գիշերը իր մոտ է կանչում հույժ վստահելի վաճառական Վարդան Փրեյանին և հանձնարարում է նրան տեղյակ պահել Կ. Պոլսո Պատրիարք Զավեն Տեր-Եղյանին Թուրքիայում նախապատրաստվող հայերի տեղահանության ու կոտորածի մասին:

Նույն տեղում:

**Մարտ [2-6], Կ. Պոլիս.** - «Հովակիմյան տուն» նորաբաց տպարանում լույս է տեսնում Թեոդիկի «Ամենուն տարեցույց» տարեգրքի հերթական՝ ութերորդ հատորը, որտեղ «Հայ արվեստը երեկ և այսօր» ընդհանուր խորագրի տակ զետեղված է «Կոմիտաս Վ. ի Բարիզ» հաղորդագրությունը՝ նվիրված 1914 թվականի հունիսի 1-ին Փարիզում երաժշտական միջազգային գիտաժողովում Կոմիտաս վարդապետի կարդացած բանախոսություններին:

Տարեգրքում հրապարակված է նաև Կոմիտասի «Բժշկություն երաժշտությամբ» (մեկ էջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 2359 համարի ձեռագրեն) վերնագրով հոդվածը՝ գրված 1914 թվականին:

Հատորում տեղ է գտել նաև Կոմիտասի մշակած «Ով մեծասքանչ դու լեզու» և «Էրի, էրի, էրի ջան» ժողովրդական երգերի նոտագրությունները:

Թեոդիկ, «Ամենուն տարեցույց», Կ. Պոլիս, 1915, էջ 141-151:

**Փետրվար-մարտ, Կ. Պոլիս.** - Կոմիտասը լուսանկարվում է Թերլեմեզյանի արվեստանոցում.

Աջ ձեռքը հենած աթոռի կռնակին...

«Զվարթնոց», 1925, հմր 6-7, էջ 255:

**Մարտ 6/19, Կ. Պոլիս.** - Ղալաթիո եկեղեցուն կից սրահում Կոմիտաս վարդապետը նորակազմ երգչախմբի անդամների մասնակցությամբ անց է կացնում իր հեղինակած «Պատարագի» մշակման հերթական փորձը:

Ռ. Թումաճան, «Պատարագի պատմությունը», տե՛ս «Կոմիտասական», գիրք 1, Երևան, 1969, էջ 246:

**Մարտ 8/21, Կ. Պոլիս.** - Կիլիկիո Սահակ Բ Կաթողիկոսի հանձնակատար Վարդան Փրեյանը, հաղթահարելով մի շարք արգելքներ, հասնում է Պոլիս և տեղահանության վտանգալի լուրը հայտնում է Զավեն Պատրիարքին:

Գրիգորիս ծ. վ. Պալաքյան, «Հայ Գողգոթան», Երևան, 1991, էջ 76:

**Հունվար-մարտի սկիզբ. Կ. Պոլիս.** - Զինվորագրության պատճառով երգչախմբի ցրվելուց հետո, ստեղծված կացության թելադրանքով Կոմիտասը որոշում է «Պատարագի երգեցողությունները նոր ի նորո շարադրել» և իր նոր կազմած երգչախմբի կարողությունը նկատի առնելով «Ցերեկը գիշերին խառնելով փոքրիկ օրգանի առջև գլուխը հակած, մոմիցը պլպլացող լույսով ան գրեց ու ջնջեց, գրեց ու ջնջեց, մինչև որ լսեց հինավուրց այս նրգուն մինչև իր որոնած նվաղած ձայները...

Իր աշակերտները նույնպես խանդավառ ամեն ուրբաթ հինգ կաճառայարևին հասնել Ղալաթիո եկեղեցին, հարակից մեկ սենյակ և լսել ջանալու այս պարզ եղանակներում թագնված այնքան հուզող ներդաշնակությունները»:

«Կոմիտասական», գիրք I, Երևան, 1969, էջ 246:

**Մարտ [9-10], Կ. Պոլիս.** - Կիլիկիայից ստացված փաստաց հարուցող, հայության պետ-դաժանմանը վերաբերվող լուրի առթիվ, Զավեն Պատրիարքը այցելում է Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմին: Վերջինս հանգստացնում է պատրիարքին՝ հավաստելով ստացված լուրի իբրև թե անհիմն լինելը:

Պատրիարքը իր ստացած տեղեկությունը հայտնում է Կիլիկիո Կաթողիկոս Սահակ Բ-ին:

Պալաքյան Գ., «Հայ Գողգոթան», Երևան, 1991, էջ 76:

**Մարտի սկիզբ, Կ. Պոլիս.** - «Երկու-երեք ամիսների ընթացքում,- գրում է Միհրան Թումաճանը,- Պատարագի խմբական մասը ամբողջովին վերածնվում էր Կոմիտաս վարդապետի կողմից... Մնում էր սարկավագի և քահանայի բաժինները միացնելու ընդհանուր փորձը, որը պետք է իրականացվեր Ծաղկազարդի կիրակի օրը»:

Մ. Թումաճան, «Պատարագի պատմությունը»: Տե՛ս «Կոմիտասական», գիրք առաջին, Ե., 1969, էջ 247:

**Մարտ 13/26, Կ. Պոլիս.** - Սիամանթոն այցելում է Կոմիտասին: Զրույցի հիմնական թեման հանդիսանում է թուրք ոստիկանության կողմից «Ամենուն տարեցրքի խմբագիր Թեոդիկի ձերբակալությունը: «Կարծես թե անոնք, - գրում է զրույցին ներկա, հուշագիր Արավենի Մեսրոպյանը,- կխոկային ահավոր տեսլապատկերի առջև... Տարիներ ի վեր առաջին անգամ ըլլալով Կոմիտասը կտեսնեինք այդ աստիճան ընկճված»:

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Ե., 1960, էջ 304:

**Հունվար մինչև 14 մարտ, Կ. Պոլիս.** - Կոմիտասի աշակերտներն ու սաները «ամեն ուրբաթ հինգ,- գրում է խմբի մասնակից Միհրան Թումաճանը,- կաճառայարևին հասնել Ղալաթիո եկեղեցիին հարակից մեկ սենյակը, սորվելու և լսել ջանալու այդ պարզ եղանակներու մեջ թագնված այնքան հուզող ներդաշնակությունները: Երբեմն շաբաթու մեջ ալ սաները ու աշակերտներեն ոմանք կհավաքվեին վարդապետի տանը և նույն օրը կամ գիշերը շարադրված սևագրություններուն վրա երգի փորձեր կընեին»:

Այսպես երկու կամ երեք ամսվա ընթացքին «Պատարագի խմբական մասը ամբողջովին վերծանված էր արդեն: Կմնար սարկավագներու և միներգի» բաժինները, որ առանձին սերտած էին, միացնելու ընդհանուր փորձը:

«Կոմիտասական», գիրք առաջին, Ե., 1969, էջ 247:

**Մարտ [14/27], Կ. Պոլիս.** - Թալեաթի, թագաժառանգ Մեջիտ իշխանի և բարձրաստիճան այլ անձանց ներկայությամբ տեղի է ունենում «Թուրք օջաղի» հերթական գրականերաժշտական հանդեսը:

Բացման խոսքով հանդես է գալիս «Թուրք օջաղի» նախագահ Համդուլլահ Սուպհի աքեյը: Ներկայացնելով իր հետ բեմահարթակ եկած Կոմիտաս վարդապետին, բանախոսը անդրադառնում է Կոմիտասի մեծությանը, բարձր է գնահատում նրա գործադրած ջանքերը և ցուցաբերած եռանդը գեղջուկ երգերի մշակման գործում: Արժեքավորելով նրա վաստակը՝ բանախոսը կոչ է անում թուրք հոգևորականությանը հետևել նրա օրինակին: Այնուհետև խոսելով Թուրքիայի մշակութային կյանքում հայ մտավորականության ունեցած դերի մասին, ըստ ամենայնի բարձր է գնահատում ներդրված ավանդը:

Նախագահի բացման խոսքից հետո դաշնամուրի նվագակցությամբ ելույթ է ունենում Կոմիտասը և կատարում է «Կռունկ», «Հով արեք սարեր ջան» և «Կալի երգ» մշակումները: «Մաշալլա՜հ, Աստված չար աչքից հեռու պահի...», դահլիճից լսվում են թուրքերեն բացականչություններ:

Ըստ հուշագրողի հավաստիացման, Կոմիտասը կարդացել է բանախոսություն և կատարել է իր մշակած թուրքական ժողովրդական երգերից մի քանիսը:

«Էջմիածին», 1968, N 3, էջ 46-48, «Արածանի», Փարիզ, 1943, էջ 66:

**Մարտ 15/28, Ծաղկազարդի կիրակի, Կ. Պոլիս.** - Կոմիտասի ղեկավարած երգչախումբը հավաքվում է կենտրոնական վարժարանի ամֆիթատրոնում. կատարվում է «Պատարագի» վերջին միացյալ փորձը: «Այդ օրը,- պատմում է փորձի մասնակիցներից մեկը,- Պատարագի ամբողջական փորձը սկսավ հիշտորեն ընթանալ: Հասած էինք վերջավորության՝ գոհանամք զՔեզ Տեր-ին: Սկզբնական երկու մասերը մեջընդմեջ, մեներգ և խմբերգ, զմայլելիորեն շաղախված կերգվեին»:

«Կոմիտասական», գիրք առաջին, Ե., 1969, էջ 247:

**Մարտի սկզբից մինչև 20, Կ. Պոլիս.** - Զարուհի Գալեմքյարյանը Դանիել Վարուժանին իր երկյուղն է հայտնում իթթիհատականների «ներքին զգացումներուն և հայատյաց բնազդներուն» վերաբերյալ: Վարուժանը նրան հանգստացնում է: «Տակավին նախորդ երեկո,- ասում է նա,- Զոհրապը Թալեաթին հետ ծունկ-ծունկի բոքեր խաղացեր են, լավ են իթթիհատական տրամադրությունները» մեր վերաբերյալ:

Գալեմքյարյան Զարուհի, «Կյանքիս ճամբեն», Անթիլիաս, 1952, էջ 98-100:

**Մարտ 2/13 ապրիլ, (հ.տ) Ծրագալույց Զատկի, Կ. Պոլիս.** - Ղալաթիո եկեղեցու կամարների տակ առաջին անգամ Կոմիտասի ղեկավարած 25-30 հոգուց բաղկացած երգչախումբը հնչեցնում է «Հինավուրց երգերու Պատարագը».- գրում է Կոմիտասի սան, Պատարագի մասնակից Միհրան Թումաճանը:

«Էջմիածին», 1968, համ. 3, էջ 44-45:
«Կոմիտասական», գիրք առաջին, 1969, էջ 248-249:

**Մարտ 22/4 (ն. տ.) ապրիլ (կիրակի), Կ. Պոլիս.** - Հայության խուռն բազմության ներկայությամբ Կոմիտաս վարդապետի ղեկավարած երգչախումբը Ղալաթիո եկեղեցու կամարների տակ կատարում է Ս. Հարության Պատարագի երաժշտական դասը:

«...Վարդապետի հրաշափառ շունչով օծված հինավուրց երգերու Պատարագը,- գրում է Պատարագի ունկնդիր Հ. Ճ. Սիրունին,- մատուցվեցավ Ղալաթիո եկեղեցիի հնաբույր կամարներուն տակ...»:

«Էջմիածին», 1969, հմր 3, էջ 45:

**Մարտ 23/5 ապրիլ, Կ. Պոլիս.** - Զատկի երկրորդ օրը Իտալական Թեվտոնիա սրահի մեջ տեղի է ունենում Կոմիտաս վարդապետի համերգը, ուր ներկաների հոգին գինովանում էր Կոմիտասի անուշ երգերով:

«Էջմիածին», 1968, հմր 3, էջ 44:

**Մարտ 15-30, Կ. Պոլիս.** - Արտատպած «Սաբահ» թուրքական լրագրի մեջ թուրք մտավորական Համդուլլահ Սուպհին դրվատական հոդված է հրապարակում մարտի 14/27-ին «Թուրք օջախում» Կոմիտաս վարդապետի կարդացած բանախոսության մասին:

«Էջմիածին» 1968, հմր 3, էջ 47-49:

**Ապրիլ 2/15, Կ. Պոլիս.** - Թալեաթի, Էնվերի և Նազըմ բեյի ստորագրությամբ հրաման է ուղարկվում տեղական իշխանություններին՝ հայերին բնաջնջելու և արաբական անապատները քշելու վերաբերյալ:

«Հայ ժողովրդի պատմություն», Ե., 1981, հ. 6, էջ 553:

**Ապրիլ 4/17, Կ. Պոլիս.** - Ծրագալույցի Ավագ շաբաթ երեկոյան Կ. Պոլսի Ղալաթիո եկեղեցում առաջին անգամ կատարվում է Կոմիտաս վարդապետի նոր մշակած «Պատարագը»:

Կոմիտաս, «Պատարագ», Ե., 1997, հ. 7, էջ 123-124:

**Ապրիլ 7/20, Էջմիածին.** - Տաճկաց Հայաստանում կիրառվող դաժան կոտորածները և կաթողիկոսի հասցեով տեղ հասած վշտախառն դիմումները հիմք են դառնում, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ն հեռագրով պաշտպանական դիմումներ հղի Կովկասի փոխարքա կոմս Վարանցով-Դաշկովին, Ռուսաց Արտաքին գործոց նախարար Սազանովին, Իտալիայի թագավոր Վիկտոր Էմանուել Երրորդին, Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնին, Անգլիայի թագավոր Գևորգ Չորրորդին, Ֆրանսիայի հանրապետության նախագահ Պուանկարեին:

«Արարատ», Էջմ. ամիս, 1915, Բ-Գ, էջ 170-175:

**Ապրիլ 7/20, երեքշաբթի, Կ. Պոլիս.** - Նկատի ունենալով, որ քաղաքական իրավիճակի պատճառով Կ. Պոլսում դրությունը լարված է, Էսայան սանուց միությունը նպատակահարմար է գտնում թուրք վիրավոր զինվորների օգտին Կոմիտասի մասնակցությամբ տրվելիք ցերեկույթը հետաձգել:

«Գացի Կոմիտասին ալ իմացնել այդ օրը,- գրում է Սիրունին,- թե հետաձգած ենք հանդեսը: Լավ եք ըրեր, մըմնջեց, ու այլ ուրիշ խոսք չըսավ»:

«Էջմիածին», 1968, N 1, էջ 17:

**Ապրիլ 11/24, Կ. Պոլիս.** - Վաղ առավոտյան Սիրունին վստահելի աղբյուրներից լուր առնելով, որ այդ օրը «պիտի բացվեն ոստիկանատներուն դրկված վոց պահարաններ», շտապում է Կոմիտասի մոտ: «Գնշ երազ եմ տեսած Սիրունի,- ասում է նրան Կոմիտասը,- այսօր անպատճառ բան մը պիտի պատահի... Թող պատահի,- ասում է Կոմիտասը,- իրմն բաժանված պտտում»:

«Հոգեկան իր անդորրությունը,- շարունակում է Սիրունին,- կապշեցնն զիս: Քիչ անգամ մարդը կրնա այդքան քաջ ըլլալ փոթորիկը մոտեցած ատեն»:

**«Էջմիածին»**, 1968, N 1, էջ 48:

Հ. Սիրունու բերած տագնապալից լուրը ստանալուց հետո, օրվա երկրորդ կեսին, Կոմիտասը երգչախմբի փորձը ղեկավարելու համար մեկնում է Ղալաթիո եկեղեցի:

Կոմիտասը երգչախումբը նախապատրաստում էր, Կարմիր կիրակիին՝ ապրիլի 12-ին, Ղալաթիո եկեղեցում տրվելիք հանդիսավոր Պատարագի համար:

«Մութը իջած էր և ամեն ոք կաճապարեր իր տունը հասնիլը,- պատմում է Միհրան Թումաճանը... Իսկ անոնք, որ Բերայի կողմերը կբնակեին, վարդապետի շուրջը բոլորված, խոսալով ու խնդալով կբարձրանային Ղալաթիո զառիվերեն, դեպի Բերա և Բանկալթ»:

**Թենոյիկ**, «Ամենուն տարեցույց», 1926, **«Էջմիածին»**, 1968, N 4, էջ 28:

**Ապրիլ 11/24, Կ. Պոլիս.** - Զավեն Պատրիարքին այցելում է գերմանական դեսպանատան պաշտոնյա դոկտոր Մորթմանը, որը ի պաշտոնե պետք է կապ պահպաներ Պատրիարքարանի հետ: Վերջինս առաջարկում է Պատրիարքին հայ, թուրք և գերմանացի հանձնաժողովներ ուղարկել գավառները, համերաշխության կապերը ամրապնդելու համար:

**«Էջմիածին»**, 1968, N 4, էջ 29:

**Ապրիլ 11/24, Կ. Պոլիս.** - Գիշերը ոստիկանները ձերբակալում են Կոմիտաս վարդապետին, տանում են կենտրոնական բանտ և նետում են «Սյուպիաներու խուցը»:

Կոմիտասը հուսադրում է այնտեղ գտնվող բանտարկյալներին, ամբողջ գիշեր մխիթարում է լացող դոկտոր Թորգոմյանին:

**«Էջմիածին»**, 1968, N 4, էջ 32-34:
**«Արև մուտք»**, Փարիզ, 1946, N 5-6:
**«Հառաջ»**, 1935 հոկտ. 27, N 2946:

**Ապրիլ 11/24, Կ. Պոլիս, գիշեր,.** - Զինվորական ավտոբուսները քաղաքի հեռավոր ու մոտակա արվարձաններից և թաղերից խումբ-խումբ մտավորական կալանավորներին փոխադրում են կենտրոնական բանտ:

**«Էջմիածին»**, 1968, N 4, էջ 32-34:

**Ապրիլ 11/24, Կ. Պոլիս.** - Ոստիկանության նախապես կազմած ցուցակով Կ. Պոլսում ձերբակալում են 235 մտավորականների, որոնց թվում՝ Կոմիտասին, Վարուժանին, Սիամանթոյին, Ռուբեն Սևակին, Ռուբեն Զարդարյանին և այլոց:

Ձերբակալությունները շարունակվում են նաև հաջորդ օրերի ընթացքում: Ձերբակալվածների թիվը հասնում է 800-ի: Նրանց մի մասին ուղարկում են Չանղրի, մյուսներին՝ Այաշ:

**«Հայ ժողովրդի պատմություն»**, Ե., հ. 6, էջ 553-554:

Կոմիտասի վանեցի սպասավորը ամբողջ գիշեր
**Ապրիլ 12/25. Կ. Պոլիս. առավոտ.** - սպասում է Կոմիտասի վերադարձին: «Առտու կանուխ տեսնելով, որ Կոմիտասը դեռ չի դարձած, կփութա դուրս: Նագաշյանի տունը, գրեթե ենալով և այնքան հուզված», որ չի կարողանում մի բառ արտասանել: Վերջապես նրան հաջողվում է խոսել և կարողանում է ողբագին շեշտով ասել.

- Տարա՜ն, փոքթոր, տարան...
- Տո՛, ի՞նչ տարան:
- Հայր Սուրբ տարուն:
- Տո ա՛յ տղա, ո՞վ տարավ:
- Բոլիսները տարան, գիշերը տարան...

«Էջմիածին», 1968, N 4, էջ 32:

Կոմիտասի մերձավոր բարեկամ Կարո Ուշագյանը առա-
**Ապրիլ 12/25, Կ. Պոլիս.** - վոտյան սպասում է Բանկլաթի ծանոթ դեղատունը՝ իր բարեկամի մոտ: «Ներս մտավ բժ. Ա. Նագաշյանը,- պատմում է Ուշագյանը,- գլխաբաց և շփոթ: - Տղաք, Կոմիտաս վարդապետ- կը տարած են այս գիշեր... Շշմած իրարու նայեցանք, ո՛չ մեկ նշանակություն կրցանք տալ եղածին: Քիչ վերջ ուրիշներ եկան և սկսան թվել ուրիշ կալանավորներու անուններ, բոլորն ալ հանրածանոթ մտավորականներ: Մեր զարմանքը վախի փոխվեցավ»:

«Արագած», 1943, էջ 66-67:

**Ապրիլ 12/25, Կարմիր կիրակի, Կ. Պոլիս.** - Ղալաթիո եկեղեցում առավոտյան հոգևոր արարողության ավարտից հետո Կոմիտասի աշակերտները ըստ սովորության այցելում են իրենց սիրելի վարդապետին: «Դեռ չէինք մոտեցել Կոմիտասին,- պատմում է Թումաճանը,- երբ դիմացնին կելլե իրենց ընկերներեն մինը, որ առանց կանգ առնելու կփսփսա...

- Շուտով տուններդ գացեք... հեռացեք... իրարմե զատվեցեք...

Չհասկացանք թե ինչու:

Հասնելով վարդապետի տունը, սեղմում են զանգակը: Վարդապետի ծառան բացավ դուռը:

Այլայլված կմկմաց.- Խայր սուրբին տարան...

«Կոմիտասական», վիրք առաջին, էջ 249-250: «Էջմիածին», 1968, N 4, էջ 31:

**Ապրիլ 12/25, Կ. Պոլիս, առավոտ.** - Բանտի դռները բացվում են և ներս է գալիս Կոմիտասը. «Երբ մեզ մոտ եկավ Կոմիտասը,- գրում է Ա. Անտոնյանը,- իր վիճակի վրա չէր խորհեր, կամ գոնե ներքին վրդովմունք մը մատնող բառ մը չարտասանեց... հույս ուներ, թե այդ կատակը երկար չի տևեր...»:

«Արև մուտք», 1947, N 6, էջ 2:

**Ապրիլ 12/25, կիրակի.** - Զորանոցային կյանքի առաջին օրը... «Մեկնեն մեր խմբին մեջ ներշնչումի պես կծնի հավաքականորեն աղոթելու պետքը: Իսկույն կհավաքվինք մեր բնակության սահմանված սրահը... Մեկ քանի մոմերու վախկոտ լույսերուն տակ... քահանան Ավետարան կկարդա, պատվելին փառաբանությունը կընե, աշխարհականը շարական

կերգե և Կոմիտաս վարդապետը «Տէր ողորմեա» կաղերսե. «Տուր աշխարհիս խաղաղութիւն, ազգիս հայոց ազատութիւն»:

Շամտանչյան Մ., «Հայ մտքին հարկը եղեռնին», Հալեպ, 1947, էջ 54:

**Ապրիլ 12/25, Կ. Պոլիս.** - Կոմիտասին 192 ձերբակալվածների հետ ոստիկանատնից տեղափոխում են Կ. Պոլսի կենտրոնական բանտ: Ձերբակալվածներին արտոնվում է դուրս գալ բանտի բակ և «բաց քարերու վրա» միայն թուրքերենով նամակ գրել ընտանիքին՝ խնդրելով անկողին, դրամ, սպիտակեղեն և ուտելիք:

«Արեւմուտք», 1946, N 6, 1947, N 7-8:

**Նույն օրը, երեկոյան.** - Ոստիկանության պետ Պետրի բեյի և բանտի պետ Իբրահիմ էֆենդիի կարգադրությամբ բակ են կանչվում ձերբակալվածները: Հանձնարարական ցուցակով առանձնացնում են 71 մարդ, որոնց թվում Սիամանթոյին, Ռուբեն Զարդարյանին, Գեղամ Բարսեղյանին, Տիգրան Չոկյուրյանին:

Տեղավորելով կառքերում՝ տանում են անհայտ ուղիով: Մնացած ձերբակալվածներին՝ Կոմիտասին, Վարուժանին, Տաղավարյանին, Ճանկուլյանին, Շահրիկյանին, բոլորին շարք են կանգնեցնում և սվինավոր զինվորների հսկողությամբ գիշերը, Գյուլհանեի ծառուղիով սուլթան Ահմեդի, Այա Սոֆիայի հրապարակներով տանում են Սարա Պուրնուի նավամատույցը:

«Արեւմուտք», 1946, N 47, 6, 7-8, 12:

Երբ թույլատրում են, որ աքսորականները կարող են նամակ գրել, ըստ Ենովք Շահի վկայության Կոմիտասը գրում է երկու քարտ: Մեկը իր տան հասցեով ապահովաբար Կարապետ վարդապետին, իսկ մյուսը՝ Ամերիկյան դեսպանատան թարգման Արշակ Շմավոնյանին: «Վարդապետը,- գրում է հոդվածագիրը,- ծանոթ դեմք մըն էր Ամերիկյան դեսպանատան մեջ, ուր շատ կսիրեին զինքը: Տիկին Մորկը Թոռն հաճախ կհրավիրեր զայն իր երեկույթներուն և Կոմիտասը կերգեր ու կնվագեր ընդունելության ընթացքին»:

«Արեւմուտք», Կ. Պոլիս, 1947, N 7, էջ 9; «Էջմիածին», 1968, N 4, էջ 35:

**Ապրիլ 12/25, Կ. Պոլիս, գիշեր, բանտ.** - Կարդացվում է աքսոր գնացողների երկրորդ ցուցակը՝ Տիրան Քելեկյանից հետո կարդում են երեք վարդապետների՝ Պալագյանի, Հովհաննես Կարապետյանի և Կոմիտասի անունները:

Բակում հավաքված խումբը հրամանի համաձայն Կյուլհանեի ծառախիտ ուղիով ուղեկցվում է Սարայ Պուրնուի նավամատույցը:

Կալանավորները տեղավորվում են Շիրքեթը խայրիյեի թիվ 42 շոգենավի մեջ:

«Արեւմուտք», 1947, N 13, 16 փետրվարի, էջ 7:

N 42 շոգենավով տանում են Հայդարփաշա: Տիրան Քելեկյանը, դոկտոր Թորգոմյանը, Հայկ Խոճասարյանը և Կոմիտաս վարդապետը տեղավորված էին առաջին կարգի սրահում: Այստեղ էր գտնվում նաև Բյուզանդ Քեչյանը:

Կոմիտասը նստած էր դոկտոր Տաղավարյանի և բժիշկ Թորգոմյանի միջև. «Երկու բժիշկները կուլային,- գրում է «Արևմուտքի» հոդվածագիրը,- Կոմիտասը մեկ մը մեկուն, մեկ

մը վառված աչքերը: Երբեմն մը մյուսին կուղղեր շատ անհանգիստ արտահայտությամբ մը վառված աչքերը: Երբեմն Տաղավարյանի կամ Թորգոմյանի կողմը հակվելով. բաներ մը կմրմնջար. թերևս մխիթարության կամ քաջալերության խոսքեր...»:

**«Արև մուտք»**, 1947, մարտ 2, N 15, էջ 7:

Գիշերը Շիքեթի թիվ 67 շոգենավով Կյուլհանեի բարաքից վերցնում են կալանավորներին ու Սարայ Պուրնուն անցնելով բռնում են անծանոթ ուղղություն: Նավն ուղղորվում է դեպի Հայդար-Բաշայի նավահանգիստը, ուր սպասում են շոգեկառքին:

Կալանավորների մեջ էր նաև Կոմիտաս վարդապետը:

Նույն տեղում:

**Ապրիլ 13/26, առավոտյան.** - Սարայ Պուրնուի ձերբակալվածներին տեղավորում են Շիրքեթի թիվ 67 շոգենավում: Նրանց մոտ են բերում նաև կառքով այստեղ հասցված մյուս 71 ձերբակալվածներին և նրանց բոլորին միասին տանում են դեպի Հայդար փաշայի երկաթուղային կայարանը:

**«Արև մուտք»**, 1946, N 6, 1947, N 7-8:

**Ապրիլ 13/26, Հայդար Փաշա.** - Տեղավորվելով գնացքում ձերբակալվածների քարավանը (որոնց մեջ էր նաև Կոմիտաս վարդապետը) Նիկոմեդիայի ու Պիլեճիկի վրայով գիշերը հասնում է Էսկիշեհիր:

**«Արև մուտք»**, 1947, N 18:

**Ապրիլ 13/26, կեսգիշեր.** - Էսկիշեհիրում երկու ժամ մնալուց հետո այստեղ կազմվում է կալանավորների ցանկը՝ Պատրիարքարան ուղարկելու համար: Կեսգիշերին գնացքը Էսկիշեհիրից մեկնում է Անկարա:

**«Արև մուտք»**, 1947, N 18, էջ 7:

**Ապրիլ 13/26, երեկո.** - Աքսորականների քարավանը (որոնց մեջ էր նաև Կոմիտասը) հասնում է առաջին հանգրվանին՝ Ռավլիի խան:

**«Լրաբեր»**, 1968, N 7, էջ 5:

**Ապրիլ 13/26, լուսաբաց.** - Կալանավորների գնացքը հասնում է Նիկոմեդիա:

Կոմիտասը մյուս հոգևորականների հետ գտնվում էր B կարգի վագոնում, այստեղ էին նաև Քելեկյանը, Նազաշյանը, Քեչյանը, Թորգոմյանը, Տաղավարյանը և այլոք:

Նիկոմեդիայում Կոմիտասը, Հովհաննես և Պալաջյան վարդապետները դիմում են ներկայացնում կառավարությանը, որ իրենց համար որպես աքսորավայր որոշվի Արմաշի վանքը:

**«Արև մուտք»**, 1947, N 17 (մարտ 16), էջ 8:

**Ապրիլ 13/26, առավոտ.** - Գնացքը կանգ է առնում Անկարային չհասած Սընճան Քեօ փոքր կայարանում:

Ցուցակով 71 հոգու առանձնացնում և տանում են Այաշ:

**«Արև մուտք»**, 1947, N 18, էջ 8:

**Նույն օրը, երկու ժամ անց.** - Գնացքը կալանավորներին հասցնում է Էնկյուրա (Անկյարա): Այստեղ կալանավորներին գնացքից իջեցնում և տեղավորում են ձիակառքերի մեջ: Յուրաքանչյուր կառքում տեղավորում են երեքական անձ և հայտնում են, որ կառքերը ուղղվում են Չանղըրը:

«Արևմուտք», 1947, N 20 (ապրիլ 6), էջ 7:

**Ապրիլ 13/26, երեկո.** - Կալանավորների քարավանը ձիակառքերով փարվում է Ռավլի խան բնակավայր:

Նույն տեղում:

**Ապրիլ 14/27, Ռավլի խան.** - Խիստ ծարաված կալանավորների և նրանց պահողների խմելու ջրից օգտվելու ժամանակ տեղի է ունենում հետևյալ միջադեպը: Պարզվում է, որ կառապանն ու ժանդարմները դույլերի պակասի հետևանքով ծանր վիճակի մեջ են ջրհորից ձիերին ջուր տալու համար: Այդ ժամանակ ծարաված կալանավորները նույնպես մոտենում են ջրհորին՝ իրենց ծարավը հագեցնելու համար: «Իրենցմէն ամենէն անհամբերը,- գրում է Արամ Անտոնյանը,- Կոմիտասն էր»: Դույլով տալիս են ջրհորի ջուրը, սակայն գավաթ կամ որևէ այլ հնարավորություն չկար ջրից օգտվելու համար:

Ճիշտ այն պահին, երբ Կոմիտաս վարդապետը «շրթունքը ցցած» ձեռքը մեկնում է ջրով լիքը դույլին, թուրք ժանդարմներից մեկը բիրտ հարվածով Կոմիտասի ձեռքից կոպտորեն խլելով ջրով լցված դույլը՝ ջուրը շպրտում է Կոմիտասի երեսին: Ջուրը սկսում է կաթկթել մորուսից: Այլայլված Կոմիտասը զգում է ընդհարման վտանգը և երկու քայլ նետվում է ետ: Միջադեպն ունենում է ցնցող վախճան Կոմիտասի համար:

«Արածանի», 1947, մայիս 4, N 24, էջ 8:

**Ապրիլ 14/27, Ռավլի, երեկո.** - Թուրք ժանդարմի գործադրած բռնությունից հետո Կոմիտասի մոտ սկսվում է ջղաձգության բռնկում:

«Արածանի», 1947, ապրիլ 27, N 3, էջ 7:

**Ապրիլ 15/28.** - Աքսորականները հասնում են Գելենջիկ և 150 հոգով տեղավորվում են զորանոցում:

Շամտանճյան Միքայել, «Հայ մտքին հարկը եղեռնին», Կ. Պոլիս, 1919, էջ 46:

**Նույն օրը, Գելենջիկ.** - Կոմիտաս վարդապետի մոտ նորից տեղի է ունենում ջղաձգության բռնկում:

«Արածանի», 1947, ապրիլ 27, N 23, էջ 7:

**Նույն օրը, գիշերը.** - Կոմիտաս վարդապետի մոտ ջղաձգությունը կրկնվում է:

Նույն տեղում:

**Ապրիլ 15/28, արշալույսին.** - Աքսորականները Գելենջիկից մեկնում են Չանղըրի:

«Արածանի», 1947, ապրիլ 27, N 23, էջ 7:

**Հաջորդ օրերին.** - Կոմիտասի վիճակը ծանրանում է. «Կըսեին թե այլես ժանդարմներով չի հետաքրքրվում բնավ» և իր մտավախությունը նրանց մասին բոլորովին անհետացել է, սակայն շարունակ խոսում է Պոլսում թողած իր ձեռագրերի վրա՝ «...պոռալով թե ի՛նչ պիտի ըլլան իր աշխատությունները»:

«Էջմիածին», 1968, N 7, էջ 10:

**Ապրիլ 16/29, Չանղրի.** - Աքսորականները Չանղրիի զորանոցի մեջ մնում են յոթ օր: Չորրորդ օրը Ակիղեցուց բերել են պալիս մի Ժամագիրք և երեկոյան կատարում են ժամասացություն: Կոմիտասի ջղաձգությունը դադարում է: Ութերորդ օրը փրվում է զորանոցից դուրս քաղաքի մեջ ապրելու իրավունք:

«Էջմիածին», 1968, N 8-9, էջ 99:

**Ապրիլ 16-26.** - Աքսորականները 11 օր ապրում են Չանղրիի մեջ...

«Էջմիածին», 1968, N 7-9, էջ 6:

**Ապրիլ 19/2 մայիս, Չանղրի.** - Կոմիտաս վարդապետը եկեղեցում մատուցում է Ս. Պատարագ: Ավետարանը համբուրելու պահին, Բյուզանդ Քեչյանը և դոկտոր Թորգոմյանը մոտենալով Կոմիտասին, նրան հայտնում են, որ ստացվել է հեռագիր նրան աքսորից ազատելու մասին: «Պատվական պատարագիչի դեմքը հանկարծ պայծառությամբ մը շողաց: Իր ուրախությունը չէր կրնա ծածկել, նույնիսկ խուռն բազմության առջև, ինչը որ կցուցներ, թե մեր վիճակը որչափ երկյուղ պատճառած էր իրեն»: Այդ նույն երեկոյան հեռագիր է ստացվում նաև Քելեկյանի ազատվելու մասին:

Ձևոդիկ, «Ամենուն տարեցույցը», 1922, էջ 40

**Ապրիլ 22/5 մայիսի, Չանղրի.** - Զորանոցային կյանքից հետո, առաջին կիրակի օրը, բոլորը մեկնում են փայտաշեն մատուռը՝ «Զորանոցի հսկանները,- գրում է Շամտանճյանը,- առանց խնկարկության էին: Կոմիտաս վարդապետը և յուրայինները փլչող փղձկումի մխիթարող խոսք կուտան մեր հոգիներուն»: Քաղաք ենելես տասը օր վերջը մեզմե ութը հոգինոց խումբ մը եկած հրամանի վրա Պոլիս կվերադառնա: Նոր ակնկալություններու ասպարեզ մըն է, որ կբացվի ամենուս համար»:

Շամտանճյան, «Հայ մտքի հարկը եղեռնին», Հալեպ, 1947, էջ 62

**Ապրիլ 24/7 մայիսի.** - Բանտից Կոմիտասը նամակ է գրում Կարապետ վարդապետին:

**Նույն օրը.** - Կոմիտաս վարդապետը նամակ է գրում նաև Ամերիկյան դեսպանատան թարգմանիչ, հայազգի Արշակ Շմավոնյանին:

**Նույն օրը, երեկոյան.** - Մեհտերհանի բանտից երեկոյան Պազիլ խանին ազատում են և նրա անկողինը հատկացնում են Կոմիտաս վարդապետին:

«Էջմիածին», 1968, N 4, էջ 34

**Ապրիլ 26/9 մայիս, առավոտ.** - Ստացվում է ազատման հրաման և Կոմիտաս վարդապետը՝ իր յոթ բախտակիցներ Բյուզանդ Քեչյանի, Արամ Անտոնյանի, Հայկ Խոջասար-

յանի, Վահրամ Թորգոմյանի, Միքայել Շամտանճյանի, Քեչյանի ու Պալազյանի հետ ազատվում են բանտից:

«Էջմիածին», 1968, N 5, էջ 6:
«Ամենուն տարեցույց», 1922, էջ 40:
Շամտանճյան Շանթ, 1918, N 5, էջ 7:

**Ապրիլ 27/10 մայիս, Երկուշաբթի, Չանղրի.** - Կոմիտասն իր բախտակիցների հետ ազատորեն շրջում է քաղաքում:

«Էջմիածին», 1968, N 7, էջ 6:

**Ապրիլ 28/11 մայիս, Գայենճիկ.** - Աքսորից վերադարձող Կոմիտասը և իր ընկերները երեկոյան հասնում են մոտակա գյուղաքաղաք. «Թեև ուշ հասանք,- պատմում է Բյուզանդ Քեչյանը,- հայ ընտանիք մը չթողուց, որ աղտոտ խանը գիշերենք և տաք կերակուրներով հյուրասիրեց մեզ կես գիշերվան մոտ:

Թեոդիկ. «Ամենուն տարեցույց», 1922, էջ 42-43:

**Ապրիլ 29/12 մայիս, Գայենճիկ.** - Աքսորականների խումբը ազատվելով բանտից իր ժամանակը անց է կացնում այս գյուղաքաղաքում:

Նույն տեղում:

**Ապրիլ 30/13 մայիս, Անկարա.** - Ազատված աքսորականները 16 օր հետո, Համբարձման տոնի օրը, կրկին հայտնվում են Էնկյուրայում (Անկարա):

«Համբարձման տոնը,- գրում է Բյուզանդ Քեչյանը,- վայելեցինք Էնկյուրիի եկեղեցիին մեջ: Թաղական խորհուրդը մեզի նախաճաշով մը հյուրասիրելե ետքը առաջնորդեց Ս. Աստվածածնի վանքը»:

Թեոդիկ, «Ամենուն տարեցույց», 1922, էջ 43:
«Էջմիածին», 1968, N 10, էջ 52:

Նրանք մեկնում են Ս. Աստվածածնի վանք, որտեղ մեծ բազմություն էր հավաքվել Կոմիտասին լսելու համար: Հանդեսից հետո 60 հոգու համար բացվում է ճոխ սեղան, մի դեռատի աղջիկ երգում է, որին Կոմիտասը տալիս է իր խորհուրդները:

**Մայիս 2/15, Կ. Պոլիս.** - Շաբաթ օրը, երեկոյան, Կոմիտաս վարդապետը հասնում է Կ. Պոլիս:

«Էջմիածին», 1968, N 7, էջ 6:

**Մայիս, Կ. Պոլիս.** - «Աքսորից քանի մը օր ետքը» Կոմիտասը վերսկսում է իր սովորական աշխատանքը: «Ձեռքն առավ Ջուղայի «Պատարագը» մշակելու և մաքրելու համար: Այցելուներ ալ կունենար,- գրում են ականատեսները,- սակայն ո՛ւր էին նախկին շենշող օրերը:

Վարդապետը վերսկսած էր իր սովորական կյանքը: Կաշխատեր, կգրեր, կնվագեր, կսրբագրեր: Միայն ապրուստի մտահոգություն ուներ, թեև չէր ուզեր հայտնել ոչ ոքի: Ոչ միայն հարուստ չէր, այլև եկամուտի աղբյուրներ ալ չուներ, քանի որ դադրած էին համերգները ու դասերը»:

«Էջմիածին», 1968, N 10, էջ 55-56:

*ՀՐԱՉՅԱ ԱՍՄԱՐՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ՊՐՈՖԵՍՈՐ ՀԱԿՈԲ ՍԻՐՈՒՆԻՆ ՈՒ «ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՀԱՏՈՐԸ

Հայագետ Հակոբ Ճ. Սիրունին ծնվել է Ադաբազարում 1890 թ.: 1901 թ. նրանց ընտանիքը տեղափոխվել է Կ. Պոլիս, և Հակոբը հաճախել է այնտեղի Էսայան, իսկ այնուհետև Կենտրոնական վարժարանները: Դասընթացները ավարտելուց հետո թղթակցել է «Արևելք», «Սուրհանդակ» և «Ազատամարտ» պարբերականներին:

Նա 1913 թ. արևմտահայ նշանավոր բանաստեղծ Դանիել Վարուժանի հետ հրատարակել է «Նավասարդ» խորագրով գրական-գեղարվեստական տարեգիրքը: Սիրունին տպագրել է բանաստեղծությունների «Մթնշաղ» (1908) և «Դեպի տաճարն հրաշքին» (1914) ժողովածուները:

Հայագետը գրել և հրատարակել է Դ. Վարուժանին, Գր. Զոհրապին, Մաղաքիա արքեպս. Օրմանյանին, Խրիմյան Հայրիկին, Կոմիտասին («Կոմիտասին հետ»), Մ. Մեծարենցին, Հովհ. Թումանյանին և մի շարք այլ հեղինակներին նվիրված մեծարժեք աշխատություններ:

Հրաշքով փրկվել է Մեծ եղեռնից, որոշ ժամանակ, մինչև 1922-ը, ապրել է գաղտնի պայմաններում: Քաղաքական իրավիճակը երբ վատթարանում է Թուրքիայում, տեղափոխվում և բնակություն է հաստատում Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում, որտեղից աշխատակցում է «Յառաջին», «Վեմին», «Բազմավեպին», «Ազդարարին» և «Հայրենիքին»: 1934-1943 թթ. Բուխարեստում ռումին հայագետ Նիկոլա Յորգայի հետ հրատարակում է «Անի» պարբերականը:

Հ. Ճ. Սիրունին սերտ բարեկամական հարաբերությունների մեջ է գտնվել երջանկահիշատակ Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Վերջինիս հրավերով նա հինգ անգամ այցելել է Հայաստան, «Էջմիածին» ամսագրում հրատարակել է մի շարք հոդվածներ և հոդվածաշարեր:

Սիրունին մահկանացուն կնքել է 83 տարեկան հասակում Բուխարեստում, 1973 թ.:

Հայության կյանքում Կ. Պոլիսը շատ նշանակալից դեր է ունեցել: Կ. Պոլսի կյանքում հայերի ունեցած դերին է նվիրված Սիրունու «Պոլիս և իր դերը» (հինգհատորանոց) հիմնարար աշխատությունը: Այս աշխատության վերջին երկու գրքերը (հ. 3 և հ. 4) տպագրվել են Անթիլիասում, նրա մահվանից հետո: Այդ աշխատության 5-րդ հատորը, ինչպես նախատեսել էր հեղինակը, պետք է ընդգրկեր Հայոց Մեծ եղեռնի պատմությունը (սակայն հատորի փաստական նյութերը «սակավ» են եղել և այդ պատճառով էլ հատորը չի հրատարակվել):

Մենք այս հոդվածում կանդրադառնանք միայն Սիրունու «Պոլիս և իր դերը» աշխատության 3-րդ հատորի որոշ դրվագներին, որի նյութն ընդգրկում է 19-րդ դարի երկրորդ կեսի

հայոց պատմության հարցերը[1]: Այդ ժամանակաշրջանի պատմությունը հայ ժողովրդի բազմադարյան պատմության ընթացքում ազգային, քաղաքական և մշակութային կյանքում կարևոր դեր է խաղացել:

Սիրունու աշխատության 3-րդ հատորը սկսվում է «Ազգ մը մեր կողքին» խորագրով, որը վերաբերում է թուրքերին:

Նա Թուրքիայում արևմտահայերի սահմանադրական շարժմանը հատուկ գլուխ է նվիրել՝ «Ազգային սահմանադրությունը և իր մեղրալուսինը» վերնագրով (էջ 34-98)՝ նշելով, որ Պոլսո պատմության բացառիկ էջերից է սահմանադրական շարժումը, քանի որ «կու գար հաղթանակը խորհրդանշելու տասնյակ տարիներու պայքարին՝ զանգվածներու մուտքը ապահովելու համար Պատրիարքարանեն ներս» (էջ 34): Սիրունին մատնանշում է, որ այդ հարցին նվիրված բավականին պատմագիտական աշխատություններ են գրվել (հիշատակում է Ալեքսանդր Սարուխանի և Արշակ Ալպոյաճյանի աշխատությունները, ինչպես նաև Մաղաքիա արքեպս. Օրմանյանի «Ազգապատում» աշխատության 3-րդ հատորը (Երուսաղեմ, 1927), ուր անկողմնակալ կերպով գնահատվել և լուսաբանվել է արևմտահայոց «Ազգային սահմանադրությունը»:

Այս առիթով հեղինակը հիշատակում է, որ Պոլսի Հակոբ Պատրիարքը Ազգային Ընդհանուր ժողով էր գումարել Պատրիարքարանում: Նախաձեռնությամբ հանդես է գալիս ազգային նշանավոր գործիչ Գրիգոր Մարկոսյանը: Ժողովին մասնակցել են մտավորականներ Պոլսի և Զմյուռնիայի հայ գաղթօջախներից՝ Նահապետ Ռուսինյանը, Գրիգոր Օտյանը, Գրիգոր Պալյանը, Սերվիչեն (Սերվիչե Վիչենյան), Մկրտիչ Աղաթոնը, Կարապետ Ութուճյանը և ուրիշներ: Նրանք իրենց կրթությունը ստացած լինելով Ֆրանսիայում, ձեռնամուխ են լինում արևմտահայոց սահմանադրության մշակմանը: 1860 թ. մայիսի 24-ին Պոլսի Ազգային ժողովը ընդունում է կանոնադրություն, որը Ն. Ռուսինյանի առաջարկով ստանում է արևմտահայերի «Ազգային սահմանադրություն» անունը: Դրանով նախատեսվում էր այդ տարածքում ապրող հպատակ քրիստոնյաների և մասնավորապես հայերի համար որոշ բարեփոխումներ:

«Ազգային սահմանադրությունը» բաղկացած էր 5 գլխից և 99 հոդվածներից:

Օսմանյան իշխանությունների կողմից այն անվանվեց արևմտահայերի «Ազգային սահմանադրություն» անունով, որը ընդունվեց 1863 թ. մարտի 17-ին:

Այդ նույն ժողովին մասնակցել են նաև հոգևոր դասի ներկայացուցիչներ, ամիրաներ, արհեստավորներ և առևտրականներ:

«Ազգային սահմանադրության» ընդունումը մասնակի, բայց ոչ էական փոփոխություններ մտցրեց Թուրքիայում ապրող արևմտահայերի կյանքում:

Սիրունին ոգևորված էր սահմանադրության ընդունմամբ. «Սերունդներու հաղթանակն էր,- գրում է նա,- որ կնվիրագործվեր այդպես, այդ օրը, ու մայիս 24-ը ազգային տոն կդառնար այլևս Թուրքիո հայության համար» (հ. 3, էջ 40): Նա այս առիթով հիշատակում է Ազգային սահմանադրության երեք նշանավոր դեմքերին՝ Գրիգոր Օտյանին, դոկտորներ Սերվիչենին և Նահապետ Ռուսինյանին: Մեկառմեկ ներկայացնում է այս ազգային գործիչնե-

[1] Տես Հ. Ճ. Սիրունի, Պոլիս և իր դերը, Անթիլիաս, 1987, 679 էջ:

ի կենսագրականները. գովեստի խոսքեր ուղղում նրանց: «Ազգային սահմանադրության»
երրորդության հետ է լծորդում նաև Նիկողայոս Պալյանի և Ծերենցի անունները:
1862 թ. օգոստոսի 1-ին Պոլսում տեղի է ունենում ցույց, որը կազմակերպել էին հայ
մտավորականները: Ցույցին մասնակցում էին «քանի մը հարյուր հոգի»: Ցուցարարները
հավաքվում են Գում-Գափուում և խնդրագիր ներկայացնում Բ. Դռանը՝ պահանջելով ըն-
դունել հայոց սահմանադրությունը: Ցույցը ուղղված էր իշխանությունների դեմ: Պոլսի
ցույցը «խորհրդավոր զուգադիպությամբ» սկսվել էր այն օրը, երբ «Զեյթուն կփոթորկեր
անդին»: Սիրունին նկատում է, որ այս երկու դեպքերի միջև ընդհանրություն կար: Պոլսի
ցույցը անհետևանք չմնաց: Ուստով ընդունվեց հիշյալ կանոնադրությունը:
Պետք է նկատել, որ այնուամենայնիվ Սիրունին սահմանադրական շարժման դերը
ինչ-որ տեղ գերագնահատում է: Ո՛չ մեկը չի ժխտում սահմանադրության ունեցած դերը
Պոլսո կյանքում, սակայն բոլոր հարցերի լուծումը բխեցնել նրանից, կարծում ենք՝ ճիշտ չի
լինի, քանզի կթերագնահատվի Պոլսի յուրաքանչյուր մտավորականի ունեցած դերը:
Պատմաբանը գրում է Պոլսի երեք նշանավոր գերդաստանների՝ Պալյան, Տատյան և
Տյուզյան տոհմերի մասին, որոնք օգտակար գործեր կատարեցին Կ. Պոլսի համար:
Կարծում ենք նաև, որ Սիրունին միանգամայն ճշմարտացի էր, երբ գրում էր, որ արևմը-
տահայերը այնպիսի խոշոր անհատներ չտվեցին հայոց պատմությանը, ինչպես Ռուսիո
հայերը՝ նկատի ունենալով Խ. Աբովյանին և Մ. Նալբանդյանին: Վերջինս հայ ազատա-
գրական պայքարի պատմության մեջ «հայ հեղափոխությունը պիտի հանէր լեռ»: Նա,
գնահատելով Խ. Աբովյանին, գրում է. «Աբովյանն էր, որ Արարատ բարձրացավ անոր
կատարեն համբուրվելու համար դարերուն հետ, որոնք գացեր էին ու դեռ պիտի գային:
Արարատը խորհրդանշան դարձուց ան հայ հայրենասիրության» (էջ 137): Գնահատելով
Նալբանդյանի դերը հայ իրականությունում՝ Սիրունին ներկայացնում է նրա լուսավոր
կերպարը և գրում. «Նալբանդյան ավելի ամրացուց հոգեկան մեր հենարանը: Ան ավելի
ևս հողին կապեց մեր հայրենասիրությունը ու նոր իմաստ պարգևեց անոր...» (էջ 137):

Նա խոստովանում է նաև, որ արևմտահայերի այն սերունդը, որ կոչված էր «առաջնորդելու համար վաղվան», ո՛չ Աբովյան ունեցավ, ո՛չ էլ Նալբանդյան:

Պատմագիտական գրականության մեջ (Աշ. Հովհաննիսյան, «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատորանոց ուսումնասիրություն) կարծիք է հայտնվել այն մասին, որ «Համազգյաց Ընկերության» գործունեության դադարումից հետո, նրա դերը ստանձնել է «Բարեգործական ընկերությունը»: Կարծում ենք, որ ակադ. Աշ. Հովհաննիսյանը իրավացի էր այս հարցում: Նրա կարծիքը բաժանում է նաև Սիրունին:

Այս հատորում Սիրունին դրական գծերով է ներկայացնում Մ. Նալբանդյանի զինակիցներ Ստ. Ոսկանին, որը 1848 թ. ֆրանսիական հեղափոխության անմիջական մասնակիցն էր, ծանոթացնում է Արմենակ Հայկունու, Գր. Չիլինկիրյանի գաղափարներին: Ճիշտ է, երբեմն Սիրունին այդ անհատների մասին շատ չի գրում, բայցևայնպես նրա ո՛չ շռայլ արտահայտություններից արդեն իսկ պարզ է դառնում Մ. Նալբանդյանի զինակիցների նկատմամբ ունեցած նրա համակրանքն ու մեծ սերը:

Սիրունին «Ուղիղ ճանապարհը» գլխում (էջ 146-162) արդեն կոնկրետ գծերով ներկայացնում է Միք. Նալբանդյանի անցած դժվարին ուղին: Հայ ժողովրդի 19-րդ դարի պատ-

մության մեջ գլխավոր գործող անձը մնում էր Միք. Նալբանդյանը: Սիրունին գտնում էր նաև, որ Նալբանդյանը «գինովցեր էր 1848-ի շունչե»: Պոլիսը ևս մեծ դեր խաղաց Նալբանդյանի ծանոթությունները ձեռք բերելու հարցում և հայ ազգային կյանքի հեղաշրջման գործում: Սիրունին գրում է նաև հայ ազգային ազատագրական շարժման մասին, բայց ինքույնները նշում է, որ քիչ բան գիտենք Նալբանդյանի՝ Պոլսում կատարած աշխատանքների մասին: Եվ այդ առիթով ինքը աշխատում է անդրադառնալ այդ հարցերին, որոնք անշուշտ նոր լույս են սփռելու դրանց վրա: Այսպես, օրինակ, նա նկատում է, որ եթե Նալբանդյանը, նրա զինակիցները առաջին շրջանում ցանկանում էին միայն Հայաստանը ազատագրված տեսնել թուրքական լծից, ապա մի փոքր ավելի ուշ գրում է. «Բարեգործության նշանաբանի տակ անոնք պիտի մտածեին նաև հայրենիքի ապագայի մասին»: Նշում է, որ այս կազմակերպությունները «գաղտնի հեռավոր նպատակներ» են հետապնդել՝ հայ ժողովրդի ազատագրական նպատակը:

Սիրունին հաջորդ գլխում ներկայացնում է Պոլսի հայ մտավորականության կապերը Զեյթունի 1862 թ. շարժման հետ: Հեղինակը հանգամանորեն անդրադառնում է «Բարեգործական ընկերության» գործունեությանը: Նշում է, որ այդ կազմակերպությունը հիմնըվել է 1860 թ. Պոլսում: «Բարեգործական ընկերության» շարքերում էին Սերովբե Ալիշանյանը, Գրիգոր Ալթունյանը, Գրիգոր Աղաթոնը, Մկրտիչ Աղաթոնը, Սերովբե Թագվորյանը, Մկրտիչ Մյուհենտիսյանը, դոկտ. Հովսեփ Շիշմանյանը (Ծերենց), Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Գրիգոր Օտյանը: Նրանց միացան նաև Մատթեոս Մամուրյանը, Կարապետ Փանոսյանը, Կարապետ Ութուճյանը, Մատթեոս Այվազյանը և ուրիշներ: Ճշտում է այդ կազմակերպության կազմը: Մի կարևոր փաստ էլ է ներկայացնում Սիրունին, որ «Բարեգործական ընկերությունը» իր նիստերը գումարում էր Բերայի այն նույն շենքի մեջ, ինչ նախկինում ստեղծված «Համազգյաց ընկերությունը»: Սա ևս ապացույց է տարբեր ժամանակներում գործող ազգային երկու ընկերությունների հաջորդական կապի մասին: «Բարեգործական ընկերության» անդամները ձգտում էին ազգի «անտեր և չքավոր տղայքը երկրագործության և արվեստից զբաղեցնելու միջոցները ի գործ դնել» (էջ 155):

Միքայել Նալբանդյանը Սիրունու այս աշխատության մեջ հանդես է գալիս որպես կենտրոնական դեմք: Նրա «հիմնական մտատանջությունը» հողն ու երկրագործությունն էր, որն ուղիղ ճանապարհ էր բացելու նաև Պոլսի զինակիցների համար: «Այդ հողը,- ինչպես նկատում է Սիրունին,- պետք է վերածվեր հայրենիքի»: Հեղինակը, կրկին անդրադառնալով «Բարեգործական ընկերության» գործունեությանը, կարծում էր, որ «Ընկերության հիմնադիրները, սակայն, ամեն բան չեն հայտներ իրենց Հայտարարության մեջ. որովհետև իրենց ծրագիրը թաքուն ուղղություն մը ունի, որ ապահովաբար գաղտնի կմնար նաև բաժանորդներու մեծագույն մասին» (էջ 157):

Միքայել Նալբանդյանը լինելով «Բարեգործական ընկերության» գլխավոր գործող անձը, իր զինակիցների հետ Հայաստանի ազատագրման վերաբերյալ ուներ իր քաղաքական ըմբռնումները: Նա և իր զինակիցները ցանկանում էին ազատագրել ոչ միայն Արևելյան, այլ նաև Արևմտյան Հայաստանը: Սիրունին շեշտում է, որ նշանավոր հասարակական գործիչ և գրող Ծերենցը ևս Կիլիկիա է անցնում, ագարակ է գնում այնտեղ՝ հողագործությամբ զբաղվելու համար: Նշում է նաև, որ առաջին հերթին նրան «Կիլիկիա առաջնոր-

դողը հայրենասիրության գաղափարն էր» (էջ158):

Գիտնականը բերում է Նալբանդյանի զինակից Սերովբե Թագվորյանի 1862 թ. մայիսի 14-ի Պոլսից Ս. Պետերբուրգ գրած նամակը, որը հասցեագրված էր բանաստեղծին, և վերստին այն եզրահանգմանն է գալիս, որ 19-րդ դարի 60-ականներին «Բարեգործության նշանաբանին տակ՝ ավելի հեռավոր նպատակներ ևս կհետապնդեին և որոնք թափ ստացան վաթսունական թվականներում» (էջ159-160):

Սիրունին «Բարեգործական ընկերության» գործունեության վերջին տարին համարում է 1847 թվականը, երբ այդ ընկերությունը 4000 թուրքական լիրայի դրամագլուխ ուներ, որից հետո ընկերության անունը այլևս չի հիշատակվում պատմագիտական գրականության մեջ:

Սիրունին գտնում է, որ Նալբանդյանը Պոլիս այցելել է «երկիցս»: Առաջին անգամ 1860 թ. նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 21-ը՝ Հնդկաստան կատարած ուղևորության ժամանակ, երբ զբաղված էր մեծահարուստ Մասեհ Բաքաջանի կտակի գործով: Հարություն Սվաճյանի «Մեղու» ողջունեց նրա գալուստը, որտեղ մեծարեց մեծ հեղափոխական դեմոկրատին:

Սիրունին ներկայացնում է Նալբանդյանի գործունեությունը Պոլսում և նրա ունեցած սերտ կապերը այնտեղի հայ մտավորականների հետ: Նա ոչ միայն համագործակցել է արևմտահայ շատ գործիչների հետ, այլև նամակագրական կապերի մեջ է եղել Պոլսի մտավորականներից Գրիգոր Օտյանի, Մկրտիչ Աղաթոնի, Հովհաննես Քյաթիպյանի, Տիգրան Փեշտիմալճյանի, Սերովբե Թագվորյանի և ուրիշների հետ: Նալբանդյանի երկրորդ այցը Պոլիս, ինչպես ցույց է տալիս Հ. Ճ. Սիրունին, տեղի ունեցավ 1861 թ. նոյեմբերին, երբ հեղափոխական դեմոկրատը Հնդկաստանից վերադառնում էր Պոլիս, իսկ այնտեղից էլ 1862 թ. նախաձեռնեց պատմական Հայաստանի քարտեզի կազմումը, որի տպագրության վաճառքից ստացված հասույթը պետք է հատկացվեր ի նպաստ «Բարեգործական ընկերության»:

1861 թ. դեկտեմբերի 14-ին Բերիայի մեջ ներկայացվում էր ֆրանսիացի հեղինակ Ռոթայի «Երկու հիսնապետներ» թատերախաղը: Նալբանդյանը Պոլսի իր զինակիցների կողմից հրավիրվում է ներկայացումը դիտելու և կարծիք հայտնելու: Թատերախաղի ավարտին Միքայել Նալբանդյանը հրավիրվում է բեմ իր խոսքն ասելու: Նալբանդյանի խոսքը տպագրում է «Մեղու»՝ «Ազգային թատրոն Պոլսի մեջ» խորագրով, ուր ցույց է տալիս ազգի համար թատրոնի կրթող ու դաստիարակող առաջադեմ դերը: Նա ուշադրություն է հրավիրում հայոց ազգի ընտանեկան վիճակի վրա. «Հայոց ազգի ընտանեկան կյանքը խեղճ է ինչպես մի ասիական ազգի կյանք, բայց խեղճությունը դեպի թշվառություն կփոխվի, եթե եվրոպական ընտանեկան բարքի զեխությունը և ավերանքը, որպես քաղաքակրթության հատկություն, պատվաստվին հայկական ընտանիքի վերա» (էջ 174): Նալբանդյանը դեմ էր նման բարքերի տարածմանը հայկական ընտանիքներում:

Նալբանդյանի մեկ ուրիշ զինակիցը՝ Սերովբե Թագվորյանը, այն դեմոկրատ գործիչներից էր, որ «դիմած էր Լոնտոնի ռուս և իտալացի հեղափոխականներին, օգնություն ստանալու համար: Բայց առավելագույնը, որ կարողացել էր հաջողացնել, դա համաձայնությունն էր հայերի մեջ հօգուտ Ջեյթունի հրկիզյալների» (էջ 209): Հ. Սիրունին ներկայացնում է նաև Սերովբե Թագվորյանի գործունեությունը, որ ռուս-թուրքական (1877-1878 թթ.) պա-

տերազմից հետո «քաշվեցավ իր պատյանի մեջ»:

Նա բացահայտում է այն գործիչների անունները, որոնք այս կամ այն ձևով կապված էին Զեյթունի ապստամբների հետ. Հովակիմ Մելիքյան, Ծերենց, Գր. Աքարտյան, Եղիա Տնտեսյան և ուրիշներ: Արթուրի Երիցյանն էլ վկայում է, որ զեյթունցիներին օգնում էին Պոլսում կազմակերպված «Անձնվեր» և «Բարեգործական ընկերությունները»: Զեյթունի երգիչն էր Մկրտիչ Պեշիկթաշլյանը:

Սիրունու «Պոլիս և իր դերը» աշխատության 3-րդ հատորը ավարտվում է ԺԱ գլխով՝ «Պոլիս Բեռլինեն հետո», ուր ներկայացվում է հայության ակնկալիքների ի դերև ելնելը Բեռլինի կոնգրեսում: Անդրադառնում է նաև ուշ շրջանում Պապիկ փաշայի գլխավորությամբ Զեյթունի ազատագրական պայքարին:

Աշխատության վերջին՝ «Մեծ Հայք և իր առաջին ճիգերը» գլխում Սիրունին գրում է Մկրտիչ Փորթուգալյանի կողմից Այրարատյան ընկերության կազմավորման և Վասպուրականում նրա գործունեության մասին: Այնուհետև բերում է նոր փաստեր և ասում, որ 1881 թ. «Պաշտպան Հայրենյաց» ազատագրական շարժման գործող անդամ Հակոբ Նշկյանը իր հուշերում, որ տպագրվել էր 1930-ին ԱՄՆ-ում, նշում էր, որ «Պաշտպան Հայրենյացը» կապեր ունեցած է ինչպես Թիֆլիսի հայ մտավորականության, նույնպես Ներսես Վարժապետյանի, Մկրտիչ Խրիմյանի և Օրմանյանի հետ» (էջ 678): Հ. Սիրունին նշում է, որ Էրզրումի ազատագրական այս ծրագրերը իրենց արձագանքը գտան հայ մամուլում և արևելահայ երիտասարդության շրջանում:

Այսպիսով, Հ. Ճ. Սիրունու «Պոլիս և իր դերը» աշխատության 3-րդ հատորը իր բազմազան հարցերի քննարկումով նորություն է բերում հայ պատմագիտության մեջ: Այն ուսանելի և արժեքավոր է իր ժամանակաշրջանի պատմության, ազատագրական շարժումների, սահմանադրական շարժման մեջ Նալբանդյանի և նրա զինակիցների գործունեությունը ճիշտ հասկանալու տեսանկյունից:

*ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ԹԵՈԴԻԿԻ ԵՂԵՌՆԱՊԱՏՈՒՄԸ

Հետեղեռնյան շրջանի ազգային-քաղաքական իրողությունները, որոնք «սուրի և սովի մղձավանջով» անցած վերապրողների կյանքի սոսկ շարունակությունը չէին, «այլ մի ողջ ժողովրդի աշխարհասփյուռ ներկայության գոյությունը», սերունդներին գոնե և զուտ ճանաչողության իմաստով փոխանցելը հրամայականաց է:

Թեոդիկի (Թեոդորոս Լապճինճյան, 1873 թ. Կ. Պոլիս –1928 թ. Փարիզ) «Հուշարձան ապրիլ տասնմեկի» (Կ. Պոլիս 1919 թ.) կենսագրապատումը իր տեսակի մեջ բացառիկորեն առանձնանում է այն պարագայով, որ գրվել է Մեծ եղեռնից անմիջապես հետո, փորձառու բանահավաքի, հրապարակագրի, հայության ամենատարբեր շրջաններում մեծ համբավ վայելող գործչի կողմից, ում նկատմամբ ճակատագրի «մեծահոգությունը» փոխհատուցվեց իր իսկ հետագա անխոնջ գործունեությամբ: Ըստ ժամանակագիրների, 1915 թ. Թեոդիկը նույնպես շղթայակապ աքսորվում է Դեր Զոր, բայց հայ մարտիկների մի խմբին հաջողվում է նրան ազատել: Մինչ Առաջին աշխարհամարտի ավարտը Թեոդիկը ուրիշի անվամբ ծպտյալ աշխատում է Տավրոսի թունելախորշերի ռազմական շինարարությունում:

«Հուշարձան ապրիլ տասնմեկի» կենսագրապատումը ընդգրկում է շուրջ ութ հարյուր մտավորականների, ազգային-քաղաքական, ազգային-կրթական, եկեղեցական գործիչների, հանրային ոլորտի ազգանվեր ներկայացուցիչների համառոտ կենսագրականները՝ նրանց կյանքի անցած ուղու և գործունեության լուսաբանմամբ: Գրքի առաջաբանի հեղինակ, Մեծ եղեռնի վերապրողներից, Հայ Առաքելական Եկեղեցու սպասավորներից Զավեն եպիսկոպոսը, անդրադառնալով գրքի բացառիկությանը, կարևորում է ցայտ ավանդվող, հայ պատմության այս եղեռնապատումից հառնող «փաղանգը այն հերոսներուն», որոնք իրենց ժողովրդի ստրկության շղթաների դեմ պայքարելով՝ «գաղափարին հաղթանակի» նահատակներն էին:

«Այդ գիշերն էր, որ բռնակալությունը, բռնակալություններեն էն վայրագ, էն արյունկզակը, դավադրեց հայ ժողովրդի մտածող ու գործող ուժերուն դեմ: Այդ գիշերն էր, որ հավաքվեցան մեկին-մեկին հայ մտավորականները, ալ անգամ մըն ալ չվերադառնալու համար, ալ անգամ մըն ալ չքախելու համար այն դուռը, որ գոցված է իրենց ետևեն ցավի ու հուսահատության անհուն հառաչանքներու մեջեն: ...Ո՞ւր են անոնք, որ հավատացած էին, թե կրնան սպանել Գաղափարը խարույկներու վրա, հրով ու սրով: Պատմությունը ծածկած է անոնց անունները մոռացության անարգ քողով: Ու մինչդեռ կլլեն անարգանքի տակ դահիճները, զոհերը կխոսին փառքին մեջ, անմահներու լեզվով: Մեր հանձնախումբը մատուցանելով հարգանքի այս պսակ, բայց սրտագին հարկը մեր նահատակված գործիչներուն, որոնց մեջ բռնակալությունը հավակնեցավ սպանել հայ ազատագրության իդեալը, առաջնորդեցավ միակ մտածումով մը, տոնել գաղափարին հաղթանակը՝ բիրտ ուժին դեմ»,- ասվում է գրքի առաջաբանում:

Արժանահիշատակ է, որ մեծահամբավ այդ գործիչներից շատերի անունն այսօր հայ հասարակությանն անծանոթ է: Հանիրավի մոռացված գործիչներից Հարություն Շահրիկյանն իր ժամանակի օրենսգետ-քաղաքագետների այն ներկայացուցիչներից էր, որ 1903-ից 1915 թթ. Կ. Պոլիսի հայ մամուլում հանդես է եկել ազգային-քաղաքական, այսօր բնավ հրապարակություն չկորցրած հրապարակումներով:

Միևնույն ժամանակ լինելով Թուրքիայի Ազգային ժողովի պատգամավոր (Կ. Պոլիսի մեծահամբավ թաղամաս համարվող Սկյուտարից ընտրված), նա զբաղվում էր ոչ միայն ընթացիկ քաղաքականությամբ, այլև հրապարակում ժամանակին մեծ հնչեղություն ստացած աշխատություններ («Մեր հավատամքը», «Օսմանյան կայսրության անկման պատմությունը» և այլն):

Կարևոր համարելով ազգային պատմության դերը բոլոր ժամանակների համար, Հ. Շահրիկյանը առանձնահատկորեն նշում է ազգի անցյալի կարևորությունը՝ ապագայի կերտման շարունակականությունը ապահովելու համար: Ժողովուրդների հարատևության խնդիրը հուզել և առաջնային է եղել բոլոր ազգերի համար և բոլոր ժամանակներում. «Մեծ ազգերու պատմությունը անոնց մեծ դեմքերու պատմությունն է: Ջնջեցեք Կեսարներու, Ալեքսանդրներու, Արիստոտելներու պատմությունը և այլևս չմնար փայլը Հռոմեական, Մակեդոնական և Հունական մեծություններուն ու փառքերուն: Բայց այս պայմանադրական ճշմարտություն մըն է: Այդ մեծությունները չէին կրնար դարբնվիլ, եթե միջավայրը և զանոնք ծնող ժողովուրդները ընդունակ չըլլային այդ մեծությունները ծնելու, որոնք անցյալի հսպսրրությունն ունեին և ներկային պինդ փարված են իրենց ստեղծագործություններով ու իղձերով»:

Ընդհանրապես խոսելով ազգի հարատևության մասին, Շահրիկյանը կարևորում է մնայուն ազգային կյանք ստեղծելն ու դրանով առաջնորդվելը, այն, ինչ չափազանց դժվարին, եթե չասենք՝ անիրագործելի էր Արևմտահայաստանում, ավելի ճիշտ՝ 1908 թ. իշխանության եկած երիտթուրքերի իշխանության պայմաններում:

Մինչեղեռնյան և դրան հաջորդող ժամանակաշրջանները, ազգային կյանքի տեղատվությունները և մակընթացությունները, այսպես թե այնպես, իրենց խոր կնիքն են դրել Թեոդիկի Եղեռնապատումում ներկայացված գրեթե բոլոր գործիչների կյանքի և գործունեության վրա: Ավելին, նրանցից շատերը և առաջին հերթին արևմտահայ իրականության թերևս ամենահավասարակշիռ ազգային-քաղաքական գործիչը՝ Գր. Զոհրապը, որը նաև Թուրքիայի Պառլամենտի ամենաերևելի ներկայացուցիչներից էր, անխոնջ օրենսդիր-իրավաբանի իր գործունեությամբ, տարիներ շարունակ թուրքական քաղաքական-հասարակական կյանքի հորձանուտում մի տեսակ անփոխարինելի դեր էր ստանձնել: Ավելի իրազեկված էր և ավելի չափավոր՝ լայն բարենորոգություններ պահանջելու առումով, որպիսին Ռուսաստանի ու եվրոպական պետությունների թվացյալ աջակցությամբ պահանջում էին հայ քաղաքական ուժերը՝ Առաջին աշխարհամարտին նախորդող և հաջորդող տարիներին:

Սփյուռքահայ գրող Անդրանիկ Ծառուկյանի բնորոշմամբ՝ «Զոհրապը իր ժամանակին ամենեն ճառագայթող դեմքն էր, և ժամանակակիցներուն աչքին՝ ազգային հպարտություն մը: Եվ ահավասիկ որ լման հասակով մը կցցվի նաև ժամանակեն դուրս, բազմաշնորհ տաղանդին զանազանաձևովը կփիրապետե ամենուն, բայց չի ճնշեր ոչ մեկուն վրա, արծանի մը պես, որ բոլորեն շքեղ է, լայնանիստ ու ցեղեցիկ, բայց որ երբեք չի նսեմացներ շուրջի մյուս

գեղեցկությունները: Մեծ եղեռնի զոհերուն մեջ Զոհրապը ընդունեցինք որպես խորհրդանիշ, ոչ անպայման խառնվածքի նախասիրությամբ մը, և ոչ իսկ արժանիքին գերազանցությամբը, այլ պարզ այն պատճառով, որ առավելաբար իր անձին և գործին մեջ կգտնենք բոլոր պատասխանները այն հարցումներուն, որոնք հայ միտքը չարչարած են անցյալին, կշարունակեն չարչարել այսօր»:

Ընդհանրապես, «Հայ միտք» և «Մեծ եղեռն» հասկացությունների՝ արդեն 90-ամյա փոխգոյակցությունը առավել բացատրելի-տեսանելի է Զոհրապի անձով և գործունեությամբ: Լինելով հայ մտքի (ինչպես նաև ոգու) կենսունակ առարկայացման ջատագով, այլ բառով ասած՝ հայ մարդու բարեմասնություններով օժտված առինքնող անհատականություն, Զոհրապը դեռևս 1914 թ. իր օրագրային գրառումներում նշում է. «Հայոց վիճակը մեծապես մտահոգություն պատճառելու հանգամանք ունի: Թուրքիո և Ռուսիո մոտալուտ բախումին առիթով ո՞ր կողմը բռնել, ի՞նչ ընել. պատասխանատվությունով լեցուն խնդիր: Ու եթե նույնիսկ կարելի ըլլա կիսատ որոշում մը տալ, ո՞րն է մարմինը, որ զայն պիտի գործադրել տա և ազգին հոգվոց մեջ պիտի մտցնե: Եվ ճիշտ ատոր համար ավելի քան երբեք պետք է անհապաբար չդադրինք հետևելու դեպքերուն, դաս մը քաղենք անոնցմե և ապագա դեպքերը ճըշդիվ գուշակելու և անոնց համեմատ մեր ազգին բռնելիք ընթացքի մասին որոշ ուղղություն մը կարենալ գծելու համար»:

Դեպքերի զարգացման վայրիվերո ընթացքը և դրանց հաջորդող անակնկալ քաղաքական շրջադարձերը՝ սակայն նույնիսկ Զոհրապի համար էին լիովին անսպասելի: Այլևս անհնար էր երկու տերությունների մոտալուտ բախումից հայոց համար առաջացած քաղաքական հետևանքների դեմն առնելը: Այլևս չափազանց ժամանակավրեպ էր զոհրապյան «ո՞ր կողմը բռնելու» հարցադրումը, քանզի դեպքերի ընթացքը և ժամանակը աշխատում էին... ոչ հայոց օգտին:

Գր. Զոհրապի օրագրային գրառումների (հատկապես 1915 թ. ապրիլյան նշումները) կացնապահեստ տրամադրություններից ակնհայտ է, որ մեծ գրողի մտահոգությունը դարձյալ պատերազմական իրավիճակի հետևանքներից խույս տալն է: Սա չի նշանակում, թե նա իսպառ անտարբեր է հանկարծական քաղաքական զարգացումներին, և որ ամենաէականն է՝ այդ զարգացումների բովում հայությանը սպասվելիք անկանխատեսելի ՈՃԻՐԻՆ:

Պատերազմական գործողությունների զարգացումների, ռազմաճակատների տարբեր հատվածներում տեղի ունեցող սպասելի և անսպասելի տեղաշարժերի և մնացյալ ամեն ինչի մասին Զոհրապը խորհրդածում էր՝ չափանիշ ունենալով բարոյականի այն տեսակը, որը բարոյազուրկ և արյան ծարավ ազգերին բնավ չի առաջնորդել՝ «ժողովուրդներն ուղղակի իրենցով կառավարելու» հրամայական խնդիր ունենալով:

Փոքր «ազգերու անկումին» խնդիրը քաղաքական թատերաբեմում ավելի տեսանելի է, բայց «վստահելու չէ», քանզի, ըստ Զոհրապի, հնարավորինս անվնաս դուրս ելնելը «մեծ պատերազմեն» գոնե իր կողմից պատճառաբանվում և արդարացվում էր՝ իհարկե անտեղյակ Իթթիհատի չարանենգ ծրագրին, և պատահական չէ, որ Զոհրապը անուղղելի լավատեսի համբավ ուներ: Մեծ եղեռնի հետևանքները հայոց համար շարունակապես զգալի են՝ ոչ միայն այն պատճառով, որ պատմական բնօրրանից տեղահանված մի ողջ ժողովուրդ

ցեղասպանության զոհ դարձավ. այլ նույն ծրագրավորված բնաջնջվեց ժողովրդի ամենակենսատու ՈԳԵՂԵՆ շերտը՝ մտավորականությունը՝ ամենալայն ընդգրկմամբ: Թեոդիկի Եղեռնապատումի նշանակությունը մեկ անգամ ևս այս ուշագրավ հանգամանքով է փաստվում:

Ազգապահպանման հրամայականներից կարևորագույնը, թերևս, Հայրենիքի գիտակցումն ունենալն է. Ակնունու (Խաչատուր Մալումյան) համար, որը պայքարի բովում թրծված ազգային-քաղաքական գործիչ էր, լավատեղյակ արևելահայոց և արևմտահայոց դարավերջի և դարասկզբի ազգային նկրտումներին, Հայրենիքը նաև հավաքականության խորհուրդ և իմաստավորում ուներ, առանց որի ցանկացած ազգի գլխին դամոկլյան սրի պես կախված է ոչնչացման սպառնալիքը. «Ազատագրական արյունը չէ, որ սպառնում է մի ազգի, այլ թափառական կյանքը, անվերջ պարագրությունը: Մի մոռացիր, որ բսան տարուց ավել է, ինչ Օսմանյան բռնապետությունը հրձիգությամբ, սրով և կոտորածով, ինչպես ամբողջ Հայաստանում, մի նպատակ միայն ունի. վերացնել, նվազեցնել հայերին, դարձնել Հայաստանը անհայաբնակ, որպեսզի այդպիսով մի մեծ գերեզմանաքար դրվի այն մեծ, ողնորիչ հարցի վրա, որ զբաղեցնում է ամբողջ Եվրոպան՝ «Հայկական Հարց» անունով, և որը 600 տարվա ստրուկ ժողովրդի սրտում ծնել է և՛ հույս, և՛ հերոսություն, և՛ մարդկային մեծ իդեալներ... Այո, իդեալներ, որոնց իրագործման համար հայությունը միայն մի վայր ունի՝ Հայաստան: Մայր-Հայրենիքից դուրս հայ ժողովուրդը ազգ չէ... Մեզանից ավելի հալածական և փցնտ մեր նախնիքը՝ փանջանքների բովից անցնելով՝ մեզ թողեցին մի մեծ ժառանգություն-Հայրենիք: Միթե մենք մեր ապագա սերունդներին պետք է թողնենք յոկ հայկական գաղութներ...»:

Հայրենյաց դարավոր փառապանքի փրկությունը իր հետ բերում է հասարակական լայն գործունեություն ծավալելու՝ դրանով իսկ դույզն-ինչ նպաստելու հանրային կարծիքին, որը «կրնա մեծ շահեկանություն բերել գաղափարի պայքարին»: Այսպիսի համոզում ուներ ժամանակի մեծ հրապարակախոսներից Տիրան Քելեկյանը, որը տարիներ շարունակ խմբագրելով թուրքական մեծահամբավ «Սաբահ» օրաթերթը, հանդիսանում էր թուրքական հրապարակախոսության ռահվիրաներից: Ժամանակակիցների վկայությամբ, բազում թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ են բարեխոսել Բ. Դռան և անձամբ Թալեաթի առաջ Տ. Քելեկյանի անունը փպագրվող հայ մտավորականների ցուցակից հանելու համար, որպես պետությանը իր անմնացորդ եռանդը բերած գործիչ: Բայց նման սկզբունքային մտավորականներից «սպասվող» մտրավախությունը չէր կարող հայաջինջ քաղաքականություն ծրագրավորողներին հետ պահել իրենց նպատակներից, որոնցից առաջնայինը հայության Ոգին ոչնչացնելն էր: Տ. Քելեկյանի պես անձինք այդ նպատակների իրականացման ճանապարհին ոչ միայն կարող էին խոչընդոտ հանդիսանալ, այլև անսպասելի զարգացումների տեղիք տալ. «Ճշմարիտեն մի զատվիր, սակայն ճշմարտությունը ժողովուրդին գլխուն մի նետեր: Երբ ճշմարտություն մը անհաճո է, զայն ներկայացուր այնպես. ինչպես բարեկիրթ մարդ մը սրահին մեջ կներկայացնե իր համակրելի մեկ անծանոթը... զգացումը մեծ ազդակ մըն է. սակայն պետք չէ անոր դիմել, եթե գործունեության հետևանքը պիտի չվավերացվի միտքին կողմե...»:

Թեոդիկի Եղեռնապատումում, ուր ներկայացված հայ մշակույթի մեծանուն դեմքերի (Դ. Վարուժան, Սիամանթո, Ռ. Սևակ, Ռ. Զարդարյան, Ա. Հարությունյան, Գ. Բարսեղյան, Տ. Չյոկուրյան), ինչպես նաև մյուսների կենսագրապատումում ակնհայտ է Մեծ եղեռնի զոհերի ողբերգությունը: Այստեղ բնավ էլ չի կարևորվում նրանց տարիքը, քանզի նրանք բոլորն էլ լեցուն են եղել ստեղծագործ արարչության կենսատու լիցքերով և հավատամքով, հայ ոգու հավատամքով. «Մենք չենք գտներ բան մը, որ այնքան մերը ըլլա՝ որքան գիր ու գիրք: Գիր ու գիրք միայն շոշափելի ու զգալի ձևեր ու երևույթներ չեն, այլ ատոնց մեջ է խոսում ամբողջ ցեղը, իր մտքի և ընդունակության պատիվը»: Հրանդի (Մելքոն Կյուրճյան)՝ իբրև ազգային-քաղաքական գործչի և Թուրքիայի պառլամենտի անդամի այս խոսքերը ապրելու նշանաբան և շնչառու կենսակերպ են եղել: Քաղաքական գործունեությանը զուգահեռ տարիներ շարունակ դասավանդելով գրաբար և հայ դպրություն, ինչպես Կ. Պոլսում, այնպես էլ գավառներում, Հրանդը «իշխանավայելճ հայերենով մը» աշխատակցում էր հայ մամուլին՝ անդրադառնալով ոչ միայն ազգային հրատապ բազում խնդիրների, այլև գավառներում հայ ազգային կացությանը և իրականությանը: Ուշագրավ են Հրանդի «Պանդուխտի կյանքեն» խորագրով պատկերների շարքը: Իրականության խորքային դիտարկումներով ստեղծված ժամանակագրությունը մինչեղեռնյան հայ կյանքի և հայ հոգու «ազգայնացած մտածումներու» շքեղ հանդիսարան լինելուց զատ, հայրենապաշտության ջատագովում էր: «Գրաբարի դասագիրք», «Մեսրոպ և Սահակ անուն հայ նշանագիրներու պատմությունը» աշխատությունները խիստ արժեվորելի են, քանզի անխոնջ գործչի անմնացորդ սիրո և նվիրումի արգասիք են՝ հասարակական հնչեղություն և համակրանք վայելած:

Հրանդը նվիրյալների այն փաղանգից էր, ովքեր ունեին հստակ գիտակցումն այն բանի, որ հասարակական գործունեությունը պետք է ոչ միայն ազգանպաստ շեշտադրումներ ունենա, այլև ձևավորի հայրենապաշտ մի սերունդ, որ ազգի, հայրենիքի նվիրաբերմամբ առաջնորդվի և գիտակցական կյանքում ընտրի այն ճանապարհը, որը սկսվում և վերջանում է հայրենյաց փառքի ոգեկոչմամբ:

Երբեմն անհավատալի թվալու ատիճան զարմանք է հարուցում այն հանգամանքը, որ մի կարճ, բայց բուռն ազգային նվիրագործությունների ժամանակաշրջանում (1890-1915 թթ.), ինչո՞ւ չէ՝ նաև ազգային ողբերգության դաժանկետային տարիներին, իրար հետ, կողք-կողքի ապրել և ստեղծագործել են հայ մտքի, ոգու, բազկի բազում նվիրյալներ: «Անձինք նվիրյալք» այս գիտակցումի կարևորությունը խորապես են ապրել, ի գին ամեն ինչի հավատամքով ծառայել ի վերուստ տրված աստվածատուր կոչմանը:

Ռուբեն Զարդարյանը այդ խնկելի անուններից էր, գրող և խմբագիր: Ազգային գործչի իր համբավն ու երևույթները կշռադատելու ունակությունը տակավին 1909 թ. նրան մղեց հիմնադրել «Ազատամարտ» օրաթերթը, որը հետագայում պիտի համարվեր հայ ազգային կյանքի իրավ բեմ: Ժամանակի բազմաթիվ գրողներ, մշակույթի, հասարակական, քաղաքական գործիչներ իրենց ազգային-քաղաքական մկրտությունը ստացան «Ազատամարտ»-ում, ձևավորվեցին գաղափարապես և ըստ ամենայնի իրենց նպաստը բերեցին դժվարագույն ժամանակներ ապրող հայության կյանքի դույզն-ինչ բարելավմանը: Չհաջողեցի՞ն նրանք, եղա՞ն ականջալուր թուրքական վերնախավի սին խոստումներին: Բարենորոգությունների լայն ծրագիր պահանջելով հավատացի՞ն Ռուսաստանի և Եվրոպայի խոս-

տումներին, թե թուրքական խարդավանքներին էին անպատրաստ: Սրանք բոլորովին այլ խնդիրներ են՝ բազմիցս արծարծված թե՛ ժամանակի և՛ թե հետագա շրջանի պատմաբանների կողմից:

«Ժողովուրդներու արյունը այնքան առատ ու անհաշիվ հոսած է՝ որքան անօրինակ, աննախընթաց ու հազվադեպ եղած է խղճահարությունը բռնապետին մութ հոգիին մեջ: Բայց բռնապետին արցունքը չէ կաթած երբեք պատմության մեջ: Ահա թե ինչու համար վշտակիր մարդկության Տառապանքը ու Արյունը՝ իբրև նախատինք ու վրեժխնդրություն պիտի շարունակեն պղպջալ ու վեր ժայթքել միշտ բռնավորների պալատներուն սեմին վրա և բազմատեսակ բազմության ընդդեմ, մինչև որ ընկերական արդարության ու ազատության մեծ Գաղափարը գա վերջ դնելու մարդկային ստրկության և շահագործության, խնայելով Բռնավորներուն պղնձե աչքերը՝ կարեկցության արցունքներն, և մարդկությունը՝ իր ծով արյունե»: Ռ. Զարդարյանի այս մտածումները իր պատմական հայրենիքում վտարանդված այրող ազգային գործչի, գրողի ապրումները չեն միայն, որ ապրելով դժոխային ներկան, ապագան չէր տեսնում, և եթե տեսնում էր, ապա ներկայի զարգացումների հոլովույթում միայն: Համենայն դեպս, քաղաքական իրավիճակն այլ բան չէր հուշում, մանավանդ, երբ խնդրահարույց է դառնում նժարի վրա դրված մի ողջ կենդաբնակ ժողովրդի ճակատագիր:

Ընդհանրապես, հանրագիտարանային նշանակություն և մնայունություն ունեցող թեոդիկյան վավերագրապատումներում ներկայացված մտավորականության գերակշիռ մասն իրենց անցյալի գործունեությամբ, ստեղծարար աշխատանքով մեր պատմության մեջ ոչ միայն խոր հետագիծ են թողել, այլև ստեղծած մնայուն արժեքներով իրենց ժամանակի ոգու կրողն են եղել՝ մշտապես ազգային մտահոգություններով ներշնչուն, ազգային խնդիրներով բազմազբաղ, հնարավորինս իրենց գործունեությամբ նպաստելով ամենայայն առումով հայ կյանքի դժվար պայմանների բարելավմանը: Սակայն իրականության և իդեալի սահմանագծին ժամանակն այլ մարտահրավերներ էր առաջադրում:

«Իրականություն և իդեալ, առանց այդ երկվորյակ ըմբռնումներուն ազգ մը միշտ ենթակա է անկումներու և դառն հուսախաբության: Մեկով միշտ կյանքին շփումը կունենանք, մյուսով մեր աչքերը հեռանշող ապագին կհառենք»: Խմբագիր, հանրային գործիչ, ազգային երեսփոխան Սարգիս Մինասյանը, որ քաջահմուտ էր նաև ֆրանսերեն լեզվին, «աշխատասիրած է Ֆրանս-հայերեն բառարան մը», իր փորձառությամբ և իրականությունը ըստ ամենայնի արժևորելու «իրատեսական ճիգով մը» չէր կարող «անկումներու» կանխատեսությունը ու ներքին տագնապը չունենալ: «Իրականության մարդ մը»՝ այսպես է նա բնորոշել մեծ հայդուկապետ Աղբյուր Սերոբին (Սերոբ Վարդանյան), որի կենսագրապատումը հրատարակել է 90-ական թվականներին, Ժնևում, Արամ Աշոտ գրչանվամբ: Նույն այս բնորոշումը վերաբերվում է և իրեն:

Մտավորականի ուրույն նկարագրով և «հոգվո վեհությամբ» օժտված այս հայորդին, տակավին «Դրոշակ»-ում տպագրած հոդվածներում, հայ-թրքական հարաբերությունների մասին իր եզրահանգումներում իրատեսորեն այն համոզմունքն էր հայտնում, որ հնարավորինս պետք է հոգածու լինել հայ ազգաբնակչության նկատմամբ՝ որոշակի անվտանգության երաշխիքների ապահովմամբ: Երկար տարիներ ապրելով եվրոպական մի շարք եր-

դիվանագիտության «խարդավանալից և սնանկ կըրներում. քաջ ճանաչելով ?ոլիտիկան (?) ըլլալու ճիգեր ցույց կուտան»՝ Ս. Մինասյանը նկրտումները, որով երևութապես օգտակար ըլլալու ճիգեր ցույց կուտան»՝ Ս. Մինասյանը նկրտումները, որով երևութապես օգտակար հայուն վերջին և փհսանելի-փրկարար հույսը՝ Եվրոպեցիք այն համոզմանը չհանգեց, որ «հայուն վերջին և փհսանելի-փրկարար հույսը՝ Եվրոպայի կողմն փարփրված բարենորոգության շնորհիվ կարելի կըլլա ազգ ապրեցնել»:

Նախապատվական մտավորականների փաղանգի մեջ դոկտոր Նազարեթ Տաղավարյանը առանձնանում է ոչ միայն կյանքի որոշակի փորձառությամբ ու թուրքական շրջանակներում իր գործունեության տարբեր ոլորտների «համբավաբերությամբ մը, զոր միայն զգոնություն արթնցած է՝ ամենքին հետ բարձր շփումներուն ատենին», այլև ուղղամիտ մտավորականի կեցվածքով ու նվիրվածությամբ:

Փարիզում դարավերջին (1896 թ.), երկրագործություն և այգաբանություն ուսումնասիրելով, Տաղավարյանը վերադառնում է Կ. Պոլիս, պաշտոնավարում Երկրագործության նախարարությունում, միաժամանակ տարբեր բնույթի հոդվածներով թղթակցում պոլսահայ թերթերին: Կարճ ժամանակ անց նա վերստին Փարիզ է վերադառնում՝ հետևելով Սորբոնի համալսարանի բժշկական դասընթացներին: Հետաքրքրությունների լայն շրջանակ ունեցող մտավորականի, ազգային խնդիրներով ապրող մարդու նրա փեսակը, համիդյան մղձավանջի տարիներին չի կարողանում «հեռու գտնվիլ ապրելու տենսակ մը անկարողությամբ» իր ժողովրդին պատուհասած «անագորույն օրերեն» և վերադառնում է Կ. Պոլիս. «Սահմանադրության հռչակումին (1908 թ.- Ա. Ա.) ընտանյոք Կ. Պոլիս դարձա և ընտրվեցա ազգային երեսփոխան, ապա՝ մեպուս Սվազեն, երբ կաթողիկոսության ընտրության իբր պատվիրակ՝ Կովկաս կգնտվեի: Պառլամենտին մեջ վիճեցա մանավանդ հողային հարցի և ազգային իրավանց պահպանումին ի նպաստ»:

Դոկտ. Ն. Տաղավարյանի կենսագրությունը, որ այնքան բացառիկ իրադարձություններով է հարուստ, ազգային, գիտական, մշակութային գործչի նրա ծավալած գործունեության վկայությունն է: «Մարդկային կազմախոսություն», «Ոլորվածք պատմության հայոց», «Մանրէաբանություն», «Տիեզերք և իր կազմությունը», «Առողջապահություն», «Մարդկային սաղմախոսություն»՝ սրանք նրա՝ հետաքրքրությունների անընդգրկելի շրջանակ ունեցող գիտնականի, ուսումնասիրողի տպագիր ստեղծագործությունների ոչ լրիվ ցանկն է: Ցարդ անտիպ աշխատություններից, հիրավի, կոթողային համարվող «Կենդանաբուծություն» փասհատորյակը գրվել է շուրջ քառորդդարյա անհուն տքնանքով, «զոր Խրիմյան Հայրիկի թելադրությամբ պատրաստած եմ».- գրում է իր ընդարձակ ինքնագրապատումում: Միջանկյալ նշենք, որ բազմահատորյակ այս աշխատությունը մինչ այսօր վրիպել է բանասեր-պատմաբանների ուշադրությունից: Եթե ձեռագրերը պահպանվել են, թերևս կարելի է գտնել Պոլսո Պատրիարքարանի դիվանում:

Այս բազմագբաղ և գիտական ամենատարբեր ոլորտներում իր ծանրակշիռ խոսքով և խորհրդածություններով հայտնի մտավորականը նախ և առաջ ազգի ու ազգայինի ջատագովն ու պանծացնողն էր: Հայությունը նրա համար «այս շարունակական հարվածներու հետևանոք, փկարանալով՝ ներքին ուժի մը պիտի փիրապետեր»: Եվ այս հանգամանքը անհրաժեշտություն էր դիտվում, քանի որ «Հայը կա ու կմնա կառչած Մայր Հայրենիքին, խոսելով իր բարբառը, պահելով իր տոհմային պատմությունն ու ավանդությունները, և այս ամենը շնորհիվ իր բարոյական հատկությանց ուժին, այսինքն՝ հայրենասիրության, քաջու-

թյան, չարքաշության, խնայողության և ընտանեկան հարկի սրբության նախանձախնդրության, որով և փոքուն ազգ կոչված է պատմագիրներե:

Քրիստոնեական տեսակետով հայր մեծ դեր մը կատարած է, ոչ միայն Հիսուսի կրոնը պաշտոնապես ընդունող ազգը եղած է, այլև Նազովրեցվույն վարդապետությունն այնչափ զորացած է, որ այդ երկիրը եղած է զորավոր թումբ մը Արևելքի մազդեականության և Հարավի Իսլամության դեմ: Ասիո այս միակ կարևոր քրիստոնյա ազգը պաշտպան կանգնած է դրացի բոլոր փոքր Եկեղեցիներու, և Միջին դարուն՝ իբրև առաջնորդ ու օժանդակ՝ ծառացած է Արևմուտքի Խաչակրաց Ս. Երկիրն ազատագրելու գործին մեջ, և որու հետևանոք՝ վրա տված է իր Կիլիկյան թագավորությունը: Իբր Քրիստոնյա իր այս դերն արժանի ըրած է զայն՝ բազմաց կողմանե նահատակ ազգ անվանումին»:

Ոգու կորովի նմանօրինակ ուժգնությամբ, հավատամքով լցուն մտավորականի ապրած կյանքը, նախնյաց հիշատակները վերապրեցնելու, առավելս խնկարկելի ու ժառանգորդելի դարձնելու միտումով է միայն հավերժահունչ ու անլռելի: Այն, ինչ «արյան անհագելի ծարավով տարված «եղեռնագործ ազգի մը կողմն» բնավ չներվեց: Ազգին անհիշողություն թողնելու մոլուցքով...» արյան գետեր հորդեցան ու մարմիններ պղծվեցան քաղաքակիրթ-անբարո աշխարհին հայացքին առջև, ամենքին հայացքին առջև»:

Լևոն Լարենցը (Քիրիսճյան) այն նվիրյալ գաղափարակիրն էր, որ նույնիսկ քաղաքական պատճառներով հեչակյան իր ընկերների հետ վտարանդվելով Ամերիկա (Բոստոն)՝ «չդադարեցրեց» հրապարակախոսի ու թարգմանչի գործունեությունը՝ Բոստոնում հրատարակելով «Ձայն Հայրենյաց» թերթը: Այնուհետև շատերի պես, հավատ ընծայելով իշխանության եկած երիտթուրքերին (1908 թ.), վերադառնում է Կ.Պոլիս, շարունակում ազգային հասարակական գործունեությունը՝ զբաղվելով լրագրողական և թարգմանչական աշխատանքով:

«Ֆրանսիական հեղափոխության պատմություն» բազմահատորյակի և Լինչի «Հայաստան» չափազանց արժեքավոր երկհատորյակի, ինչպես նաև «Ղուրանի» (անգլերենից) թարգմանությունները Լ. Լարենցի կողմից պատահականորեն չէին մտահղացվել: Ակադեմիական իմացության տեր ազգային-մշակութային գործչի համար խիստ կարևոր էր ժամանակի հրամայականը, այն է՝ հայոց մշակութային և, ինչո՞ւ չէ՝ քաղաքական առաջընթացի համար ստեղծել նախադրյալներ՝ ազգային ինքնագիտակցության զարթոնքի սաղմերը «տեսնել» եվրոպական քաղաքակրթության և ազգերի պատմության (զարգացումներ ապրող) հոլովույթում: Եվ, ինչո՞ւ չէ՝ հաղորդակցվել թուրք ազգի մարդկային և փիլիսոփայական հոգեբանությանը՝ նրանց կենցաղը և գիտակցությունը կազմավորող Ղուրանի միջոցով... Մի հանգամանք, որ հետագայում անչափ կարևորեց Մեծ եղեռնի վերապրողներից՝ մեծանուն գրող Հակոբ Օշականը՝ թուրքական ցեղի ու «զգայնությանց սահմռկելի» տիպաբանությունը ներկայացնելով իր վեպերում և դրամաներում...

Բարսեղ Շահբազը ժամանակին ծավալած փաստաբանական և հրապարակախոսական գործունեությամբ հանրության ուշադրությանն արժանացել էր 1919 թ.: Փարիզում իրավաբանական կրթություն ստանալուց հետո աշխատակցել է «Հայրենիք» և «Հորիզոն» պարբերականներին. «Օժտված էր դյուրասահ գրելու և խանդավառորեն հրապարակախոսելու կրկնակ կարողություններով»: Քաղաքականությունն իր պատկերացմամբ ազգերի և հայ-

կապես փոքր ազգերի անվտանգությունը սասանող «երևույթ մըն էր». դրանով իսկ՝ «Ինչ է պայմանադրություն» սուտ մըն է քաղաքականությունը: Ինչ է պատերազմը: Ինչ է եղկելի «պայմանադրություն» սուտ մըն է քաղաքականությունը: Ինչո՞ւ քանի մը հոգիներ փառապին հեղափոխականությունը, ի՞նչ է հեղափոխությունը: Ինչո՞ւ քանի մը հոգիներ փառապին հեղափոխականությունը, ինչո՞ւ այսինչ ազգին պատկանող երիլով, ուրիշներ փառապին գանոնք զսպելու համար. ինչո՞ւ այսինչ ազգին պատկանող երիլով, ուրիշներ փառապին գանոնք զսպելու համար... Ո՞վ է իրավունք տվեր դասակարգ մը մարդոց փասալյնելու փարվին սպաննելու համար... Ո՞վ է տվեր ըսելու, թե հողի այս պատառը «իրենցն» է և այն պատառը՝ «ուրիշներուն»: Ո՞վ է տվեր ըսելու, թե հողի այս պատառը «իրենցն» է և այն պատառը՝ «ուրիշներուն»: Ո՞վ է տվեր սահմանները, որ մարդիկ կանգնին, որոնք առանց զսպելու, ապրիլ գիտնալու՝ կխճողեն միտքերը. Երազը երկունքի կվերածեն ու կուզեն անպատճառ, որ Արցունքի ծովերը հոսին-պաքերը. Երազը երկունքի կվերածեն ու կուզեն անպատճառ, որ Արցունքի ծովերը հոսին-պաբծվին ամենուր»: Մտածումներ, խորհրդածություններ, որոնց պատասխանը «կերպ մը՝ գոնե» ստանալու համար ժամանակի հորձանուտում «կարգ մը պատմական եղելություններ ճանչնալու անհրաժեշտություն է պետք՝ բիրտ իրականությունը ականատեսի աչքով տեսնել»:

Սակայն իրականությունը, ինչո՞ւ չէ՝ նախ և առաջ բարոյականի, «իմացական դաստիարակության» պահանջներ էր առաջադրում: Տաղանդավոր գրող և գրական քննադատ Արփաշես Հարությունյանն այդ գիտակցումով բարոյականություն սերմանող «գրականության շահը նկատում է գերագույնը բոլոր կարեւի շահերուն»: Այնուհետև ավելացնում. «Աշխարհի շահը նկատում է գերագույնը բոլոր կարեւի շահերուն»: Այնուհետև ավելացնում. «Աշխարհի տեսարանն՝ ըստ կարելվույն գեղեցկության զգալու պայմանավ միայն՝ ապրելուն մեջ շահեկանություն կգտնեմ»:

Բացառիկ օժտվածության տեր գրողն ու մտավորականը, որ «սերունդի մը դաստիարակության խնդիրը՝ ազգի բարոյականին նպաստաբեր կհամարեր», իր իսկ խոստովանությամբ, «բոնապետական» (համիդյան - Ա. Ա.) «շրջանին գավառեն դուրս չէր ելած»՝ ցերաջամբ, «բոնապետական» (համիդյան - Ա. Ա.) «շրջանին գավառեն դուրս չէր ելած»՝ ցերադասելով ուսուցչությամբ ազգի նկարագրի անխաթարության նպաստմանը: Այն, ինչ ինքն անվանում էր «իմացական դաստիարակություն» և չափազանց մեծ կարևորություն տալիս Արևմտահայաստանում հայ ինքնության ազգային դիմագծի պահպանմանը՝ մեր ժողովրդի համար բախտորոշ և ճակատագրական դարասկզբին:

Ինքնության պահպանման խնդիրն, ընդհանրապես, մեր «առաքելական ոգու կարողությամբ, նպաստաբեր լինելության անշեջ կորովով ու տոկուն ընդդիմությամբ մը» (Հ. Օշական), գաղափարի նվիրյալների ամենօրյա հոգածու գործունեությամբ էր իմաստավորվում: Ինչպիսիք՝ Մեծ եղեռնի զոհերի փաղանգում, բնականաբար, կային, և նրանց թվում Համբարձում Պոյաճյանը (Մեծն Մուրադ. չշփոթել Սեբաստացի Մուրադի հետ. Ա.Ա.): Ազգային, քաղաքական այս անվանի գործիչը Հնչակյան կուսակցության կազմակերպիչներից էր, «զինական ոգին»: Նրա ազգային գործունեությունը սկսվում և իր անընդհատ շարունակությունն է ունենում մինչեւ Մեծ եղեռն: Արդեն 1888 թ. համիդյան բռնակալական իրավակարգը սարսող, Գում Գաբուի նշանավոր «անզեն ցույցեն» հետո, որի կազմակերպիչն էր, փարագրվում է Աթենք: Այնուհետև՝ Կովկասից Սասուն՝ ղեկավարելու 1895 թ. Սասունի հայտնի ապստամբությունը, որն առիթ հանդիսացավ եվրոպական տերությունների միջամտությանը՝ Թուրքիային բարենորոգումների ծրագիր առաջարկելու, որով էապես պետք է փոխվեր, դույզն-ինչ բարվոքվեր Արևելյան Անատոլիայում ապրող ազգային փոքրամասնությունների վիճակը, և առաջին հերթին՝ մյուս ազգերի և ազգությունների համեմատ ակնհայտ մեծամասնություն կազմող՝ հայ ազգաբնակչության:

Համբարձում Պոյաճյանի կյանքը (մինչև 1915 թ. օգոստոսի 24-ի անագորույն օրը, երբ մի խումբ ընկերների հետ իր վախճանը կնքեց կախաղանի վրա) շարունակական աքսորների, դատավարությունների, արգելափակումների մի ընթացք էր, մինչև «Սահմանադրության վաղորդայնին» Կ. Պոլիս վերադառնալը, որտեղ ընտրվում է Ազգային երեսփոխան (Գումգաբուից), այնուհետև՝ Թուրքիայի պառլամենտի անդամ (մեպուս) Ադանայից:

Սա այն ժամանակաշրջանն է, երբ արդեն տեղի էին ունեցել Ադանայի (1909 թ.) սահմռկելի կոտորածները և ժամանակակիցների վկայությամբ մերկացնող երևույթներ ունենալով Թուրքիայի պառլամենտում՝ իր դեմ հարուցում է թուրք ազգայնական և չափավոր ազգայնականության զայրույթը: Այն, ինչ շատ կարճ ժամանակ անց Հ. Պոյաճյանին չներվեց, ինչպես նաև նույն խնդիրները շոշափող պառլամենտի շատ հայ անդամների, այդ թվում՝ Վարդգեսին (Հովհաննես Սերենկյուլյան):

Մինչ ազգային, հեղափոխական գործունեություն ծավալելը, Վարդգեսը տակավին երիտասարդ ստանձնում է «Նեփիկ փաշայի ազգային վարժարանի տեսչությունը»: 1892 թ. «կմտնե ՀՅԴ կուսակցության մեջ և իր գործուն մասնակցության հետևանոք կբանտարկվի»: Վարդգեսի հետագա գործունեությունը սերտորեն կապված է հայ հեղափոխական շարժումների ամենաառանցքային իրադարձությունների հետ: Տարբեր տարիների բանտային տաժանագին կյանքը ոչ միայն նրան չընկճեց, այլ ավելին՝ պայքարի կորով ու վճռականություն ներշնչեց: Ընդհուպ այն ժամանակ, երբ Թուրքիայի պառլամենտի անդամ էր և օրենսդրական նախաձեռնությունների ու հայանպաստ բարեփոխումների անվերապահ կողմնակից. «Տեղական հայ և օտար լրագիրների օրը օրին սյունակներ կնվիրեին իր մատուցած զգայացունց վճներուն արձագանքն ըլլալով: Ապրիլ 11-ի Մեծ Կարավանին վերջն էր, որ այս աննկուն հասարակական գործիչն ալ աքսորի ցուպը ձեռք կառնե՝ Զոհրապի հետ ընկերովի, եղնրականորեն անտառուսակ անհետելով միասին»:

Գր. Զոհրապի օրագրերում պահպանվում են այն գրառումները, որոնք իր՝ Զոհրապի, Արմեն Գարոյի (Գարեգին Պաստրմաճյան) կողմից կազմված հարցաթերթիկի պատասխաններն են Առաջին աշխարհամարտի իրադարձությունների զարգացումների կանխատեսումներ ամփոփող: Խնդրահարույցը հայ ժողովրդի ճակատագիրն էր նրանց համար՝ պատերազմական հորձանուտում հնարավորինս անվնաս «զենենից ելլալու» մտահոգությունը:

Հարցաթերթիկը թվագրված է՝ 1914:

«1. Գերմանիա՞ն պիտի հաղթե, թե՞ Անգլիո-Ֆրանսիան:

2. Հաղթությունը խիստ մեծ և ջախջախի՞չ պիտի ըլլա, թե՞ բաղկանա ձեռք բերված կարևոր առավելություններն:

3. Որքա՞ն պիտի տևե պատերազմը, մինչև խաղաղության դաշինքին ստորագրվե՞լը:

4. Բալքանյան պզտիկ պետությունները և Թուրքիան պիտի մասնակցի՞ն պատերազմին:

5. Թուրքիո մեջ ներքին խռովություններ պիտի ծագի՞ն, թե՞ ոչ:

6. Խաղաղության վերահաստատումեն Թուրքիան պիտի շահա՞ծ ելլե, թե՞ կորսնցուցած հողային ամբողջության և քաղաքական իրավանց տեսակետեն:

7. Հայոց վիճակը պատերազմի միջոցին ի՞նչ պիտի ըլլա, ի՞նչ պիտի ըլլա Ռուս-թուրքական պատերազմի մեջ Ռուսիո հայոց ընթացքը: Ռուսիո կողմը պիտի անցնի՞ն, թե՞ ոչ: Միջին Արևելքի, Կիլիկիո հայությունը ի՞նչ պիտի ըլլա:

8. Խաղաղությունը վերահաստատված ժամանակ, Թուրքիո հայությունը քաղաքական տեսակետե շահած, թե՛ կորսնցուցած դուրս պիտի գա»:

Ստորև ներկայացնում ենք միայն Վարդգեսի պատասխանները՝ նշելու համար ոչ միայն նրա պես փորձառու քաղաքական գործչի, այլ նաև շատերին համակած այն լավատեսական տրամադրությունները, որոնք բնավ դույզն-ինչ կասկածի տեղիք չէին տալիս, ավելին՝ չափազանց անսպասելի էր, որ ծրագրավորվում է մի ողջ ժողովրդի ցեղասպանություն՝ քաղաքակիրթ մարդկության անտարբեր հայացքի ներքո.

«1. Անգլիո-Ֆրանսիացիները պիտի հաղթեն:

2. Հաղթությունը՝ ցախսցախից:

3. Տարին մը պակաս պիտի տևե:

4. Ոչ:

5. Ոչ:

6. Թուրքիա շահած չի պիտի ըլլա:

7. Թուրք-ռուս պատերազմ չի պիտի ըլլա:

8. Հայերը շահած պիտի ելլեն»:

«Լավատեսական ողբերգության» շեշտադրվածությունը, նորից ենք կրկնում, բնորոշ չէ միայն Վարդգեսին: Եվ քաղաքական կանխատեսումներն էլ ամենևին իրականությունը և դեպքերի զարգացումները բովանդակային խորքով և իրատեսորեն չգնահատելու հետևանք չեն, մանավանդ Վարդգեսի թրծվածությամբ ազգային գործչի կողմից, այլ արգասիք՝ նենգ դիվանագիտության և տիպիկ թուրքական երեսպաշտության և անպատկերացնելի ցեղային խարդավանքների:

Թեոդիկի Եղեռնապատումում բազմաթիվ են այն ազգային, հասարակական գործիչները, որոնց անունը փառքով է պսակված մեր պատմության հերոսական և ողբերգական փարեզրության մեջ: Իշխան (Նիկողայոս Պողոսյան), Վռամյան (Օննիկ Դերձակյան), որոնք «հայ ազգի բարձր համարումով ու ազնվական տիպարով, ոգու մարտիկներեն զատ, եղած են գաղափարի հավատավորներ: Քիչ ազգեր ունին ասոնց պես վեհ նվիրյալներ»:

Գրքում մեծ տեղ է հատկացված նաև («Կենսագրական» բաժնի երկրորդ մաս) գավառներում (Վան, Խարբերդ, Սվազ, Շապին Գարահիսար, Ուրֆա, Մուշ, Սասուն, Բաղեշ, Կեսարիա, Թալաս, Այնթապ, Իզմիր) գործունեություն ծավալած անձանց ազգային-քաղաքական «իրողությանց» մասնակցությանը և կատարած ազգանպաստ դերին՝ դարավերջից սկսյալ մինչև Մեծ եղեռն: Կան նաև այնպիսիք, որոնք տեղահանության օրերին, վերին պատահականությամբ զերծ են մնացել բռնություններից և փրկվել: Նրանց թվում Թեոդիկը նշում է «ներհուն վենետացուն»՝ Հայր Արսեն Ղազիկյանին:

Առանձին բաժնով ներկայացված են Մեծ եղեռնի զոհ շուրջ երկու հարյուր հայ եկեղեցականների կենսագրությունները: Ուշադրության է արժանի նրանցից շատերի «խաչին հաղթանակի» նվիրվածությամբ ծառայելու բացառիկ կամքն ու «մարտոց մեջ տոկունություն սերմանելու անողրդվելի կամքը»: Վարդան ծայրագույն վարդապետ Հակոբյանին ժամանակակիցները սիրով և պատկառանքով են հիշում հատկապես իր եկեղեցաշեն գործունեության համար: Հայր Սուրբին անձամբ ճանաչել և գնահատանքով է վերաբերվել Խրիմյան Հայրիկը: Աստծուն ծառայելու իր հավատարմությամբ ու գորովանքով Վարդան ծ. վ.

Հակոբյանը դրանով իսկ ծառայում էր իր ժողովրդին՝ օրհասական և ճակատագրական օրերին. «1904 թ. Սասնո ահավոր կոտորածին՝ ինք էր, որ Մուշ փութաց և արկածյալ ժողովուրդը հովվեց եռանդյամբ, մինչ Ս. Կարապետի վանքը գործ պահելու համար ոտնձգությունները՝ համիդյան կառավարությունը հոն կղրկեր 200 զինյալ, որոնք խնյոք կեցան մինչև Սահմանադրության հռչակումը շնորհիվ Հայր Սուրբին շրջահայացության»:

Այն ամենն, ինչ տեսավ և ապրեց Մեծ եղեռնի ժամանակ հայ հոգևորականությունը, անպատկերելի է, սահմռկեցուցիչ, քանի որ թուրքական կառավարիչները հատուկ հրահանգավորված տեղեկացրերում, հայ «զինու փարիքի» փղամարդկանց, մտավորականության նրանի ներկայացուցիչների, կանանց ու երեխաների ոչնչացումից զատ, ցուցում էին տվել առանձնապես դաժանորեն վերաբերվել հայ հոգևորականության նկատմամբ, որպես ազգի ոգու սնրմանողների: Ժամանակագիրների վկայությամբ, հարյուրավոր հայ հոգևորականներ զոհվեցին Մեծ եղեռնի ժամանակ՝ իրենց արյամբ առավել սրբացնելով պատմական Հայրենիքի այնքան ավերներ ու ավարներ տեսած հողը:

Բացառիկ խնամքով և նվիրումով է Թեոդիկը համահավաքել, կազմել և հրապարակել «Հուշարձան ապրիլ տասնմեկի» եղեռնապատումը, այնպիսի սիրով ու հոգածությամբ ընդհանրացնելով այն կարևորն ու զայրց համար ազգային-պատմաճանաչողական նշանակություն ունեցող կենսականը, որ վերապահված էր միայն իրեն՝ «Ամենուն տարեցույցների» անխոնջ հրատարակչին: «Հուշարձան ապրիլ տասնմեկի» եղեռնապատումը եզրափակվում է Մեսրոպ եպս. Նարոյանի խոսքով, որ հարկ ենք համարում ստորև որոշ կրճատումներով մեջբերել. «Հայ հոգևորականը ժողովրդի ծոցեն ծնած է և անոր անբաժանելի բաղկացուցիչ տարրը կազմած է: Շատ խոնարհ ու ժողովրդական է անոր տիպարը, հակառակ, որ մեր քաղաքական կյանքին անկումեն ի վեր բարձրագույն ղեկավարը Ազգային Եկեղեցին եղավ:

Հայ կրոնավորը վճռական վայրկյաններուն պահած է իր բարձրությունն ու արժանավորությունը: Հսկա և լուսաշող դեմքերու պատկառելի շարք մը կզեղազարդեն մեր պատմությունը Դ դարեն ի վեր: Ան յիաձեռն բերած է իր մասնակցությունը ազգային քաղաքակրթության փաճարին մեջ: Ազգին ճակատագիրը դարբնող բոլոր կարևորագույն շարժումներուն ու հզոր ճիգերուն մեջ փիրական դեր մը ունեցած է: Ուստի շատ բնական էր, թե Ցեղին մարտիրոսության սրբազան սեղանին վրա իր զոհաբերության բաժինը մեծագույնը պիտի ըլլար:

Դժոխային ոճրագործության ահավոր սպանդին մեջ հայ կրոնավորը - եպիսկոպոս, վարդապետ - քահանա - սարկավագ նահատակության պսակով անմահացան: Պետք է ըսել, ի պատիվ հայ հոգևորականության, որ զրեթե չենք կրնար արձանագրել կրոնափոխության դեպքեր և վերապրող խլյակներուն մեջ հազիվ կհանդիպինք քանի մը հոգևորական՝ մազապուրծ նղած: Կարելի չէ ստույգ վիճակագրությամբ կազմել ցուցակը նահատակ եկեղեցականներու: Շատ մեծ է անոնց թիվը, քանի որ ամենեն փոքրիկ գյուղն անգամ ուներ իր ժամն ու քահանան:

...Հավերժական փառքի և անմահության դափնիներուն արժանի են այն բազմաթիվ կրոնավորները, ամեն աստիճանի, որոնք իրենց սուրբ արյունը խառնեցին բյուրավոր ժողովրդյան մաքուր արյան հետ, և սփվարացուցին լուսապսակ երամը Սուրբ Ղևոնդյաններուն»:

*ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ*
*Արվեստագիտության դոկտոր*

# ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ. ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԽՈՐԱՆԻ ՄԵԾ ՆՎԻՐՅԱԼԸ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Ինչպես Արշիլ Գորկու քույրը՝ տիկին Վարդուշն էր հայտնում, Գորկին (Ոստանիկ Ադոյանը) երազում էր իր անունը ավելացնել Սեզանի և Պիկասսոյի կողքին, որպես արդի արվեստի առաջնորդության ևս մեկ ուղենիշ: Նա այսօր գրեթե միահամուռ համարվում է իրոք այդպիսի ուղենիշ՝ լինելով կապող օղակ 20-րդ դարի երկու խոշորագույն ուղղությունների՝ եվրոպական սյուրռեալիզմի և ամերիկյան աբստրակտ էքսպրեսիոնիզմի: Այդ երկու հոսանքներն էլ տվել են մեծ նկարիչներ (Տանգի, Միրո, Դալի, Մասոն, Քունինգ, Պոլլոք, Ռոթկո և ուրիշներ), բայց միայն Գորկուն էր վիճակված այդ առաքելությունը իր կյանքի վերջին տասնամյակում:

ԱՄՆ-ում 1930-ական թթ. մեծ դեպրեսիան ծնեց երկու հանճարեղ հայ արվեստագետների՝ Արշիլ Գորկուն և Վիլյամ Սարոյանին: Գորկին ծնվել է 1904-ի ապրիլի 15-ին Վանի նահանգի Վարի Հայոց Ձորի Խորգոմ գյուղում, Սեդրակ Ադոյանի և Շուշանիկ Տեր-Մարտիրոսյանի ընտանիքում: 1908-ին նրա հայրը մեկնում է ԱՄՆ՝ Ռոդ Այլենդի նահանգ, և մնում այնտեղ: Ոստանիկը սկսել է նկարել 4-5 տարեկան հասակից: Սկզբում նա սովորել է Խորգոմի Ս. Վարդան եկեղեցուն կից դպրոցում, 1910-ից՝ Վանի Հյուսիսային Հայոց դպրոցում: Այգեստանում (Վան) հաճախել է ամերիկյան միսիոներական դպրոց: 1915-ին Ադոյանների ընտանիքը գաղթել է Երևան: Երևանում նա սովորել է Արական դպրոցում և աշխատել որպես հյուսն, գրաշար, քանդակազարդող: 1919-ին մայրը սովամահ է լինում, և նա իր քույր Վարդուշի հետ տեղափոխվում է Թիֆլիս, ապա Բաթում և Կոստանդնուպոլիս:

1920-ին Հունաստանից մեկնում է Նյու Սիտի՝ իր զարմուհի Աքաբիի և փեսայի մոտ, իսկ 1922-24 թթ. սովորում Բոստոնի Դիզայնի նոր դպրոցում: 1924 թ. «Զբոսայգու փողոցի եկեղեցի. Բոստոն» կտավի տակ ստորագրում է Արշիլ Գորկի: 1927 թ. ծանոթանում է ռուս ֆուտուրիստ բանաստեղծ և նկարիչ, Մայակովսկու ընկեր Դավիդ Բուռլյուկի և ապագա աբստրակտ էքսպրեսիոնիզմի գագաթներից մեկի՝ Վիլլեմ դե Քունինգի հետ: 1924-ին բացվում է Գորկու առաջին անհատական ցուցահանդեսը Ֆիլադելֆիայում: 1935-ի սեպտեմբերին աբստրակտ արվեստի մասին դասախոսում է Ֆիլադելֆիայում, Բալեր պատկերասրահում: 1941-ին ամուսնանում է ամերիկուհի Ագնես Մագրուդերի հետ, նրանից ունենում երկու դուստր՝ Մարոն և Նատաշան:

Մինչև 1940-ական թթ. Գորկու համար հիմնականում եղել է ինքնակրթության շրջան, նրա համար ուղենիշ էին ծառայում Սեզանը և Պիկասսոն: Պիկասսոն նրան ճանապարհ ցույց տվեց: Նրան՝ Գորկուն, համարում են թերևս առաջին ամերիկացին, որ հաղթահարեց Պիկասսոյի ազդեցությունը և հասավ զարմանալի ինքնատիպության: 1946-ին հրդեհվում է Գորկու Քոնեքթիքութի արվեստանոցը, և ոչնչանում շուրջ 30 նկար: Նույն տարում

նա վիրահատվում է քաղցկեղի դեմ, հունիսի 26-ն ավտովթարից կոտրում վիզը, անդամալուծվում է նկարող ձեռքը, կինը և երեխաները հեռանում են նրանից: Նույն թվականի հուլիսի 21-ին նկարիչը ինքնասպան է լինում:

1944-ին Գորկին ծանոթանում է սյուրռեալիզմի առաջնորդ, բանաստեղծ և արվեստի տեսաբան Անդրե Բրետոնի հետ: Բրետոնի և նշանավոր Լե Տրոցկու բարյացակամությունը նոր եռանդ ներշնչեցին նկարչին: Բրետոնը զարմանում էր կյանքի բաբախյունը արտահայտելու Գորկու բացառիկ զգացողության վրա:

Գորկին իր էությամբ, նկարչական տեխնիկայով և հիմնավոր վարպետությամբ իսկական դասական նկարիչ է: Գորկու կողմից գծի միջոցով առարկայական աշխարհի փոխակերպումն ու յուրահատուկ պարզեցումը համեմատելի է Պիկասսոյի դասական մարզվածության և հնարամտության հետ: Թերևս Գորկու գծանկարը ավելի մտերմիկ է ու քնարական: Իսկ նրա գեղանկարչական արվեստը ավելի անմիջական է, քան այն նկարիչների գործերը, որոնցից նա դասեր էր առնում և հասունացնում իր ոճը (Կանդինսկի, Միրո, Մասոն, Մատտա), ինչպես նաև նրանց, որոնց վրա ինքն էր այս կամ այն չափով ազդում (աբստրակտ էքսպրեսիոնիստները - Քունինգ, Ռոթկո, Ֆրենսիս): Թերևս Գորկու արվեստի հերմետիզմը ողբերգական քնքշությամբ ու քնարականությամբ ավելի շատ կապված էր իր և իր ազգի ողբերգական անցյալի ու ներկայի հետ, ինչպես նաև իր մանկական հիշողությունների:

1941-ին Գորկին իր ընկերուհի (ապա տիկինը) Ագնեսի, իր ընկերներ քույր և եղբայր Նոգուչիների հետ շրջում էր Կալիֆոռնիայում, որի լանդշաֆտը և կլիման հիշեցնում էին Հայաստանը: Նրան Արարատյան դաշտն էր հիշեցնում Ագնեսի հոր կալվածքը Վերջինիայում, որտեղ նա նկարում էր մեծ ներշնչանքով: Այդ շրջանում նրա սեփիայով արած «Լեռնային բնանկարը» շատ գծերով հիշեցնում է Սարյանի մինչ այդ և հետագա մոնումենտալ մատիտանկարները:

Ծննդավայր Խորգոմին նվիրված կարոտավառ նկարների շարքով Գորկու արվեստը դառնում է «ավելի խոր և ավելի մաքուր», ինչպես ինքն էր կարծում, որտեղ սյուրռեալիստական ազատ ավտոմատիզմը կարգաբերվում է մտքի հսկողությամբ, որը ձգտում է պահել զգացումի և վերապրումի յուրաքանչյուր թանկագին բեկոր: Այդ զգացումներն ու վերապրումները հանդես են գալիս որպես նշանակներ. դա չափազանց խոր և մաքուր մի համաձուլվածք է, որտեղ նկարի հմայքի տակ գրեթե աննկատ են մնում Ուչելլոյի, Էնգրի, Պիկասսոյի, Միրոյի, Կանդինսկու դասերը՝ սկսած «Նկարիչը և իր մայրը» մոնումենտալ կտավներից՝ մոր և որդու չափազանց թախծոտ աչքերով, տիեզերական աղետ տեսածի և ամեն ինչ, բացի նոր պլատոնական և քրիստոնեական հավատից, կորցրածի աչքերով: Դրանք մանուկ Ոստանիկի և իր մոր հայկական աչքերն են, որ իր հիշողություններից, լուսանկարից և վերապրումներից պեղել է Գորկին:

1945 թ. մարտ ամսին Ջուլիան Լևիի պատկերասրահում բացված անհատական ցուցահանդեսի առթիվ Բրետոնը ասում էր, որ «Գորկին առաջին նկարիչն է, որին վերջնականապես բացվել է գաղտնիքը», իսկ նրա նկարները դիտում էր իբրև բնության թատրոնի հայեցողության արդյունք, որտեղ մանկության հուշերը արթնացրել են այդ թատրոնը: Բրետոնն առաջինը մատը դրեց Գորկու արվեստի զարկերակի վրա - այն իրոք հուշերի և

բնության մի կենդանի թատերականացում է, բայց դրա համար Գորկին պարտական էր, ինչպես ինքն էր ասում, «մեր հայկական-արվեստին, նրա բազմակերպությանը, նրա շատ հակադրություններին, մեր ժողովրդի երևակայության գյուտերին»: Դա մի տեսակ հոսուն արվեստ է, որտեղ այնքան բազմազան են «գործող անձինք»՝ լյարդ, սիրտ, գութան, աքաղաղ, հողաթափ, փշատի ու ծիրանի գույներ, բիոմորֆիկ և ոսկրային ձևեր, կենդանիներ, ծառեր, ծաղիկներ, գետեր, խորաններ, եկեղեցական սեղաններ, որոնց ձևերը քողարկված են, ներկայացված այնպիսի զարմանալի փոխակերպություններով, թախիծով, սիրով ու քնքշությամբ, որ միշտ հմայում են քիչ թե շատ զգայուն դիտողին:

20-րդ դարի գերմանական (և ոչ միայն գերմանական) էքսպրեսիոնիզմում, և հատկապես Պիկասոյի 30–40-ական թթ. նկարչության մեջ, քանդակում և գրաֆիկայում վառ արտահայտված է Չարի անկասելի, ոճրային մեխանիկական, անասնական հոտային վարակիչ ուժը, չարը ֆետիշացված է: Գորկին չարին հակադրում էր նրա թախծի, քնքշության բանաստեղծական զգացումը, կարոտախտը կորսված ծննդավայրի, հայրենիքի ֆիզիկապես ցավեցնող հուշերի ատրիբուտների հանդեպ՝ ծիրանի և փշատի գույները, մոր գոգնոցը, ջրաղացը, աքլորի կատարը, գութանը և այլն, որոնց տեսքը, հոտը, փափկությունը, կոշտությունը հետապնդում էին Գորկուն ամբողջ կյանքում, և դա չէին ընկալում շատերը:

20-րդ դարի իտալական խորաթափանց արվեստաբան Ջուլիո Կառլո Արգանը Գորկուն համարում էր վերջին նոր-պլատոնականը, վերջին մարդկանցից, որը պայքարում էր 20-րդ դարում արվեստի «սպառողականության» դեմ, հանուն մի արվեստի, որը կորցրած իր արտաքին նմանողականությունը, խորքից էր ուզում քաղել իր թախիծը, իր ձևերի «սաղմնավորումը»՝ անվերջ առաջացնելով ու քայքայելով նորանոր և գրեթե նույնանման օրգանական մոլեկուլներ, բջիջներ, կիսաստեղծ, ստեղծված, ավերված, որոնք կազմում են գծերի ու գույների այն աշխարհը, որ հենց իր աշխարհն էր՝ հայկական «բազմակերպություններով» ու տարրերով:

Վերջին տասնամյակում նորից մեծացել է հետաքրքրությունը Գորկու արվեստի հանդեպ: Բացվում են նրա գծանկարների ու կտավների հետահայաց ցուցահանդեսներ, գրվում են գործեր՝ նվիրված նրա կյանքի տարեգրությանը, նրա գույնը համարվում է «կատարելապես իրենը», հագեցած Արևելքի բույրերով, գիծը՝ ամենակատարյալ գիծն ու ձևը, որ երբևէ ունեցել է Ամերիկան: Նրան իր ներքին զգայական թրթիռներով համեմատում են Վան Գոգի կտավների հետ: Գորկու քրոջ որդու՝ Կառլեն Մուրադյանի մենագրության և Գորկու՝ նրա հրապարակած նամակներից հետո նաև մի նոր ալիք է սկսվել հասկանալու նկարչի արվեստի ոչ միայն եվրոպական, այլև հայկական ակունքները:

*

*   *

Այստեղ հայկականությունը դիտում ենք ոչ թե Գորկու արվեստում, այլ՝ նամակներում: Նրա դատողություններից առանձնացնում ենք. 1. Քաղաքականության և էսթետիկայի (գեղարվեստի) հարաբերությունը. 2. Պրիմիտիվի և էսթետիկականի (գեղարվեստականի)



ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ. ՆԿԱՐԻՉԸ ԵՎ ԻՐ ՄԱՅՐԸ



ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ. ԾԻՐԱՆԻ ԲՈՒՅՐԸ ԴԱՇՏԵՐՈՒՄ.
ՅՈՒՂԱՆԵՐԿ ԿՏԱՎ,, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՎԱՔԱԾՈՒ, 1944 Թ,



ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ. ԼՅԱՐԴԸ ԱՔԱՂԱՂԻ ԿԱՏԱՐՆ Է.
ՅՈՒՂԱՆԵՐԿ ԿՏԱՎ,, ԲՈՒՖԱՐ, 1944 Թ.



ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ, ՀՈԳԵՎԱՐՔ.
ՅՈՒՂԱՆԵՐԿ ԿՏԱՎ,, ՆՅՈՒ ՅՈՐՔ, 1946 Թ.

առնչությունը. 3. Վերացականության և վերարտադրության հարաբերությունը:

Այդ խնդիրները արծարծվել են իբրև կենսական խնդիրներ արվեստագիտության մեջ և էսթետիկայում (գերմանական ֆորմալ արվեստագիտություն, կրոչեականություն՝ Լ. Վենտուրիի, Ջ. Արգանի և ուրիշների խմբագրումներով), նաև ֆենոմենոլոգիայի, հիմնարար գոյաբանության և փիլիսոփայական հերմենևտիկայի (Հայդեգեր, Ինգարդեն, Գադամեր), կյանքի փիլիսոփայության տեսանկյուններից:

Օգտվել ենք Կարլեն Մուրադյանի «Արշիլ Գորկի Ադոյան» ուսումնասիրությունից[1], որտեղ ընդգրկված են Գորկու՝ քրոջն ու քրոջ ընտանիքին ուղղված 40 նամակների անգլերեն թարգմանությունները: Կ. Մուրադյանի (Գորկու քրոջ որդու) գրքից հետո Գորկու՝ որպես ամերիկյան նոր նկարչության և աբստրակտ էքսպրեսիոնիզմի հիմնադիրի կերպարը հառնեց մի նոր ուժով: Ինչի մեջ նրան մեղադրում էին («հայկական շովինիզմ»), դարձավ նրա արվեստի խորհրդավոր կողմերի մեկնության բանալին:

**Քաղաքակրթության և էսթետիկայի հարաբերությունը.** հավանաբար էսթետիկա բառի տակ Գորկին հասկացել է գեղարվեստ կամ պարզապես արվեստ: Եվ քանի որ նրա՝ որպես օրգանական նկարչի ընկալումը ներծծված է հենց արվեստով, որպես մարդկային գոյի մի կարևոր բնագավառով (Գորկու համար ցուցեն ամենակարևոր), նրա հիմքը մարդկային ընկալումներն են և միտքը (բանականությունը):

Ըստ էության Գորկին հայ արվեստի այսօրվա վիճակը չի պատկերացնում առանց «հայ ժողովրդի արվեստի վաղնջական զորության, պայքարի, կրքի, որոնման տենչի ու քնքշության», «որը առաջինն է ներդաշնակում տխրությունը գեղեցկության հետ և այսպիսով հայտնագործում կյանքի էական իրականությունը, մարդկության պաթոսը, առաջադիմությունն ու տառապանքը» (հուլիս 3, 1937)[2]:

Ոչ ստանդարտ է հնչում տխրության ներդաշնակումը գեղեցկությանը միտքը, որ նա կապում է հայի գեղարվեստական արտահայտության հետ: Գորկին ընդունում է արվեստի ընդհանրականությունը (ունիվերսալությունը): Դա բխում է նկարչի գաղափարների ու մտքերի բազմությունից: Վերջիններիս ճշտությունը ստուգվում է՝ դիմելով հայ արվեստի հին գործերին, որտեղ նա վերահայտնագործում է նման գաղափարներ: Որ հայ միջնադարյան արվեստը (այդ թվում Աղթամարի որմնաքանդակները, Տարոնի և Վասպուրականի մանրանկարչության դպրոցը) առավելապես խոսում են սիմվոլիկ ունիվերսալիստների լեզվով, ակնհայտ է: Բայց ինչպե՞ս է ինքը՝ կենդանի նկարիչը հասնում նման ունիվերսալիստների (նոր ժամանակների, նոր քաղաքակրթության ունիվերսալիստները տարբեր են միջնադարյան ունիվերսալիստներից): Եթե փորձենք վերանալ նկարչի բանաստեղծական զեղումներից, ապա ստացվում է, որ արվեստագետն ունի իր նվիրական հուշերը (օրինակ՝ Գորկու դեպքում իր ծննդավայր Խորգոմի այգիների հուշերը), որոնք իրեն հայտնի են, բայց ինքը ցանկանում է, որ դրանք ուրիշներն էլ ճանաչեն ու վերապրեն (փետրվարի 9, 1942)[3]: Բայց դրա համար պետք է գործի դրվի մի վիթխարի զինանոց: Ուրեմն, նկարիչը ստեղծում է նկարներ՝ որպես տարրեր ունենալով ըարդը, աքլորի կատարը, ոսկորները,

---

[1] K. Mooradian. Arshil Gorky Adoian. Gilgamesh Press Limited, Chikago 1978.

[2] Նույն տեղում, էջ 251:

[3] Նույն տեղում, էջ 275:

կենդանի ժայռերը, կենդանի բույսերը, կենդանիները, կենդանի երազներն ու հազար ու մի բան, որոնց համար ինքը պարտական է «մեր հայկական արվեստին, նրա բազմակերպու- թյանը, նրա շատ հակադրություններին, մեր ժողովրդի երևակայության զլուտերին»:

Այսինքն՝ նկարիչը այդ ամենը ցանկանում է արտացոլել իր գործերում[4]: Բայց ինչ- պե՞ս: Առաջին՝ Տեխնիկական առումով տիրապետելով գծին (դասական արվեստի և, ըստ Գորկու, հատկապես հայ արվեստի հիմքը): Երկրորդ՝ այդ ամենն արտացոլելու համար փնտրելով անվերջություններ: Նկարը պատուհան է՝ բացված դեպի անվերջություն: Նկար- ների շարքերը տալիս են նոր պատուհանների, նոր անվերջությունների հնարավորություն:

Քաղաքակրթությունն, ըստ Գորկու, զարգացած հասարակությունն է: Կարելի է կար- ծել, որ նրա մոտ այն համապատասխանում է լուսավորչական ըմբռնմանը, որ իր մեջ նե- րառնվել է պատանի հասակից, երբ Երևանում որպես գրաշար նա շփվում էր հեղափո- խական և ազգային գործիչների հետ: Այստեղից էլ այն, որ հայ արվեստը նա չէր պատկե- րացնում քաղաքակրթությունից դուրս՝ սկսած հնագույն ժամանակներից: Նրա նամակնե- րում արծարծվում է «կենտրոնի» գաղափարը: Ըստ նրա, արվեստագետը պետք է ավելի վեր կանգնի Արևելք-Արևմուտք անտինոմիայից, կրոնական պառակտումներից, քաղա- քական ինտրիգներից՝ լինելով ավելի վերլուծող, զննող, ճշգրիտ և հասկացող: Ծփոթեց- նող արևելյան և արևմտյան արվեստ հասկացությունների փոխարեն Գորկին զոնե Եվրո- պայի և Մերձավոր Արևելքի համար տեսնում է մի քանի ուղղություն (ինչպես ինքն է ասում՝ բույր կամ համուհոտ). Կենտրոնը, որ մերն է (հայերիս)՝ Հայաստան, Բյուզանդիա, Հունաստան, Միջագետք, Պարսկաստան, Սիրիա, Եգիպտոս: Մյուսը լյութիական (թերևս նկատի ունի փոյուցիական) արվեստն է՝ Իտալիա, Ֆրանսիա, Իսպանիա. դա կենտրոնի հարազատ զավակն է, որ նա համարում է նվազ հետաքրքիր (թերևս նկատի ունի սկան- դինավյան և իռլանդական արվեստի ազդեցությունները) (25 հունիսի, 1945)[5]:

Նա հայերի հնագույն արվեստի հետաքրքիր դասակարգում է կատարում, դասակար- գում է նաև արևելյան, արևմտյան, հյուսիսային, հարավային հայաստանների արվեստը՝ ազգակից համարելով այն հայերի արվեստին: Այս կետը լրացուցիչ մեկնաբանություն է պահանջում, բայց այն բաց ենք թողնում առայժմ հետագայում դրան անդրադառնալու հնարավորություն ակնկալելով:

Ինչպես մեր այսօրվա հայերենը պահպանել է, ըստ հայ և եվրոպացի հայագետ-լեզ- վաբանների, բառեր և ձևեր շումերերենից, աքքադերենից, խեթերենից, լուվիերենից, թրա- կերենից, խուռիտերենից, ավելի ուշ ժամանակներում հին պարսկերենից, պահլավերե- նից, հունարենից, ասորերենից, այդպես էլ, ըստ Գորկու, հայ արվեստը և հայի անտրոպո- լոգիական տիպը մինչև այսօր պահպանել է հետքեր շումերական, հեթիթական, եգիպ- տական, խուռիտական, պարսկական, հունական, ասորական և այլնայլ արվեստներից ու մարդաբանական տիպերից:

Ապա անվերջ դեն նետելու և վերստին սպունգի նման ներծծելու զաղտնիքի մեջ է հայ արվեստի (մենք կասեինք նաև լեզվի) հարատևության ու կենսունակության ակունքը, որին այնքան փորձում էր նմանվել Գորկին Ամերիկայում, և որի մասին այնքան համառորեն

---

[4] Նույն տեղում, էջ 276:

[5] Նույն տեղում, էջ 290:

թացատրում էր ամերիկացի իր գործընկերներին ու քննադատներին և որոնցից ստանում էր միայն «հայ շովինիստ» մականունը: Բայց դա, անշուշտ, բոլոր ամերիկացիներին չէր վերաբերում:

Պրիմիտիվը և էսթետիկականը (գեղագիտականը). Գորկին հարց է տալիս՝ ո՞րն է մեր ժամանակի արվեստի ուղղությունը: Քանի որ 19-րդ դարում արվեստն աղավաղվել էր, ուստի, ըստ Գորկու, առաջադեմ նկարիչները կարիք ունեցան վերարժեքավորելու անցյալի արվեստը, այն ուսումնասիրել նոր աչքերով, և վերստին սկսեցին սկզբից՝ նմանվելով պրիմիտիվի մանկանման որակին (3 հուլիս, 1937)[6]: Այս տեսակետից կուբիզմը Բրաքի ու Պիկասսոյի մոտ ոչ թե սկիզբ է, այլ բարձրակետ ( այդ շրջանում Գորկին դեռ զբաղված էր փորձնումներով): Այնտեղ օբյեկտը (առարկան) կենդանացնում ու ակտիվացնում է միջավայրը, որը սկսում է խոսել:

Միջնադարյան արվեստում միջավայրի, հեռանկարի խտացման մասին գրում են ռուս գիտնականներ Ֆլորենսկին և Ժեգինը, իսկ հայ միջնադարյան մեկնիչների համար պատկերի բոլոր տարրերը օժտված են ուղղակի կամ անուղղակի զգայականությամբ ու այլաբանությամբ (ավելի շուտ սիմվոլիկայով): Բայց ի՞նչ նոր երանգ էր ուզում հաղորդել այդ ընդհանուր ըմբռնմանը Գորկին՝ քնքշություն (tenderness):

Կարելի է ասել, որ 1940 թ. տեղի է ունենում Գորկու հասունացումը նկարչության մեջ - նա գտնում է իր ոճը (այդ ժամանակ ամերիկյան նկարչությունը դեռ թաղված էր կուբիստական և երկրաչափական որոնումների մեջ կամ դեռ եվրոպական էր): Պիկասսոյի տարբեր շրջանների, կուբիզմի, Դելոնեի, գծանկարում Էնգրի ու Պիկասսոյի ոճով ուսումնասիրություններից հետո քնքշությունը, ավելի շուտ գծնողական մտքին հաղորդված ջերմությունը, զգայականությունը Գորկուն հանգեցնում են իր ոճին, որտեղ տխրությունը միանում է գեղեցիկին: Բնական է, որ իր ոճը գտնելու համար նրան օգնում են Կանդինսկու վաղ շրջանի, Միրոյի և իր կրտսեր արվեստակից չիլիացի Մատտայի նկարները: Այդ անցման շրջադարձը ուղեկցվում է դատողությամբ պրիմիտիվ արվեստի և էսթետիկական արվեստի (գեղարվեստի) վերաբերյալ (նոյեմբերի 24, 1940)[7]:

«Սիրելիներս,- գրում էր նա դեռ 1937 թ. հուլիսի 3-ին քրոջ ընտանիքին,- ես սիրում եմ մեր հայ մարդկանց բնիկ ուժը, որոնումները և առանձնակի զգայականությունը, որոնք առաջինն են ներդաշնակում տխրությունը գեղեցիկի հետ և այսպիսով հայտնաբերում կյանքի էական իրականությունը»[8]:

Այնուհետև նկարիչը պարզում է, որ նորագույն «առաջադեմ նկարիչները ճանաչեցին անցյալի արվեստը վերարժեքավորելու, այն նոր աչքերով ուսումնասիրելու և վերստին սկզբից վերսկսելու անհրաժեշտությունը, որ նրանց նմանեցնում է պրիմիտիվիզմի մանկական որակի: Աշխարհի տարբեր մասերի արվեստը վերահայտնաբերվեց առաջադիմելու և վերացարկվելու իր, այսպես կոչված, պրիմիտիվիզմի մեջ: Հետևաբար կուբիզմը ոչ թե սկսվում է Բրակով ու Պիկասսոյով, այլ ավելի շուտ՝ ավարտվում նրանցով»[9]: Բայց

[6] Նույն տեղում, էջ 251:

[7] Նույն տեղում, էջ 266:

[8] Նույն տեղում, էջ 251:

[9] Նույն տեղում, էջ 251-252:

նկատում է նաև, որ Պիկասոն «մոդեռնացնում է կուբիզմը, այն հարաբերակցելով 20-րդ դարի ուրբանիզացիային, տեխնոլոգիապես առաջադիմող աշխարհին»[10]: Մինչդեռ «գնահատող և հասկացող քննչությունը կարծես թե խեղդված է այս դարի արվեստում,- բողոքում է նա:- Եվ հենց այս է, որով ուզում եմ շունչ տալ իմ գործերին»: Ավելին, «Իմ հայկական աշխարհի զգայնությունը կարծես թե դուրս է հոսում իմ ձեռքերից ու մտքից», «հին հայկական արվեստին նայելով՝ ինձ զգում եմ նրա մի մասը»:

Այս կերպ հասկացված «պրիմիտիվը» արվեստի գոյության հիմքն է՝ նոր աչքերով դիտել անցյալը և ստեղծել նոր «պրիմիտիվ», ամեն ինչ կարծես նորից սկսելով ու վերահայտնագործելով, ինչը 20-րդ դարի արվեստի լավագույն մասի ներքին մեծ ուժն է:

Բայց 1940 թ. նոյեմբերի 24-ի նամակում Գորկին արդեն այս կերպ ընկալած «պրիմիտիվը» սկսում է դիտել իբրև էսթետիկական կամ գեղագիտական: Իսկ վատ տեսակի «պրիմիտիվի արվեստը մեծապես արդյունք է մեկուսացման, և մեկուսացումը չի կարող արտադրել էսթետիկա կամ բարձր արվեստ, որովհետև նրան պակասում է ընդգրկուն փորձը»[11]:

1940-ին Գորկու արվեստը գտնում է իր լեզուն, իր պատկերացանկը, ինչպես իրենից առաջ իրենցը՝ Ժոան Միրոն և չիլիացի Մատտան: Իսկ 1947 թ. փետրվարի 17-ի նամակում նա ավելի է խորացնում անհայտը հետազոտելու, անվերջության մեջ թափանցելու գաղափարը: Իսկ անվերջությունը տիեզերքն է: Մարդը ճանաչում է այն, ինչ սահմանափակ է, իր շուրջն է: Մարդու աչքը սահմանափակվում է նրանով, ինչ տեսնում է ֆիզիկապես: Դա խանգարում է ստեղծագործական երևակայությանը:

**Վերացականություն.** Մարդը, բավարարվելով նրանով, ինչ տեսնում է ֆիզիկապես, անընդունակ է դառնում երևակայական (իմագինատիվ) ստեղծագործության, լճանում է[12]: Վերացականությունը մարդուն հնարավորություն է տալիս մտքով տեսնելու այն, ինչ ֆիզիկապես չի կարող տեսնել աչքերով: Նկարչի խնդիրն է՝ ինչ մտովի պատկերացնում է նկարում, այն վերածի նյութական նկարի և հասկանալի դարձնի նկարի միջոցով դիտողի համար: Ուրեմն, ինչ մարդ նվաճում է իբրև անսահման, այն դառնում է սահմանափակ նվաճումից հետո: Ուրեմն մարդ պիտի նոր անսահմանություններ նվաճի, և դրանով կստեղծվի արվեստի անվերջ զարգացման (գուցե ավելի ճիշտ՝ ծավալման) հնարավորություն:

Վերացականությունը մի փորձարարական արտահայտչամիջոց է, առաջադիմելու խթանիչ՝ անցնելու դեպի առավել բարձր քաղաքակրթության, պայթեցնելով սահմանափակը՝ անսահմանի ոլորտները մտնելու համար: Իսկ ռեալիստական արվեստը վերջավոր է և մարդուն սահմանափակում է միայն ֆիզիկական աչքի (շոշափելի) ընկալումով[13]: Վերացական արվեստը ոչ թե աչքի, այլ մտքի ազատարարն է, այն հետազոտությունն է անհայտ ոլորտների:

Կա մի էական տարբերություն 20-րդ դարասկզբի աբստրակցիոնիստների և Գորկու միջև՝ վերացականի ու անսահմանի արտահայտման հարցում: Եթե առաջին սերնդի աբստ-

[10] Նույն տեղում, էջ 265:
[11] Նույն տեղում, էջ 265:
[12] Նույն տեղում, էջ 304:
[13] Նույն տեղում, էջ 309:

րակցիոնիստների տեսություններում մեծ դեր էին խաղում մաթեմատիկան, նոր-պլատոնականությունը իր աննյութ, երկրաչափական-ֆիզիկական ասպեկտով, սպիրիտուալիզմը և Սյորա-Սինյակի գույների գիտական տեսությունը, ապա Արշիլ Գորկին անսահմանությունների իր տեսությունը լցնում էր կենդանի բանաստեղծական բովանդակությամբ, անսահմանությունը հասկանալով բանաստեղծական փորձառությամբ, ավելին՝ հումանիստական առաջադիմության տեսանկյունից: Դա երևում է նրա բերած ծիրանի օրինակից:

Ծիրանը չափով սահմանափակ է, բայց երբ մեջը բացում ես ու զննում, երևում են անսահմանություններ: «Հետևաբար,- գրում է նա,- առարկաների անվերջության և վերջավորության մասին խոսելիս՝ ես չեմ ասում միայն տարածության մասին, ոչ էլ չափն եմ ընդունում սահմանելու համար, թե ինչն է վերջավոր: Փորձելով Հայաստանի ծիրանը, մարդու միտքը պեղում է նրա անսահման հատկությունները և գաղտնիքները»[14]: Ըստ Գորկու, դա վերացական մտքի փառահեղ պոտենցիայի մի օրինակ է: Հայկական հիշողությունները, ըստ նրա, պեղումների անսահման հնարավորություններ են ընձեռում: Նման դատողությունը դուրս է գալիս սյուրռեալիզմի սահմաններից և մտնում պոեզիայի ու արձակի անսահմանության ոլորտը:

Գորկու հորեղբորորդի Ադո Ադոյանին Գորկու քույրը՝ տիկին Վարդուշը, որին ուղղված են այստեղ դիտարկված նամակները, ուղարկել էր Գորկու արվեստին նվիրված մի չքեղ գիրք, որ տեսել եմ իմ ուսանողական տարիներին: Ես այլևս այդ գիրքը չտեսա: Բայց, եթե հիշողությունս ինձ չի խաբում, այնտեղ Գորկու յուրաքանչյուր նկարի վերատպության դիմաց որևէ հատված էր բերված ամերիկյան պոեզիայից ու արձակից - Թոմաս Վուլֆ, Ջոյս, Ուիլյամ Ֆոլկներ, Հեմինգուեյից մինչև Ռոբերտ Կառլոս Ուիլյամ Կառլոս, Կառլ Սենդբերգ, Արչիբալդ Մաքլիշ և Էզրա Փաունդ: Նույն հաջողությամբ կարելի էր բերել օրինակներ նաև Թլկուրանցուց մինչև Բակունց ու Համո Սահյան: Խոսքը վերաբերում է Գորկու արտահայտությամբ «համուհոտի» բանաստեղծներին, որոնք բացում են նրա նշած «անվերջությունների» քողը:

Կ. Մուրադյանի հրատարակած նամակներում կան բաներ, որ նման են ֆանտազիաների ու տեսիլքների, ինչպես Գորկու արվեստում, որ Հայաստանը թողել էր 14-15 տարեկան հասակում, իսկ ծննդավայրը՝ 11 տարեկան: Գորկու արվեստում, որտեղ առարկաները ցունաքողարկված են, և չգիտես՝ որտեղից է սկսվում իրական տպավորությունը և որտեղ է վերջանում ֆանտազիան: Գորկին նամակներում խոսում է Թորոս Ռոսլինի ու Սարգիս Պիծակի, Վանի դպրոցի ձեռագրերի մասին, իբրև իր գեղարվեստական իդեալների ուղենիշներ. «Վարդուշ, սիրելիս, մարդիկ այստեղ այնքան քիչ են զգում (Ամերիկայում - Վ.Դ.): Մեր հայկական փորձից ես ստեղծելու եմ նոր ձևեր՝ բորբոքելու համար մարդկանց մտքերը և շփելու նրանց սրտերը: Հայաստանի Վանը, Խորգոմը, Ոստանը, Այգեստանը, Շատախը՝ տիեզերական ճշմարտություններ անհայտ աշխարհից: Ես հիշում եմ սառը արևի լույսը, որ արշալույսին անցնում էր Վարագա սենյակների միջով: Ես հիշում եմ քանդակազարդ հին մատուռը: Բայց ամենից շատ հիշում եմ հին հայկական ձեռագրի նկարները,

---

[14] Նույն տեղում, էջ 305:

ցեղեցիկ հայկական դեմքերով, նուրբ գույներով, նրանց քնքուշ գծերն ու մատյանի գրչութ-
յունը: Եվ այս օրը ես դեռ զգում եմ այն հուզմունքի սարսուռը, թևակոխելով մի նոր աշ-
խարհ, որ լցված է պլաստիկականությամբ: Ես սիրում եմ Վանա լճի դպրոցը: Ես սիրում
եմ մեր Թորոս Ռոսլինի ու Սարգիս Պիծակի դպրոցը, սիրում եմ Ուչելլոյին և Էնգրին: Ես
սիրում եմ այն մարդու՝ Սեզանի Փարիզի դպրոցը:
Վարդուշ, սիրելիս, Թորոս Ռոսլինը առաջին, բայց Ուչելլոն հաջորդ քայլն է: Ժամա-
նակակից նկարչություն համարվածի սկիզբը այս երկու հանճարներով եմ ես հասկանում
գույնի, չափողականության, տարածականության նվաճման սկիզբը...»[15]:
Ռոսլինի կամ Կիլիկյան մանրանկարչության մեջ պլանների, հեռանկարի, գույնի, դի-
նամիկայի խնդիրները, որոնք զարգացվում են Իտալիայում 14-րդ դարից, արծարծվել են
ավելի ուշ: Հասուն Գորկին կարող էր տեսած լինել Ա. Սվիրինի «Հայկական մանրանկար-
չությունը», Ռոսլինի մասին Գ. Հովսեփյանի հոդվածը՝ «Նյութեր և ուսումնասիրություններ
հայ արվեստի պատմության» պրակներից, իսկ Պիծակի մասին իմանալ Ս. Տեր-Ներսես-
յանի՝ Վենետիկի Մխիթարյանների 12-14-րդ դդ. ձեռագրերին նվիրված ֆրանսերեն գրքից,
ունենալ Մակլերի ալբոմները: Նույնքան ֆանտաստիկ է թվում Գորկու մոտ կենտրոնի
արվեստի գաղափարը, որը ստեղծել են խուռիները, սուբարիները, ուրարտացիները (վա-
նեցիների նախնիները, ըստ Գորկու), խեթերը, եգիպտացիները, որը լյուդիացիների միջո-
ցով տարածվել է լատինական ազգերին՝ էտրուսկներ, Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա:
Եվ իբր հյուսիսի արվեստը դրա հետ կապ չունի: Կենտրոնը մերն է: Հայաստան, Բյուզան-
դիա, Հունաստան, Միջագետք, Պարսկաստան, Սիրիա և Եգիպտոս: Լյուդիականը մեր
երեխան է: Իտալիան, Ֆրանսիան և Իսպանիան: Իսկ հյուսիսի առթիվ - Անգլիան և նման
տարածքները - նրանց արվեստը ավելի քիչ հետաքրքիր է»[16]:

Սա նույնքան ֆանտաստիկ և նույնչափ հրապուրիչ է թվում, ինչ Ստրժիգովսկու տե-սությունը իրանա-հայկական ձևաստեղծումների տարածման մասին միջնադարում՝ Բյու-զանդիա, մահմեդական և սլավոնական աշխարհներ, ռոմանական և գոթական արվեստ-ներ և այլն: Ստրժիգովսկու մոտ հակառակն էր. վերացական, երկրաչափական, զարդա-յին գեղարվեստական ձևերն ու կոնստրուկցիաները տարածվում էին Իրանից և առաջին հերթին անմիջականորեն Հայաստանից, իսկ մարդակերպ, վերարտադրողական ռեալիս-տական ձևերը՝ հունա-հռոմեական աշխարհից: Հետևաբար կելտական-սկանդինավյան-իոլանդական զարդաստեղծությունը, ըստ նրա, ազգակցություն ունի հայ-իրանականի հետ, ինչպես նաև դեկորատիվ-հարթապատկերայինը: Այսինքն՝ հեռանկարի և խորքի չափման արվեստը գալիս է հելլենա-հռոմեական աշխարհից: Երկու դեպքում էլ պակասում է պատ-մական մոտեցումը, հաշվի չեն առնված միջանկյալ օղակները՝ հանուն հրապուրիչ գաղա-փարի:

Եթե փորձենք համառոտել հայկականությունը ըստ Գորկու, ապա կարող ենք ասել, որ դա հայի պատմության, հպարտության, ճակատագրի, հիշողության, ֆանտազիայի և արվեստի դրամատիզմի, հրաշքների և ցյուտերի այն դաշտն է, որի հետ շփվել է նկարիչը և որի առաջ պատասխանատու է նա: Այդ պատասխանատվությունը նա կարող է կրել և

[15] Mouradian..., p. 288.

[16] Նույն տեղում, էջ 290:

դրան արժանանալ ոչ նեղ իմաստով՝ այսինքն պրիմիտիվ (մնկուսացած) արվեստով ու բարձր տեխնիկայով, այլ իր էսթետիկայով, որը նկարչի աչքերը բացում է նաև ուրիշների նվաճումների առաջ, համաշխարհային արվեստում պատմականորեն կատարված քայլերի առաջ, որոնց այս կամ այն չափով մասնակից է նաև հայ արվեստը իր պատմությամբ, իբրև «կենտրոնի»՝ միջերկրական և միջին-արևելյան արեալների գործուն մասնակից:

Մտքի և հայկական զգայունության փիլիսոփարի դաշտը արվեստը ապահովում են տեխնիցիզմի վտանգից, որին ընդհուպ մոտեցել էր կուբիզմը: Իսկ տեխնիկան առանց զգացումի մարդկանց անպաշտպան է դարձնում արվեստի գործի առաջ կամ առնվազն՝ անտարբեր:

Երկու մեծ պոետներ՝ Ապոլիները և Բրետոնը, որոնց հանճարին ու պրոպագանդային են պարտական ոչ միայն կուբիզմն ու սյուրռեալիզմը, այլև շատ արվեստագետներ (Շագալ, Դելոնե, Սիրո, Դալի և ուրիշներ) իրենց դամբանականները վավերացրեցին Անրի Ռուսոյի և Արշիլ Գորկու նվիրական շիրիմների առջև: Նրանցից առաջինը «փակ» պրիմիտիվ էր, մյուսը՝ «պրիմիտիվ» իր զարմանքով և էսթետիկական՝ համաշխարհային գեղարվեստական փորձի յուրացման իր անհագությամբ՝ Ռոսյինից և Ուչելլոյից, Էնգրից ու Պիկասսոյից մինչև Միրո, Մատտա, Մասոն և Կանդինսկի:

*Ազնիվ Ռուսսո, լսիր մեզ,*
*Մենք ողջունում ենք քեզ,*
*Դելոնեն, իր կինը, մսյո Քեսայը և ես.*
*Թույլ տուր մեր ծանրոցը առանց մաքսի անցկացնել երկնքի դարպասով:*
*Մենք բերում ենք վրձին, ներկեր, կտավներ,*
*Որ դու քո սուրբ ժամանցը ճշմարիտ լույսով*
*Նվիրես նկարելուն, ինչպես իմ դիմանկարն է*
*Աստղերին դեմ հանդիման:*

Եվ Բրետոնը՝ Արշիլ Գորկուն.

*Տեսնում եմ քեզ նորից հեքիաթների զավազանով*
*աստղերի և ծաղկող ծառերի միջև*
*եվ արտասվում եմ քո բախտի համար:*

*ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ*
*Պատմական գիտությունների թեկնածու*

# ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Օսմանյան կայսրությունում կատարված հայոց կանխապես ծրագրված ցեղասպանության միջազգային ճանաչմանը ընդդիմանալիս պաշտոնական Անկարան հաճախակի ծանուցում է. թե Թուրքիայի պետական արխիվները բաց են հիշյալ խնդիրն ուսումնասիրող մասնագետների համար: Թե այդ հայտարարությանը նախորդող ինչ աշխատանք է կատարվել արխիվային հավաքածուների նյութերի մշակման ու ընտրության մարզում մեզ հայտնի չէ, բայց որ 1915-1916 թթ. ոճրագործության հղացման, միջոցների կիրարկման և մանավանդ կազմակերպիչներին վերաբերող վավերական նյութերի նշանակալի մասը 1919-1920 թվականներին արդեն գողացվել ու ոչնչացվել է՝ վկայված է պաշտոնապես գործող թուրքական Պատերազմական ատյանի 1919 թ. ապրիլ-մայիս ամիսների նիստերի արձանագրություններով: Հայտնի են նաև գողացողներից մի քանիսի անունները՝ պետական ապահովության նախկին տնօրեն Ազիզ բեյ, Իթթիհատի և Թեշքիլաթը մախսուսեի փաստաթղթերը Նուրը Օսմանիեի կենտրոնից Գերմանիա տարած դոկտ. Նազըմ, Պատերազմական նախարարության շենքում գաղտնի թղթերի բնագրերի հարկաբաժնում գրասենյակ ունեցող Թեշքիլաթը մախսուսեի ղեկավարներից փոխգնդապետ Հյուսամեդդին բեյ և այլք: «Կոստանդնուպոլսոյ մէջ գործող թրքական Պատերազմական ատեանը հայերու տարագրութեան և ջարդերու վերաբերեալ պետական կարևոր փաստաթուղթերու տրցակ մը ձեռք բերած էր 1919-1920-ին, - գրում է Ատյանի նիստերի արձանագրությունները ուսումնասիրած Հայկազն Գ. Ղազարյանը, - հակառակ անոր, որ ղեկավար թուրք ոճրագործները, իրենց փախուստէն առաջ, յաջողեր էին փախցնել, պահել կամ անհետացնել կարևոր մաս մը վաւերագրեր, արձանագրութիւններ, ծածկագիր հեռագիրներ, տոմարներ, հաշիւներ, փոխանակուած հաղորդագրութիւններ, շրջաբերականներ՝ նախարարութեանց, վալիներու, միութեսարըֆներու, Թեշքիլաթը մախսուսէի պատասխանատու քարտուղարներու, զինուորականներու, ժանտարմըրիի հրամանատարներու թուղթեր: Այդ բոլորը կը վերաբերէին հայերու վրայ գործուած ցեղասպանութեան արարքներուն»[1]:

Այնուամենայնիվ՝ Պատերազմական ատյանի քննիչ հանձնախումբը «յաջողած էր, բացի մաս մը վաւերագրերէ, ձեռք անցընել նաև հարիւրաւոր երդուեալ վկայութիւններ, խոստովանութիւններ, պետական հեռագիրներ, որոնք դասաւորած էին 296 թղթածրարներու (տոսիեներու) մէջ»: Ցավոք, դատական գործավարության հիմք ծառացած այս թղթածրարները էլ անխարդախ պետական պահպանության չհանձնվեցին: Քեմալա-

[1] Հայկազն Գ. Ղազարեան, Ցեղասպան Թուրքը, վայաբան Համազգայինի, Պէյրութ, 1968, էջ 58:

կան նոր իշխանությունները փաստորեն կասեցրին դատարանական քննությունները, առգրավեցին եղած նյութերը և տեղափոխեցին «նախ Պրուսա, ապա՝ Անգարա, ուր թուրք փրոֆեսորները կուսումնասիրէին իրենց գործին գալիք փաստերը և զանազան հրատարակութիւններ կը կատարէին անոնցմէ»[2]:

«Գործին գալիք» ասելով պիտի նկատի ունենալ երկու պարագա. նախ որ՝ երիտթուրքերի դատապարտությունը, իբրև քաղաքական ուժի, քեմալականները ընդունում ու կիրառում էին, ուստի Մուստաֆա Քեմալը տարիներ անց կարող էր ասել, թե նրանք (իմա երիտթուրքերը) պետք է պատասխան տան քրիստոնյաների կոտորածների համար[3], և ապա՝ ինքը Քեմալ փաշան փաստորեն շարունակեց նախորդ իշխանությունների գործը՝ կոտորածի ենթարկելով «հարյուր հազարավոր հայեր և հույներ»[4]: Հետևաբար, քեմալականները բնավ խնդիր չունեին պահպանել քննիչ հանձնաժողովի կուտակած թղթածրարները կամ փորձելու գտնել ու ետ բերել գողացված փաստաթղթերը: Եղեռնից վերապրողների դատի պաշտպանությունը «Թուրքիան թուրքերինն է» կարգախոսի շրջանակների մեջ չէր տեղավորվում, ավելին՝ նոր իշխանությունները առիթը ներկայացած պահին պատրաստ էին շարունակել այն, ինչի համար պատասխանատու էին ճանաչում երիտթուրքերին:

Պատմական վկայություն բովանդակող աղբյուրների (պատմողական, վավերագրական, նյութական-հուշարձանային, գրական-բանահյուսական և այլն) դիտավորյալ ոչնչացումը կամ թաքցնումը ծանր հասարակական հանցանք է, որին երբեմն չեն հանդգնում դիմել նույնիսկ ժամանակին ամենակարող համարված անձեր: Եթե Պատերազմական ատյանը արձանագրած չլիներ, ապա պիտի դժվարանայինք հավատալ, թե երիտթուրքերն ու նրանց սև գործը հայոց մնացորդաց հանդեպ շարունակողները չխորշեցին ծրագրված ցեղասպանության իրողությունը ներկայացնող վկայությունները ևս ոչնչացնել կամ ի չիք դարձնել: Այլ պարագաներ նույնպես գալիս են ապացուցելու, որ թուրքական կառավարող շրջանակները իրապես ընդունակ են եղել նման կեղծարարական գործողության: Արդարև, արևմտահայոց շատ վանքերի ու եկեղեցիների ունեցած ձեռագրերից, այլազան բովանդակության փաստաթղթերից ու նույնիսկ տպագիր գրականությունից, կազմակերպված սպանդից ու տարագրությունից հետո գրեթե ոչինչ չի պահպանվել: Եթե նույնիսկ ենթադրենք, թե դրանք անխնամ մնալու պատճառով աստիճանաբար են քայքայվել-ոչնչացել, ապա անկարելի պիտի լինի նման վախճան վերապահել միջնադարյան ձեռագրերի երեք խոշոր հավաքածուների, որոնց հատորավոր նկարագրությունները ժամանակին հրատարակվել են: Խոսքը վերաբերում է Արմաշի դպրեվանքի (223 միավոր), Անկյուրո Կարմիր վանքի (323) և Կեսարիայի Ս. Կարապետի վարժարանի (160) 716 հատոր բովանդակող հավաքածուներին, որոնցից ընդամենը մեկ-երկու միավոր է փրկվել[5]: Եթե որևէ պետություն կամ հանրություն միայն հայերեն ու հայկական լինելու պատճա-

[2] Նույն տեղում, էջ 59:

[3] Տես Մ. Գ. Ներսիսյան, Պատմության թուրք կեղծարարները, Երևան, 1998, էջ 104:

[4] Անդ:

[5] Այդ հավաքածուների մասին տես Bernard Coulie. Répertoire des bibliotheques et des catalogues de manuscrits armeniens. Brepols-Turnhout. 1992, p. 23-24. 27, 50-51:

ռով կարող է հարյուրամյա միջնադարյան ձեռագրական հուշարձան ոչնչացնել, ապա այ-
լևս ավելորդ է խոսել հայոց ցեղասպանություն հավաստող փաստաթղթերի կամ վկա-
յությունների պահպանման մասին: Երկրորդ պարագան այլ պետությունների (Գերմանիա,
Ֆրանսիա, Ռուսաստան, Իտալիա, Անգլիա, ԱՄՆ և այլն) դիվաններում պահպանված
ականատեսների ու վկայությունների հիրավի պատկառելի քանակությունն է, որոնց հատ-
ընտիր հրատարակությունները այսօր շատերին են հայտնի[6]:

Լիովին կարելի է պատկերացնել, թե կոտորածը գաղտնորեն նախապատրաստելու,
զանգվածային իշխանությունները հրահանգավորելու, գործողության արդյունքների վերաբերյալ
կենտրոնին զեկուցելու համար դեռ մինչև Պատերազմական ատյանի քննիչ հանձնաժողո-
վի կողմից վավերագրեր ու վկայություններ հավաքելը՝ ի՞նչ քանակության գրագրություն
պիտի գումարվեր: Ուրեմն՝ բոլոր հիմքերը կան մտածելու, որ թուրքական արխիվների բաց-
ման նախորդել է նրանցում եղած նյութերի «պիտանին ու ոչ պիտանին» ջոկելու և «մշա-
կելու» տևական մի գործողություն:

Որքան էլ գաղտնի նախապատրաստվեր և անողոքությամբ իրագործվեր ոճիրը, ան-
շուշտ կլինեին փրկվածներ, որոնք չէին հապաղի կատարվածի մասին տեղյակ պահել
Ազգային Պատրիարքարանին՝ նրա միջնորդությանն ապավինելու հույսով: Ցավոք, այդ
մղձավանջային տարիների Պատրիարքարանի դիվանական նյութերը տակավին հայտնի
չեն հայոց ցեղասպանությունն ուսումնասիրող գիտնականներին:

Զավեն Պատրիարքի գրառումներից իրապես հայտնի է, որ զանազան ճանապարհնե-
րով այդպիսի գրություններ հասնում էին նրան[7]: Ավելին, 1919-ին Հայոց Քաղաքական
Ժողովի որոշմամբ ստեղծվեց հատուկ «Տեղեկատու դիւան», ուր պիտի կենտրոնանային
«Հայաստանի և հայկական դատի վերաբերեալ հին թե նոր ամէն կարգի վիճակագրու-
թիւնները, ... *Հայ հալածանքներու, ջարդերու, տեղահանութեան վերաբերեալ բոլոր դրուագներն ու պատմութիւններ, կողոպտուած ազգային թէ անհատական շարժուն թէ անշարժ գոյքերու մասին վիճակագրական պատկերներ մասնաւորապէս վերջին տեղահանութեան միջոցին գործած չարագործութեանց մասնակցող գլխաւոր յանցապարտ թուրքերու մասին կարելիին չափ լիակատար տեղեկութիւններ, կենսագրական ծանօթութիւններ և անոնց յանցապարտութեան մասին քաղուած վաւերաթուղթեր և վկայութիւններ ու խլամացած երկսեռ հայութեան և յիշատակուած որբերու մասին վիճակագրութիւններ...*»[8]: Եվ ահա, Ա. Ալպոյաճյանի և Կ. Նուրյանի հավաքած ու խնամքով մշակ-
ված դիվանի այդ նյութերը 1922 թ. նոյեմբերին, վերահաս վտանգից ազատելու համար,
ի պահպանություն ուղարկվում են Մանչեստր՝ Գրիգորիս եպս. Պալաքյանին, իսկ ապա
Թորգոմ Գուշակյան Պատրիարքի ջանքերով փոխադրվում Երուսաղեմ, «ուր կը պահուէին
խնամով»[9]:

[6] Դրանց ցանկը տե՛ս «Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանություն. մատենագիտություն», Երևան, 1915:

[7] Տե՛ս Զաւէն արքեպ., Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ և վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 175-182:

[8] Այս Տեղեկատու դիվանին էր հանձնարարված նաև ցեղասպանությունների հայցեագրված գրությունները պատրաստելու, «ինչպէս նաև անոնց կողմէ պահանջուած զանազան տեղեկութիւնները հայթայթելու և Համազգային խորհուրդի քարտուղարութիւնը կատարելու» պարտականությունը (Զաւէն արքեպ., նշվ. աշխ., էջ 302):

[9] Նույն տեղում, էջ 303:

1938-ին Զավեն Պատրիարքը հատկապես Երուսաղեմ է գնացել՝ «աչքէ անցնելու համար Տեղեկատու դիւանի թղթածրարները... Մեծապէս անակնկալի եկայ տեսնելով հոն կատարեալ հաւաքածոյ մը վավերագիրներու և արձանագրութիւններու 1918-1922-ի բոլոր կարևոր դէպքերուն»[10]:

Անհավատալի է, բայց փաստ, որ հայոց պատմության նոր ու նորագույն շրջանի համար բացառիկ կարևորություն ունեցող դիվանական այս ժողովածուն մինչև օրս անծանոթ է մնացել հայագետներին: Դիվանի բովանդակությունը պատկերացնելու համար ստորև, Զավեն Պատրիարքի հուշերից քաղելով, բերում ենք Կ. Նուրյանի բնութագրությունն ամբողջությամբ.

«1. *Թուրքիոյ ընթացքը հանդէպ Հայոց՝ զինադադարէն սկսեալ.* Ներկայացնել «ստիպողական ըլլալով գրաւած է մեծագոյն տեղը Դիւանի զբաղումներուն» «300 տեղեկագիրներով Բարձր Քոմիսէրութիւնները, ինչպէս նաեւ Հանրապետութիւնը եւ Ազգ. պատուիրակութիւնը տեղեկացած են այն բոլոր յարձակումներուն, որոնք Թուրքերու կողմէ կը գործադրուին ընդդէմ Հայոց զինադադարէն սկսեալ, 292 ուրիշ տեղեկագիրներով, հայթայթուած են անհրաժեշտ փաստացի վաւերագիրներ, տեղահանութեան հեղինակներուն, զորս Թուրքերը կ'ուզեն արդարացնել...

2. *Ջարդեր ու տեղահանութիւններ.* Դիւանը կը հաւաքէ ... ջարդերու եւ տեղահանութեանց վրայ բոլոր այն տեղեկութիւնները, որոնք ստուգուած եւ հիմնուած են հաւատարիմ վկայութեանց վրայ: Արդէն հրատարակուած է ... գիրք մը Կեսարիոյ եւ ուրիշ մը՝ Տիարպէքիրի ջարդին վրայ. երրորդ եւ գեղեցիկ գործ մը Հայ կղերական նահատակներու վրայ ի մօտոյ մամուլին պիտի յանձնուի...

3. *Վիճակագրութիւններ.* ...Դիւանը ձեռնարկած է պատրաստութեանը հաւաքածոյի մը, որ պատկերացնէ Պատրիարքարանի թեմերուն պատերազմի վաղորդայնին ունեցած իրական վիճակը. այսինքն իւրաքանչիւր առաջնորդութեան եկեղեցիներուն, վանքերուն, դպրոցներուն, ազգային սեփականութեանց եւ բնակչութեան թիւը:

4. *Հայաստանի մասին տեղեկութիւններ.* Դիւանը կը հաւաքէ... ազգային բովանդակութը շահագրգռող ամէն գործ: Անիկա բազմագրած ու ցրուած է երկրագործական տեղեկագիր Հայաստանի վրայ... Դիւանը կուսումնասիրէ հայկական հողին հանքային հարստութեանց վրայ ուսումնասիրութեան մը հրատարակութեան խնդիրը: Արեւելքի քաղաքակրթութեան մէջ Հայոց կատարած դերին վրայ շարք մը շահեկան գրքոյկներ պատրաստութեան մէջ են: Առաջինը այս շարքին «Les Armeniens et l'imprimerie» արդէն երեւցած է:

5. *Վաւերագիրներու հաւաքում եւ մատենադարան.* Դիւանը կը հաւաքէ եւ կը դասաւորէ... բոլոր շահեկան վաւերագիրները Հայոց ընկերային եւ քաղաքական կեանքին: Այսպէս. Հայ ընկերակցութիւններու կամ պաշտօնական մարմիններու կողմէ հրատարակուած 600է աւելի տեղեկագիրներ վիճակագրութիւններ եւ այլն, դասաւորուած են: ...Դիւանը ունի մատենադարան մը Հայոց մասին խօսող գործերէ բաղկացած: Այս գիրքերուն վրայ աւելցած են երկու հարուստ մատենադարանները՝ Տիար Հրանտ Ասատուրի եւ Տիար Թէոդիկի, որոնց պահպանութիւնը Դիւանին վստահուած է: Երկու մատենադարանները կը

[10] Անդ: 

ներկայացնեն հաւաքաբար 7800 հատոր»[11]:
նրկայացնեն հաւաքաբար 7800 հատոր»[11]:
Ուշագրավն այստեղ միայն դիվանական նյութերի բովանդակությունը չէ, այլ նաև
այդ նույն փաստաթղթերը երկրից դուրս հանելու միջոցով փրկելու անհրաժեշտությու-
նը: Պատերազմի ավարտից հետո, մանավանդ երբ դատարանի վճռով մահվան դատա-
պարտվեցին Թալեաթը, Ջեմալը, Էնվերը, Նազըմը, ինչպես նաև Բեհաէդդին Շաքիրը,
Ջեմալ Ազմին, Նայիլ բեյը, հայոց տեղահանությանն ու կոտորածին մասնակցած շրջա-
նային որոշ պատասխանատուներ և այլն (1919-1920 թվականներ), հայոց միջավայրում
(Թուրքիայում, Հայաստանում և արտերկրում) տպավորություն էր ստեղծվել, թե հասել է
հատուցման ժամը, և թուրքական կոտորածներ այլևս տեղի չեն ունենա: Այդ պատրան-
քը մասամբ էլ թելադրված էր ջեմալական շարժման հակասուլթանական կեցվածքով ու
Անտանտայի պետությունների քաղաքական ակտիվությամբ: Սակայն շատ չանցած կա-
ցությունը փոխվեց. քննիչ հանձնախմբերը լուծարվեցին, 1920-ի ապրիլին սկսվեց Այն-
թապի հայության պաշարումը, իսկ սեպտեմբերի 21-ին՝ թուրք-հայկական պատերազմը:
Մեկ տարի անց, արևելյան նահանգներում խնդիրները լուծած համարելով (հատկապես
1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված սովետա-թուրքական բարեկամության
պայմանագրից հետո), Մուստաֆա Քեմալի զորաբանակը ձեռնամուխ եղավ երկրի արև-
մտյան շրջանների իշխանությանը տիրանալուն: 1922 թ. սեպտեմբերի 9-ին քեմալական
հեծելազորը մտավ նախորդ իշխանությունների կազմակերպած զանգվածային կոտորած-
ների ու տարագրությունների ծիրից դուրս մնացած Զմյուռնիա և առաջին հերթին շուրջ-
կալի ենթարկեց հայկական թաղամասը: Թե ինչ կատարվեց քաղաքի հայ և հույն բնակ-
չության հետ՝ հանգամանորեն նկարագրված է ականատեսների վկայությունների վրա
հիմնված Ռենե Պյուոյի գրքում[12], որից կատարած ընդարձակ քաղվածքներ է հրատարա-
կել ակադ. Մ. Ներսիսյանը՝ դրանք օժտելով լրացուցիչ նյութերով ու մեկնաբանություննե-
րով[13]: Հայ-հունական ողբերգության այդ դրվագի ուսումնասիրողների ուշադրությունից
վրիպել է Զմյուռնիայի կոտորածն ու հրդեհը վերապրած Տրդատ եպս. Պալյանի վկայութ-
յունը, որ իբրև նամակ 1923 թ. հունվարի 29-ին Աթենքից ուղարկել է Վիեննա, Վահան Ինս-
պեչերյանին: Առհասարակ 1915-1922 թվականների կոտորածներից ինչ-որ եղանակով
փրկված ու վերապրող հայերի՝ այդ տարիների նամակները բացառիկ կարևոր վկայութ-
յուններ են, քանի որ գրված են դեպքերից անմիջապես հետո և ամենևին ոչ հատուցում
պահանջելու դրդումով, այլ պարզապես ողջ մնացած հարազատ գտնելու համար դի-
մում են զանազան մարդկանց կամ կազմակերպությունների՝ ինքնությունը պարզելու
համար՝ իրենց գլխին եկածը պատմելով[14]:

Նամակն ուղարկելուց մի քանի ամիս անց անասելի ցնցում ապրած վաստակաշատ
ծերունի Տրդատ եպիսկոպոսը վախճանվել է, և հայագետ Ներսես Ակինյանը իր վաղեմի
բարեկամի հիշատակին նվիրված մահախոսականում անհրաժեշտ է նկատել հրատարա-

[11] Նույն տեղում, էջ 304-305:

[12] **René Puaux**, La mort de Smyrne, Deuxieme edition. Paris, 1922.

[13] **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 116-124:

[14] Այդ կարգի նամակ-հիշատակների ստվար մի հատոր կազմել ու հրատարակել է **Պ. Տանապետեանը**՝ «Ձայն պատուաբերոց» խորագրով (Փարիզ, տպ. Ե. Բ. Թիրաքեան, 1922, ԺԵ, 500 էջ):

կել այդ նամակը, որ ստորև բերում ենք ամբողջությամբ ու նույնությամբ:

«...Ես 1922 սեպտեմբեր ամսոյ սկիզբները Մաղնիսայէն Իզմիր իջած էի եղբօրս մէկ տունը բնակելու համար, կարծելով թէ Մուսթաֆայ Քէմալը հոն գալու իսկ ըլլայ, Իզմիրի մէջ որեւէ դէպք չը պատահիր ու հանգիստ ժամանակ կ'անցրնենք. բայց դժբախտաբար մեր մտածումը պարապի ելաւ. Մուսթաֆայ Քէմալի եւ իր անօրէն զօրքերու վայրագութեան միջոցաւ ամենամեծ հալածումի, կողոպուտի ենթարկուեցայ, ինչպէս նաեւ բոլոր Հայերը. Իզմիրի մէջ տառապանքը մեծ էր, ամբողջ Հայոց թաղը կրակի տուին Քէմալի զօրքերը, կարգը երբ մեր թաղին եկաւ, ինչպէս ուրիշ տուներու կ'ընէին, երեք չորս օթօմօպիլ բերին տունիս առջեւ, եւ իմ ամբողջ գոյքերս, զորս բերած էի Մաղնիսայէն, դրամներս, նամականդրոշմի մեծ հաւաքածոյս, 30 տարիներէ ի վեր աշխատած ու ժողոված ազգագրական հաւաքածոյներս ու ուսումնասիրութիւններս, պարսկական երկու թանկագին գորգերս, վեղարներս, փիլոններս, փակեղներս, եպիսկոպոսական պանակէս, խաչ եւ ամբողջ հագուստներս ու զգեստեղէններս, թղթեայ եւ մագաղաթեայ հին ձեռագիր եւ 600 հատ գրադարանիս տպագիր գիրքերս, եղբօրս 40 պարկ չամիչը եւ տանը գոյքերը եւն այդ օթօմօպիլներու մէջ լեցնելով առին տարին, եւ անմիջապէս ալ տունին մէկ ծայրէն կրակ տուին, ինչպէս ըսի՝ կ'ընէին ուրիշ հայ տուներու ալ. որուն վրայ ստիպուեցայ առանց տեսնուելու տունէն փախչիլ աղտոտ միակ վերարկուով մը. այսպէս փողոցէ փողոց քանի մը օրեր ասդին անդին միայն հաց ուտելով թափառելէ յետոյ, վերջապէս քարափի վրայ տուն մը մտանք հանգստանալու համար. տասը տասնեւհինգ օր վերջը շատ դժուարութեամբ յունական շոգենաւ մը մտանք եւ հասանք Աթէնք. թէեւ օր մըն ալ զիս բանտարկեցին Իզմիր:

Այժմ երեք ամիսներէ ի վեր կը մնամ Աթէնք թշուառ վիճակով. իմ այս վիճակս լսելով Երուսաղէմէն, Կ.Պոլսէն, Բարիզէն, Եգիպտոսէն օգնութեան փոքր ինչ նպաստներ ղրկուած են. որով այժմ քիչ շատ հանգստութիւն մը ունեցայ. չը պիտի մոռնամ այդ բարիքները որ կ'ըլլան ինծի: Աթէնքի Հայոց եկեղեցւոյն մէկ սենեակին մէջ այժմ օրերս կ'անցընեմ խեղճ քրոջս հետ, որ կերակուրս կը պատրաստէ, որովհետեւ եղբայրս Իզմիրի մէջ կորսուեցաւ, իր մէկ փեսայով:

Տրդատ եպիսկոպոս Պալեան:

Յ. Գր. - Եթէ կարելի է այս նամակիս ամբողջ պարունակութիւնը հաղորդէ Վիեննայի Միխիթարեան վանուց միաբան Հայր Ներսէս Ակինեանին:

Նոյն»[15]

Այնես պարզ է, թե երբ մերօրյա թուրքական իշխանությունները խոսում են երկրի դիվանների դռները բաց լինելու մասին, նրանք քաջ գիտեն, որ հայոց եղեռնին վերաբերող վավերական նյութերը կա՛մ գողացվել են (երիտթուրքերի կողմից), կա՛մ բռնագրավվել ու ի չիք դարձել նոր իշխանությունների ձեռքով և կա՛մ երկրից հանվել հայ գործիչների ջանքերով՝ երբևէ պատմական ճշմարտությունը փաստելու համար:

---

[15] Հ. Ն. Ակինեան, Տրդատ եպիսկոպոս Պալեան. Համառօտ ակնարկ մը իր գրական գործունէութեան վրայ. «Հանդէս Ամսօրեայ», 1923, թիւ 11-12, էջ 551-552: Նամակը վերջերս վերահրատարակվեց Գ. Տեր-Վարդանյանի աշխատասիրությամբ լույս տեսած Կեսարիայի և շրջակայից այժմ չպահված ձեռագրերի նկարագրության հավելվածում:

*ԱՆՈՒՇ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ*

# ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԵԿԵՂԵՑԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Հին հայկական մշակույթում մեծ տեղ է գրավում ճարտարապետությունը, որը ցայտուն արտահայտվում է VII դարի ճարտարապետության մեջ, մի ժամանակաշրջան, երբ Եվրոպայում քրիստոնեական ճարտարապետությունն իր առաջին քայլերն էր անում:*

*Ֆ. ՆԱՆՍԵՆ*

Հայկական ճարտարապետությունը նշանավորվել է ազգային նկարագրի բյուրեղացումով, ստեղծագործական խոշոր նվաճումներով ու զարգացման կուռ հաջորդականությամբ: Արդեն վաղ միջնադարում /4-6-րդ դդ./ ստեղծվել են եկեղեցական շինությունների հատակագծային և ծավալատարածական բազմապիսի հորինվածքներ: Հայկական ճարտարապետության մասին այսպես է գրում գիտնական, բնախույզ, բնագետ և մեծ հումանիստ Ֆրիտյոֆ Նանսենն իր «Խաբված ժողովուրդ» գրքում, ուր անաչառ ներկայացնում է հայոց պատմությունն ու 1920-ական թվականներին դեպի Հայաստան կատարած ուղևորության տպավորությունները[1]:

Նանսենը հիացմունքով է խոսում հայ ժողովրդի, նրա բարձրարվեստ մշակույթի և համաշխարհային քաղաքակրթությանը հայության բերած նպաստի մասին. «Տաղանդավոր այս ժողովրդի ինքնատիպ զարգացման ընթացքն իր էական ազդեցությունն է թողել ոչ միայն բյուզանդական, այլև արևմտաեվրոպական մշակույթի վրա»[2]: Որպես ապացույց Նանսենը վկայակոչում է համաշխարհային մշակույթի և ճարտարապետության, մասնավորապես եկեղեցաշինության որոշակի օրինակներ: «Վաղ շրջանում հայ ժողովուրդն առաջինն էր, որ քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն և իր երկրի սահմաններից դուրս սկսեց ծավալել եկեղեցական մշակութային գործունեություն: Վեցերորդ դարից առաջ, կարծիք կա՝ նույնիսկ 4-րդ դարում, Երուսաղեմում և Պաղեստինի այլ վայրերում հայերը կառուցել են 70 վանք՝ չհաշված այն բազմաթիվ վանքերը, որ կառուցել են Եգիպտոսում, Սինայի ափին, Ալեքսանդրիայում և Թեբաինում: 11-12-րդ դարերում Եգիպտոսում շատ հայեր էին ապրում: Հայերը մեծ դեր են խաղացել նաև Բյուզանդիայի պատ-

---

[1] 1924 թ. Նանսենը գալիս է Հայաստան, որպեսզի հետազոտություններ կատարի ամայացած և անապատ դարձած հողատարածությունների արհեստական ոռոգման համակարգ ստեղծելու համար, որպեսզի այդ հողատարածությունները տրամադրվեին արևմտահայ գաղթականներին:

[2] Ֆրիտյոֆ Նանսեն, Խաբված ժողովուրդ, էջ 229:

...նության մեջ»[3]:

«Մեր՝ ԲյուսիսայիՆ գերմաՆՆերիս շփումը Հայաստանի հետ նույնպես առանց ազդեցության չի եղել: Արժանահիշատակ է այն փաստը, որ գոթերը քրիստոնեության մասին ունեցած իրենց առաջին տեղեկությունների համար մասամբ պարտական են հայերին: Սոֆուս Բուգգեն հիշատակում է, որ Ուլֆիլաս եպիսկոպոսի կողմից Աստվածաշնչի գոթերեն թարգմանությունը պարունակում է բազմաթիվ հայաբանություններ: Դա բացատրվում է նրանով, որ գոթերը 257 թվականին Ուլֆիլասի պապին ու տատին որպես ռազմագերի բերել էին հարավ-արևմտյան Փոքրասիական Կապադովկիայից, ուր միշտ էլ շատ հայեր են ապրել: Այդ ժամանակ Կապադովկիայում էր ուսանում և Գրիգոր Լուսավորիչը: Գոթերը Սև ծովի ափերին եղած ժամանակ նույնպես շփվել են հայերի հետ՝ ամենից առաջ վաճառականների և քարոզիչների միջոցով: Գոթական ճարտարապետության շատ գծեր, որ գոթերը հետագայում իրենց հետ տարան Բուլղարիա և Արևմտյան Եվրոպա, իրենց վրա կրում են հայկական ճարտարապետության ազդեցությունը»[4]:

«Հայկական այդ ազդեցությունները հասել էին նույնիսկ Սկանդինավիա և, անշուշտ, դրանով կարելի է բացատրել, օրինակ, Շվեդիայում Բոհուսլենի և Բլեքինգեի դամբարանադաշտերի և գերեզմանաքարերի այդչափ նմանությունը հայկական գերեզմանատների և տապանաքարերի հետ: Հետագայում այդ կապը չի խզվել: Պրոֆեսոր Մագնուս Օլսեն իմ ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ Արե Ֆրոդեն «Իսլանդացիներ» գրքում խոսում է երեք «Էրմսքիր»-ների /այսինքն՝ հայերի/ Պետրոսի, Աբրահամի և Ստեփանոսի մասին, որոնք Իսլանդիայում ներկայացել էին որպես հայ եպիսկոպոսներ»:

«Եկեղեցական ճարտարապետությունն Արևմուտքում սկսեց զարգանալ մի քանի հարյուրամյակ ավելի ուշ և իր վրա կրեց արևելյան ճարտարապետության ուժեղ ազդեցությունը: Այդ ազդեցությունը գալիս է ոչ թե Բյուզանդիայից, այլ զարգացման ավելի բարձր մակարդակ ունեցող Առաջավոր Ասիայից՝ Սիրիայից, Միջագետքից, Հայաստանից և Վրաստանից: Արևմուտք գաղթած ասորիներն ու հայերն էին այդ ազդեցության տարածողները: Ռոմանական ճարտարապետության շատ գծեր դեռ վաղ ժամանակներում գոյություն են ունեցել Արևելքում: Դրանք են՝ ծանր կամրջասյուների առկայությունը սյուների կողքին, խորանարդաձև խոյակը, սնամեջ կամարները, արտաքին բարեձև կիսասյուները, ձագարաձև ճակատամուտքը, որը դեպի ներս նեղացող իր շարակցված կամարներով և կիսասյուներով այնքան բնորոշ է միջնադարի եվրոպական ճարտարապետությանը: Այդ ճարտարապետության այս բոլոր գծերը վաղուց ի վեր կիրառվում է Հայաստանում: Շինությունները քարերի մուգ և բաց երանգներով, ժապավենաձև և շերտերով զարդարելու արվեստը հայերը սովորել են խալդերից, որ ավելի ուշ գործածության մեջ մտավ Իտալիայում, հատկապես Ջենովայում և Ֆլորենցիայում: Կաթողիկե եկեղեցու փայտածածկին փոխարինող հովհարաձև կամարը վերցված է Միջագետքից, իսկ քառանկյուն եկեղեցու կամարաձև գմբեթը հայկական և վրացական եկեղեցու նմանումն է: Դեռ վաղ միջնադարում վերջինս, որպես Հին Հռոմի գմբեթաշինությունից տարբեր մի ոճ, կիրառություն գտավ Եվրոպայում: Այն իր դրոշմը դրեց Ս. Սոֆիայի տաճարի ճարտարապետական մտահղա-

[3] Նույն տեղում, էջ 230:

[4] Նույն տեղում, էջ 32:

ցումների վրա և այնուհետև Հայաստանի հետ առնչվող գործերի միջոցով տարածվեց Արևմուտքում»[5]:

Կարևոր են նաև Սուրբ Սոֆիայի տաճարի մասին Ֆ. Նանսենի դիտարկումները. «Ինչքան մտածում եմ այս հանելուկի մասին, այնքան հակվում եմ կարծելու, որ նրա հիմքում ընկած է հայկական և վրացական եկեղեցաշինությունը, և իրավացի է Ստրժիգովսկին, որ Ս. Սոֆիայի տաճարի հիմնական մտահղացումը բխեցնում է Հայաստանից և Վրաստանից: Ինչպես Լեոնարդոն և Բրամանտեն գմբեթաշինության մասին իրենց պատկերացումներով պարտական են հայերին, այնպես էլ Անթեմիոսն իր հսկա կառույցի հիմնական մտահղացումը վերցրել է նույն աղբյուրից՝ հայերից: Արևմուտքի երկու առաջնակարգ եկեղեցիների /Ս. Սոֆիայի տաճարը Բյուզանդիայում և Սուրբ Պետրոսի եկեղեցին Հռոմում/ ճարտարապետական հիմնական մտահղացումը վերցված է հայկական եկեղեցաշինությունից:

Ըստ Նանսենի, հայկական ճարտարապետական ոճով կառուցված եկեղեցիների ու բապտիստական աղոթատեղերի մի ամբողջ շարք կա Աթենքում, Հյուսիսային Իտալիայում, Ֆրանսիայում և այլ վայրերում: Գիտնականը, ծանոթ լինելով Լեոնարդոյի գծագրերին և էսքիզներին, գտնում է, որ դրանք հարազատ են հայկական գմբեթակիր եկեղեցիներին և մատուռներին՝ հավատացած լինելով, որ դրանք ստեղծվել են բնօրինակի հետ վարպետի անմիջական ծանոթությունից: Ի հակադրություն այն կարծիքի, որ Բյուզանդիան է ազդեցություն գործել հայկական ճարտարապետության վրա, Նանսենը գրում է. «Հայկական եկեղեցին հիմնադրվել է բյուզանդականից ավելի վաղ և Հայկական եկեղեցու ճարտարապետությունը տարբերվում է բյուզանդականից խստությամբ, զարդանձների օգտագործման նրբությամբ և զուսպ ձևերով:

Միջին դարերի մեծագույն նվաճումը՝ գոթական ոճը ևս իր հիմնադրույթներով մեծապես պարտական է հայ ժողովրդի ստեղծագործական ոգուն: Չի կարելի անտեսել, որ գոթական ճարտարապետությանը բնորոշ շատ գծեր, Եվրոպայում գոթական ոճի ձևավորումից շատ հարյուրամյակներ առաջ, առկա էին Հայաստանի եկեղեցիներում և ճարտարապետական այլ կառույցներում: Սա վերաբերում է հատկապես Անիի Մայր տաճարին: Վերջինիս ճարտարապետական ոճը կարծես անցում լինի տիպիկ հայկականից դեպի ռոմանոգոթական՝ ցուցադրելով գոթական ոճի առավել բնորոշ գծերը, ինչպիսիք սրակամարները և սյունաշարերն են: Նմանությունն այնքան ակնհայտ է, որ գոթական ոճի եվրոպական ծագման կողմնակից որոշ արվեստաբաններ կարծում են, որ Անիի Մայր տաճարը պետք է վերանորոգված լինի տասներեքերորդ դարի արևմտաեվրոպական ճարտարապետների կողմից: Սակայն բոլոր վեճերն անհիմն են: Եթե նույնիսկ եկեղեցու կառուցման ժամանակն իր ձևի մեջ բավարար ճշգրտությամբ հնարավոր չէ որոշել, մինույն է՝ նման «գոթական» գծեր ավելի կամ պակաս ցայտունությամբ հանդիպում են նույն կամ ավելի վաղ շրջանին պատկանող հայկական ուրիշ շատ եկեղեցիներում: Եկեղեցու այս տիպը առաջացել է Միջագետքի՝ հարավից մուտք գործած հովհարաձև կամարներով երկարավուն եկեղեցիների և տեղի քառանկյուն գմբեթավոր եկեղեցիների ճարտարապե-

[5] Նույն տեղում, էջ 232:

տական ոճերի միախառնումից: Այստեղից է սկզբնավորվել եռանավ արկարավուն եկեղեցու ճարտարապետական ոճը: Այս տիպի հնագույն կառույցը Դվինի Ս. Գրիգոր եկեղեցին է, որը կառուցվել է յոթերորդ դարի սկզբին և ավերվել է երկրաշարժից, իններորդ դարում»[6]:

«Անիի Մայր տաճարում և ճարտարապետական այս ձևի եկեղեցիներում որպես գոթական ոճի բնորոշ գիծ կարելի է թվարկել ծանր սրակամարները, որոնք ծառայում են հիմնական կամարները չորս կամրջասյուներին կապակցելու և կենտրոնական գմբեթը կրելու համար: Աշխարհիկ շինություններում ևս, ինչպես Անիի բերդն է, հանդիպում է սրակամարը: Սյուները, որոնց վրա հանգչում է գմբեթը, նախնական քառանկյուն կամրջասյուների տրամաբանական զարգացումն է: Կամրջասյուները կապակցվում են կամարաձև պատերի սյունաշարի հետ: Կողագմբեթը հայկական եկեղեցիներում և վանքերում բավական ցայտուն է: Վերջապես, կարելի է հիշատակել կենտրոնական գմբեթը կրող որմնախորշերով պատերի արտաքին պատվարը: Այստեղ տեսնում ենք ճարտարապետական նույն մտահղացումը, որն իր արտահայտությունն է գտել գոթական կամարներում և կիրառվում է վաղուց ի վեր»[7]:

«Գոթական ոճի սկզբնավորումը Արևմտյան Եվրոպայում կապված է հայերի հետ, որոնք տասնմեկից տասներկուերորդ դարերում ցրված էին ամենուրեք: Այստեղ դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ Կիլիկիայի հայկական պետությունը տասնմեկերորդ դարից ի վեր սերտ շփումներ է ունեցել խաչակիրների և Արևմտյան Եվրոպայի հետ: Այսպիսով, գոթական ոճը, որ միջնադարի համաշխարհային մշակույթի նշանակալի նվաճումներից է, իր սկզբնավորման շրջանում ազդեցություն է կրել փոքր ու տաղանդավոր հայ ժողովրդի մշակույթից մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ այդ ժողովուրդը օրհասական պայքար էր մղում ահեղ թշնամու բանակների դեմ:

Հայկական եկեղեցին իր առանց սյունաշարերի պարզ, հոծ պատերով ու կամրջասյուներով, ծանր զանգվածեղ, ներփակ ու համաչափ ներգործությամբ ճշտիվ վերարտադրում է երկրի բնույթը: Նրա մեջ ամփոփվում են անկրկնելի Արարատի և Արագածի վեհությունն ու ամբողջականությունը»[8]:

Այսպիսին են Ֆ. Նանսենի դիտարկումներն ու գնահատականները Հայոց Եկեղեցու և եկեղեցաշինության մասին:

---

[6] Նույն տեղում, էջ 234:

[7] Նույն տեղում, էջ 122:

[8] Նույն տեղում, էջ 179:

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ

# ՊԵՐՃՈՒՀԻ ՍՅՈՒՐՄԵՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԵՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1921 թ. մարտի 15-ին Բեռլինում Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից մեկին, Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային սպանելուց և աղմկահարույց դատավարությունից անպարտ արձակվելուց հետո ժողովրդական վրիժառու Սողոմոն Թեհլերյանը (1896-1960 թթ.) անցել է Հարավսլավիա ու մինչև 1951 թ. ապրել Բելգրադում, այնուհետև ընտանիքով տեղափոխվել է Մարոկկոյի Կասաբլանկա քաղաք, որտեղ ապրել է մինչև 1957 թվականը:



Ս. Թեհլերյանի կյանքի այդ շրջանը վրիպել է նրա կենսագիրների ուշադրությունից, սակայն, բարեբախտաբար, վաղուց ի վեր Կասաբլանկայում բնակվող Պերճուհի Սյուրմենյանի հուշերի օգնությամբ հնարավոր է դառնում մասամբ լրացնել այդ բացը:

Շնորհակալությամբ նշենք, որ վերոհիշյալ հուշերի պատճենը մեզ է տրամադրել 1990-1992 թթ. Մարոկկոյում բնակված Սեդա Գրիգորյանը: Հետագայում մենք նամակագրական կապ հաստատեցինք Պ. Սյուրմենյանի հետ, և նա իր նամակին կցելով մեզ ուղարկեց նաև Ս. Թեհլերյանի մի քանի անտիպ լուսանկարները, այդ թվում և մեկը՝ «Մարոք քաշուած» (Մարոկկոյում նկարված), որոնք հրատարակեցինք Հ. Յ. Դաշնակցության «Դրօշակ» եռամսյա հանդեսի 2004 թ. թիվ 4-ում, իսկ նկարներից մեկը՝ Թեհլերյանի ինքնագրով, հրատարակում ենք այժմ: Մեզ ուղարկած նամակում, բացատրելով Թեհլերյանների ընտանիքի մեկնումը Մարոկկոյից, Պ. Սյուրմենյանը գրում է. «Տէր և տիկին Թէհլիրեան կը փափագէին ապրիլ հայաշատ շրջանակի մը մէջ, ուր բարոյապէս լաւ պիտի զգային»: Այդ իսկ պատճառով Ս. Թեհլերյանը 1957 թ. ընտանիքով տեղափոխվել է ԱՄՆ-ի Սան Ֆրանցիսկո քաղաք, որտեղ էլ վախճանվել է 1960 թ. մայիսի 23-ին: Իսկ իր նամակը Պ. Սյուրմենյանը եզրափակում է այսպես. «Ահա պատառիկներ անցեալի թանկագին յիշատակներէն»:

Եվ այդ «անցեալի թանկագին յիշատակներէն» է, որ այժմ ներկայացնում ենք «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանը՝ հուսով, որ սույն հրապարակումը կարող է օգտակար լինել Ս. Թեհլերյանի ամբողջական կենսագրականը ստեղծել ցանկացող ուսումնասիրողներին:

## ՅՈՒՇԵՐ ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԻՐԵԱՆԻ ՄԱՍԻՆ

1952-ի մի օր Մարսէյի փոքրաթիւ հայ համայնքը պատիւը ունեցաւ ծանօթանալու այն մեծ հայուն, որ էր Սողոմոն Թեհլիրեանը՝ Թալէաթ փաշայի սպանութեան հերոսը:

Իրենց կեցութեան սկզբնական շրջանին ոչ մէկ հայ չէր շարժուէր այդ հայուն բարեւ մը տալու, պատճառը այն էր, որ ան կը բնակէր մէկու մը տունը, որը չէր սիրուած Գազապլանքայի փոքրաթիւ գաղութէն:

Մի օր ես եւ եղբայրս՝ Պերճ Վարժապետեան, կը քալէինք հայերէն խօսակցելով, տիկին մը մօտեցաւ եւ ըսաւ՝ հա՞յ էք, ինչ լաւ է, վերջապէս: Այդ տիկինը Թեհլիրեանին տիկինն էր, Պացուահայ: Մի քանի նախադասութիւններ փոխանակեցինք Ցարութիւնեանի մասին ու տիկին Անահիտը (Ս. Թեհլերյանի կինը - Ա. Մ.) ըսաւ. «Հիմա կը հասկնամ ձեզ, թէ ինչո՞ւ ոչ մէկ հայ չմօտեցաւ Սողոմոնին»:

Այս անակնկալ հանդիպումը առիթ եղաւ, որ ճանչնանք այդ պատուական զոյգը:

Տակաւին նոր էին հասած Եուկոսլաւիայէն, չունէին տուն-տեղ: Ամուսինս՝ Ազատ Սիւրմէնեան, իր գործատեղիին մէջ ունէր փոքր յարկաբաժին մը, որն առաջարկեց իրենց: Անհամբեր իրենց ազատութիւնը գտնելու, շուտով հաստատուեցան հոն, իրենց երկու զաւակներուն եւ հարսին հետ:

Շահէնը՝ իրենց անդրանիկ տղան, եւ հարսը շուտով գործ գտան ու այդ ձեւով կրցան փոխադրուիլ աւելի հանգստաւէտ յարկաբաժին մը: Իսկ Զաւէնը՝ փոքրը, իր ջութակի բարձրագոյն ուսումը առաւ Ֆրանսա եւ հետագային անցաւ Ամերիկա, ուր San-Francisco քաղաքի Philharmonique-ի Premier Violon-ը եղաւ եւ ցարդ կ՚ապրի այդ քաղաքը:

Թէ ինչպիսի՛ անձ էր մեր ազգի հերոսը ինձ համար, որ որոշ տարիներ անցուցած եմ իր հետ. մեղմ, ազնուական, հիանալի նկարագրով անձ մը, որուն ներկայութենէն ես ու ամուսինս չէինք կշտանար:

Իր հերոսական արարքը ըրած էր շատ երիտասարդ տարիքին, կուսակցութիւնը (Հ. Յ. Դաշնակցությունը - Ա. Մ.) զինք ընտրած էր: Ուստի իբր ուսանող ղրկած Գերմանիոյ Պերլին քաղաքը, ուր Թալէաթ հալածուած երկրի նոր վարչակարգէն, ապաստանած էր: Բայց Սողոմոն չէր ճանչնար Թալէաթը. պէտք էր նախ հստակօրէն ճշտէր անոր դիմագիծը: Այն սենեակը, որ վերցուած էր իրեն համար, կը գտնուէր այն թաղամասին մէջ, ուր կ՚ապրէր Թալէաթ: Սողոմոն իր սենեակի պատուհանէն ամենայն համբերութեամբ ամէն օր կը դիտէր փողոցի անց ու դարձը, մինչեւ վստահօրէն ճշտէ, թէ ով է Թալէաթը: Երկար օրերու հետազօտութիւններէ վերջ Թալէաթի անձը հստակ էր Սողոմոնին, ուրեմն կը մնար մահափորձի ծանր որոշումը:

Ու այսպէս պատմեց (միայն մէկ անգամ) գոհացում տալու համար իմ զաւակներուս բուռն խնդրանքին.

«Թալէաթ իր ամէնօրեայ պտոյտը կ՚ընէր: Ես որոշած էի դիմացի մայթէն անցնիլ եւ Թալէաթ կանչել, յուսալով, որ աջ պիտի դառնար եւ կրակէի, դժբախտաբար ձախ դարձաւ: Հարուածը զինք տապալեց: Իմ վազքին հետեւեցաւ ժողովուրդը եւ բռնելով զիս թակեցին, մինչեւ ձերբակալուիլս ոստիկանութեան կողմէ: Գերմանական դատարանի մէջ,

ուր եղան Եղեռնէն ճողոպրած բազմաթիւ վկաներ, որոնք լիովին արտայայտեցին ժողո-վուրդի մը տառապանքը, ըսելով թէ այս անձը ոճրագործ մը չէ, այլ ոխը լուծեց մարդա-սպանէ մը, որ բնաջնջեց մէկ ու կէս միլիոն անմեղ հայեր: Դատը շահեցաւ: Հայութիւնը ցնծութեան մէջ էր»:

Այսօր Ամերիկայի Ֆրեզնօ քաղաքին մէջ կանգնած է յուշարձան մը, որուն գագաթին արծիւ մը կը լլտցէ օձի մը գլուխը:

Այդ յուշարձանին տակ, երբ այցելեցինք իր տիկնոջ հետ, գտանք թղթիկ մը, որուն վրայ գրուած էր. «Ամէն հայ այս յուշարձանի առաջ ծնկաչոք պէտք է խոնարհուի»:

Տիկին Անահիտ ըսաւ, թէ յաճախ կը գտնէ այդպիսի թղթիկներ:

Գրելով այս տողերը ո՛հ որքան յիշատակներ արթնցան իմ մէջ, որոնք կ՚ուզեմ պահել մասունքի մը նման:

Աղօթք մը իր անմոռաց յիշատակին:

*ՊԵՐՃՈՒՀԻ ՍԻՒՐՄԷՆԵԱՆ*

*ԱԿԱՆԱՏԵՍԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ*

*ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԻՒԼԳԵՐԵԱՆ*

# ՀԱՅԱՋԻՆՋ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄՈՎ ՄԵՂՔԸ ՉԻ ՔԱՒՈՒԻՐ

1915 եւ 1922 զարհուրելի թուականները զգայարանքներուս վրայ թողած են անհագնցիկ ու խորարմատ տպաւորութիւններ, որ ժամանակի ցմահ հոլովոյթով՝ պիտի չդադրին վարագուրել սպանդին սարսափազդու տեսարանները տեսողութենէս:

Մանկութեան եւ պատանութեան տարիներուն պատահած այս անպատմելի նախճիրները, ոչ մէկ կերպով կարելի չէ փարատել յիշողութենէս եւ մոռացութեան յանձնել զանոնք:

Իզմիրի ջարդին, կիսաթամ ու բարգաւաճ հայութիւնը եւ գաղտնային բռնկումներէ մոլեգնած թուրք խուժանը, իրարու հանդիպեցան անմնդունակ զոհի ու անագորոյն դահիճի դերերով՝ դժոխային պատկերացում տալով քաղաքին:

Զարիկը փնտրելու խենդոտ պատրաստութեան՝ կենսուրախ օրեր էին, երբ բացուեցան գեհենի դրկերը. դարպասները եւ նոյքի խաւարակուռ ընդերքներէն դուրս նետուեցան սատանաներէն սոսկատեսիլ մարդակերպ ճիւաղներ, զինուած բիրերով ու մականներով, բահերով ու բրիչներով, կացիններով ու մսագործի դանակներով, սրածելու, կեղեքելու եւ կողոպտելու անպաշտպան հայութիւնը, որ պատրաստ էր ինքնայօժար զոհաբերուելու խուժանին անյագուրդ ցանկութիւններուն:

Օրը շաբաթ էր, գարնան արեւավառ առաւօտ մը, յունական բանակը փախուստի մատնըւած կը լքէր ռազմաճակատը եւ իր խուճապային նահանջով, թրքական զօրքին անգթութեան կը յանձնուէր քաղաքին քրիստոնեայ բնակչութիւնը:

Նոյնպէս, փախուստի կը դիմէր Ֆետայիններու ծիսար ջոկատը, որ հայկական թաղերէն անցնելով կը պատուիրէր փակել դռներն ու պատուհանները եւ տուներէն դուրս չ'ելլել:

Թրքական զօրքը քաղաք մտնելէ առաջ, խուժանը աւարտած էր ջարդի եւ կողոպուտի իր յաջողումը:

Միջօրէի ժամերուն, կարծես քաղաքի ահաբեկած ժողովուրդը հսկայ դագաղի մը մէջ ամփոփուած՝ խորագոյն կը ննջէր մեռելային լռութեամբ:

Ամէն հայ ընտանիք, փեղկերուն ետեւ, աչքերը դուրս յառած լուսամուտներէն, աղօթքը շրթունքին՝ կը սպասէր ժամանակի յղացումէն ծնելիք աղէտին:

Հրացանակիր հայ երիտասարդներ, թաղին փողոցներուն անկիւնները դիրքեր գրաւած՝ օրուան բոլոր ժամերուն կը սպասէին ճակատելու յարձակողներու դիմագրաւումին:

Առաջին նախատակները եղան զարունամնայ այդ հայորդիները, խժդուժ չարչարանքներով իրենց կեանքերը ողջակիզելով, առանց մէկ փամփուշտ արձակելու գրոհող ամբոխին դէմ, որոնց զանկերը ջարդուեցան իրենց իսկ հրացաններու կոթերով, ապա՝ խուժանին հետեւող երկանիւ աղբակառքերու մէջ բարձուեցան անոնց մարմինները, բլրացած մեռեալ-

ներու վրայ: Անոնք շարերը կիսաբաց աչքերով անկանոնօրէն եղան իրենց յուղարկաւորութեան:

Հոյասպանութեան եւ աւարառութեան համար՝ փողոց նետուած թուրք ամբոխը, ասկէ աւելի ցնորագանց խրախճանք չէր կրնար ունենալ, յագուրդ տալու իր բնազդական բերումներուն:

Ամէն փողոցի վրայ կ՚երեւար նոր խուժան մը, վայրագ բացականչութիւններով:

- Ներսէ Էրմենի վար, ո՛ւր հայ կայ, այս վրիժառու խօսքը կը լսուէր անոնց պիղծ շրթներէն:

Ինչ որ կը գրեմ հիմա, այս ծերունազարդ հասուն տարիքիս, մանկութեանս անաբեկեալ աչքերուն առջեւ կատարուած իրողութիւններ են, բառեր պակաս, բայց՝ոչ ասելի: Ո՛չ մէկ ժողովուրդի լեզուի բառամթերքին մէջ չկան համապատասխան բառեր, որ կարենան համազօր պատկերացումը տալ հայուն ճակատագրին վիճակուած խոշտանգումներուն ահաւորութիւնը:

Տեսայ սոսկումով՝ մեր տան առջեւէն անցնող աղբակոյտերուն մէջ բլրացած ու ջարդուած մարմիններ, ոմանք դեռ կիսամեռ ու կիսաբաց աչքերով, կարծես այսօր կատարուած ըլլային այդ ճիւաղային խոշտանգումները: Կը գրեմ իւրաքանչիւր բառ դողալով եւ հոգեկան վրդովումներով եւ կ՚ըսեմ խորովի, ինչո՞ւ աշխարհի բազմահարիւր ժողովուրդներու մէջ, այս անսահմանելի զուլումներուն պիտի ենթարկուէր նախատակ հայութիւնը:

Չեմ կարծեր, որ մարդկային անասնական բնազդը այս ապեյավաւ անգթութիւնը ցուցաբերած ըլլայ պատմութեան մէջ, ոեւէ ժամանակ՝ դժոխային արփայայտութեամբ:

Հայ քահանայ մըն եմ, նուիրապետութեան ամենացած աստիճանի վրայ, կոչուած է ներողամիտ ըլլալ ամէն մարդու, որքան ալ ծանր ըլլայ իր գործած մեղքը, բայց հայաջինջ ցեղասպանութեան հանդէպ, թող Աստուած ու Եկեղեցիս մեղք չհամարին, որ անկարող կը ներզգամ ներել ջարդարար ժողովուրդ մը, որ արմատախիլ փորձեց ընել երկրի մակերեսէն իմ Ազգս:

Թուրք խելագարած ամբոխին համար, այնքան առատ էր զոհերու հունձքը, այնքան հեշտ ու աւզատ կողոպուտը, եւ այնքան բարենպաստ ժամանակը, եւ պատեհութիւնը եայեր ջարդելու ու մայրերու որովայնէն վիժած լակոտներ սովալլուկ բազեներու պէս թառէր էին արիւնալից դիակներու վրայ եւ կը խուզարկէին անոնց գրպանները, դրամ գտնելու յոյսով:

Մեր տան դիմաց խան մը կար, որուն հայ պահակը ութսունամեայ ծերունի մըն էր, բռնեցին թեւերէն եւ փողոց բերին զայն, պառկեցուցին գետնին վրայ եւ խոշոր քարով գանկը փշրեցին:

Այս եւ ուրիշ աղեխարշ խժդժութիւնները կը լրտեսէինք փեղկերու արանքներէն փառապալից համբերութեամբ:

Սարսափը շղթայեր էր մեր էութեան բոլոր կարողութիւնները եւ բազմապանջ մտածումը, որ կ՚իշխէր մեր կեանքին վրայ, անխուսափելի մահն էր: Օրը անցեր էր եւ չէին գոցուեր աչքերուս կոպերը, վախը չէր թողուր, որ յաղթահարեմ անքնութիւնը:

Քոյրս եւ Նշանածը, ամբողջ շաբաթ մը մնացին մեր լքուած տան առաստաղին մէջ պահուած՝ կիսաքաղց:

Վերջապէս խուժանը կանգ առաւ մեր երկյարկանի տան առջեւ, որուն գետնայարկը կը բնակէր ֆրանսահպատակ կաթոլիկէ հայ ընտանիք մը, մայր մը՝ իր երեք երիտասարդ զաւակներով, քսան, քսաներկու եւ երեսուն տարեկան:

Շէնքին մուտքի դուռը խորտակելով ներս խուժեցին, ցանկոծելով դուրս քաշեցին երեք եղբայրները եւ իրենց ողբակոծ մօրը աչքերուն առջեւ հրացանազարկ սպաննեցին:

Որ մայրը կրնար տոկալ ու չխելագարիր իր արգանդի սիրոյ ծնունդներուն սրտաճմլիկ մահուան առջեւ:

Վագրի վայրագութեամբ նետուեցաւ խուժանավարներէն մէկուն վրայ, որ գաւազանի հարուածներով կը ջանար վերջ տալ անոնց շնչառութեան:

Վերջապէս մայրն ալ նուաղած ինկաւ անոնց արիւնլուայ մարմիններուն վրայ եւ ալ՝ չկանգնեցաւ:

Վերջին խօսքը եղաւ տարաբախտ մօր մահուան հռնդիւններու մէջ հեծեծեալ բառերը:

- ՊԷՆ ՖՐԱՆՍԸՍ, ՖՐԱՆՍԸՍ ՎՈՒՐՈՒԼՄԱԶ: Ես ֆրանսացի եմ, ֆրանսացին չեն զարներ:

Խեղճ կինը վստահ ու ապահով էր, որ ֆրանսահպատակ էր եւ խուժանը չէր դպչեր իր կեանքին: Չմտածեց, որ հայ էր եւ թուրքին համար արժէք չունէր ոչ մէկ ազգի հպատակութիւն, հերիք էր, որ ծագումով հայ էր, պէտք էր ... կացինահարուէր:

Մեծ պետութիւններու ցուցաբերած բեւեռային սառնասրտութիւնը, նոյնքան համազօր մեղք մըն էր, որքան հայաջինջ ցեղասպանութեան հեղինակներուն աններելի յանցագործութիւնը անպաշտպան հայութեան հանդէպ:

Հայ ժողովուրդի մեծ վշտին եւ մեծ սուգին անհաւասարելի ԵՐԳԻՉԸ, Աւետիս Ահարոնեան, իր խղճին բողոքը լսելի դարձուց ապագայ բոլոր հայ սերունդներուն, հետագայ պատմական խօսքերով, որ կը բարացուցեն իր այլամերժ ԱՆՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆԸ հայաջինջ ցեղասպաններուն հանդէպ:

ԵԹԷ ԱՅՍՔԱՆ ՉԱՐԻՔ ՄՈՌՆԱՆ ՄԵՐ ՈՐԴԻՔ, ԹՈՂ ՈՂՋ ԱՇԽԱՐՀ ՀԱՅՈՒՆ ԿԱՐԴԱՅ ՆԱԽԱՏԻՆՔ:

*ԱՎԱԳ (ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ)*

# ՏԱՌԱՊԱԼԻՑ ԴԱ՛ՌԸ ՕՐԵՐ*

Ի հիճունս Գրիգոր պապիս և Սաթենիկ տատիս, հայրս չափազանց զուսպ էր Մեծ գաղթի չարաբաստիկ օրերին առնչվող հուշերում: Այսպիսի վարքագծի դրսևորումը երևի թե գալիս էր այն բանից, որ այդ օրերին նա դեռևս մանկահասակ երեխա էր, տակավին չէր բոլորել նրա յոթ տարին: Բայց, այնուամենայնիվ, երբեմն-երբեմն երբ իր ծնողները վերհիշում էին իրենց անցյալի այդ դա՛ռը օրերը, հայրս էպիզոդիկ կերպով լրացնում էր որոշ մանրամասներ:

Տարիներ անց, երբ այլևս մեզանից ընդմիշտ հեռացել էին Գրիգոր պապս և Սաթենիկ տատս, օգտվելով պատեհ առիթից, հետևյալ հարցով դիմեցի հորս.

- Հայր, ժամանակի ընթացքում դու կցկտուր կերպով խոսել ես արդեն Մեծ գաղթի ահավոր օրերի մասին: Ասա, խնդրեմ, ի՞նչ եղավ այնուհետև, երբ ռուս զինվորը, ինչ-որ կերպ սատար կանգնելու համար ծնողներիդ, քեզ իր ձիու գավակին վերցրեց և փախավ: Ինչպե՞ս կարողացար քո գոյությունը պահպանել այդ փասը դառնաղետ ու հոգեմաշ օրերին և երկար փնտրտուքից հետո, վերջապես, կարողացար կրկին վերագտնել ծնողներիդ և հարազատներիդ:

- Դրանք, որդիս, անպատմելի սարսափալից, հոգիս կեղեքող օրեր էին ինձ համար, մի դեռևս կյանքի ճանապարհը թոթովախոսորեն ընթացող մանկան համար, ինչպիսին ես էի, որն ամեն պահի կարոտ էր ծնողական խնամքի և գուրգուրանքի: Ես անասելի ցավ եմ ապրում վերհիշելով այն բոլոր տանջանքները, որ կրել եմ այդ օրերին, նույնիսկ ողջ գաղթի ընթացքում: Պատկերացնո՞ւմ ես, որդիս, թե ինչպիսի հոգեվիճակում կհայտնվի մի մանկահասակ երեխա, որը չարաբաստիկ ճակատագրի բերումով անակնկալորեն հայտնվել է այդպիսի զարհուրելի իրավիճակում, երբ մեծ-մանուկ նույնիսկ մոռացած իրար՝ մտահոգված էին մի՛միայն փրկության ելք գտնել՝ դուրս պրծնելու այդպիսի քստմնելի վիճակից: Լեզուս անկարող է արտաբերել այդ ամեն ահավորությունները: Բայց ես կջանամ ինչ-որ կերպ հաղթահարել ներքին իմ ներհակությունը և համառոտակի կխոսեմ այդ մասին:

Արդ, ուրեմն, երբ ռուս զինվորը, երկարորեն ծնողներիս հորդորելուց հետո, վերջապես, նրանց համաձայնությունը ստացավ և ինձ տեղավորեց իր ձիու գավակին, առաջին պահին ես կարծես ներքին գոհունակություն ապրեցի՝ ոչ այն է՝ առաջին անգամ ձի հեծնելուս համար, ոչ այն է՝ որքան հնարավոր է՝ օր առաջ փրկվելու այս թոհուբոհից: Բայց երբ ձին փիրոջ՝ օրզանգուի «հրահանգով» տեղից պոկվեց և արագություն վերցրեց, իմ ներաշխարհը կարծես միանգամից տակնուվրա եղավ: Այդ պահին միայն կռահեցի ու հասկացա, թե ինչպիսի սխալ գործեցի՝ ռուս զինվորի հորդորներին համաձայնություն տալով, որ երևի թե ես ընդմիշտ կորցրեցի այլևս իմ ծնողներին, իմ հարազատներին: Սաթենիկ մայրս նույնպես համաձայն չէր այս քայլին:

---

* Հորս՝ Վազգեն Աբրահամյանի հուշերից՝ նվիրված Մեծ եղեռնից մազապուրծ բռնագաղթի ճանապարհին կրած ցավալի ու հուսահատական օրերին:

Ինչևէ, ես արդեն, դժխեմ բախտի թելադրանքով, հայտնվել էի մի իրավիճակում, որտեղ միայն մահվան ուրվականն էր փիրակալում: Երբեմն-երբեմն այս ու այն կողմից լսվում էին ողբաձայն աղաղակներ: Պարզ էր, թե ինչու: Կենդանի մնացածները լալահառաչ, անկասոն աղմուկ-աղաղակով իրենց հարազատի մասին էին ի լուր ամենքի ազդարարում: Ամենից ցավալին այն էր, որ այդպիսի աղեկտուր ճիչ-աղաղակները շատ հաճախակի էին հնչում, որն առավել չափով խորացնում էր հուսահատությունը գաղթականների այս անվերջանալի շարանի կենդանի մնացած համարյա կիսամեռ փառապյալների: Կարծես մեռելային լռություն էր փռում այնուհետև, կյանքի ոչ մի նշույլ: Յուրաքանչյուր քայլափոխի՝ մի կերպ քարերով ծածկված և կամ անթաղ դիակներ, ճանապարհի եզրերին՝ անշարժացած կիսամեռ արարածներ, որոնցից միայն կաշին ու ոսկորներն էին մնացել: Պարզ էր, որ նրանք արդեն իսկ գտնվում էին իրենց վերջին շնչում, անտե՜ր, անխնա՜մ...

Ես կարծես արդեն անպարբեր էի դարձել շուրջբոլորս տեղի ունեցող այս սահմռկեցուցիչ տեսարաններին: Իմ միակ մտահոգությունն էր՝ որքան հնարավոր է շուտ դուրս պրծնել այս գեհենական իրավիճակից, որքան հնարավոր է՝ ջանքեր գործադրել՝ գտնելու ծնողներիս, եթե ոչ՝ ինքս էլ, եթե, իհարկե՝ ողջ մնայի, կհայտնվեի այն նույն վիճակում, ինչպիսին էին տասնյակհազարավոր այլ անչափահաս անմեղ երեխաներ, և իմ մանկությունն ու պատանեկությունը կանցկացնեի որևէ օտար պատահական որբանոցում: Բայց առաջ չընկնենք ենթադրություններում...

Մեկ-երկու օր ռուս զինվորն ինձ իր մոտ պահեց, քանի որ գաղթականների այս անվերջանալի թվացող «երթն» ինչ-որ չափով խաղաղ էր ընթանում:

Մեկ-երկու օր անցավ առանց լուրջ միջադեպերի: Թուրք ավարառու զինվորի հետքն անգամ չէր երևում: Բայց երրորդ օրը, վաղ առավոտյան, նորից ճարճատեցին ասոխի հրացանները, և կրկին գաղթականների միայար ընթացող համաչափ շարքերը խառնշտկվեցին, աղմուկ-աղաղակ, վայնասուն... Բաշիբոզուկների մահասփյուռ գնդակից ընկնում էին և՛ ծերեր ու մանուկներ, և՛ կանայք ու աղջիկներ: Մեր երբեմնի դրախտային հայրենիքը վերածվել էր մի դժոխային անվերջանալի տեսարանի:

Թշնամու առաջին իսկ կրակոցից հետո իմ փրկարար ռուս զինվորն ինձ նստեցրեց մի ապահով տեղ և շտապ հեռացավ՝ հրահանգելով.

-Никуда не уходи, оставайся здесь, пока я вернусь. А если не вернусь, тогда здесь-же жди твоих родителей. Они скоро придут. Понял?

Ես, իհարկե, ոչինչ չհասկացա նրա խոսքերից: Ռուս զինվորի այս հրահանգը միայն մի հայ կամավորական զինվոր ինձ թարգմանեց, որն այդ պահին մեզ մոտ էր գտնվում:

Այս ասելով՝ նա հեռացավ: Այնուհետև բարեհոգի ռուս այդ զինվորը մասնակցեց գաղթականներին պաշտպանող մարտիկների շարքերում թուրքական հրոսակախմբի դեմ մարտերին: Մեր բաժանվելուց հետո ես այլևս նրան չտեսա: Շատ հավանական է, որ նա նույնպես զոհվել էր այդ մարտերում:

Հազար փա՜ռք այդ նվիրական անձի հոգու հիշատակին:

Այդ երկու խաղաղ օրերին երբ ես գտնվում էի ռուս զինվորի խնամակալության տակ, համարյա թե ինձ միայնակ չէի զգում: Նա չափազանց հոգատար էր իմ նկատմամբ: Նույնիսկ իր զինվորական մթերաբաժինը համարյա ամբողջությամբ հատկացնում էր ինձ: Այդ օրերին, ցերեկները, ես գրեթե միշտ ձիու թամբի վրա էի: Իսկ գիշերները երբ խաղաղ էին լի-

նում, քնում էի առանձին այդ զինվորի կողքին, ուր էլ լիներ՝ զինվորների, թե գաղթականների միջավայրում:

Հրացանազարկերը երկար չտևեցին: Իր մաշկի վրա զգալով պաշտպանական զորքի մարտունակությունը, թուրք ավարառուները շատ հեռացան՝ իրենց նտին թողնելով բազմաթիվ մարդկային կորուստներ:

Չմոռանամ ասել, որ այդ գաղթականների անվերջանալի քարավանին իրենց անձնդիր նվիրումով հսկում էին ոչ միայն ռուս զինվորները, այլ նաև հայ կամավորական ջոկատները, որոնց քաջագործությունների մասին հետագայում բազմաթիվ լեգենդներ հյուսվեցին:

Ինչ էլ. ռուս զինվորի հեռանալուց հետո ես այլևս մնացի միայնակ իմ ճակատագրին դեմ առ դեմ: Նորից եմ կրկնում, ինձ մնում էր միայն ամեն կերպ ողջ մնալ և բոլոր ջանքերը գործադրել՝ գտնելու ծնողներիս: Քույրս՝ Քարմիլեն, և եղբայրս՝ Վարազդատը, շաբաթներ առաջ էին զոհվել և լքել մեզ ընդմիշտ: Ողջ էին մնացել միայն Գրիգոր հայրս և Աստղիկ մայրս: Պարզորոշ հասկանալի է, թե նրանց վիճակն ինչպիսին էր իմ բացակայության ընթացքում: Երևի թե նրանք արդեն իսկ հաշտվել էին այն մտքի հետ, որ կորցրել են առմիշտ նաև իրենց վերջին՝ երրորդ զավակին՝ ինձ:

Երբ մարտերն ավարտվեցին, և իրավիճակն ինչ-որ կերպ խաղաղվեց, անմիջապես սկսեց դեպի փրկության ափ շարժվել գաղթականների անվերջանալի հոսքը: Այդ պահից իսկ ես դուրս եկա իմ թաքստոցից և միացա անդադար դեպի առաջ շարժվող այդ խմբերին: Վախենում էի, որ կատարելով ռուս զինվորի հրահանգը և մնալով այնտեղ՝ կհայտնվեի անլուծելի խնդրի առջև և ընդմիշտ կկորչեի:

Զոհերը կնքեցի՞ն իրենց մահկանացուն և դասվեցին անմե՞ղ նահատակների շարքը:

Հազա՞ր ողորմի նրանց:

Իսկ ողջ մնացածները դեռևս անհո՞ւյս կերպով շարունակում էին իրենց ընթացքը դեպի ճակատագրին ընդառաջ:

Քանի որ ես մնացել էի բոլորովին միայնակ, և ռուս զինվորն էլ չկար այլևս, հետևաբար ամեն կերպ ջանում էի մոտ գտնվել որևէ գերդաստանի և կամ ընտանիքի՝ օրհասական պահերին նրանց օգնությունը հայցելու: Եվ որովհետև իմ հիմնական նպատակը ծնողներիս հայտնաբերելն էր, ուստի ես համընթաց չէի գնում գաղթականների այդ խմբերին, որքս կախ էի զգում, որպեսզի ինչ գնով էլ լինի՝ մի կերպ գտնեմ հարազատ ծնողներիս: Բայց օրերը գալիս ու հերթագայում էին միմյանց, սակայն ես ապարդյուն կերպով շարունակում էի դեգերել գաղթականների հոծ բազմության ալեկոծումներում:

Եվ քանի որ ինձ մոտ ոչ մի ուտեստեղեն չկար, ես ստիպված էի մուրացկանություն անել՝ օրերս մի կերպ անցկացնելու համար, մինչև գտնեի ծնողներիս: Հաշվի առ, որդիս, որ գաղթականների այդ խմբերն էլ մի բարվոք վիճակում չէին: Բայց և այնպես, իմ խնդրանքաղերսից հետո տալիս էին այն, ինչ հնարավոր էին համարում: Կային նաև այնպիսինները (անսահման երախտագիտություն նրանց), որոնք իրենք էին ինձ կանչում իրենց մոտ և առատաձեռն ուտեստեղեն հրամցնում:

Ես հոգեպես և ֆիզիկապես համարյա թե սպառվել էի այլևս և հույսս կտրել և՛ մարդկանցից, և՛ նույնիսկ իմ Ամենակարող Աստծուց: Ութերորդ օրն էր, ինչ ես միայնակ քայլում էի և հուսահատորեն փնտրում իմ ծնողներին, բայց... Եղավ մի պահ, որ ես արդեն խելագարության աստիճանի հասցնող հուսահատական վիճակում էի:

Իններորդ օրվա այգաբացին, վերջապես, կարծես Ամենազոր Տիրոջ կամոք մի հուսադրող պայծա՛ռ լույս ճառագեց իմ գլխավերևում: Վանի մեր հարևաններից մի պարեց կին, փնտրելով և ճանաչելով ինձ, մոտեցավ, գրկեց ու համբուրեց, մի կտոր հաց դրեց իմ ափի մեջ և այնուհետև պաղատագին խորհուրդ տվեց, որ ամենևին չհեռանամ այդտեղից, որովհետև շատ շուտով այստեղ կլինեն իմ ծնողները: Կրկին անգամ փաղաքշեց ինձ և հեռացավ:

Չես պատկերացնի իմ ուրախությունը, որդիս: Երկա՛ր ու անհույս դեգերումներից հետո, վերջապես, ես նորից կհայտնվեի իմ հարազատ ու քաղցր ծնողների մոտ, նրանց գրկում: Այդ ավետաբեր լուրը ստանալուց հետո, այդ իսկ պահից սկսած, ես բարեբեր անակնկալի եկած, երջանկությունից կորցրել էի ինձ: Մի՞թե ես կրկին տեսնելու եմ իմ ամենահարազատ անձերին: Մի՞թե սա իրողություն է: Անվերջանալի արցունքները գլոր-գլոր գալիս ու հոսում էին այտերիս վրայով: Այդ իսկ պահից ես քո՛ւռն ուժգնությամբ բղավում էի.

- Մարե՛... Հայրի՛կ...

Բայց՝ «ձայն բարբառոյ յանապատի»: Ո՛չ մի արձագանք:

Բավականին ժամանակ էր անցել, սակայն նրանք չկային ու չկային: Վերջապես հեռու՜ հեռվից նկատեցի մեր գերդաստանի անդամներին, իմ հարազատ ծնողներին՝ իմ բազմաչարչար Գրիգոր հորս և անգուգական Սաթենիկ մորս: Քանի որ մեր միջև բավականին տարածություն կար, այդ պատճառով էլ նրանք ինձ չէին նկատել: Եվ չէին էլ կարող նկատել, քանի որ այդ կարճ ժամանակահատվածում ես բավականին փոխվել էի, նիհարել և, ամենից կարևորը՝ հագիս շորերն էլ օջախի կրակներից ու անձրևներից ցեխ ու մրի մեջ կորել էին: Իսկ գլխիս էլ դրված էր մի զինվորական գլխարկ, որն այնքա՜ն մեծ էր, որ ուղղակիորեն ծածկել էր ողջ դեմքս: Չմոռանամ ասել, որ նշված գլխարկը գլխիս էր դրել բարեպաշտ ու բարեհոգի այդ ռուս զինվորը:

Նկատելով մերոնց՝ ես, կարծես գերբնական ուժ ստացած, անկասելի մղումով նույն ակնթարթին սլացա դեպի նրանց և քո՛ւռն կարոտով փաթաթվեցի Սաթենիկ մորս փեշերին:

- Էս ո՛ւմ անտեր լաճն ի,- անմիջապես ցավագնորեն վրա բերեց մայրս:

Ես ձայն-ծպտուն չէի կարողանում հանել, որովհետև ցնծությունից պապանձվել էր լեզուս: Նրանք, հանկարծակիի եկած այս անակնկալ վարմունքիցս, առաջին պահին ինձ չճանաչեցին: Զգում էի, որ ծնողներս ինչ-որ խոսքեր են փոխանակում, բայց ի՞նչ էին ասում, ինձ համար այլևս անըմբռնելի էր, որովհետև ծնողներիս հայտնությունն ինձ բոլորովին զրկել էր հավասարակշիռ հոգեվիճակից: Պատկերացնո՜ւմ ես, որդիս, ես ինչպե՞ս կարող էի նրանց խոսքի փոխանակությանը հետամուտ լինել, երբ ինքս այլևս ցնծությունից միանշանակորեն կորցրել էի ինձ:

Թե որքան տևեց այս ամենը, նույնպես չեմ կարող ասել: Միայն հիշում եմ, որ նրանք համառորեն ստիպում էին ինձ խոսել: Իսկ ես այսպիսի հոգեվիճակում անկարող էի գոհացում տալու նրանց հորդորին:

Վերջապես Գրիգոր հայրս, երևի թե այլևս չկարողանալով զսպել իր համբերությունը, բարձրացրեց ռուս զինվորի ընծայած իմ լայնածավալ զինվորական գլխարկը, նկատելով դեմքս՝ նույն ակնթարթին չոքեց, գրկեց ինձ և կարոտակեզ սեղմեց իր կրծքին ու արտասանեց. «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ յաճութիւն» /Ղուկ. Բ 14/:

Իսկ Սաթենիկ մայրս, այնքա՜ն բաղձալի հանկարծակիի եկած, արդեն ուշաթափ ընկած էր գետնին:

# ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

*ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ*
*Պատմական գիտությունների թեկնածու*

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

(Նիկոլայ Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, 2004, 205 էջ)

Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված պատմագիտական հարուստ գրականության մեջ, որքան էլ տարօրինակ է, բացակայում են պատմագիտական բնույթի համակողմանի ուսումնասիրությունները: Առ այսօր մենք փաստորեն չունենք ցեղասպանության պատմության հետազոտության ասպարեզում մեծ ավանդ ներդրած ֆրանսիական, անգլիական, գերմանական, ամերիկյան պատմագիտական մտքի զարգացմանը նվիրված ուսումնասիրություններ[1]: Բացառության կարգով հիշատակենք պատմական գիտությունների դոկտոր Մ. Կարապետյանի մենագրությունները, որոնք նվիրված են Հայոց ցեղասպանության՝ հայրենական պատմագրության զարգացման փուլերին[2]:

Ինչ վերաբերում է արաբական պատմագիտությանը, ապա վերջինիս՝ Հայոց ցեղասպանության հարցում ունեցած ըմբռնմանը մենք ծանոթացել ենք գլխավորապես շնորհիվ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատությունների: Արաբական երկրների նոր շրջանի պատմության անվանի հետազոտող Ն. Հովհաննիսյանը շուրջ չորս տասնամյակ չի զլացել պարբերաբար քննական վերլուծության ենթարկելու արաբ պատմաբանների՝ Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված ուսումնասիրությունները: Այսօր արդեն

[1] Հայոց ցեղասպանության պատմության խնդիրներին առնչվող որոշ հարցեր քննարկվել են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հրատարակած կոլեկտիվ մենագրություններից մեկում: Տե՛ս Новая история Армении в трудах современных зарубежных авторов, Ереван, 1993.

[2] Մ. Կարապետյան, Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 1999: Նույնի՝ Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հիմնահարցերը հետխորհրդային հայ պատմագրության մեջ, Երևան, 2005:

տասնամյակների իր մտորումները նա ի մի է բերել միամփոփ, սեղմ, սակայն արժեքավոր մենագրության մեջ, որը լույս է ընծայվել Հայոց ցեղասպանության 90-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման Պետական հանձնաժողովի որոշմամբ և մեծապես լրացնում է ցեղասպանության պատմագրության մեջ առկա «սպիտակ բծերից» մեկը:

Հայոց ցեղասպանության պատմության գիտական ուսումնասիրությանն, անտարակույս, մեծապես նպաստել են նաև արաբ պատմաբանները, որոնց աշխատությունները, ի տարբերություն եվրոպացի ուսումնասիրողների գրչին պատկանող պատկառելի գիտական ժառանգության, հայրենական պատմաբանների գերակշռող մասի համար՝ արաբերեն լեզվի չիմացության պատճառով, մնացել են անհասանելի: Ըստ այդմ, Ն. Հովհաննիսյանի՝ գիտական անժխտելի արժանիքներ ունեցող մենագրությունը, որին կանդրադառնանք ստորև, ձեռք է բերում նաև ճանաչողական մեծ նշանակություն, առավել ևս, եթե նկատի ունենանք, որ հեղինակը վերլուծում է արաբական աշխարհում ընդգրկված տարբեր երկրների (Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Իրաք) պատմաբանների ուսումնասիրությունները:

Ն. Հովհաննիսյանը Հայոց ցեղասպանության հանդեպ արաբական պատմագիտության դրսևորած մեծ հետաքրքրությունը համարում է օրինաչափ և բացատրում է դրա պատմական ու քաղաքական շարժառիթները, այն, մասնավորապես, հիմնավորում հայ և արաբ ժողովուրդների միջև ձևավորված տարաբնույթ շփումներով, ինչպես նաև քաղաքական ճակատագրերի նմանությամբ, քանզի երկու ժողովուրդները դարեր շարունակ հեծել են օսմանյան լծի ներքո: Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության հարցում ժամանակակից արաբ պատմաբանների հետաքրքրությունը նա պատճառաբանում է իրենց ազգային պատմությանն առնչվող հարցերի ուսումնասիրությունը «համաօսմանյան համատեքստում» դիտարկելու ցանկությամբ: Ըստ նրա՝ «ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ, առաջին հերթին Հայկական հարցում օսմանյան կառավարության քաղաքականության ուսումնասիրությունը կօգնի նրանց՝ արաբական, սեփական պատմության ավելի խոր և բազմակողմանի հետազոտությանը» (էջ 24):

Ըստ էության, Ն. Հովհաննիսյանը տարակույս չունի, որ Հայոց ցեղասպանությունն արժեվորելու ասպարեզում արաբ պատմաբանները որդեգրել են միասնական դիրքորոշում, իսկ նշմարելի զանազանությունները վերաբերում են սոսկ իրադարձության պատմությանը հատկացված տեղին, ծավալին և հարակից այլ հարցերի: Ըստ այդմ, նա նախընտրում է, մեր համոզմամբ, հարցերի քննության պատմագիտական բնույթի ուսումնասիրությունների իրականացման լավագույն՝ թեմատիկ սկզբունքը: Նախ՝ նա արաբ պատմաբանների ուսումնասիրությունները դասակարգում է երեք խմբում և տալիս դրանց համառոտ, սակայն սպառիչ գնահատականները. աշխատություններ, որոնք նվիրված են՝ 1/ Հայոց ցեղասպանությանը, 2/ հայ ժողովրդի պատմությանը, 3/ արաբական երկրների պատմությանը՝ Հայոց ցեղասպանությանն առնչվող հարցերի ընդգրկմամբ:

Ծանրության կենտրոնը տեղափոխելով առաջին խմբին պատկանող աշխատանքների քննական վերլուծության հարթություն, Ն. Հովհաննիսյանն առանձնահատուկ ուշադրության է արժանացրել հայտնի ցեղասպանագետ Մուսա Պրենսի ուսումնասիրությունները, որին պարտական ենք Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ «արմենոցիդ»՝ «հայասպանություն» տերմինը 1967 թ. շրջանառության մեջ դնելու համար: Այս նորամու-

ծությունն, ի դեպ, նա համարում է արաբ պատմաբանի «ամենակարևոր ներդրումը Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում» (էջ 33) և հիմնավորապես բացահայտում այդ բնորոշման էությունը, համաձայն որի Մուսա Պրենսը, չբավարարվելով լոկ «արմենոցիդ» տերմինի առաջադրմամբ, խորամուխ է եղել դրա բովանդակության վերհանման մեջ և ընդհանուր հայտարարում այն դիտել է իբրև «XX դարի մարդկության պատմության մեջ կատարված բոլոր ցեղասպանների հետ համեմատած, ամենամեծ, ամենածանր, ամենանողկալի, այսինքն՝ ամենացեղասպանական ցեղասպանություն» (էջ 161): Բացի դրանից, Ն. Հովհաննիսյանն այս առիթով մանրամասնում է Մուսա Պրենսի մոտեցման առանձնահատկություններից մեկը ևս, թե՛ Հայոց ցեղասպանության և թե՛ հրեաների Հոլոքոստի ընթացքում՝ համապատասխանաբար՝ թուրքերի և նացիստների գործադրած տոսկալի վայրագությունը արաբ պատմաբանը մեկնաբանում է հոգեբանական և պաթոլոգիական գործոններով (էջ 161)[3]:

Ն. Հովհաննիսյանը հանգամանորեն վերլուծում է նաև հայ ժողովրդի պատմությանը նվիրված արաբ պատմաբանների և իրավաբանների աշխատությունները, որոնցում այս կամ այն չափով արծարծվել են եղեռնի պատմությանն աղերսվող խնդիրները, և հավաստում է, որ դրանցում արտահայտված տեսակետները «զգալի ներդրում են հանդիսանում Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում» (էջ 44): Հեղինակն ընդգծում է մի էական հանգամանք, այն է՝ որոշ արաբ հեղինակներ, օրինակ՝ Մրվան ալ-Մուդավարը, Ֆուադ Հասան Հաֆիզը, Մուսա Պրենսը, Նաիմ ալ-Յաֆին, ժամանակագրական առումով Հայոց ցեղասպանությունը չեն պարփակում 1915 թ. տեղի ունեցած դեպքերով, այլ կատարվածի եզրերը տարածում են նաև Աբդուլ Համիդի օրոք տեղի ունեցած զանգվածային կոտորածների վրա, թեև նման մեկնաբանությունը նա չի դիտում իբրև առավելություն այս հեղինակների գիտական դիրքորոշման համար, քանզի այն անհարիր է այս հարցում իր որդեգրած սկզբունքին: Ուստի՝ նպատակահարմար ենք գտնում կանգ առնել այս խնդրի վրա:

Մենք միանգամայն օրինաչափ ենք համարում Ն. Հովհաննիսյանի՝ 1915 թ. իրադարձություններին տված «Մեծ եղեռն» բնորոշումը (էջ 18), սակայն կարծում ենք, որ վիճահարույց է, այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության գործընթացը 1915 թ. շրջանակներում տեղադրելու տեսակետը (էջ 16, 17 և այլն), որի վրա խարսխված է մենագրության շարադրանքը: Ըստ Ն. Հովհաննիսյանի, օրինակ, «Աբդուլ Համիդ II-ը սանձազերծեց հայկական կոտորածները Կոստանդնուպոլսում, Սասունում և Արևմտյան Հայաստանի այլ վայրերում» (էջ 28), իսկ «1915 թ. սկսվեց Հայոց ցեղասպանությունը» (էջ 121): Մեր համոզմամբ, սակայն, Հայոց ցեղասպանությունը հարկ է դիտել իբրև փուլային՝ անհամաչափ զարգացում ունեցած միասնական գործընթաց, որը կյանքի է կոչվել Աբդուլ Համիդի մտահղացմամբ (միայն 1894-1896 թթ. պետական քաղաքականության մակարդակով և էթնիկական ծագման պատճառով ոչնչացվել է շուրջ 300000 հայ), հարատևել է շուրջ երեք տասնամյակ (1894-1922) և իրականացվել օսմանյան երեք վարչակարգերի կողմից: Անշուշտ, հայ

[3] Նշենք, ի դեպ, որ Հայոց ցեղասպանության պատմագրության պաթոլոգիական գործոնին մեծ տեղ է հատկացնում նաև ֆրանսիացի խոշոր պատմաբան Իվ Տերնոնը: Տե՛ս **Yves Ternon**, Mardin 1915. Anatomie pathologique d'une destruction, Paris, 2002.

ժողովրդի բնաջնջման գործընթացը գագաթնակետին է հասել 1915 թ.:

Երրորդ խմբում ընդգրկված՝ արաբ հեղինակների աշխատությունների առանձնահատկությունը Ն. Հովհաննիսյանը համարում է վերլուծված հարցերի սերտ առնչությունն արաբական պատմության հիմնախնդիրների հետ: Ի վերջո, նրա կարծիքով, հարկ է արաբական պատմական գրականությունն «ընկալել որպես մեկ ամբողջություն» (էջ 47), որը միակ հնարավոր միջոցն է ամբողջական պատկերացում կազմելու համար՝ խնդրո առարկա ասպարեզում արաբական պատմագիտության ներդրած ավանդի մասին: Ըստ այդմ, ընդհանրացնելով իր խորհրդածությունները, հեղինակն առանձնացնում է արաբական պատմագիտությանը բնորոշ յուրահատկությունները, որոնք այն էականորեն զանազանում են ցեղասպանության եվրոպական պատմագրությունից, դրանցից արժեվորելով երկուսը: Նախ՝ արաբ պատմաբանները Օսմանյան կայսրության պատմությանն առնչվող իրադարձությունները չեն քննարկում սոսկ որպես «դիտորդ», քանզի արաբական երկրները չորս հարյուրամյակ շարունակ (1516-1918 թթ.) ընդգրկված են եղել կայսրության կազմում և, բնականաբար, օսմանյան վարչակարգի լծի ներքո հեծող ժողովուրդներից բաժին հասած փորձությունների իմաստն ըմբռնում են շատ ավելի լավ, քան արևմտյան ժողովուրդների ներկայացուցիչները: Մյուս կողմից՝ արաբ ուսումնասիրողների պարագայում ի չիք է դառնում թուրք պատմաբանների կողմից արևմտյան պատմաբանների հասցեին բարդվող ստահոդ ճերյուրանքների հավանականությունը, համաձայն որոնց՝ «քրիստոնյա պատմաբանները պաշտպանում են քրիստոնյա հայերին» (էջ 50): Ընդհանուր հայտարարում, հետևում է Ն. Հովհաննիսյանի հետևյալ եզրահանգումը. «Արաբական պատմագիտությունը նպաստում է, որ Հայոց ցեղասպանության հարցը չտեղափոխվի կրոնական ոլորտ, այլ մնա քաղաքական դաշտում» (էջ 52):

Ն. Հովհաննիսյանն իրավամբ սահմանազատում է և մանրազնին վերլուծության ենթարկում արաբ հեղինակների քննարկած՝ Հայոց ցեղասպանության նախադրյալներն ու պատճառները: Նա բարձր է գնահատում Օսմանյան կայսրության «իրական և հավաստի պատկերը» վերհանելու ասպարեզում արաբ պատմաբանների դրսևորած համակողմանի մոտեցումը՝ քրիստոնյա և մահմեդական զանազան ժողովուրդների, այդ թվում՝ հայերի կացությանը վերաբերող սկզբնաղբյուրների ուսումնասիրության հիման վրա: Ի շարս արաբ պատմաբանների բացահայտած ցեղասպանության նախադրյալների, հեղինակն առանձնացնում է Օսմանյան կայսրության ռասայական էությունը, թուրքերի «բարձր», իսկ մյուս ժողովուրդների «ցածր» ազգ լինելու տեսությունը, կայսրության ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ գործադրվող զանգվածային բռնությունները ու կոտորածները, մասնավորապես՝ XIX դարի վերջին և XX դարի սկզբին: Նման ընդգրկուն մոտեցման շնորհիվ է, որ, ըստ Ն. Հովհաննիսյանի, «օսմանյան սուլթանների քաղաքականությունն ազգային հարցում դառնում է ավելի հասկանալի ու ցցուն» (էջ 62):

Վերլուծելով արաբ պատմաբանների հիմնադրույթները, Ն. Հովհաննիսյանը հանգում է միակ հնարավոր հետևությանը. «Դա մի կայսրություն էր, որը... մեզ է ներկայանում թուրքերի՝ որպես տիրապետող և «բարձր» կարգի ժողովրդի և մնացյալ ոչ թուրք ժողովուրդների՝ ենթակա ռայյաների պետության դասական օրինակ..., որտեղ բոլոր ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում և հայերի, կոտորածների ու ջարդերի քաղաքականությունը

հանդիսանում էր պետական քաղաքականություն» (էջ 69. այս մասին տե՛ս նաև էջ 174): Ի դեպ, այս առիթով, անհրաժեշտ է նշել, որ պատմության մեջ արձանագրված զանգվածային բռնությունները իբրև ժողովրդասպանություն (democide) կամ էթնիկական հողի վրա տեղի ունեցած բնաջնջումները իբրև ցեղասպանություն (genocide) բնութագրելու հարցում, պետական քաղաքականության առկայության հանգամանքը, որը ցեղասպանության պարագայում մենք համարում ենք condicio sine qua non, ժամանակակից ցեղասպանագետների շրջանում տեղիք է տվել տարակարծությունների[4]:

Ն. Հովհաննիսյանը, չցանկանալով անջրպետել Հայոց ցեղասպանության պատճառները և նախադրյալները, հիմնավորված է համարում, այդուհանդերձ, դրանք միմյանցից զանազանելու անհրաժեշտությունը: Ելնելով արաբ հեղինակների քննարկած հիմնախնդիրներից, նա առանձնացնում է այն գլխավոր պատճառները, որոնք անմիջականորեն դիրքում են կոչել ցեղասպանության գործընթացը: Դրանց թվում նա ոչ միայն մանրամասնորեն ներկայացնում է, այլև քննական վերլուծության ենթարկում բոնի թուրքացման, պանթուրքիզմի քաղաքականության և, այսպես կոչված՝ «հայկական պատնեշի» վերացման (որը հնարավոր էր իրականացնել միայն հայերի՝ որպես էթնիկական ընդհանրության բնաջնջման ուղիով) հանգամանքները, որոնք բազմիցս մատնանշում են արաբ պատմաբանները:

Ցեղասպանության պատճառների թվում Ն. Հովհաննիսյանն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Օսմանյան կայսրությունը վերջնական տրոհումից կանխելու՝ օսմանյան ղեկավարների մտավախությանը, որը, ըստ նրա, «արաբ հեղինակների կարծիքով, պատճառ հանդիսացավ, որ երիտթուրքական ղեկավարությունը Հայկական հարցում գրավի ավելի կոշտ, ագրեսիվ և դաժան դիրքորոշում» (էջ 86): Մեր համոզմամբ նաև Հայոց ցեղասպանության գործընթացի սանձազերծումն Աբդուլ Համիդի կողմից պայմանավորված էր գլխավորապես կայսրության տարածքային ամբողջականության պահպանության շահերով:

Հեղինակն անդրադառնում է բազմաթիվ արաբ պատմաբանների լուսաբանած՝ Հայոց ցեղասպանության պատմությանն առնչվող մի շարք սկզբունքային նշանակություն ունեցող խնդիրների վերլուծությանը՝ կապված քրդական գործոնի, արևմտահայերի պահանջների, հայերի «դավաճանության» և «ապստամբության»՝ երիտթուրքերի վարկածի հետ: Ինչպես նա նշում է, քրդերի՝ արևմտահայերի հանդեպ դրսևորած վերաբերմունքը հիմնավորապես բացահայտել է, մասնավորապես, Սալիհ Զահր ադ-Դինը, որն ընդգծել է թե՛ քրդերի մասնակցությունը 1890-ական թթ. հայերի դեմ գործադրված բռնություններին և թե՛ նրանց որոշ շրջաններում դրսևորված՝ ընդդեմ ընդհանուր թշնամու՝ հայերի հետ համատեղ պայքարելու միտումը: Ն: Հովհաննիսյանը գտնում է, որ հայ-քրդական համագոր-

---

[4] Տե՛ս, օրինակ՝ մեր օրերի խոշորագույն ցեղասպանագետներից՝ ամերիկացի հայտնի քաղաքագետ Ռ. Ջ. Ռումմելի և այն վիճարկող՝ Երուսաղեմում Հոլոքոստի և ցեղասպանության ինստիտուտի տնօրեն Իսրայել Չառնիի բանավեճն այս առիթով. **I. W. Charny**, Démocide: vers un nouveau concept global. Présentation des travaux de R. J. Rummel // Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides. Sous la direction de Israel Charny. Toulouse, 2001, p. 45-48; **R. J. Rummel**, Le nouveau concept de démocide // Ibid., p. 48-55.

ծակցությունը, սակայն, «քուրդ ցեղապետների և օսմանյան սուլթանի միջով, չդարձավ մշտական գործոն և չվերածվեց մշակված ու գիտակցված քաղաքականության» (էջ 103):

Առավել հետաքրքիր են Ն. Հովհաննիսյանի դիտարկումները՝ կապված արևմտահայության պահանջների և բարեփոխումների խնդիրների հետ, որոնք համակողմանիորեն արծարծել են արաբ պատմաբանները: Ըստ հեղինակի, վերջիններս խիստ քննադատության են ենթարկել Բեռլինի վեհաժողովի որոշումները և եվրոպական պետությունների քաղաքականությունը Հայկական հարցում: Նա հանգամանալից վերլուծում է թե՛ Օսմանյան կայսրության ապակենտրոնացման (լամարքազիայի) և թե՛ Հայկական հարցի լուծման լիբանանյան մոդելները: Եթե առաջին տարբերակը նախատեսում էր Օսմանյան կայսրության շրջանակներում կոնֆեդերացիայի ստեղծում, ապա երկրորդը՝ արևմտահայության պարագայում, իր արտացոլումը գտավ, փաստորեն, 1914 թ. հունվարի 26-ին ստորագրված ռուս-թուրքական համաձայնագրում, ըստ որի Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու գոտու՝ եվրոպացի տեսուչների ղեկավարությամբ, որն Առաջին համաշխարհային պատերազմի սանձազերծման հետևանքով մնաց անիրագործելի: Արաբ հեղինակների կողմից այս մոդելների շուրջ հայտնած կարծիքները, հիրավի, ձեռք են բերում մեծ կարևորություն, քանզի հայերի՝ կայսրությունից անջատվելու ցանկությունը բազմիցս շահարկել են թուրք պատմաբանները: Արաբ պատմաբանների աշխատությունների մանրազնին վերլուծությունը հնարավորություն է ընձեռել Ն. Հովհաննիսյանին հանգելու խիստ իրատեսական հետևության. «Արաբական պատմագիտությունը գալիս է հավաստելու այն ճշմարտությունը, որ արևմտահայությունը ձգտել է իր հարցը լուծել Օսմանյան կայսրության շրջանակներում և երբեք չի դրել Օսմանյան կայսրությունից անջատվելու հարց» (էջ 131):

Ն. Հովհաննիսյանն ուշադրությունը բևեռել է Հայոց ցեղասպանությանն առնչվող՝ արաբ պատմաբանների աշխատություններում քննարկված ևս մեկ կարևոր հարցի՝ հայերի կարծեցյալ դավաճանության վրա: Մանրամասնորեն վերլուծելով նրանց կողմից բերված հավաստի տվյալները՝ համաձայն որոնց հայերին դավաճանության մեջ մեղադրելն անհեթեթություն է, առավել ևս նախքան Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, հեղինակը եզրակացնում է. «Արաբական պատմագիտության մեջ միանգամայն ճիշտ են լուսաբանված իրադարձությունները և տրված են միանգամայն համոզիչ ու արդարացի գնահատականներ՝ առ այն, որ հայերի կողմից ոչ մի դավաճանություն տեղի չի ունեցել» (էջ 138): Ըստ նրա վերլուծության՝ արաբ պատմաբանները նույնքան հիմնավորապես հերքում են նաև 1915 թ. Վանի ինքնապաշտպանության կապակցությամբ հայերի հասցեին տեղացող՝ երիտթուրքերի մեղադրանքները ապստամբության և դավաճանության վերաբերյալ: Ուստի՝ Հայոց ցեղասպանության արաբական պատմագիտության մեջ գերիշխող տեսակետի համաձայն, ինչպես ապացուցում է Ն. Հովհաննիսյանը, արմենոցիդը մեկնաբանվում է իբրև «խնամքով ծրագրված քաղաքականություն» (էջ 150):

Ընդհանուր առմամբ, հեղինակը համոզմունք է հայտնում, որ «արաբական պատմագիտության մեջ Հայոց ցեղասպանությունը՝ արմենոցիդը, ընկալվում է որպես XX դարի առաջին ցեղասպանություն, որը եթե հայերի համար ողբերգություն էր, ապա համայն մարդկության համար ոճրագործություն, որը պետք է համարվի հանցանք՝ ուղղված ընդհան-

րապես մարդկության դեմ» (էջ 178):

Անդրադառնանք նաև Ն. Հովհաննիսյանի առաջադրած. մեր կարծիքով, ոչ այնքան համոզիչ մի դրույթի: Թերևս հեղինակի՝ Հայոց ցեղասպանության ժամանակագրական եզրերը սահմանող՝ ընդհանուր հայեցակարգով է բացատրվում նրա՝ ցեղասպանության առանցքային խնդիրներից մեկին առնչվող մեկնաբանությունը, ըստ որի Աբդուլ Համիդ II-ի «անավարտ գործի շարունակողները»՝ երիտթուրքերը, «հայերին ֆիզիկապես վերացնելու քաղաքականությունը բարձրացրեցին պետական քաղաքականության մակարդակի» (էջ 19): Այս առիթով անհրաժեշտ ենք համարում նշել, որ Աբդուլ Համիդի նախաձեռնությամբ հրահրված Հայոց ցեղասպանությունն ի սկզբանե իրականացվել է պետական քաղաքականության մակարդակով, հանգամանք, որն աներկբայելիորեն հավաստում են զանազան եվրոպական սկզբնաղբյուրներ, մասնավորապես, Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության արխիվի վավերագրերն ամփոփող ժողովածուն՝ «Դեղին գիրքը»[5]:

Եզրափակելուց առաջ հարկ ենք համարում ընդգծել, որ Ն. Հովհաննիսյանի մենագրությունը միանգամայն նոր և արժեքավոր խոսք է Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ, որը հագեցված է թե՛ արաբական պատմագիտությանը և թե՛ եղեռնի պատմության մի շարք առանցքային հարցերին (պատճառներին, առանձնահատկություններին և այլն)՝ հեղինակի տված ծանրակշիռ գնահատականներով ու մեկնաբանություններով, որն, անտարակույս, մեծ հետաքրքրությամբ կընդունեն ցեղասպանության պատմության ուսումնասիրողները:

---

[5] Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897, Paris, 1897. Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, Paris, 1897. Այդ մասին տե՛ս Վ. Պողոսյան, Ֆրանսիական դիվանագիտական սկզբնաղբյուրները 1894-1896 թթ. հայկական կոտորածների մասին // Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2004, թիվ 9, էջ 101-111:

*ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ*
*Պատմական գիտությունների թեկնածու*

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԵՎՍ ՄԵԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## (ՏԻԳՐԱՆ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ, ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ (1915-1918 ԹԹ.). ԵՐԵՎԱՆ, 2005, 202 ԷՋ)

Սկսած XX դարի 60-ական թվականներից մեծապես աճել է հետաքրքրությունը Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության նկատմամբ: Նշված ժամանակաշրջանից ի վեր տպագրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, ականատեսների վկայություններ: Մեծ աշխատանք է կատարվել զանազան երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Ավստրիայի, Իտալիայի, Գերմանիայի արխիվներում պահվող վավերագրերի հրատարակության ուղղությամբ[1]:

Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության բնագավառում իրենց ավանդն են ներդրել հայրենական պատմաբանները, որոնցից ոմանք՝ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը, Ռ. Գ. Սահակյանը, Ջ. Ս. Կիրակոսյանը, խորհրդային իշխանության տարիներին խիզախել են դառնալ այս բնագավառում պատմագիտական հետազոտությունների սկզբնավորողները մեր հանրապետությունում: Հայոց ցեղասպանության պատմության բազմակողմանի ուսումնասիրության համար լայն հնարավորություններ են ստեղծվել Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո: Ժամանակակից պատմաբանները, ի շարս այլ հարցերի, պատշաճ ուշադրություն են դարձնում նաև Մեծ Բրիտանիայի՝ Հայկական հարցում որդեգրած քաղաքականությանն ու դիրքորոշմանն առնչվող զանազան խնդիրների ուսումնասիրությանը:

Հայոց ցեղասպանության հարցում 1915-1918 թթ. անգլիական դիվանագիտության ելևէջներին նվիրված՝ պատմական գիտությունների թեկնածու Տիգրան Սարուխանյանի մենագրությունն արժեքավոր ներդրում է Անգլիայի պաշտոնական շրջանների վարած քաղաքականության ուսումնասիրության ասպարեզում: Նշենք, նախորդ հեղինակները (Լ. Ա Բայրամյան, Ա. Ջ. Կիրակոսյան)[2] մեկնաբանել են միայն Անգլիայի քաղաքականու-

[1] Թվարկենք առավել կարևորները. Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Составители М. Г. Нерсисян, Р. Г. Сахакян. Под редакцией проф. М. Г. Нерсисяна. Ереван, 1966; 2-е, дополненное издание. Ереван, 1982; A. Beylerian, Les grandes puissances, l'Empire ottoman et les Arméniens dans les archives françaises (1914-1918), Paris, 1983; United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian, v. I-III, Watertown, 1993-1995; Österreich-Armenien 1872-1936. Faksimilesammlung Diplomatischer Aktenstücke. Herausgegeben und Eingeleitet von Mag. Dr Artem Ohandjanian. Band I-XII, Wien, 1995; Documenti diplomatici italiani sull'Armenia. Seconda serie: 1891-1916. A cura de M. Russo, v. 1-2, Firenze, 1999; Вольфганг и Зигрид Густы. Геноцид армян. Официальные документы из германских архивов, публикуемые впервые, Ереван, 2005.

[2] Լ. Բայրամյան, Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում, Երևան, 1982; Ա. Կի-

թյունն Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած ժամանակաշրջանում: Հարկ է նաև ընդգծել, որ հեղինակի մոտեցումները մեծապես զանազանվում են արտասահմանյան պատմաբանների և, մասնավորապես՝ Ա. Նասիպյանի մեկնաբանություններից, առաջին հերթին Անգլիայի քաղաքականության հանդեպ ցուցաբերած քննադատական միտվածությամբ:

Մենագրությունը խարսխված է աղբյուրագիտական ընդարձակ հենքի վրա, որը հեղինակի՝ որպես հետազոտողի անժխտելի արժանիքն է: Սարուխանյանը առաջին անգամ շրջանառության մեջ է դրել մեծ թվով արխիվային անտիպ փաստաթղթեր, որոնք քաղել է Մեծ Բրիտանիայի պաշտոնական արխիվային նախարարությունից և Բոդլեյան գրադարանում պահվող անգլիացի գործիչների՝ լորդ Բրայսի, Առնոլդ Թոյնբիի անձնական արխիվներից: Նա օգտագործել է նաև ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվում և Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում պահվող վավերագրերը:

Ինչ վերաբերում է տպագիր սկզբնաղբյուրներին, հարկ է առանձնացնել անգլիական խորհրդարանի նիստերի արձանագրությունները ամփոփող հրատարակությունները, որոնք հեղինակին հնարավորություն են ընձեռել բացահայտել Հայոց ցեղասպանությանն առնչվող խնդիրների խորհրդարանական քննարկումների մանրամասները: Տ. Սարուխանյանն օգտագործել է նաև գերմանական և ռուսական արխիվային վավերագրերն ամփոփող փաստաթղթերի ժողովածուները, ինչպես նաև տարբեր քաղաքական կողմնորոշում ունեցող անգլիական, ամերիկյան և ռուսական պարբերականները:

Հեղինակը քննարկվող հարցերի նկատմամբ ի սկզբանե դրսևորում է համակողմանի մոտեցում: Կատարելով համառոտ պատմական անդրադարձ՝ նա լուսաբանում է թե՛ Օսմանյան կայսրության և թե՛, մասնավորապես, Հայկական հարցի նկատմամբ «մշուշապատ» Ալբիոնի քաղաքականության էությունը: Հայկական հարցի ծագումը հեղինակն իրավամբ պայմանավորում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին հաջորդած՝ մեծ տերությունների դիվանագիտական մեքենայություններով: Բացահայտելով Անգլիայի ընդգծված հակառուսական քաղաքականության ակունքները Սան Ստեֆանոյի պայմանագրից ի վեր, նա հավաստում է, որ այն ճանապարհ է հարթել Հայոց ցեղասպանության իրականացման համար, քանզի անգլիական կառավարության դիրքորոշումը հանգում էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանը, որին բրիտանական դիվանագետները հետամուտ էին, ըստ նրա, դեռևս XVIII դարի 80-ական թվականներից (էջ 17): Այս հարցը, սակայն, մեր կարծիքով, կարիք ուներ բազմակողմանի ուսումնասիրության, և կասկածից վեր է, որ մենագրությունը մեծապես կշահեր, եթե հեղինակն այն քննարկեր ավելի լայն կտրվածքով:

1822 թ. ի վեր, Սրբազան դաշինքի Վերոնայի վեհաժողովում անգլիացի դիվանագետների ջանքերով պաշտոնապես առաջադրվեց Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը և դրանով իսկ դիվանագիտության պատմության մեջ մխրճվեց Արևելյան հարցը: Այդ իսկ պահից կայսրության տարածքային ամբող-

---

ռսեխոյան, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX դարի 30-ական թթ.-1914 թ.), Երևան, 1999:

քականության պահպանման անհրաժեշտությունը, հիրավի, դարձել է մեծ տերությունների՝ Մերձավոր Արևելքում վարած արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից: Այս խնդրում XIX դարի վերջին քառորդում ընդգծված շահագրգռվածություն էին հանդես բերում եվրոպական բոլոր մեծ պետությունները, մասնավորապես՝ Ֆրանսիան[3]:

Ինչպես ցույց տվեց իրադարձությունների զարգացման հետագա ընթացքը, մեծ տերություններից ոչ մեկը ռազմավարական իր շահերին անհարիր՝ Օսմանյան կայսրության կամ Թուրքիայի մասնատմանը վերաբերող առաջարկությամբ երբևէ հանդես չեկավ, քանզի այն հղի էր տարածաշրջանում եվրոպական պետություններից որևէ մեկի ռազմավարական դիրքերի շեշտակի ամրապնդման հեռանկարով՝ ի վնաս մյուսի: Իսկ այս իրողությանը քաջատեղյակ Աբդուլ Համիդ II-ը հմտորեն օգտագործում էր մեծ տերություններին բզկտող տարաձայնությունները, որոնք ճանապարհ էին հարթում տարբեր ժողովուրդների և, մասնավորապես, արևմտահայության ցեղասպանության՝ սուլթանի որդեգրած քաղաքականության իրականացման համար:

Հայոց ցեղասպանության գործընթացի սաստկացումը 1915 թ. գարնանը Տ. Սարուխանյանը պայմանավորում է եվրոպական տերությունների, մասնավորապես՝ Անգլիայի՝ Օսմանյան կայսրության նկատմամբ վարած ռազմադիվանագիտությամբ: Նա մանրամասն քննարկում է 1915 թ. Չերչիլի և Քիթչիների՝ ռազմական գործողությունների իրականացմանն առնչվող ծրագրերի զանազանությունը և հայ ժողովրդի ողբերգության հարցում Չերչիլի ծրագրի ունեցած չարագուշակ դերը, որը նախատեսում էր ռազմական գործողությունների ծավալում Դարդանելի տարածաշրջանում Կոստանդնուպոլսի գրավման նպատակով: Ըստ հեղինակի՝ Մեծ Բրիտանիային հետաքրքրում էին միայն Օսմանյան կայսրության ժառանգությանը տիրանալու և Ռուսաստանին դրան անմասնակից դարձնելու հարցերը: Այդ պատճառով կառավարության հավանությանն արժանացել է Չերչիլի ծրագիրը, որը հանգեցրել է անգլիացիների պարտությանը և դրանով իսկ երիտթուրքերի պարագլուխների համար ստեղծել բարենպաստ պայմաններ արևմտահայության համատարած բնաջնջման քաղաքականության իրականացման համար:

Անգլիական արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա Տ. Սարուխանյանն անդրադառնում է հայ քաղաքական գործիչների իղձերին՝ կապված հայկական կամավորական ջոկատների կազմակերպման հետ՝ Կիլիկիայում վերահաս ռազմական գործողություններին մասնակցելու նպատակով, և եզրակացնում, որ այդ քայլն «ուղղված էր ոչ միայն ցեղասպանության ենթարկվող հայրենակիցների փրկությանը, այլև Թուրքիայի դեմ կռվող Անտանտի հաղթանակին ծառայելուն» (էջ 59): Հեղինակը հիմնավորապես մերկացնում է Մեծ Բրիտանիայի «հայադավ» քաղաքականությունը, որը խուսափել է անգլիական նկրտումներին անհարիր՝ հայկական կամավորական շարժմանը խթանելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելուց: Նա շեշտում է նաև այս հարցում անգլո-ֆրանսիական մրցակցության հանգամանքը, բայց, ցավոք, ամբողջ խորությամբ չի բացահայտել

[3] Նշենք, ի դեպ, որ այն դեռևս Նապոլեոն I-ի արտաքին քաղաքականության գլխավոր նախադրյալներից էր: Տե՛ս **E. Driault**, La politique orientale de Napoléon. Sebastiani et Gardane (1806-1808), Paris, 1904, p. 60: **В. Г. Сироткин**. Наполеон и Александр I, М., 2003, с. 110.

դրա մանրամասները, քանզի չի օգտագործել ֆրանսահայ պատմաբան Ա. Պեյլերյանի՝ ֆրանսիական զանազան արխիվների, մասնավորապես՝ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության արխիվի վավերագրերի ժողովածուն[4], որն ամփոփում է խնդրո առարկա հարցին նվիրված հարուստ փաստաթղթեր և, անշուշտ, հեղինակին հնարավորություն կընձեռեր թե՛ ամբողջացնելու կամավորական շարժման կազմակերպմանն առնչվող հայտարարում առկա պատկերը և թե՛ հստակեցնելու ռազմական գործողությունները Կիլիկիայում ծավալելու շուրջ Թուրքիայի դեմ մարտնչող տերությունների բուն նպատակների հետ որևէ աղերս չունեցող՝ հայ գործիչների բաղձանքները:

Տ. Սարուխանյանը մանրազնին քննարկում է Անտանտի տերությունների՝ 1915 թ. մայիսի 24-ի հայտարարությունը և կարևորում պաշտոնական Անգլիայի դիրքորոշումն այդ փաստաթղթի վերջնական բնագրի մշակման գործում: Նա այդ հայտարարությունն իրավամբ բնութագրում է իբրև ոչ այնքան Հայոց ցեղասպանությունը, որքան ցեղասպանությունն ընդհանրապես դատապարտող «առաջին միջազգային իրավական փաստաթուղթ» (էջ 71): Հեղինակը ցուցաբերում է ընդգրկուն մոտեցում և այս հարցն ուսումնասիրում լայն շառավիղով, հավաստում, որ թե՛ Բարձր Դռան և թե՛ եվրոպական տերությունների համար այդ հայտարարությունը երբևէ չի ունեցել փոքր-ինչ նշանակություն: Տ. Սարուխանյանը հանգամանորեն բացահայտում է նաև պատերազմի ավարտից հետո Անգլիայի դերը թուրք ջարդարարների պարագլուխներին հովանավորելու և նախատեսվող պատժից նրանց խույս տալու հարցում: Ըստ այդմ՝ նա հիմնավորապես ապացուցում է, որ մայիսի 24-ի հայտարարությունն Անգլիայի համար ի սկզբանե եղել է ոչ այլ ինչ, եթե ոչ "Tabula rasa":

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ հանգամանալից ձևով ուսումնասիրված չէ հայ ժողովրդի կրած նյութական կորուստների չափը: Տ. Սարուխանյանը մանրամասնորեն անդրադառնում է այս հարցում Մեծ Բրիտանիայի նենգ դիրքորոշմանը և վեր է հանում նրա վրա բարդվող ամբողջ պատասխանատվությունը: Նա արխիվային նորահայտ փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա հիմնավորում է հայ ժողովրդի դրամական միջոցների մի մասի (շուրջ 5000000 թուրքական ոսկե ֆունտի սահմանում) առգրավումն անգլիական կառավարության կողմից, ընդգծում, որ այս գործընթացը կյանքի էր կոչվել և իրականացվել զանազան անգլիական ապահովագրական ընկերությունների և բանկային ծառայությունների միջոցով: Հեղինակը չի օգտագործել, սակայն, կանադահայ իրավաբան Գ. Բաղջյանի մենագրությունը՝ նվիրված թուրքական կառավարության կողմից հայերի ունեցվածքի բռնագրավմանը[5]: Ի տարբերություն, սակայն, Բաղջյանի, որն ամբողջությամբ շրջանցել է եվրոպական տերությունների մասնակցությունը հայերի ունեցվածքի կողոպուտին և դրամական միջոցների յուրացմանը, Տ. Սարուխանյանը, փաստորեն, առաջինն է բացահայտում Անգլիայի մասնակցությունն այդ գործընթացին:

Հետաքրքիր մանրամասներ և նորություններ է պարունակում մենագրության հինգերորդ գլուխը, որը նվիրված է Հայոց ցեղասպանության հրապարակայնացման ապարե-

---

[4] A. Beylerian, op. cit.

[5] Kevork K. Baghdjian. La confiscation, par le gouvernement turc, des biens arméniens… dits abandonnés, Montréal, 1987.

գում պաշտոնական Անգլիայի դերի լուսաբանմանը: Տ. Սարուխանյանն այս հարցը քննարկում է Ջեյմս Բրայսի և Առնոլդ Թոյնբիի գործունեության վերլուծության հենքի վրա, քանզի Հայոց ցեղասպանությանը հրապարակայնացում տալու գործը վստահվել էր նրանց: Բազում փաստերով նա ապացուցում է, որ անգլիացի քաղաքական գործիչներն ու պատմաբանները չեն վարանել «բնաջնջվող հայ ժողովրդի ճակատագիրը համայն մարդկությանը» ներկայացնել՝ այն սեփական շահերին ծառայեցնելու նպատակով (էջ 107):

Հեղինակն անգլիական կառավարության «հայանպաստ» գործունեությունը դիտում է իբրև միմիայն պատերազմում Անգլիայի հաղթանակին նպաստող գործոն, որի բուն էությունը հանգում էր ոչ միայն Թուրքիայի և նրա դաշնակից Գերմանիայի վարկաբեկմանը, այլև հետապնդում էր չեզոք երկրներին, մասնավորապես ԱՄՆ-ին՝ Անտանտի կողմում պատերազմի մեջ ներգրավելու նպատակ: Նա ապացուցում է, որ Անգլիան մեծ շահագրգռվածություն էր հանդես բերում՝ Հայոց ցեղասպանության իրականացման գործում, մասնավորապես՝ Գերմանիայի ունեցած մեղսակցությանը լայն հրապարակայնություն տալու հարցում:

Անդրադառնալով «Հայերի նկատմամբ վերաբերմունքն Օսմանյան կայսրությունում (1915-16 թթ.)» փաստաթղթերի ժողովածուին[6] առնչվող մանրամասներին, հեղինակը, հիմնվելով անգլիական արխիվային փաստաթղթերի վրա, հակահարված է տալիս Հայոց ցեղասպանության պատմության թուրք կեղծարարներին, որոնք, շահարկելով 1916 թ. Բրայսի աշխատասիրությամբ լույս ընծայված հրատարակության հետ կապված պատմական հանգամանքները, վիճարկում են այս գրքում զետեղված անստորագիր վավերագրերի արժանահավատությունը: Հղելով Ա. Թոյնբիի անձնական արխիվում պահպանված՝ սույն ժողովածուի սնագիր օրինակը, Տ. Սարուխանյանը հավաստում է, որ գրքում հրատարակված փաստաթղթերը ստացվել են Օսմանյան կայսրությունում բնակվող՝ պատերազմում չեզոք երկրների քաղաքացիներից, և այս էական հանգամանքը հրատարակիչներին դրդել է ժողովածուի վերջնական բնագրում շրջանցելու փաստաթղթերի հեղինակների անունները (քանզի, հակառակ պարագայում, օսմանյան իշխանությունները, անտարակույս, դաժան հաշվեհարդար կտեսնեին հեղինակների հետ), որոնք, սակայն, ինչպես ճշգրտում է հեղինակը, հիշատակված են գրքի նախնական տարբերակում (էջ 128)[7]: Ի վերջո, Բրայսի ժողովածուն նա գնահատում է իբրև «Հայոց ցեղասպանության փաստը ամրագրող առաջին, համապարփակ, արժանահավատ, պատմահամեմատական և քննական մեթոդով հաստատվող աշխատություն», որի աղբյուրագիտական արժեքը բնութագրում է իբրև «անգնահատելի» (էջ 129):

---

[6] The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16. Documents presented to Viscount Grey of Falloden, London, 1916

[7] Համեմատության կարգով նշենք, որ 1896 թ. Փարիզում լույս տեսած «Հայաստանի կոտորածները. ականատեսների վկայություններ» փաստաթղթերի ժողովածուի (Les massacres d'Arménie. Témoignages des victimes. Préface de G. Clemenceau, Paris, 1896) լույս ընծայման պարագայում, վավերագրերի հրատարակության միևնույն սկզբունքն է որդեգրել Ա. Չոպանյանը: Այդ հրատարակության մասին տե՛ս Լ. Պողոսյան. Ֆրանսիական փաստագիր սկզբնաղբյուրները 1894-1896 թթ. հայկական կոտորածների մասին.– «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 2004, թիվ 9, էջ 113-115:

Հեղինակը մանրազնին վերլուծում է Հայոց ցեղասպանությանն Անգլիայում հրապարակայնացում տալու նպատակով՝ բրիտանական խորհրդարանում կազմակերպված քննարկումները[8], շեշտում Անգլիայի քաղաքական գործիչների՝ Գերմանիային պախարակելու տրամադրվածությունը: Ընդհանուր առմամբ, նա գտնում է, որ «հայոց վիշտն ու Հայկական հարցի արդարացի լուծման անհրաժեշտությունը» Անգլիայի քաղաքական գործիչները վերհիշել են սոսկ «իրենց պայքարում, հատկապես խորհրդարանական ընտրությունների ժամանակ» (էջ 159): Ընդհանուր առմամբ՝ Տ. Սարուխանյանը հանգում է միանգամայն համոզիչ հետևության, այն է՝ «Անգլիայի և հայ ժողովրդի շահերը երբևէ ոչ մի ընդհանրություն չեն ունեցել» (էջ 191):

Անդրադառնալով 1916 թ. իրադարձություններին, Տ. Սարուխանյանը հիշատակում է Եռյակ միության դեմ ԱՄՆ-ին պատերազմի մեջ ընդգրկելու՝ Անգլիայի մտադրության մասին (էջ 112): Հարկ է պարզաբանել, որ Եռյակ միությունը կազմալուծվել էր դեռևս 1915 թ. մայիսի 3-ին, երբ այդ դաշինքի կազմից դուրս է եկել Իտալիան, իսկ 1915 թ. սեպտեմբերի 6-ին ձևավորվել է Քառյակ դաշինքը, որի կազմում ընդգրկվել էին Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Թուրքիան և Բուլղարիան:

Եզրափակելուց առաջ նշենք, որ Տ. Սարուխանյանի մենագրությունը բարեխղճորեն կատարված աշխատանք է, որն աչքի է ընկնում բազմապիսի սկզբնաղբյուրների մանրակրկիտ վերլուծությամբ: Գիտաճանաչողական ու քաղաքական անուրանալի նշանակություն ունեցող այս աշխատությունը ոչ միայն հիմնավորապես ներկայացնում է բրիտանական դիվանագիտության իրական դիմագիծը, այլև հակահարված տալիս Հայոց ցեղասպանության ժամանակակից կեղծարարներին, ինչը և պայմանավորում է նրա այժմեականությունը:

[8] Նշենք, որ Տ. Սարուխանյանը հայերեն թարգմանությամբ հրատարակել է նաև բրիտանական խորհրդարանի Համայնքների և Լորդերի պալատներում՝ Հայոց ցեղասպանությանն առնչվող 1918 թ. տեղի ունեցած քննարկումների որոշ արձանագրություններ: Տե՛ս Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում (1915-1918 թթ.), կազմող, առաջաբանի, թարգմանության և ծանոթագրությունների հեղինակ՝ Տիգրան Սարուխանյան, Երևան, 2000:



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

## «ԳԻՐ ԵՎ ՊԱՏԳԱՄ» ԾՐԱԳԻՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ 1600-ԱՄՅԱԿԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ՀՀ կրթության և գիտության նախարարության գործակցությամբ իրականացնում է «Գիր և Պատգամ» ծրագիրը՝ նվիրված Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյա հոբելյանին:

Ըստ ծրագրի, ապրիլի 20-ից մինչև մայիսի 6-ը հայոց հոգու օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են ուխտավորաբար այցելելու քաղաքամայր Երևանի և ՀՀ մարզերի հանրակրթական դպրոցների 9-10-րդ դասարանների աշակերտները, որոնց հնարավորություն է ընձեռվում տեսնելու Վեհարանի թանգարանում պահվող ոսկեձույլ «Հայոց Այբուբենը» և «Ծաղկյալ Սուրբ Խաչը», դիտելու «Հայոց Այբուբեն» ու «Վարդանանք» գոբելենները, ինչպես նաև լինելու Մայր Աթոռի մյուս թանգարաններում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում արդեն հյուրընկալվել են Արարատի, Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի մարզերի դպրոցականները (յուրաքանչյուր մարզից 80-ական աշակերտ), ինչպես նաև Երևանի մի քանի դպրոցների շուրջ 200 աշակերտներ:

Դպրոցականների ուխտագնացության առիթով, Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ Մայր Աթոռը նաև լույս է ընծայել «Գիր և Պատգամ» խորագրով գրքույկը, որը բաժանվում է այցելու պատանիներին:

## ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐՅԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ապրիլի 28-ին պրոֆ. Վահագն Տատրյանը հանդիպեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաների հետ և բանախոսեց «Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը և ուսումնասիրության արդյունքները» թեմայով:

Տիար Տատրյանին Ճեմարանի հարկից ներս նախ ողջունեց Ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավ. քհն. Սարգսյանը՝ անդրադառնալով նրա վաստակին և գիտական գործունեությանը:

Պրոֆ. Տատրյանը, իր հերթին ուրախություն հայտնելով մայրենի լեզվով դասախոսելու հնարավորության համար, ճեմարանականներին ներկայացրեց Հայոց ցեղասպանության խնդիրների՝ շուրջ 33 տարիների իր գիտական հետազոտությունները:

Դասախոսության ընթացքում պրոֆ. Վահագն Տատրյանը մանրամասն անդրադարձավ Հայոց ցեղասպանությանն առնչվող աղբյուրներին ու վկայություններին և դրանց ուսումնասիրման մեթոդաբանությանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԳԻՏԱԺՈՂՈՎ ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑՈՒՄ

Մարտի 10-ին Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում տեղի ունեցավ Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակին նվիրված գիտաժողով՝ «Անձի հոգևոր խորհուրդը և նրա հոգեբանական էությունը» թեմայով: Գիտաժողովի նպատակը հոգևորի և հոգեկանի մասին գիտական, օբյեկտիվ պատկերացում կազմելն էր:

Գիտաժողովին մասնակցում էին Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սաներ, Երևանի Պետական Համալսարանի, Խ. Աբովյանի անվան Մանկավարժական և Մ. Մաշտոցի անվան համալսարանների, ինչպես նաև Սանկտ Պետերբուրգի մենեջմենտի և իրավունքի ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղի հոգեբանության ֆակուլտետի ուսանողներ, դասախոսներ, Մայր Աթոռի միաբաններ:

Գիտաժողովը բացվեց Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսչի պաշտոնակատար Տ. Մրկրտիչ աբեղա Պռոշյանի խոսքով: Հարց ու պատասխանով, բուռն քննարկումներով ուղեկցվող գիտաժողովի ընթացքում դպրանոցի սաները ներկայացրեցին խոսքի նշանակությունը Աստվածաշնչում, աղոթքի, երգի և զղջման հոգևոր ու հոգեբանական նշանակությունները, ընտանիքի քրիստոնեական ըմբռնումը: Բուհերի ուսանողները զեկուցումներ կարդացին ներընտանեկան բախումների, ագրեսիայի, ֆրեյդիզմի, կյանքի և մահվան հոգևոր և հոգեբանական խորհրդի ու իմաստի մասին: Իսկ հոգու, անմահության, հավատքի հոգեբանական դերի մասին հարցերին պատասխանեցին ներկա հոգևորականները և հոգեբանները:

Սա երկրորդ նմանատիպ գիտա-գործնական կոնֆերանսն էր Վազգենյան Հոգևոր Դպրանոցում: Ուսանողները նշեցին, որ հոգեբանական և հոգևոր գիտելիքի համադրումն օգնեց գտնել շատ հարցերի պատասխաններ: Կոնֆերանսի ընթացքում շեշտվեց անձի խորհրդի հոգեբանական և աստվածաբանական մեկնաբանման կարևորությունը և այդ հիմքի վրա՝ ապագա հոգեբանների ու աստվածաբանների սերտ համագործակցությունը:

Գիտաժողովն ավարտվեց Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Դերենիկ վրդ. Դավթյանի օրհնության խոսքով:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



ՆՈՐԱՎԱՆՔ

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ



ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՆՈՐԱՎԱՆՔԻ ՎԱՆԱՀԱՅՐ
Տ. ԶԱՎԵՆ ԱԲԵՂԱ ՀԱԿՈԲՅԱՆԸ

# ԿԱՆԱՉ ԿԻՐԱԿԻՆ՝ ՆՈՐԱՎԱՆՔԻ ՈՒԽՏԻ ՕՐ

Ս. Հարության տոնին հաջորդող երկրորդ կիրակի օրը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին անվանում է Աշխարհամատրան կիրակի՝ ի հիշատակ Երուսաղեմի առաջին եկեղեցու հիմնադրման: Աշխարհամատրան կիրակին կոչվում է նաև Կանաչ կիրակի՝ կապված բնության գարնանային զարթոնքի հետ:

Դեռևս 1999 թվականին երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ այս օրը հռչակվել էր Նորավանքի ուխտի օր: Այս տարի Կանաչ կիրակին Նորավանքում տոնախմբվեց առանձնահատուկ շուքով: Նորավանքի վանահայրության և ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության համատեղ ջանքերով այդ օրը նշվեց նաև վանահամալիրի հիմնադրման 900-ամյակը: Նորավանքում ապրիլի 10-ին հավաքվել էին շուրջ հինգ հազար ուխտավորներ Հայաստանի տարբեր մարզերից, Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններից, Արցախից, Ջավաքից և Սփյուռքից:

Ս. Աստվածածին եկեղեցու բակում խմբված ուխտավորները մասնակցեցին Պատարագի սրբազան արարողությանը: Պատարագիչն էր Գուգարաց թեմում Տավուշի մարզի փոխառաջնորդ Տ. Սասուն ծ. վրդ. Ջմբուխտյանը:

Ս. Պատարագի ավարտին Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ ուխտավորներին ուղղված օրհնության խոսքը. «Համայն հայության նվիրական Սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում ուխտավոր Մեր զավակներին, ովքեր այսօր աղոթական խոկումներով եկել են ուխտի Նորավանքի հինավուրց նվիրական սրբավայր:

Հայոց հոգևոր-մշակութային կյանքին զգալի ներդրում բերած Նորավանքի վանական համալիրը իր եպարտ յոթության մեջ երկար սպասեց ուխտավոր հայ հավատացյալին, սակայն փառք և գոհություն Աստծո, որ այսօր Նորավանքն իր դռներն է բացել հավատավոր հայորդիների առջև՝ աստվածային կենաց շնորհներ բաշխելով դեպ իր գիրկը եկող ամեն հավատավորի:

...Սիրելի բարեպաշտ զավակներ Մեր, դուք եք ժառանգորդները մեր հայրերի և նրանց թողած բարի ավանդների: Ամենայն նախանձախնդրությամբ հավատարիմ մնացեք մեր նախնյաց սուրբ կտակին՝ շարունակելով նրանց ընթացքը աստվածպաշտության առաքինի շավիղներում, որպեսզի Տերը բարի պտուղներով առատացնի մեր ազգի հոգևոր վերազարթոնքը, և մեր բոլոր եկեղեցիներում ու վանքերում մշտահունչ շարունակվի առ Ամենակալը բարձրացող գոհաբանական փառաբանությունը. «Օրհնեալ ես, Տէր Աստուած հարցն մերոց. գովեալ եւ փառաւորեալ է անուն Քո յաւիտեան»,- ասվում է Վեհափառ Հայրապետի պատգամում:

Այնուհետև ներկաներին իրենց շնորհավորանքի խոսքն ուղղեցին Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը և Արարատյան Հայրապետական թեմի առաջ-

նորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը: Կատարվեց նաև մատաղի օրհնության արարողություն:

Կանաչ կիրակին կազմակերպված փոխախմբությունը Նորավանքի հիմնադրման 900-ամյա հոբելյանին նվիրված առաջին փոնակատարությունն էր: Տարվա ընթացքում նախատեսվում են նաև այլ միջոցառումներ:

Դեռևս փետրվարին Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի բարձր տնօրինությամբ Նորավանքում հոգևոր ծառայության է կոչվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Զավեն աբեղա Հակոբյանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՈՒՂՂԱՓԱՌՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԺՈՂՈՎԸ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 13-16 ապրիլի 2005 թ.)

Ապրիլի 13-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, օրհնությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, իր աշխատանքներն սկսեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում Ուղղափառների Մասնակցության Կոմիտեի Գործադիր Մարմինը:

Ժողովի բացման արարողությանը ներկաններին հանուն Ամենայն Հայոց Հայրապետի ողջունեց Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը՝ փոխանցելով Նորին Սրբության օրհնությունն ու բարեմաղթանքները: Ժողովին համանախագահում էին Սասիմայի Մետրոպոլիտ Գեննադիոսը (Տիեզերական Պատրիարքություն) և Ռոլֆ եպս. Կոպպեն (Գերմանիայի Ավետարանական Եկեղեցի):

Ժողովին մասնակցում են Ցորգո Լեմոպոլոսը (ԵՀԽ փոխգլխավոր քարտուղար), Բիշոյ Մետրոպոլիտը (Ղպտի Ուղղափառ Եկեղեցի), Զաքարիաս եպս. Թեոֆիլուսը (Մար Թովմա Հնդիկ Ասորի Մալաբար Եկեղեցի), Տ. Վիգեն եպս. Այքազյանը (Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի), Տ. Նարեկ եպս. Ալեմեզյանը (Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի), Նիֆոն արքեպս. Տորգովիշտեն (Ռումին Ուղղափառ Եկեղեցի), Իգոր քհն. Վիժանովը (Ռուս Ուղղափառ Եկեղեցի), Լեոնիդ քհն. Կիշկովսկին (ԱՄՆ Ուղղափառ Եկեղեցի), Մայքլ արքեպս. Փիրսը (Կանադայի Անգլիկան Եկեղեցի), դոկտ. Մերսի Օդույոյեն (Գանայի Մեթոդիստ Եկեղեցի), դոկտ. Մարի Թենները (Անգլիայի Եկեղեցի), Սյուզան Հենրի Քրոուն (ԱՄՆ Միացյալ Մեթոդիստ Եկեղեցի), տիկ. Բրիջիտ Կոնստանտը (ԵՀԽ անձնակազմից), տիկ. Թենի Պիրի Սիմոնյանը (ԵՀԽ անձնակազմից), օր. Կերստեն Ստորքը (ԵՀԽ անձնակազմից):

Օրակարգային հարցերից զատ մասնակիցներն առիթ ունեցան մոտիկից ծանոթանալու Հայ Եկեղեցուն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեությանը: Ապրիլի 13-ին, ժողովի ընթացքում, բացման խոսքով հանդես եկավ և Վեհափառ Հայրապետի անունից ողջույնի խոսք ուղղեց Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, որից հետո մասնակիցները հանդիպեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի հետ:

Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը ներկայացրեց ժողովի մասնակիցներին՝ հայցելով Նորին Սրբության օրհնությունն իրենց աշխատանքներին:

Ամենայն Հայոց Հայրապետին հանուն ժողովի մասնակիցների ողջունեց Ռոլֆ եպս. Կոպպեն (Գերմանիայի Ավետարանական Եկեղեցի) և շնորհակալություն հայտնեց հյուրընկալության և ջերմ ընդունելության համար: «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեզ հայտնի է որպես մի Եկեղեցի, որը կարևոր փեղ է հափկացնում միջեկեղեցական հարաբերություններին և էկումենիզմին»,- ասաց նա իր խոսքում:

Այս ԵՀԽ Ուղղափառների մասնակցության կոմիտեի գործադիր մարմնի անդամներին իր օրհնության և գնահատանքի խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Նվիրական այս սրբավայրում մեզ համար հաճելի է ընդունել նման պատկառելի մի հանձնաժողով, որի նպատակն է զորացնել, սերտացնել եղբայրական կապերը և համագործակցության ոգին Եկեղեցիների միջև: Մենք ուրախ ենք, որ Մայր Աթոռը նույնպես, նաև այսպիսի միջոցառումների իրականացմամբ իր սրբազան հարկի ներքո, իր հավնյալ ներդրումն է ունենում նվիրական այդ առաքելության մեջ»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ հայցելով Սուրբ Հոգու առաջնորդությունը հանձնախմբի անդամների համար, որպեսզի նրանց աշխատանքը հաջողությամբ պսակվի և կարևոր ներդրում լինի ԵՀԽ-ի գործունեության և առաքելության ծիրից ներս:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անցած պատմական ուղին ու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայիս գործունեությունը, պատասխանեց հյուրերի հարցերին:

Մասնակիցներն առիթ ունեցան հանդիպելու ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան Միջեկեղեցական Բարեգործական Հիմնադրամի և Հայաստանյան Էկումենիկ Եկեղեցական Փոխապրական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի և աշխատակազմի հետ՝ ծանոթանալու վերջիններիս աշխատանքներին և ծառայությանը:

Ապրիլի 15-ին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում Ուղղափառների Մասնակցության Կոմիտեի Գործադիր Մարմնի ժողովի հերթական նիստը անցկացվեց Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

Նիստի ավարտին ժողովականները ծանոթացան դպրանոցի պատմությանը և այժմյան գործունեությանը: Հանձնախմբի անդամները հանդիպեցին նաև ճեմարանականների հետ, պատասխանեցին ուսանողներին հետաքրքրող հարցերին:

Նույն օրը տարբեր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներից ու պաշտոնյաներից բաղկացած խումբն այցելեց Ծիծեռնակաբերդ՝ իրենց խոնարհումը բերելու Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Եղեռնի զոհերի հուշարձանին ծաղկեպսակ զետեղելուց հետո մասնակիցներն աղոթք բարձրացրեցին հայ նահատակների համար:

Ապրիլի 16-ին Գործադիր Մարմնի անդամները այցելեցին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա, ուր մասնակցեցին Մայր Աթոռի Ս. Էջմիածնի միաբան, Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանին՝ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատվո դոկտորի շնորհման միջոցառմանը:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՒՂՂԱՓԱՌՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻՆ



ԺՈՂՈՎԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հանդիպման մասնակիցները հնարավորություն ունեցան վայելելու Հայ Առաքելական Եկեղեցու ջերմ հյուրընկալությունը, հանդիպելու հոգևոր դասի և ժողովրդի հետ. մասնակցելու արարողություններին, ծանոթանալու Հայոց Եկեղեցու հոգևոր ու հասարակական ծառայությանը և աշխատանքներին[1]:

Ուղղափառների Մասնակցության Հատուկ Հանձնախմբի Գործադիր Մարմնի անդամները և այս առիթով Մայր Աթոռում գտնվող ԵՀԽ փոխգլխավոր քարտուղար պր. Ջորջը Լիմեսլեյոսր ապրիլի 14-ին ներկա գտնվեցին Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապի համար Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ և Անդրկովկասում Պապական Նվիրակ Նորին Սրբազնություն Նյատուրիո արքեպս. Գուջերոտտիի մասնակցությամբ Մայր Տաճարում տեղի ունեցած հոգեհանգստյան էկումենիկ արարողությանը:

## Ուղղափառների մասնակցության հատուկ կոմիտեն

Արդի Էկումենիկ շարժման սկզբնավորումից սկսյալ շարժման հիմնական մասնակից Եկեղեցիները հանդիսանում էին Բողոքական (ներառյալ Անգլիկան, Լյութերական, Բարենորոգչական, Բապտիստական և Մեթոդիստական) և Ուղղափառ ու Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները:

1948 թ. ԵՀԽ հիմնադրումից սկսյալ Ուղղափառ Եկեղեցիները դժվարություններից զերծ չեն եղել: Ուղղափառ և Բողոքական Եկեղեցիների միջև չհաղթահարվող տարբերությունները հատկապես եկեղեցաբանության և ԵՀԽ-ի ընկալման բնագավառում են, որոնք ավելի մեծացան նոր հասարակական-քաղաքական իրադրությունների արդյունքում, հատկապես Խորհրդային Միության փլուզումից հետո: 1997թ. երկու Ուղղափառ Եկեղեցիներ՝ Վրաց և Բուլղար Ուղղափառ Եկեղեցիները, դուրս եկան ԵՀԽ-ի կազմից:

Արձագանքելով Ուղղափառ անդամ Եկեղեցիների ԵՀԽ-ի վերաբերյալ աճող քննադատությանը, ինչպես նաև ի մասնավորի 1998 թ. Թեսաղոնիկեում կայացած Արևելյան Ուղղափառների հանդիպման դիմումին՝ ԵՀԽ Ութերորդ համագումարում (Հարարե, Զիմբաբվե, 1998 թ.) ձևավորվեց ԵՀԽ Ուղղափառների Մասնակցության Հատուկ Հանձնախումբը:

Հարարեի համագումարի կված մանդատով Հատուկ Հանձնախումբը պետք է՝

ա) ուսումնասիրեր և վերլուծեր ԵՀԽ-ում Ուղղափառների մասնակցության հետ կապված բոլոր խնդիրները՝ ընդունելով, որ այս խնդիրները կարևոր են նաև մյուս անդամ Եկեղեցիների համար,

բ) քննության և որոշումներ ընդունելու համար ԵՀԽ Կենտրոնական Կոմիտեին ներկայացներ առաջարկություններ ԵՀԽ կառուցվածքի, ոճի և բնույթի անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ, որոնք հաստատվելու համար պետք է ներկայացվեն հաջորդ՝ ԵՀԽ 9-րդ համագումարին, որ տեղի է ունենալու 2006 թ. Բրազիլիայի Պորտո Ալեգրե քաղաքում:

Այս հանձնախումբը պետք է աշխատեր երեք տարի և իր աշխատանքների արդյունքը ներկայացներ ԵՀԽ ԿԿ-ին, իսկ եթե կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնելու

---

[1] http://wcc-coe.org/wcc/Meeting&tc05.html

առաջարկներ չլինեին, ապա հարցը պիտի քննվեր ԵՀԽ 9-րդ համագումարում: Հանձնախմբում հավասար անդամների թվով. ներկայացվում են ԵՀԽ անդամ Ուղղափառ և Բողոքական եկեղեցիները: Հանձնախումբը 1999 թվականից մինչ 2002 թ. աշխատում է պարբերաբար հանդիպումների միջոցով՝ Եփեսոսի Մետրոպոլիտ Խրիստոստոմոսը (Տիեզերական Պատրիարքություն) և Ռոլֆ Կոպպե եպիսկոպոսը (Գերմանիայի Եկեղեցիների Միությունից) համանախագահությամբ: Կոմիտեում Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում էր ԵՀԽ ԿԿ անդամ Գերաշնորհ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը՝ Գերաշնորհ Տ. Նարեկ եպս. Ալեմեզյանը:

Ուղղափառների Մասնակցության Հատուկ Հանձնախումբը իր գործունեության ընթացքում ուսումնասիրել է հարաբերություններին խոչընդոտ՝ 1) եկեղեցաբանական խնդիրները, 2) որոշումներ կայացնելու գործընթացները, 3) ընդհանրական աղոթքները, 4) հասարակական և բարոյագիտական խնդիրները, 5) ԵՀԽ-ին անդամակցելու հետ կապված հարցերը:

2002 թ. ԵՀԽ Կենտրոնական Կոմիտեի նիստին նրանք հանդես են գալիս զեկույցով, ուր ընդում են ԵՀԽ-ին անդամակցելու, ընդհանուր համաձայնության սկզբունքի և եկեղեցաբանության, միասնական աղոթքի վերաբերյալ իրենց առաջարկությունները[2]:

2002 թ. ԵՀԽ ԿԿ-ի նույն նիստին որոշվում է Ուղղափառների Մասնակցության Հատուկ հանձնախմբի փոխարեն ստեղծել՝

1) Մշտական կոմիտե, բաղկացած 14 հոգուց,

2) Մինչև 2006 թ. ԵՀԽ 9-րդ համագումարը Ուղղափառների Մասնակցության Հատուկ Հանձնախմբի Գործադիր Մարմինը (Steering Committee) պետք է իրականացներ ստեղծվելիք Մշտական Կոմիտեի աշխատանքները[3]: ԵՀԽ ԿԿ առաջարկների հիման վրա Ուղղափառների Մասնակցության Հատուկ Հանձնախմբի Գործադիր Մարմինը սկսում է աշխատել 2002 թ., որը իր մշտական հանդիպումներից զատ իրականացնում է տարբեր հավաքներ և այլ միջոցառումներ:

2005 թ. Էջմիածնում գումարված իր ներթական ժողովի ընթացքում ԵՀԽ Ուղղափառների Մասնակցության Հատուկ Հանձնախմբի Գործադիր Կոմիտեն քննեց հետևյալ հարցերը.

ա) ԵՀԽ-ին անդամակցելու, համագործակցելու և ընդհանուր համաձայնության՝ կոնսենսուսի միջոցով որոշումներ կայացնելու հարցերով զբաղվելու նպատակով Մշտական Կոմիտե ստեղծելու ԵՀԽ 2005 թ. ԿԿ որոշումները,

բ) ԵՀԽ 9-րդ համագումարի համար եկեղեցաբանական հայտարարությունը,

գ) միասնական աղոթքի հետ կապված հարցեր՝ հատուկ ուշադրություն դարձնելով 9-րդ համագումարի Պաշտամունքային Կոմիտեի գործունեությանը,

դ) Ուղղափառների Մասնակցության Հատուկ Հանձնախմբի լուսաբանմանն առնչվող հարցեր:

*ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ*

---

[2] http://www2.wcc-coc.org/ccdocuments.nsf/index/gen-5-en.html

[3] http://www2.wcc-coc.org/ccdocuments.nsf/index/gen-18-en.html?sc



# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԻՐԻԱՅԻ 12 ՑԵՂԱԽՄԲԵՐԻ ԱՇԻՐԵԹԱՊԵՏԵՐԻՆ

Ապրիլի 2-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայոց ցեղասպանության 90-ամյակին նվիրված միջոցառումների ծրագրի շրջանակում Հայաստանում գտնվող Սիրիայի 12 ցեղախմբերի աշիրեթապետերին:

Նորին Սրբությունը, ողջունելով Սիրիայի 12 ցեղապետերի այցը համայն հայության նվիրական հոգևոր կենտրոն, ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելությունը և ներկայիս գործունեությունը: «Ձեր այցը Հայաստան երկիր էական և կարևոր է մեր երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը առավել զորացնելու համար: ...Մենք մեծապես գնահատում ենք այն սերը և այն հարգանքը, որ ձեր հայրերը դրսևորել են մեր ազգի գավակաց նկատմամբ՝ ցեղասպանության հաջորդող փարիներին, ցեղասպանությունից մազապուրծ հայորդիներին ապաստան տալով Սիրիայի օրհնյալ երկրում և ամենայն հնարավորություն ու աջակցություն ցուցաբերելով նրանց, որպեսզի կարողանան վերակազմակերպել իրենց կյանքը»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև 2001 թ. Սիրիա՝ Դեր Զոր կատարած իր այցին: «Դեր Զորի իրողությունը վկայությունն էր այն անկեղծ հարազատ ոգու, որ փնտանք Սիրիո բարեկամ արաբ ժողովրդի մեջ: Այնտեղ՝ Դեր Զորում նաև ցավն էր ամփոփված արաբ ժողովրդի»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ իր երախտագիտությունը փոխանցելով Սիրիայի նախագահին և ողջ արաբ ժողովրդին՝ հայ ժողովրդի հանդեպ տածած սիրո և հարգանքի համար:

Ի դեմս հյուրերի Ամենայն Հայոց Հայրապետին ողջունեց Ալ թայ ցեղախմբի աշիրեթապետ Մուհամմադ ալ Ֆարեսը՝ ուրախություն հայտնելով Հայաստան այցելության համար: «Մեր երկու ժողովուրդների հարաբերությունները միշտ ջերմ են եղել՝ խարսխված փոխհարգանքի սկզբունքի վրա: ...Հայ ժողովուրդը ենթարկվեց ծանր փորձությունների օսմանցիների կողմից, և մենք այսօր կիսում ենք այդ փառապանքը և ամեն տարի ապրիլի 24-ին հայերի հետ բաժանում ենք այդ դառը հիշատակը, ինչպես և հայերը կիսում են մեր ցավը՝ մայիսի 6-ին»,- նշեց իր խոսքում Մուհամմադ ալ Ֆարեսը:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը աղոթք բարձրացրեց առ Աստված՝ աշխարհում և մասնավորաբար Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման համար՝ մաղթելով, որ մշտապես զորեղ մնա բարեկամությունը երկու ժողովուրդների:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՏՎԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Լիտվայի Հանրապետության Ազգային պաշտպանության նախարար Գեդիմինաս Կիրկիլասին և վերջինիս գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ ՊՆ փոխնախարար գեներալ-լեյտենանտ Արթուր Աղաբեկյանի և ՀՀ բանակի հոգևոր առաջնորդ Տ. Նորայր աբղ. Սիմոնյանի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու երկրների բարեկամական հարաբերությունների և պաշտպանության նախարարությունների միջև առկա համագործակցության և ապագա ծրագրերի մասին:

Հռոմի Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապի մահվան առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ցավակցություններն ուղղեց Լիտվիայի ժողովրդին, որի մեծամասնությունը Կաթոլիկ Եկեղեցու հետևորդ է:

Հանդիպմանը անդրադարձ կատարվեց նաև երկու երկրներում Եկեղեցի-պետություն հարաբերություններին, ինչպես նաև ՀՀ բանակում Հայ Եկեղեցու սպասավորների հոգևոր ծառայությանը:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ԿԻՊՐՈՍԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Ապրիլի 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Կիպրոսի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Լեոնիդաս Պանտելիդեսին:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու ժողովուրդների միջև առկա ջերմ հարաբերությունների մասին: Կարևոր նկատվեց երկու երկրների կապերի հետագա սերտացումն ու համագործակցության ձևավորումը: Վեհափառ Հայրապետը և Կիպրոսի դեսպանն անդրադարձան նաև Եկեղեցի-պետություն հարաբերություններին:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ՊԵՐՄԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻՆ

Ապրիլի 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Ռուսաստանի Դաշնության Պերմի մարզի նահանգապետի պաշտոնակատար Օլեգ Չիրկունովին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող փոխնախարար Վաչե Տերտերյանի և ՀՀ Արտաքին գործերի փոխնախարար Գեղամ Ղարիբջանյանի ուղեկցությամբ:

Ողջունելով Պերմի մարզի նահանգապետի պաշտոնակատարին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ եղբայրական, բարեկամական կապերը շարունակում են առաջընթաց ապրել, զորանալ և արդյունավորվել:

Վեհափառ Հայրապետը նաև գոհունակություն հայտնեց, որ Պերմի մարզում բնակվող հայորդիներն իրենց կարևոր ներդրումն են ունենում մարզի տնտեսական և մշակութային կյանքում և իրենց ազնիվ աշխատանքով ու բարի ծառայություններով կարողացել են բարյացակամ վերաբերմունքի արժանանալ իշխանությունների կողմից:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության և ամենայն հայոց սրբավայր այցելելու հնարավորության համար՝ պրն Չիրկունովը իր հերթին անդրադարձավ Ռուսաստանում հոգևոր կյանքի զարթոնքին: «Մենք զգում և հասկանում ենք, որ մեր ժողովուրդները շատ նման են ինչպես իրենց պատմությամբ, այնպես է հավատով: Ուստի պետք է ջանանք շարունակել ընթանալ եղբայրական հարաբերությունների ոգով՝ գործադրելով այն ի շահ մեր երկրների».- մասնավորապես նշեց Պերմի մարզի նահանգապետի պաշտոնակատարն իր խոսքում:

Հանդիպմանը խոսվեց նաև Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների, խոնարհված վանքերի և եկեղեցիների վերականգնման, ինչպես նաև Հայ Առաքելական ու Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև առկա ջերմ կապերի և համագործակցության մասին:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված անսասան պահի երկու ժողովուրդների դարավոր եղբայրությունը:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԵԽ ՎԱԼԵՆՍԱՅԻՆ

Ապրիլի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Լեհաստանի նախկին նախագահ, խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Լեխ Վալենսային՝ ՀՀ-ում Լեհաստանի արտակարգ և լիազոր դեսպան Թոմազ Նոուֆի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց Լեխ Վալենսայի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելության առիթով՝ գոհունակությամբ անդրադառնալով հայ և լեհ ժողովուրդների բարեկամությանը, որ ձևավորվել է դեռևս միջնադարում Լեհաստանում հայ համայնքի հաստատմամբ:

Վեհափառ Հայրապետը նաև իր երախտագիտությունը հայտնեց Լեհաստանի ժողովրդին և իշխանություններին, որոնք Մեծ եղեռնի 90-ամյա տարելիցի նախաշեմին Լեհաստանի Խորհրդարանում ճանաչեցին և դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը: «Այսօր Ձեր ներկայությամբ դուք հաստատում եք, որ ցեղասպանությունը ժամանակ, տարածություն և ազգություն չի ճանաչում, որ դա համամարդկային ոճիր է և դատապարտության է ենթակա բոլոր ժամանակներում»,- ասաց Նորին Սրբությունը:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ԴԱՇՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻՆ

Ապրիլի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Ռուսաստանի Դաշնության Պետական Դումայի փոխնախագահ Գեորգի Բոոսին:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց ՌԴ Դումայի կողմից կատարված հայտարարության համար, որով մեկ անգամ ևս դատապարտվեց Հայոց ցեղասպանությունը և կոչ ուղղվեց ողջ միջազգային հանրությանը հիշատակել Եղեռնի 90-ամյա տարելիցը:

«Մենք վստահ ենք, որ կգան օրհնյալ ժամանակներ, երբ ցեղասպանություն, պատերազմ հասկացություններն այլևս պատմության մեջ կմնան: ... Հուսով եմ, որ Հայոց ցեղասպանության դատապարտումը կօգնի վերստին գիտակցել, թե որքան փխրուն է այսօր մեր աշխարհը, կօգնի բարու իրագործմանը»,- ասաց Գեորգի Բոոսն իր խոսքում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաև երկու ժողովուրդների միջև առկա եղբայրական ջերմ հարաբերություններին և Հայ Առաքելական ու Ռուս Ուղղափառ Եկեղեցիների սերտ համագործակցությանը և բարեկամությանը:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱՆԱԴԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ ԿԱՆԱԴԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Ապրիլի 26-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Կանադայի Խորհրդարանի Համայնքների պալատի ներկայացուցիչ. տրանսպորտի նախարարի խորհրդարանական քարտուղար Ջիմ Կարիջիանիսին՝ ուղեկցությամբ կանադահայ համայնքի ներկայացուցիչների:

«Մենք ծանոթ ենք Ձեր գործունեությանը, Ձեր ջանքերին ի խնդիր Հայոց ցեղասպանության ճանաչմանը: ...Մենք խորապես գնահատում ենք փոքրեր ազգերի պատկանող այն մտավորականներին և գործիչներին, որոնք մարդասիրության այդպիսի վեհ ոգի և գիտակցություն են դրսևորել՝ զորակցելով մեր զավակներին Ցեղասպանության ճանաչման գործում»,- ասաց Նորին Սրբությունը՝ ողջունելով Ջիմ Կարիջիանիսին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կատարած անդրանիկ այցի առիթով:

Ի դեմս Ջ. Կարիջիանիսի Ամենայն Հայոց Հայրապետը իր գնահատանքն ու գոհունակությունը հայտնեց նաև Կանադայի իշխանություններին ու ժողովրդին՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու ազնիվ որոշման համար:

«Անձնապես ինձ համար այցելությունը Ծիծեռնակաբերդ իրապես ուխտագնացություն էր»,- իր հերթին նշեց Կանադայի Խորհրդարանի ներկայացուցիչը:

Հանդիպման ընթացքում շեշտվեց Հայաստանում Կանադայի դեսպանատան հաստատման անհրաժեշտությունը, ինչն առավել կզորացնի երկու ժողովուրդների միջև հարաբերությունները և կխթանի համագործակցությունը պետությունների միջև:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԻՐԻԱՅԻ ԳՈՐԾԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻՆ

Ապրիլի 27-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանում Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատար, լիազոր նախարար դոկտոր Մուխլիս Ֆարաունին:

Ողջունելով դոկտ. Ֆարաունի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունը հաջողություններ և արդյունաշատ գործունեություն մաղթեց նրան իր նոր պաշտոնում: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ 2001 թ. ապրիլին Սիրիա՝ Հալեպ և Դեր Զոր կատարած իր այցին, որի ընթացքում ուխտագնացություն կատարվեց նաև Դեր Զորի անապատում գտնվող Հայոց ցեղասպանության մատուռ-հուշարձան:

Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարը, շնորհակալություն հայտնելով հանդիպման համար, նշեց, որ ուրախ է ծառայության կոչվել մի երկրում, որն ունի հարուստ մշակույթ և եղբայրական կապեր իր հայրենիքի հետ:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը աղոթք վերառաքեց տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման համար:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻ ԽՈՒՄԲ ԻՐԱՆՑԻ ԼԵՌՆԱԳՆԱՑՆԵՐԻ

Ապրիլի 30-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Իրանից Հայաստան ժամանած մի խումբ լեռնագնացների, ովքեր Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի առիթով, ի հիշատակ Եղեռնի բյուրավոր նահատակների, ապրիլի 24-ին բարձրացել էին Արարատի և Սիփանի լեռնագագաթները:

Նորին Սրբությունը, ողջունելով լեռնագնացներին, վստահություն հայտնեց, որ նրանց ձեռնարկը ևս իր ներդրումը կունենա Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում:

«Արարատի պատկերը յուրաքանչյուր հայորդի կրում է իր հոգում, որտեղ էլ նա ապրելիս լինի: Նվիրական սրբություն է Արարատը հայ ժողովրդի համար ոչ միայն իբրև Հին Կտակարանում հիշատակված ընտրյալ լեռ, ուր հանգրվանեց Նոյյան տապանը: Արարատի մեջ մեր ժողովուրդը տեսնում է իր հավերժության խորհուրդը»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը՝ իր գնահատանքն ու օրհնությունը հաղորդելով լեռնագնացներին:

Իրանցի տարբեր մասնագիտությունների տեր լեռնագնացները, ի հիշատակ Արարատ իրենց վերելքի, Նորին Սրբությանը հանձնեցին Արարատից բերված մի քար:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Ապրիլի 3-ին, կիրակի. - Ը օր Զատկի: Կրկնազատիկ (Նոր Կիրակէ):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նորայր աբեղա Սիմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի. հաւատքն մեր» (Ա Հովհ. Ե 4) բնաբանով քարոզ խոսեց:

***Ապրիլի 7-ին, հինգշաբթի. - ԺԲ. օր Յինանց: Աւետումն Սուրբ Աստուածածնի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վարդապետ Զիրնկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Ապրիլի 10-ին, կիրակի. - Գ կիրակի: Աշխարհամատրան (Կանաչ Կիրակէ):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իսահակ աբեղա Պողոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Ապրիլի 17-ին, կիրակի. - Դ կիրակի: Կարմիր Կիրակէ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ա. Պատարագ մատուցեց Տ. Մամբրե աբեղա Տաշչյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ զբանն Իմ լսէ, եւ հաւատայ այնմ որ առաքեացն Զիս, ընդունի զկեանսն յաւիտենականս, եւ ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս» (Հովհ. Ե 24) բնաբանով քարոզ խոսեց:

***Ապրիլի 24-ին, կիրակի. - Տօն Երևման Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: Հընթացս Պատարագի պատարագիչ Սրբազան Հայրը ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Սրբատառ Կոնդակը՝ նվիրված Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին (տե՛ս էջ 3):

# "ЭЧМИАДЗИН" ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(апрель 2005)


1. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю 90-летия геноцида армян. 3 февраля 2005 г. № 285 (с. 3-6).
2. Приветственное послание и благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, международному симпозиуму, посвященному 90-летию геноцида армян. 20 апреля 2005 г. (с. 7-8).
3. РЕДАКТОРСКАЯ СТАТЬЯ - Вечная память (с. 9-10).
4. Информация (о кончине Его Святейшества Римского Папы Иоанна Павла II и об избрании Кардинала Йозефа Ратцингера новым Папой – (с. 11).


## ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ


5. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Его Высокопреосвященству архиепископу Тирайру Мартикяну по случаю 75-летия со дня рождения и 50-летия возведения в сан архимандрита, 6 апреля 2005 г., № 551 (с. 12-13).
6. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Петросу и Карине Таглянам по случаю их награждения орденом «Святой Григорий Просветитель», 14 апреля 2005 г., № 298 (с. 14-15).
7. Поздравления Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю Праздника Благовещения и Дня Материнства и Красоты, 7 апреля 2005 г. (с. 16).
8. Патриаршие награды (пожалование в апреле 2005 г. энциклик, орденов «Святой Нерсес Шнорали», благословений и права ношения Наперстных крестов Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, духовным и светским лицам, оказавшим большие услуги Армянской Церкви) – (с. 17).


## ЦЕРЕМОНИИ, ПОСВЯЩЕННЫЕ 90-ЛЕТИЮ ГЕНОЦИДА АРМЯН, В СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ И В АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ


9. Освящение земли будущей часовни и церемонии, посвященные памяти жертв геноцида в Цицернакаберде, 23, 24 апреля 2005 г. (с. 18-19).
10. 24 апреля в Первопрестольном Святом Эчмиадзине (с. 20-22).

11. Участие духовных лиц Первопрестольного Святого Эчмиадзина в церемониях, посвященных 90-летию геноцида армян, в епархиях Армянской Церкви, 24 апреля 2005 г. (с. 22).
12. Церемония панихиды 24 апреля в Соборе Св. Григория Просветителя в Ереване (с. 23-25).
13. Церкви-сестры отметят 24 апреля, День памяти жертв геноцида армян (с. 26-27).
14. Окропление вод Евфрата Священным Миром (церемония, посвященная памяти жертв геноцида в Католикосате Великого Дома Киликии) – (с. 28-29).
15. Церемонии, посвященные памяти жертв геноцида в Патриархате Иерусалима (с. 30-33).
16. Церемонии, посвященные памяти жертв геноцида в Армянской Епархии Грузии (с. 34-36).
17. 90-летие геноцида армян в армянской общине Индии (с. 37).
18. Церемонии 90-летия геноцида армян в Армянской Епархии Германии (с. 38-43).
19. 90-летие геноцида армян было отмечено с должной торжественностью и факел переживших геноцид был передан представителям молодого поколения (с. 44-47).
20. Церемонии, посвященные памяти жертв геноцида, в Армянской Епархии Австралии (с. 48-49).
21. Встреча с Премьер министром Канады г-ном Полем Мартином, 20 апреля 2005 г. (с. 50).
22. Церемонии, посвященные памяти жертв геноцида, в Армянской Епархии Бразилии (с. 51-55).

## ПРОПОВЕДЬ

23. **ПРОТОИЕРЕЙ ВАРДАН ТЮЛЬКЕРЯН** – Армянский народ обязан вере в Воскресение вечностью своего существования (с. 56-59).

## ЦЕРКОВНОЕ ИССЛЕДОВАНИЕ

24. **ЕПИСКОП ВИГЕН АЙКАЗЯН** – Епископ в иерархии Армянской Церкви. Решения национальных и местных церковных соборов о епископе (научное исследование) – (с. 60-73).

## ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

25. **АРПЕНИК ГАЗАРОСЯН** – Скрипторий монастыря Святых Апостолов г. Муша (научное исследование) – (с. 74-85).
26. **ХАЧИК САМВЕЛЯН** – Комитас в изгнании. 1915 год (хроника) – (научное исследование) – (с. 86-99).

27. **ГРАЧЬЯ АСМАРЯН** – Профессор Акоп Сируни и 3-ий том его труда «Константинополь и его роль» (научное исследование) – (с. 100-105).

28. **АРТУР АНДРАНИКЯН** – История геноцида Теодика (научное исследование) – (с. 106-117).

29. **ВИГЕН КАЗАРЯН** – Аршил Горки. Великая преданность искусству (к 100-летию со дня рождения) - (научное исследование) – (с. 118-127).

30. **САМВЕЛ МУРАДЯН** – Ко вопросу о существовании документов о геноциде армян в турецких архивах (научное исследование) – (с. 128-133).

31. **АНУШ САГАТЕЛЯН** – Фритьоф Нансен об Армянской церкви и церковном строительстве (научное исследование) – (с. 134-137).

## МЕМУАРЫ

32. **АРТАК МАГАЛЯН** – Мемуары Перчуи Сюрменян о Согомоне Тейлеряне (два слова о публикуемых Мемуарах) – (с. 138).

33. **ПЕРЧУИ СЮРМЕНЯН** – Мемуары о Согомоне Тейлеряне (с. 139-140).

34. **ПРОТОИЕРЕЙ ВАРДАН ТЮЛЬКЕРЯН** – Признание геноцида армян не искупит греха (свидетельство очевидца) – (с. 141-143).

35. **АВАГ (ВОЛОДЯ АБРААМЯН)** – Горькие дни, полные страдания (воспоминания) – (с. 144-147).

## РЕЦЕНЗИИ

36. **ВАРУЖАН ПОГОСЯН** – Геноцид армян в свете арабской историографии (о монографии Николая Оганесяна «Геноцид армян, проанализированный арабской историографией») – (с. 148-154).

37. **ВАРУЖАН ПОГОСЯН** – Еще одно исследование, посвященное геноциду армян (о монографии Тиграна Саруханяна «Геноцид армян в Османской Турции и Великобритания (1915-1918 гг.») – (с. 155-160).

## В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

38. Программа «Письменность и наставление», посвященная 1600-летию создания армянского алфавита (паломничество школьников 9-ых и 10-ых классов в Первопрестольный Святой Эчмиадзин) – (с. 161).

39. Лекция Ваагна Дадряна в Духовной Семинарии Геворкян, 28 апреля 2005 г. (с. 161).

40. Симпозиум в Севанской Духовной Семинарии Вазгенян, 10 апреля 2005 г. (с. 162).

41. Зеленое Воскресенье, День Обета Норавянка (с. 163-164).

## МЕЖЦЕРКОВНЫЕ СВЯЗИ

42. Собрание Исполнительного органа Специальной комиссии участия Православных во Всемирном Совете Церквей, 13-16 апреля 2005 г., Св. Эчмиадзин (с. 165-168).

## АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

43. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, предводителей 12 племен Сирии, 2 апреля 2005 г. (с. 169).

44. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, министра Национальной Обороны Литвы г-на Гедиминаса Киркиласа, 5 апреля 2005 г. (с. 170).

45. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, новоназначенного Посла Кипра в Республике Армения г-на Леонидаса Пантелидеса, 19 апреля 2005 г. (с. 170).

46. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, исполняющего обязанности губернатора Пермской области г-на Олега Чиркунова, 19 апреля 2005 г. (с. 171).

47. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, бывшего Президента Польши, Лауреата Нобелевской Премии г-на Леха Валенсы, 21 апреля 2005 г. (с. 172).

48. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Заместителя Председателя Государственной Думы Совета Федерации РФ г-на Георгия Бооса, 22 апреля 2005 г. (с. 172).

49. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Представителей Палаты Общин Парламента Канады и армянской общины Канады, 26 апреля 2005 г. (с. 173).

50. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Временного поверенного в делах Сирии в Армении д-ра Мухлиса Фарауни, 27 апреля 2005 г. (с. 174).

51. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, группы иранских альпинистов, 30 апреля 2005 г. (с. 174).

52. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедальном соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение апреля 2005 г. (с.175).

# "ETCHMIADZIN" OFFICIAL MONTHLY REVIEW OF HOLY ETCHMIADZIN (April 2005)

1. Pontifical Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the 90th Anniversary of the Armenian Genocide, February 3, 2005. № 285 (p. 3-6).
2. Message of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the International Symposium dedicated to the 90th Anniversary of the Armenian Genocide, April 20, 2005 (p. 7-8).
3. EDITORIAL - Continual Commemoration (p. 9-10).
4. Information (about the death of His Holiness the Pope John-Paul II and the election of Joseph Cardinal Ratzinger as Pope of Rome (p. 11).

## PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

5. Message of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to His Eminence Archbishop Tirayr Martikian on the occasion of his 75th Birthday and the 50th Anniversary of his elevation to Archimandrite, April 6, 2005 (p. 12-13).
6. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Petros and Karine Taghlian on the occasion of their distinction with the Order "Saint Gregory the Illuminator", April 14, 2005, no. 298 (p. 14-15).
7. Message of Congratulations of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Feast of the Annunciation and the Day of Motherhood and Beauty, April 7, 2005 (p. 16).
8. Pontifical Awards (Encyclicals, Order of "Saint Nerses Shnorhali", Messages of Blessing and the Right to Bear Pectoral crosses, granted in April 2005 by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to devoted clergymen and laymen of the Armenian Church) – (p. 17).

## COMMEMORATION OF THE 90th ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE IN HOLY ETCHMIADZIN AND THE ARMENIAN APOSTOLIC CHURCH

9. Blessing of the ground of a chapel to be erected at Tzitzernakaberd in memory of the victims of the Armenian Genocide, April 23 and 24, 2005 (p. 18-19).
10. April 24th in the Mother See of Holy Etchmiadzin (p. 20-22).

11. Participation of the clergymen of the Mother See of Holy Etchmiadzin in commemoration events in dioceses dedicated to the 90th Anniversary of the Armenian Genocide (p. 22).
12. Repose of Souls service offered in the Mother Cathedral of Saint Gregory the Illuminator in Yerevan, April 24, 2005 (p. 23-25).
13. Commemoration of the Armenian Genocide by Sister-Churches on April 24 (p. 26-27).
14. The Holy Chrism poured in the Euphrates river (Commemoration ceremonies of the 90th anniversary of the Armenian Genocide in the Catholicosate of the Great House of Cilicia) – (p. 28-29).
15. Commemoration of the 90th anniversary of the Armenian Genocide in the Armenian Patriarchate of Jerusalem (p. 30-33).
16. Commemoration events of the Armenian Genocide in the Armenian Diocese of Georgia (p. 34-36).
17. The 90th Anniversary of the Armenian Genocide in the Armenian community of India (p. 37).
18. Commemoration events of the 90th Anniversary of the Armenian Genocide in the Armenian Diocese of Germany (p. 38-43).
19. The 90th Anniversary of the Armenian Genocide was solemnly commemorated and the "Torch of Survivors" was transferred to representatives of the youth (p. 44-47).
20. Commemoration of the April victims in the Armenian Diocese of Australia (p. 48-49).
21. Meeting with Mr. Paul Martin, Prime Minister of Canada, April 20, 2005 (p. 50).
22. Commemoration of the 90th Anniversary of the Armenian Genocide in the Armenian Diocese of Brazil (p. 51-55).

## SERMON

23. **REV. FR. VARTAN DULGERIAN** – The Armenian Nation Owes its Eternal Existence to their Faith in the Resurrection (p. 56-59).

## ECCLESIOLOGICAL STUDY

24. **BISHOP VICKEN AYKAZIAN** – The Bishop in the Hierarchy of the Armenian Church. The Decisions of National and Local Ecclesiastic Councils Regarding the Rank of Bishop (scientific research) – (p. 60-73).

## HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

25. **ARPENIK GHAZAROSSIAN** – The Scriptorium of the Monastery of the Holy Apostles in Mush (scientific research) – (p. 74-85).
26. **KHACHIK SAMVELIAN** – Komitas in Exile. 1915 (Chronicle) – (scientific research) – (p. 86-99).

27. **HRACHIA ASMARIAN** – Professor Hakob Siruni and the 3rd volume of his work "Constantinople and its Role" (scientific research) – (p. 100-105).
28. **ARTHUR ANDRANIKIAN** – The History of the Genocide by Theodicus (scientific research) – (p. 106-117).
29. **VIGEN GHAZARIAN** – Arshile Gorky. A Great Devotion to Art (On the occasion of the centenary of his birth) – (scientific research) – (p. 118-127).
30. **SAMVEL MURADIAN** – About the Existence of Documents on the Armenian Genocide in Turkish Archives (scientific research) – (p. 128-133).
31. **ANUSH SAGHATELIAN** – Fridtjof Nansen and the Armenian Church and Church-building (scientific research) – (p. 134-137).

## MEMOIRS

32. **ARTAK MAGHALIAN** – Memoirs of Perchuhi Surmenian about Soghomon Tehlerian (A few words about published memoirs) – (p. 138).
33. **PERCHUHI SURMENIAN** - Memoirs about Soghomon Tehlerian (p. 139-140).
34. **REV. FR. VARTAN DULGERIAN** – The Recognition of the Armenian Genocide Cannot Redeem the Sin (Evidence of an Eyewitness) – (p. 141-145).
35. **AVAG (VOLODIA ABRAHAMIAN)** – Bitter Days Full of Suffering (Memories) – (p. 144-147).

## CRITICAL REVIEW

36. **VARUZHAN POGHOSIAN** – The Armenian Genocide in the Light of Arabic Historiography (About the monograph "The Armenian Genocide Analysis by Arabic Historiography" by Nikolay Hovhannisian) – (p. 148-154).
37. **VARUZHAN POGHOSIAN** – One More Study about the Armenian Genocide (About the monograph "The Armenian Genocide in the Ottoman Turkey and Great Britain" by Tigran Sarukhanian) – (p. 155-160).

## IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

38. "Script and Message" dedicated to the 1600th Anniversary of the Creation of the Armenian Alphabet (Pilgrimage of schoolchildren to the Mother See of Holy Etchmiadzin from April 20 to May 6, 2005) – (p. 161).
39. Lecture delivered by Vahakn Dadrian at the Gevorkian Theological Seminary of Holy Etchmiadzin, April 28, 2005 (p. 161).
40. Symposium at the Vaskenian Seminary of Lake Sevan, April 10, 2005 (p. 162).
41. Green Sunday, the Day of Pilgrimage to Noravank (p. 163-164).

## INTER-CHURCH RELATIONS

42. Meeting of the Executive Board of the Special Commission for the Participation of Orthodox Christians to the World Council of Churches, Holy Etchmiadzin, April 13-16, 2005 (p. 165-168).

## AUDIENCES IN THE MOTHER SEE

43. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the sheiks of the 12 tribes of Syria, April 2, 2005 (p. 169).
44. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Gediminas Kirkilas, Minister of National Defense of Lithuania, April 5, 2005 (p. 170).
45. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Leonidas Pantelides, newly appointed Ambassador of Cyprus to Armenia, April 19, 2005 (p. 170).
46. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Oleg Chirkunov, Acting Governor of the Perm Region of the Russian Federation, April 19, 2005 (p. 171).
47. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Lech Walenşa, former President of Poland and Nobel Peace Prize laureate, April 21, 2005 (p. 172).
48. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Georgi Boos, Vice-Speaker of the Federation Council of the State Duma of the Russian Federation, April 22, 2005 (p. 172).
49. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the representatives of the Canadian Parliament - House of Commons and the Armenian community of Canada, April 26, 2005 (p. 173).
50. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Dr. Mukhlis Farauni, Chargé d'Affaires of Syria to Armenia, April 27, 2005 (p. 174).
51. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to a group of Iranian mountaineers, April 30, 2005 (p. 174).

52. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during April 2005 (p. 175).

# "ETCHMIADZINE"
# ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
## (Avril 2005)


1. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à l'occasion du 90e anniversaire du génocide arménien, 3 février 2005, № 285 (p. 3-6).
2. Message de félicitation et de bénédiction de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, au Symposium international consacré au 90e anniversaire du génocide arménien, 20 avril 2005 (p. 7-8).
3. EDITORIAL – Continuelle commémoration (p. 9-10).
4. Information (sur le décès de Sa Sainteté le Pape Jean-Paul II de Rome et l'élection du cardinal Josef Razinger à la dignité de Pape de Rome) – (p. 11).


## ENCYCLIQUES PONTIFICALES ET MESSAGES DE BENEDICTION


5. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à Son Eminence Tirayr Martikian à l'occasion du 75e anniversaire de sa naissance et du 50e anniversaire de son accession à la dignité d'archimandrite, 6 avril 2005, no. 551 (p. 12-13).
6. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à Pétros et Kariné Taghlian à l'occasion de leur distinction de l'ordre «Saint Grégoire l'Illuminateur», 14 avril 2005, no. 298 (p. 14-15).
7. Message de félicitation de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à l'occasion de la Fête de l'Annonciation et du Jour de la Maternité et de la Beauté, 7 avril 2005 (p. 16).
8. Distinctions pontificales (Encycliques pontificales, Ordre «Saint Nerses Chnorhali», messages de bénédiction et droit de porter des croix pectorales accordés par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à des personnalités religieuses et laïques ayant rendu d'éminents services à l'Eglise arménienne au mois d'avril 2005) – (p. 17).


## CEREMONIES CONSACREES AU 90e ANNIVERSAIRE DU GENOCIDE AMENIEN A SAINT-ETCHMIADZINE ET A L'EGLISE APOSTOLIQUE ARMENIENNE


9. Bénédiction de la terre de la chapelle à construire et cérémonie de commémoration des victimes du génocide arménien à Tzitzernakaberd, 23, 24 avril 2005 (p. 18-19).
10. Le 24 avril au Saint-Siège d'Etchmiadzine (p. 20-22).
11. Participation des religieux du Saint-Siège d'Etchmiadzine aux manifestations consacrées au 90e anniversaire du génocide arménien dans différents diocèses, 24 avril 2005 (p. 22).

12. Office des morts à la Cathédrale Saint-Grégoire l'Illuminateur d'Erevan le 24 avril 2005 (p. 23-25).
13. Commémoration du génocide arménien par les Eglises-sœurs le 24 avril 2005 (p. 26-27).
14. Le Saint-Chrême versé dans les eaux de l'Euphrate (Commémoration du génocide au Catholicossat de la Grande Maison de Cilicie) – (p. 28-29).
15. Cérémonies de commémoration du 90e anniversaire du génocide arménien au Patriarcat Arménien de Jérusalem (p. 30-33).
16. Cérémonies de commémoration du génocide arménien au Diocèse de l'Eglise Armenienne de Géorgie (p. 34-36).
17. 90e anniversaire du génocide arménien dans la communauté arménienne d'Inde (p. 37).
18. Commemoration du 90e anniversaire du génocide arménien au Diocese de l'Eglise Arménienne d'Allemagne (p. 38-43).
19. Cérémonies solennelles de commémoration du 90e anniversaire du génocide arménien et transmission du flambeau des survivants à la nouvelle génération (p. 44-47).
20. Commémoration des victimes d'avril 1915 au Diocèse de l'Eglise Arménienne d'Australie (p. 48-49).
21. Rencontre avec M. Paul Martin, Premier ministre du Canada, 20 avril 2005 (p. 50).
22. Commemoration du génocide arménien au Diocese de l'Eglise Arménienne du Brésil (p. 51-55).

## SERMON

23. **PROTOPRETRE VARDAN TULKERIAN** – C'est à la foi de la Résurrection que le peuple arménien doit son existence éternelle (p. 56-59).

## ETUDE ECCLESIOLOGIQUE

24. **EVEQUE VIGUEN AYKAZIAN** – Les évêques dans la hiérarchie de l'Eglise arméniennes. Les décisions des conciles ecclésiastiques nationaux et locaux sur les évêques (recherche scientifique) – (p. 60-73).

## ETUDES HISTORIQUES ET PHILOLOGIQUES

25. **ARPENIK GHAZAROSSIAN** – Le scriptorium du monastère des Saints-Apôtres de Mouch (recherche scientifique) – (p. 74-85).
26. **KHATCHIK SAMVELIAN** – Komitas en exil, annee 1915 (chronique) – (recherche scientifique) – (p. 86-99).
27. **HRATCHIA ASMARIAN** – Le professeur Hacob Sirouni et le 3e tome de son œuvre «Constantinople et son rôle» (recherche scientifique) – (p. 100-105).
28. **ARTHUR ANDRANIKIAN** – L'Histoire du génocide de Théodik (recherche scientifique) – (p. 106-117).

29. **VIGUEN GHAZARIAN** – Arshile Gorky, un grand dévoué de l'art (à l'occasion du centenaire de sa naissance) – (recherche scientifique) – (p. 118-127).
30. **SAMVEL MOURADIAN** – Sur l'existence de documents concernant le génocide arménien dans les archives turques (recherche scientifique) – (p. 128-133).
31. **ANOUCH SAGHATELIAN** – Fridtjof Nansen sur l'Egise arménienne et la construction des églises (recherche scientifique) – (p. 134-137).

## MEMOIRES

32. **ARTAK MAGHALIAN** – Les Mémoires de Pertchouhi Surménian sur Soghomon Tehlérian (Deux mots sur les Mémoires publiées) – (p. 138).
33. **PERTCHOUHI SURMENIAN** - Mémoires sur Soghomon Tehlérian (p. 139-140).
34. **PROTOPRETRE VARDAN TULKERIAN** – La reconnaissance ne suffit pas à racheter le péché du génocide arménien (récit d'un témoin oculaire) – (p. 141-143).
35. **AVAG (VOLODIA ABRAHAMIAN)** – Amers jours de souffrance (Souvenirs) – (p. 144-147).

## CRITIQUE LITTERAIRE

36. **VAROUJAN POGHOSSIAN** – Le génocide arménien dans les ouvrages de l'historiographie arabe (Sur la monographie «Le génocide arménien analysé par les historiens arabes» de Nikolay Hovhannissian) – (p. 148-154).
37. **VAROUJAN POGHOSSIAN** – Encore un ouvrage consacré à l'histoire du génocide arménien (Sur la monographie «Le génocide arménien en Turquie ottomane et la Grande-Bretagne (1915-1918)» de Tigran Saroukhanian) – (p. 155-160).

## AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES

38. Le programme «Ecriture et Message» consacré au 1600e anniversaire de la création de l'alphabet arménien (Pèlerinage des écoliers des 9e et 10e classes au Saint-Siège d'Etchmiadzine entre le 20 avril et le 6 mai 2005) – (p. 161).
39. Conférence de Vahagn Tatrian au Séminaire Guévorkian d'Etchmiadzine, 28 avril 2005 (p. 161).
40. Symposium au Séminaire Vazguénian de Sévan, 10 avril 2005 (p. 162).
41. Dimanche Vert, Jour du Vœu de Noravank (p. 163-164).

## RELATIONS INTERECCLESIASTIQUES

42. Séance de l'Organisle exécutif de la Commission Spéciale pour la Participation des Orthodoxes au Conseil Mondial des Eglises, Saint-Etchmiadzine, 13-16 avril 2005 (p. 165-168).

# AUDIENCES AU SAINT-SIEGE


43. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, aux chefs de douze groupes de tribus de Syrie, 2 avril 2005 (p. 169).
44. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Guédimmas Kirkilas, Ministre de la Défense Nationale de la Lituanie, 5 avril 2005 (p. 170).
45. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Léonidas Pantelidès, Ambassadeur nouvellement nommé de Chypre en Arménie, 19 avril 2005 (p. 170).
46. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens à M. Oleg Tchirkounov, gouverneur par intérim de la région de Perme de la FR, 19 avril 2005 (p. 171).
47. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Lech Walęnsa, ex-Président de la Pologne, Prix Nobel de la Paix, 21 avril 2005 (p. 172).
48. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Guéorgui Boos, Vice-Président de la Douma d'Etat du Conseli de la Fédération de la FR, 22 avril 2005 (p. 172).
49. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, aux représentants de la Chambre des Communs du Parlemant canadien et de la communauté arménienne du Canada, 26 avril 2005 (p. 173).
50. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, au Dr Moukhlis Faraouni, Chargé d'affaires de la Syrie en Arménie, 27 avril 2005 (p. 174).
51. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à un groupe d'alpinistes iraniens, 30 avril 2005 (p. 174).

52. Brèves nouvelles ecclésiastiques, Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale de Saint-Etchmiadzine au mois d'avril 2005 (p. 175).

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՍԻՉ՝ 77764

---

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ